

**ՀՀ ԳԱԱ Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱԿԱՐՅԱՆ ԱՆՆԱ ՌՈՒԶՎԵԼՏԻ

**ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼ ԻՌԻԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը.00.02 - «Տնտեսություն, նրա ոլորտների
տնտեսագիտությունը և կառավարումը» մասնագիտություն
տնտեսական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի համար

Գիտական ղեկավար՝

*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի

ԵՐԵՎԱՆ - 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

.....

ԳԼՈՒԽ1

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼ ԻՈՒ ԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ

1.1 Արտաքին տնտեսական գործունեության և տնտեսության իրական հատվածի կապը մակրոտնտեսական խոցելիության համատեքստում 8

1.2 Մակրոտնտեսական խոցելիությանը բնութագրող գործունեության համախուլմբը և դրանց ազդեցությունը ֆինանսական ճգնաժամների վրա..... 24

1.3 Մակրոտնտեսական խոցելիության գնահատման հիմնական մոտեցումները 39

.....

ԳԼՈՒԽ2

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼ ԻՈՒ ԹՅԱՆ ՀԻՄՆԱԽԱԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՊԱՅՄԱՆԱԿՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

2.1 Տնտեսության մակրոտնտեսական խոցելիությանը նկարագրող ցուցանիշների վերլուծությունը 49

2.2 Տնտեսական աճը պայմանավորող գործունեության և տնտեսական խոցելիության համատեքստում 70

2.3 Տնտեսության իրական հատվածի և արտաքին տնտեսական գործունեության կապը 84

ԳԼՈՒԽ3

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼ ԻՈՒ ԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՆԿԱՁԵՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

3.1 Տնտեսության իրական հատվածի վրա արտաքին գործունեության ազդեցության կարգավորման ուղիները 101

3.2 Տնտեսության մակրոտնտեսական խոցելիության աստիճանի նվազեցման մոտեցումները 121

.....

3.3 ԵԱՏՄ անդամակցության շրջանակում ՀՀ տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման հնարավոր ուղիները 132

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	148
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ	158
.....	
ՀԱՎԵԼ ՎԱՃԵՐ	178

ԱՌԱՋԱԲԱՆ

Ատենախոսուողյան թեմայի արդիականուողյունը: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի դասակարգման՝ եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, տնտեսուողյան իրական և արտաքին հատվածի միջև կապը նկարագրող գործոնները (ապրանքների և ծառայուողյունների արտահանում, օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ), տրանսֆերտներ, հանքահումքային մթերքի և ոչ թանկարժեք մետաղների գներ և այլն) ինչպես երկրի տնտեսական աճի, այնպես էլ տնտեսուողյան մակրոտնտեսական խոցելի ուղյակի աղբյուր են: ՕՈՒՆ-ների ներգրավումը կարող է մեծացնել համախառն կուտակման ծավալը, ինչն էլ իր հերթին կապահովի իրական ՀՆԱ-ի ավելի բարձր աճի տեմպեր: Ապրանքների արտահանման ծավալների աճն կարող է ավելացնել իրական ՀՆԱ-ում վերջիններիս ստեղծած ավելացված արժեքը, ինչպես նաև գործատուներին հնարավորուողյուն տալ աշխատակիցներին ավելի բարձր աշխատավարձ և ավելի շատ հարկեր վճարել: Տրանսֆերտների ծավալների աճը, որն ուղղվում է երկարաժամկետ օգտագործման ապրանքների ձեռքբերման և ընթացիկ սպառման վրա ՀՆԱ-ի տարբեր ծախսային բաղադրիչների միջոցով ապահովում է տնտեսական աճ: Իսկ հանքահումքային մթերքի և ոչ թանկարժեք մետաղների գների բարձրացումն ավելացնում է արտահանող ընկերուողյունների հասույթը: Հետևաբար՝ այս ցուցանիշների ծավալների փոփոխուողյունը բացասաբար է անդրադառնում տվյալ երկրի տնտեսական աճի վրա, որոնցով էլ պայմանավորված է երկրի մակրոտնտեսական խոցելի ուղյակը: Մյուս կողմից երկրի մակրոտնտեսական խոցելի ուղյակը պայմանավորված է նրանով, որ այս գործոնները որոշակիորեն մեղմում են, ինչպես նաև կրճատում են ընթացիկ հաշվի պակասուողը, իսկ վերջիններիս ծավալների փոփոխուողյունը կարող է էլ ավելի մեծացնել ընթացիկ հաշվի պակասուողը՝ հանգեցնելով ազգային արժույթի արժեզրկման կամ արժույթային ճգնաժամի, որը կարող է

նաև վերածվել ֆինանսատնտեսական ճգնաժամի եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում, որն էլ իր հերթին խիստ բացասաբար կանդրադառնա տվյալ երկրի տնտեսության իրական հատվածի վրա:

2009թ.-ին ՀՀ-ում գրանցված արժույթային ճգնաժամը, որը վերածվեց ֆինանսատնտեսական ճգնաժամի, փաստեց այն, որ ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացումը գերծ չէ արտաքին տնտեսական գործոնների կամ շոկերի ազդեցությանը: ՀՀ տնտեսության վրա խիստ բացասաբար ազդեցին վերը թվարկված գործոնները, ինչպես նաև ՀՀ անշարժ գույքի շուկայի բացասական զարգացումները, որոնք էլ, իրենց հերթին, ավելի խորացրին Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությանը: 2014թ.-ի երկրորդ կեսին ՌԴ-ում գրանցված արժույթային ճգնաժամը հանգեցրեց տրանսֆերտների, արտահանման ծավալների կրճատմանը, որը ևս մեկ անգամ մատնանշեց ՀՀ տնտեսության մակրոտնտեսական խոցելիության հիմնախնդիրների և վերջինս նկարագրող ցուցանիշների ուսումնասիրության և կարգավորման ուղիների առաջարկման անհրաժեշտությունը, ինչն էլ թույլ կտա բարձրացնել ու տնտեսության ճկունության աստիճանը՝ արտաքին շոկերի նկատմամբ: Իր հերթին ՀՀ մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող ցուցանիշների վերլուծությունը, իրական ՀՆԱ-ի վրա արտաքին շոկերի գնահատականը հնարավորություն կտան նաև ուրվագծել հակաճգնաժամային միջոցառումների շրջանակը, որը կարող է իրականացնել ՀՀ կառավարությունը, եթե միջնաժամկետ հատվածում արտաքին շոկերով պայմանավորված տնտեսական անկում գրանցվի:

Ատենախոսության թեմայի ընտրությունը, որում տրված են վերը նշված գնահատականները, ուսումնասիրված են վերը թվարկված խնդիրները և առաջարկված են լուծումներ պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Չետագոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ տնտեսության մակրոտնտեսական խոցելիության հիմնախնդիրների ուսումնասիրությունն ու դրանց կարգավորման ուղիների առաջարկելն է միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում: Այս նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսուցման ասիստենտները, եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում արտաքին տնտեսական գործունեության և տնտեսության իրական հատվածի կապը մակրոտնտեսական խոցելիության համատեքստում,
- դիտարկել մակրոտնտեսական խոցելիությանը բնութագրող գործունեության համախումբը և դրանց ազդեցությանը ֆինանսական ճգնաժամերի վրա, ինչպես նաև դրա գնահատման հիմնական մոտեցումները ՀՀ-ում և արտերկրում,
- ներկայացնել ՀՀ տնտեսության մակրոտնտեսական խոցելիությանը նկարագրող հիմնական ցուցանիշները,
- իրականացնել ՀՀ տնտեսական աճը պայմանավորող գործունեության վիճակագրական վերլուծությանը՝ մակրոտնտեսական խոցելիության համատեքստում,
- ուսուցման ասիստենտները ՀՀ տնտեսության իրական հատվածի և արտաքին տնտեսական գործունեության կապը, ինչպես նաև գնահատել վերջինիս ազդեցությանը ՀՀ տնտեսական աճի վրա,
- վերլուծել տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման հնարավոր ուղիները՝ ՀՀ մակրոտնտեսական խոցելիությանը նվազեցնելու համար:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության ուսուցման ասիստենտության օբյեկտը ՀՀ իրական հատվածի վրա արտաքին տնտեսական գործունեության ազդեցության վերլուծությանն է, իսկ առարկան՝ ՀՀ տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման ուղիների բացահայտումը:

Ուսուցման ասիստենտության տեսալեզբողական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսությանը նախադրված խնդիրների լուծման համար գիտամեթոդական և տնտեսական հիմք են հանդիսացել մակրոտնտեսագիտության և միկրոտնտեսագիտության, արտաքին տնտեսական կապերի և կառավարման դասական և ժամանակակից տեսությունները, դրանց հիմնադրույթները, մեթոդները, մոտեցումները, երկրի մակրոտնտեսական խոցելիության բացահայտման և գնահատման, տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման, ներդրումների ներգրավման վերաբերյալ հայ և օտարերկրյա գիտնականների ու հետազոտողների և միջազգային կառույցների կողմից հրատարակվող վերլուծությաններն ու հետազոտությանները:

Ատենախոսությունում կատարված ուսումնասիրության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել՝ ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերը, միջազգային իրավական փաստաթղթերը (Եվրասիական տնտեսական միության և ԱՊՀ շրջանակում գործող), ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ ԿԲ-ի, ՀՀ Էկոնոմիկայի, ՀՀ Ֆինանսների նախարարությունների, ինչպես նաև միջազգային կառույցների և այլ պետական հաստատությունների կողմից հրատարակվող վիճակագրական, վերլուծական նյութերը, զեկոնյցները, առցանց տվյալների բազաները և պաշտոնական կայքերում տեղադրված տարբեր նյութերը:

Ատենախոսության մեջ ներկայացված հետազոտությունում կիրառվել են տնտեսաչափական, վիճակագրական, համեմատական վերլուծություններ և այլ մեթոդներ ու մոտեցումներ:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորոշյալը:

Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և գործնական միջարք արդյունքներ, որոնցից հիմնականները կայանում են հետևյալում.

- Մշակվել են հայեցակարգային մոդելներ եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների, ինչպես նաև ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա արտաքին շուկերի բացասական ազդեցության տարածման գործընթացը ներկայացնելու նպատակով:
- Հիմնավորվել են միջնաժամկետ հատվածում իրական ներմուծման ծավալների փոփոխության վրա ազդող գործոնները, ինչպես նաև բացահայտվել են ՀՀ իրական ՀՆԱ-ի աճի տեմպին նպաստող և արտարոողականության աճը պայմանավորող գործոնները, որի հիման վրա էլ առաջարկվել է ցածր և միջին տեխնոլոգիական ոլորտներում ներգրավել «արդյունավետություն և միաժամանակ շուկա փնտրող» ՕՈՒՆ-ներ:
- ՀՀ տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման նպատակով առաջարկվել է հակաճգնաժամային և այլ միջոցառումների համալիր (գործազրկության նպաստի վճարումը ճգնաժամերի դեպքում, երկրի բրենդինգի ռազմավարության մշակում, ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրացմամբ՝ դիվերսիֆիկացված տարածաշրջանային զար-

գացում)՝ տնտեսական զարգացման հիմքի ավելի լայն բազմազանությունն ապահովման ուղղությամբ:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսությունում ներկայացված

վերլուծության արդյունքները, մշակված առաջարկությունները կարող են կիրառվել ՀՀ կառավարության, Հայաստանի զարգացման հիմնադրամի, ՀՀ ֆինանսների, ՀՀ Էկոնոմիկայի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների կողմից՝ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության մաս կազմող տարբեր քաղաքականությունների մշակման ժամանակ:

Ատենախոսությունում ներկայացված տեսական և գործնական արդյունքները կարող են օգտագործվել հակաճգնաժամային միջոցառումների մշակմամբ, ՀՀ տնտեսական աճի, տնտեսության իրական հատվածի, ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն ներուժի իրացման հիմնահարցերով զբաղվող հետազոտողների, տնտեսագետների, վիճակագիրների և ասպիրանտների կողմից:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունը արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 11 (տասնմեկ) գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 177 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԳԼՈՒԽ 1

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼ ԻՈՒ ԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ

1.1 ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՂԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼ ԻՈՒ ԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ- ՏՈՒՄ

Ժամանակակից պայմաններում տնտեսության իրական հատվածի զարգացումն ունի կարևոր նշանակություն, քանի որ վերջինս նպաստում է բնակչության զբաղվածության ապահովմանը, կենսամակարդակի բարելավմանը, ընկերությունների գործունեության բարելավմանը, ինչպես նաև պետական բյուջեի եկամուտների ավելացմանը և երկրի տնտեսության զարգացմանը: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում է մակրոտնտեսական խոցելիության համառոտում արտաքին տնտեսական գործունեության և տնտեսության իրական հատվածի կապի ու սուբսիդացիայի ունենալը:

Ըստ Պ. Գվիլաուսոնի (2009թ.) զարգացող երկրների մակրոտնտեսական խոցելիությունը հանդիսանում է երկար տարիների ու սուբսիդացիայի առարկա: Այսպես՝ 40 տարի առաջ զարգացող երկրների մակրոտնտեսական անկայունության պատճառը հիմնականում բացառվում էր առաջնային (չմշակված և վերամշակված) ապրանքների արտահանմամբ և միջազգային շուկաներում ձևավորվող գներով, իսկ արդեն 1990թթ.-ի երկրորդ կեսին Ասիական ճգնաժամը բացահայտեց եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների մակրոտնտեսական խոցելիությունը: Քանի որ այս երկրներում նախքան ճգնաժամը ֆինանսական կառույցների կողմից մեծ չափերի հասնող կապիտալների ներգրավումն ուղեկցվում էր ֆինանսական լուրջ ռիսկերի առկայությամբ, ապա միջարժեք հետազոտողներ և գիտնականներ սկսեցին գնահատել ֆինանսական ճգնաժամի ռիսկը որպես խոցելիության ցուցանիշ: Պ. Գվիլաուսոնը նաև նշում է, որ եկամտի ցածր մակարդակ ունեցող

երկրների մակրոտնտեսական խոցելիությունը տարբերվում է եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների խոցելիությունից¹:

Անդրադառնանք մակրոտնտեսական խոցելիությանը: Ա. Սեթը և Ա. Ռագաբը (2012թ.) նշում են, որ տնտեսագիտության մեջ «խոցելիություն» (vulnerability) հասկացությունը դիտարկվում է միկրո և մակրո խնդիրների առկայություն տեսանկյունից՝

- Միկրոմակարդակում խոցելիությունն ուսումնասիրում է շուկերի ազդեցությունը առանձին տնային տնտեսությունների բարեկեցության վրա,
- Մակրոմակարդակում խոցելիության ուսումնասիրության առարկան շուկերի ազդեցությունն է տնտեսական աճի վրա²:

Վ. Նաուդեն և այլոք (2009թ.) տարբեր մակարդակներին վերաբերող բազմաթիվ սահմանումների ուսումնասիրության հիման վրա նշում են, որ խոցելիությունը վերաբերում է անցանկալի արդյունքի ստացման հավանականությանը, և որ այդ խոցելիության պատճառով տանգների հանդեպ անպաշտպան լինելն է, ինչն էլ հանգեցնում է բացասական հետևանքների³: Իսկ Պ. Գվիլաումոնթը (2009թ.) որպես երկրի մակրոտնտեսական խոցելիություն բնորոշում է այն ռիսկը, որը հանգեցնում է երկրի զարգացման խաթարմանը՝ պայմանավորված բնակլիմայական կամ արտաքին շուկերով, և որպես էկզոգեն շուկերի տեսակներ դիտարկում է խոցելիության հետևյալ երկու աղբյուրները՝

1) բնակլիմայական աղետները,

2) արտաքին շուկերը (արտաքին պահանջարկի կտրուկ կրճատում, մետաղների, հանածոների և գյուղմթերքի (commodity) անկայուն գներ, միջազգային տոկոսադրույքների փոփոխություն և այլն):

Յեղիևակը նաև նշում է, որ խոցելիության տեսանկյունից առանձնակի դեր է խաղում երկրի շուկերին արձագանքելու կարողությունը կամ ճկունությունը (resilience), ինչպես նաև առանձնացնում է երկու տիպի՝ կառուցվածքային, (որի վրա կառավարությունը չի

¹Guillaumont, Patrick (2009). "An Economic Vulnerability Index: Its Design and Use for International Development Policy," *Oxford Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 37, No. 3, pp.193-194.

²Seth, Anuradha and Ragab, Amr (2012). "Macroeconomic Vulnerability in Developing Countries: Approaches and Issues," Working Paper number 94, International Policy Centre for Inclusive Growth (IPC - IG), Poverty Practice, Bureau for Development Policy, UNDP, Brasilia: DF – Brazil, p.1.

³Naude, Wim, Santos-Paulino, Amelia U. & McGillivray Mark (2009). "Measuring Vulnerability: An Overview and Introduction," *Oxford Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 37, No. 3, pp.184-185.

կարող ազդել) և տնտեսական քաղաքականության վրա պայմանավորված (որի վրա կառավարությանը կարող է ազդել) խոցելիություն⁴:

Լ. Բրիգոլիոն և այլոք (2009թ.) մակրոտնտեսական խոցելիությունը սահմանում են որպես «արտաքին շուկերի հանդեպ տնտեսության անպաշտպանվածություն, որի պատճառը տնտեսության բացությունն է (openness)»: Որպես երկրի արտաքին շուկերի հանդեպ հակվածության պատճառ՝ հեղինակները նշում են երկրի տնտեսության առանձնահատկությունները. բացության աստիճանը (արտահանում/ՅՆԱ հարաբերակցությունը), արտահանման կենտրոնացվածությունը և կախվածությունը ռազմավարական նշանակություն ունեցող ներմուծումից: Իսկ արտաքին շուկերով պայմանավորված տնտեսության վրա բացասական ազդեցություն գործող ռիսկերն ուսումնասիրելու և գնահատելու նպատակով հեղինակներն առաջարկել են ստորև ներկայացված հայեցակարգային մոդելը (գծապատկեր 1.1.1)⁵:




Գծապատկեր 1.1.1. Արտաքին շուկերով պայմանավորված տնտեսության վրա բացասական ազդեցություն գործող ռիսկերի նկարագիրը⁶

⁴Guillaumont, Patrick (2009). "An Economic Vulnerability Index: Its Design and Use for International Development Policy," *Oxford Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 37, No. 3, p.195.

⁵Briguglio, Lino, Cordina, Gordon, Farrugia, Nadia, and Vella, Stephanie (2009). "Economic Vulnerability and Resilience: Concepts and Measurements," *Oxford Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 37, No. 3, pp.229, 231-232.

⁶Նույն տեղում, էջ 232:

Գծապատկեր 1.1.1-ից երևում է, որ արտաքին շուկերի բացասական ազդեցությունը չեզոքացնելու կամ մեղմելու տեսանկյունից (տնտեսության ճկունություն) կարևոր դեր է խաղում մակրոտնտեսական կայունությունը, ինչը հնարավորություն է ընձեռում կառավարությանը իրականացնելու խթանող քաղաքականություն: Լ. Բրիգուլիոն և այլոք (2009թ.) որպես կարևոր գործոն առանձնացնում են բյուջեի դեֆիցիտը, քանի որ վերջինիս մեծությամբ է պայմանավորված լինելու կառավարության խթանող քաղաքականության (բյուջեի ծախսային մասի ավելացում և այլն) իրականացման կարողությունը⁷: Յետևաբար, տնտեսության ճկունությամբ է պայմանավորված արտաքին շուկերից բացասական ազդեցության ռիսկի մեծության չափը: Իսկ Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՅ) 2011թ.-ին առաջարկել է եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում արտաքին շուկերով պայմանավորված տնտեսական աճի վրա բացասական ազդեցության ռիսկը դիտարկել հետևյալ հայեցակարգային մոդելի համատեքստում (գծապատկեր 1.1.2)⁸:



Գծապատկեր 1.1.2. Արտաքին շուկերով պայմանավորված տնտեսական աճի վրա բացասական ազդեցության ռիսկի հայեցակարգային մոդել⁹

Գծապատկեր 1.1.2-ից կարելի է եզրակացնել, որ ի տարբերություն գծապատկեր 1.1.1-ում ներկայացված հայեցակարգային մոդելի, ԱՄՅ-ն

⁷Briguglio, Lino, Cordina, Gordon, Farrugia, Nadia, and Vella, Stephanie (2009). “Economic Vulnerability and Resilience: Concepts and Measurements,” *Oxford Development Studies, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom)*, Vol. 37, No. 3, p.233.

⁸International Monetary Fund, (2011). “Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries”, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.10. Available at: www.imf.org/external/np/pp/eng/2011/030911.pdf (last accessed: February 27, 2015).

⁹Նույն տեղում:

որպես տնտեսության ճկունությունն դիտարկում է մակրոտնտեսական կայունությունը նկարագրող ցուցանիշները (մակրոտնտեսական խոցելիությունը), իսկ որպես կառուցվածքային խոցելիություն՝ արտաքին շուկերի նկատմամբ անպաշտպանվածությունը: ԱՄՅ-ն (2011թ.) կարևորում է մակրոտնտեսական կայունությունը նկարագրող մակրոտնտեսական ցուցանիշների դերը, քանի որ դրանք ավելի անպաշտպան են դարձնում երկիրը՝ մեծացնելով արտաքին շուկերով պայմանավորված տնտեսության վրա բացասական ազդեցության ռիսկը¹⁰: Իսկ 2008թ.-ի նոյեմբերին Յամախարային Բանկը (ՅԲ) զարգացող երկրների համար մակրոտնտեսական սկզբնական դիրքը կամ հիմքերը նկարագրող 2 ցուցանիշ էր առանձնացրել, որոնց սահմանային արժեքներին հավասար լինելու կամ գերազանցելու դեպքում (ընթացիկ հաշվի պակասուրդ/ՅՆԱ հարաբերակցություն՝ 3%, բյուջեի պակասուրդ/ՅՆԱ հարաբերակցություն՝ 2%) այդ երկրները միայն կայուն և մեծ չափերի հասնող արտաքին պետական ֆինանսավորման միջոցով կարող էին հաղթահարել Յամախարային ֆինանսատնտեսական ճգնաժամի (ՅՏՏՃ) հետևանքները¹¹:

Ա. Սեթի և Ա. Ռագաբի (2012թ.) կարծիքով՝ մակրոտնտեսական խոցելիության հիմնահարցերով զբաղվող հեղինակների մոտ (հատկապես զարգացող երկրների դեպքում) մեկ ընդհանուր բան կա՝ ենթադրություն, որ շուկերը լինում են արտաքին, և մակրոտնտեսական խոցելիությանը վերաբերող ուսումնասիրությունների մեծամասնությունում որպես շուկի տարածման ուղիներ կամ գործոններ դիտարկվում են միջազգային առևտուրը կամ միջազգային կապիտալը¹²: Ըստ ԱՄՅ-ի (2011թ.) եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում այլ երկրներից տնտեսության իրական հատվածի վրա բացասական ազդեցության տարածման դոմինանտ ուղիներն արտացոլում են տնտեսության իրական հատվածի և արտաքին տնտեսական գործոնների միջև կապը (առևտուր, օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈԻՆ), տրանսֆերտներ, արտասահմանից

¹⁰International Monetary Fund (2011). “Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries,” The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.10.

¹¹The World Bank (2008). *Weathering the Storm: Economic Policy Responses to the Financial Crisis*, mimeo, The World Bank, Washington DC: United States, p. 3, 5, 21.

¹²Seth, Anuradha and Ragab, Amr (2012). “Macroeconomic Vulnerability in Developing Countries: Approaches and Issues,” Working Paper number 94, International Policy Centre for Inclusive Growth (IPC - IG), Poverty Practice, Bureau for Development Policy, UNDP, Brasilia: DF – Brazil, pp.11-12.

ստացվող օգնություն և այլն), իսկ որպես ոչ դոմինանտ ուղի նշվում են այն հոսքերը, որոնք ուղղվում են դեպի ֆինանսական հատված¹³: Ինչ վերաբերում է ընդհանուր արտաքին շուկերի ազդեցությանը (համաշխարհային տնտեսության ռեցեսիան, մետաղների, հանածոների և գյուղմթերքի համաշխարհային գների անկումը, համաշխարհային վարկային տոկոսադրույքների բարձրացումը), ապա, ըստ ԱՄՆ-ի, այն տարբեր երկրների դեպքում տարբեր կերպ է դրսևորվում կախված նրանից, թե ինչպիսին է տվյալ երկրի կախումը կոնկրետ շուկայից, այնտեղ իրացվող ապրանքից, մատակարարվող ծառայություններից (մետաղներ, զբոսաշրջություն) կամ ֆինանսավորման աղբյուրներից (տրանսֆերտներ, թե օտարերկրյա օգնություն)¹⁴: Իսկ ըստ Մ. Նիսսանկեի (2012թ.) 2009թ.-ին համաշխարհային տնտեսության անկումը պայմանավորված է եղել եկամտի միջին մակարդակ ունեցող և բնական պաշարներով հարուստ զարգացող երկրների տնտեսական անկմամբ, որի պատճառը 2008թ.-ի սեպտեմբերի կեսից սկսած ՅՏՏԾ-ի փոխանցումն էր այդ երկրներ երկու անմիջական փոխանցման ուղիների՝ ֆինանսական և մետաղների, հանածոների ու գյուղմթերքի շուկաների կապերի միջոցով (թեպետ ՅՏՏԾ-ի փոխանցման ուղիները մի քանիսն են եղել): Յեղիևակի կարծիքով ֆինանսական շուկայի հետ ունեցած կապերը առավել բացասաբար ազդեցին եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների տնտեսությունների վրա (տեղական արժույթի բավականին մեծ չափերի հասնող արժեզրկում, արժեթղթերի շուկայում գների անկում, ընկերությունների կողմից թողարկվող պարտատոմսերին և բաժնետոմսերին ուղղվող մասնավոր կապիտալ հոսքերի կրճատում և արտահանման նպատակով վարկերի ստացման հետ կապված դժվարություններ), որի հետևանքով այս երկրներից «*ռեցեսիայի էֆեկտի*» միջոցով ՅՏՏԾ-ի բացասական ազդեցությունը փոխանցվեց եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներ՝ հանգեցնելով համաշխարհային առևտրի ծավալների կրճատմանը¹⁵: Թեպետ ՅՏՏԾ-ն ցույց տվեց, որ զարգացած և զարգացող երկրները «տարանջատված» չեն, սակայն վեր-

¹³International Monetary Fund (2011). "Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries," The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.11.

¹⁴International Monetary Fund (2011). "Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries," The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.11.

¹⁵Nissanke, Machiko (2012). "Introduction: Transmission Mechanisms and Impacts of the Global Financial Crisis on the Developing World," *Journal of Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 48, No. 6, pp.691-692.

չին գործարար ցիկլից պարզ է դարձել, որ եկամտի ցածր մակարդակ ունեցող զարգացող երկրները զարգացած երկրներից ավելի շատ են «տարանջատված» դարձել, մինչդեռ եկամտի միջին մակարդակ ունեցող «համակարգային» (տարածաշրջանի առումով) երկրները (Բրազիլիա, ՌԴ, Չինաստան, ՅԱՅ և այլն) եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների հետավելի «մերձեցված» են դարձել¹⁶ (աղյուսակ 1.1.1):

Աղյուսակ 1.1.1

Եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների փոխկապվածությունն այլ երկրների հետ¹⁷

Փոխկապվածություն գործակից	1995-1999թթ.	2000-2008թթ.
<i>Եկամտի ցածր մակարդակ ունեցող զարգացող երկրների ՅԱ-ի աճի և այլ երկրների ՅԱ-ի աճի միջև փոխկապվածությունը՝</i>		
Չարգացած երկրների հետ	0.796	0.605
«Առաջատար» համարվող մեկ շնչի հաշվով ՅԱ-ի եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների հետ	0.566	0.958
<i>Եկամտի ցածր մակարդակ ունեցող զարգացող երկրներից արտահանման և այլ երկրների ՅԱ-ի աճի միջև փոխկապվածությունը՝</i>		
Չարգացած երկրների հետ	0.598	0.701
«Առաջատար» համարվող մեկ շնչի հաշվով ՅԱ-ի եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների հետ	-0.055	0.630

Աղյուսակ 1.1.1-ից կարելի է նկատել, որ 2000-2008 թվականներին 1995-1999 թվականների համեմատ զարգացող երկրների տնտեսական աճը շատ ուժեղ փոխկապված էր «առաջատար» համարվող եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների աճի հետ՝ 0.96, մինչդեռ փոխկապվածությունը զարգացած երկրների աճի տեմպից այդ նույն ժամանակահատվածում նվազել էր (գործակիցը 0.796-ից դարձել էր 0.605): Իսկ այս երկրներից արտահանման և «առաջատար» երկրների տնտեսական աճի միջև 2000-2008թթ. փոխկապվածությունն գործակիցը 1995-1999թթ. գործակցի (-0.06) համեմատ դրական էր՝ 0.63, և բավականին բարձր մասին էր վկայում, մինչդեռ զարգացած երկրների ՅԱ-ի աճի և դեպի այդ երկրներ արտահանման փոխկապվածությունը աճել էր (0.598-ից դարձել էր 0.701): 1980-2008թթ. ընթացքում այս խորացող ինտեգրվա-

¹⁶Dabla-Norris, Era, Espinoza, Raphael, Jahan, Sarwat (2012). "Spillovers to Low-Income Countries: Importance of Systemic Emerging Markets," IMF working paper No. 12/49, The International Monetary Fund, Washington, D.C.:United States, pp. 3, 11.

¹⁷Dabla-Norris, Era, Espinoza, Raphael, Jahan, Sarwat (2012). "Spillovers to Low-Income Countries: Importance of Systemic Emerging Markets," IMF working paper No. 12/49, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.11.

ծուրթյան պատճառն ըստ է. Դաբլ աՆորրիսի և այլոց (2012թ.) կարելի է բացատրել խորացող առևտրային կապերով, օտարերկրյա ուղղակի ներդրումներով, բանկային փոխառություններով և տրանսֆերտներով¹⁸:

Յեղիակաները նաև պարզել են, որ եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների վրավիճակագրորեն նշանակալի ազդեցություն է ունեցել զարգացած, «առաջատար» համարվող եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների տնտեսական ակտիվությունը, մետաղների, հանածոների և գյուղմթերքի համաշխարհային գների փոփոխությունները («VAR» գնահատման արդյունքներ), ինչպես նաև եզրակացրել են, որ այդ և «առաջատար» համարվող երկրների միջև խորացող առևտրային և ֆինանսական կապերը հանգեցնելու են այդ երկրների գործարար ցիկլերի սինխրոնացման, ինչպես նաև հանդես են գալու որպես մակրոտնտեսական խոցելիություն արժեք ուր¹⁹:

Մի շարք հեղիականեր նույնպես անդրադարձել են դեպի զարգացող երկրներ ընդհանուր և երկրին հատուկ շուկերի տարածման հիմնախնդիրներին, մասնավորապես դեպի զարգացող երկրներ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարածման հիմնական ուղիներին, որոնցից հատկապես կարևորվում են հետևյալները²⁰.

1. Միջազգային առևտուր՝

- Մետաղներ, հանածոներ և գյուղմթերք,
- Մշակող արդյունաբերության արտադրանք,
- Ծառայություններ (զբոսաշրջություն, տրանսպորտ):

2. Առևտրի պայմաններ

3. Միգրացիան տրանսֆերտներ կամ դրամական փոխանցումներ,

4. Պետական զարգացման օգնություն (ODA),

¹⁸Նույն տեղում, էջ 4-11, 23:

¹⁹Dabla-Norris, Era, Espinoza, Raphael, Jahan, Sarwat (2012). “Spillovers to Low-Income Countries: Importance of Systemic Emerging Markets,” IMF working paper No. 12/49, The International Monetary Fund, Washington, D.C.:United States, pp. 12, 23.

²⁰Overseas Development Institute (2009). “The Global Financial Crisis and Developing Countries: Synthesis of the Findings of 10 Country Case Studies,” ODI Working Paper No. 306, London, UK: ODI, pp.2-17: UN-OHRLIS (2009). “The Impact of The Global Financial and Economic Crisis on the Least Developed Countries,” United Nations Office of the High Representative for the Least Developed Countries, Landlocked Developing Countries and Small Island Developing States, New York: United States, pp.7-21: Islam, Iyanatul (2009). “The Global Economic Crisis and Developing Countries: Transmission Channels, Fiscal and Policy Space and the Design of National Responses”, ILO Employment Working Paper No. 36, International Labour Office, Employment Policy Department, International Labor Organization, Geneva: Switzerland, p.7: International Monetary Fund (2009). “The Implications of the Global Financial Crisis for Low-Income Countries,” The International Monetary Fund, Washington D.C: United States, pp.15-21:

5. Մասնավոր կապիտալ հոսքեր՝


- Օտարերկրյ առևտրային ներդրումներ,
- Պորտֆելային ներդրումներ,
- Միջազգային վարկեր:

Վերլուծելով դեպի եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներ արտաքին շուկերի տարածման ուղիները կարելի է եզրակացնել, որ այդ երկրների համար զարգացած և եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների տնտեսական աճի տեմպը կարևորվում է արտահանման ծավալների փոփոխության տեսանկյունից (հատկապես մետաղների, հանածոների և գյուղմթերքի արտահանման ծավալների), մինչդեռ եկամտի միջին մակարդակ ունեցող և «առաջատար» համարվող երկրների տնտեսական աճի տեմպերը պայմանավորում են այդ երկրներից ստացվող ՕՌԼ-ների, տրանսֆերտների, բանկային փոխառությունների ծավալների փոփոխությունը: Հետևաբար, «ռեցեսիայի էֆեկտը» կամ տնտեսական ակտիվության անկումը տարածաշրջանում «առաջատար» համարվող երկրներից առևտրի և ֆինանսական կապերի միջոցով կտարածվի դեպի զարգացող երկրներ: Այս դեպքում գործարար ցիկլերի սինխրոնացման պարագայում բացասական ազդեցության տարածման ժամանակահատվածը կարող է կրճատվել, իսկ իրական հատվածի վրա ազդեցության չափը՝ մեծանալ:

Տարբեր երկրներում արտաքին տնտեսական գործոնները տարբեր կերպ են ազդում տնտեսության իրական հատվածի վրա: Ս. Գարդոն և Մ. Ռեյները (2010թ.), վերլուծելով ՀՏՏԾ-ի ազդեցությունը Կենտրոնական-արևելյան Եվրոպայի և Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրների վրա եկել են այն եզրակացության, որ արտաքին տնտեսական գործոնները խիստ բացասաբար են ազդել այդ երկրների տնտեսության իրական հատվածի վրա (հատկապես ներքին պահանջարկի կրճատման հետևանքով): Որոշ երկրների պարագայում արտաքին առևտուրն ևս հանդես է եկել որպես ճգնաժամի բացասական ազդեցության տարածման կարևոր ուղի՝ հաշվի առնելով տարածաշրջանում խորացող ինտեգրացիան և Եվրամիության (ԵՄ) հետ առևտրաշրջանառության ծավալների աճը վերջին երկու տասնամյակի ընթացքում²¹: Վերը ներկայացված արտաքին շուկերի և

²¹Gardó, Sándor, Reiner, Martin (2010). "The Impact of the Global Economic and Financial Crisis on Central, Eastern and South-Eastern Europe: A Stock-Taking Exercise," ECB Occasional Paper Series, No 114, European Central Bank, Frankfurt am Main: Germany, pp. 21-40.

դրանց իրական հատվածի վրա ազդեցությունը վերաբերող մի շարք այլ աշխատությունների²² վերլուծության հիման վրա արտաքին շուկերի (ինչպես ընդհանուր, այնպես էլ երկրին բնորոշ) ազդեցությունը եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների տնտեսության իրական հատվածի վրա կարելի է ներկայացնել հեղինակի կողմից առաջարկված հայեցակարգային մոդելի միջոցով (գծապատկեր 1.1.3):



Գծապատկեր 1.1.3. Եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների տնտեսություն իրական հատվածի խոցելիությունն արտաքին շուկերի հանդեպև դրանց տարածումը*

**Նշում՝ գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:*

Գծապատկեր 1.1.3-ում ներկայացված շուկերը կարող են միաժամանակ տեղի չունենալ, պարզապես այստեղ ներկայացված են բոլոր այն հնարավոր շուկերը, որոնց նկատմամբ խոցելի են եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրները և դրանց տարածման ուղիները, որոնք բացասաբար են ազդում այդ երկրների տնտեսության իրական հատվածի վրա: Տարածաշրջանի առաջատար համարվող՝ եկամտի միջին մակարդակ ունեցող և զարգացած երկրների տնտեսական աճի տեմպերի դանդաղումը կամ ռեցեսիան, ինչպես նաև մետաղների, հանածոների և գյուղմթերքի գների անկումը՝ պայմանավորված համաշխարհային պահանջարկի կրճատմամբ, բացասաբար է ազդում եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների (հատկապես մետաղներ, հանածոներ և գյուղմթերք արտահանող) տնտեսության իրական հատվածների վրա՝ հիմնականում ներքին պահանջարկի փոփոխության միջոցով: Այդ երկրներից ատացվող տրանսֆերտների կրճատումը (հատկապես առաջնային աղբյուր հանդիսացող երկրից) ինչպես ծավալի, այնպես էլ գնողունակություն տեսանկյունից (եթե այդ երկրում գրանցվել է արժույթային ճգնաժամ) բացասաբար է ազդում տրանսֆերտներ ստացող տնային տնտեսությունների եկամուտների վրա, ինչն էլ հանգեցնում է վերջիններիս կողմից կատարվող վերջնական սպառման ծախսերի կրճատմանը (կախված տվյալ երկրի առանձնահատկություններից տրանսֆերտների ծավալի կրճատումը կարող է կրճատել նաև ներմուծման ծավալները, եթե գումարները ուղղվում են նաև ներմուծվող ապրանքների ձեռքբերման վրա), որն էլ «եկամտի էֆեկտի» միջոցով փոխանցվում է մասնավոր ձեռնարկություններին: Ընկերությունների հասույթի կրճատումը պայմանա-

վորված ինչպես արտահանման ծավալների («առևտրի ուղի»), այնպես էլ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի կրճատմամբ, բացառաբար է անդրադառնում աշխատանքի շուկայի վրա, որն էլ իր հերթին մեծացնում է վերջինիս կրճատման չափը («աշխատանքի շուկա» փոխանցման ուղի): Եթե մասնավոր ընկերությունների արտահանումից ստացվող հասույթը (կախված երկրի առանձնահատկություններից) հատկապես ուղղվում է ներմուծվող ապրանքների ձեռքբերման վրա, արտահանմամբ պայմանավորված ընկերությունների հասույթի կրճատումը ազդում է նաև ներմուծման ծավալների վրա: Մյուս կողմից եկամուտների կրճատումը կարող է հանգեցնել պետության կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սպառման մակարդակի փոփոխության (ինչպես ընկերությունների այնպես էլ տնային տնտեսությունների կտրվածքով):

Ըստ Կ. Ռեյնհարթի և Կ. Ռոգոֆֆի (2009թ.) եկամտի միջին մակարդակ ունեցող երկրներում աշխատավարձերի ավելի ճկուն լինելը մեղմում է զբաղվածության խնդիրը ծանր տնտեսական պայմաններում, իսկ զարգացած երկրների համեմատությամբ սոցիալական ապահովության համակարգում եղած տարբերությունները ևս բացատրում են այդ ճկունությունը²³: Մասնավորապես, Արևելյան Եվրոպայի և կենտրոնական Ասիայի տարածաշրջանում ընկերությունները հրաժարվել էին նոր աշխատակիցներ ընդունելուց, որոշներին ազատել էին, ինչպես նաև փոխել էին աշխատավարձի և պարգևավճարների չափը, կրճատել աշխատատեղերը ՅՏՏԾ-ի ժամանակ²⁴: Հայաստանի դեպքում տնային տնտեսությունների (S/S) 33%-ի մոտ եկամուտները 2009թ.-ին 2008թ.-ի համեմատ նվազել էին: Դրանց 13%-ի դեպքում այն պայմանավորված է եղել ավելի ցածր աշխատավարձի մակարդակով, 14%-ի դեպքում՝ ինքնազբաղվածությունից ստացվող եկամուտների կրճատմամբ, իսկ 19%-ի դեպքում՝ տրանսֆերտների կրճատմամբ (ՀՀ և արտասահմանից ստացվող)²⁵: 2009թ.-ին, ընդհանուր առմամբ, ՀՀ-ում զբաղվածների թիվը կրճատվեց մոտ 30.3 հազարով,

²³Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). *This Time is Different: Eight Centuries of Financial Folly*, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, p.229.

²⁴ World Bank (2011). *The Jobs Crisis: Household and Government Responses to the Great Recession in Eastern Europe and Central Asia*, The World Bank, Washington, D.C.: United States p.14.

²⁵Նույն տեղում, էջ 15:

զբաղվածության մակարդակը աճեց 2.3 տոկոսային կետով²⁶, իսկ տնային տնտեսության ոլորտի իրական վերջնական սպառման ծախսերը կրճատվեցին 4.5%-ով (հավելված 2, աղյուսակ 1): S/S-ների կողմից կատարվող վերջնական սպառման ծախսերի վրա նաև բացասաբար է ազդում գնաճը, որը հիմնականում պայմանավորված է ազգային արժույթի արժեզրկմամբ («գների էֆեկտ» փոխանցման ուղի): Արտասահմանից ստացվող դրամական փոխանցումների ծավալների, ինչպես նաև արտահանումից ստացվող հասույթի կրճատումը կարող է էլավելի մեծացնել ընթացիկ հաշվի պակասուրդը, ինչն էլ ըստ Մ. Բլինեյի (2005թ.) ազգային արժույթի արժեզրկման կամ արժույթային ճգնաժամի պատճառն է եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում²⁷: 2009թ.-ի մարտին ՀՀ-ում գրանցված արժույթային ճգնաժամը²⁸ վերածվեց \$ինանսատնտեսական ճգնաժամի (հիմք ընդունելով Հ. Ավետիսյանի և այլոց (2012թ.) սահմանումները²⁹), քանի որ 2009թ.-ին իրական ՀՆԱ-ի անկումը կազմել էր 14.1%, մինչդեռ 2008թ.-ին իրական ՀՆԱ-ի աճի տեմպը կազմում էր 6.9% (հավելված 2, աղյուսակ 1): Արժեզրկված ազգային արժույթը ազդում է տնային տնտեսության ոլորտի գնողունակության վրա՝ ներմուծված հումքով արտադրված տեղական ծագման ապրանքներ կամ ծառայություններ ձեռք բերելու տեսանկյունից: Իսկ համաշխարհային պահանջարկի աճը, ինչպես նաև այլ գործոններով պայմանավորված (բնակլիմայական աղետներ և այլն) մետաղների, հանածոների և գյուղմթերքի գների աճը ևս բացասաբար են ազդում տեղական արտադրանքի գների վրա (մինչդեռ նշված ապրանքների արտահանողների հասույթը վերջիններիս արտահանման ժամանակ աճում է): Տնտեսական իրավիճակի վատթարացման, տնային տնտեսության ոլորտի ծախսերի, արտաքին և ներքին շուկաներում հասույթի կրճատման պարագայում մասնավոր ձեռնարկությունների կողմից հիմնական միջոցների վրա կատարվող ծախսերը կրճատվում են: Մյուս կողմից տնային տնտեսության ոլորտները ևս կարող են կրճատել

²⁶ՀՀ ԱՎԾ-ի «ArmStatBank.am»-ի «Բնակչության և սոցիալական գործընթացներ» բաժնի «Զբաղվածություն և գործազրկություն» ենթաբաժնի «Զբաղվածությունն ըստ ցուցանիշների և տարիների», «Գործազրկության մակարդակն ըստ ցուցանիշների և տարիների» առցանց տվյալների բազաներ (<http://www.armstatbank.am>):

²⁷Bleaney, Michael (2005). "The Aftermath of a Currency Collapse: How Different are Emerging Markets?", *The World Economy*, Blackwell Publishing Ltd. (Oxford, United Kingdom), Volume 28, Issue 1, p.80.

²⁸Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «\$ինանսական կայունության հաշվետվություն 2012»: -Երևան, 2013թ., էջ 63:

²⁹Ավետիսյան Հ., Գրիգորյան Վ., Դալլաբյան Ա., Սարգսյան Հ., «Ընթացիկ հաշվի կայունության գնահատման մոտեցումները Հայաստանում», աշխատանքային փաստաթուղթ 08/12-01, ՀՀ Կենտրոնական բանկ, -Երևան, 2012թ., էջ 26:

հիմնական միջոց համարվող ապրանքների վրա կատարվող ծախսերը: Կենտրոնական արևելյան Եվրոպայի և Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանի դեպքում ՀՏՏԾ-ի հետևանքով ամենամեծ անկումը ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչներից արձանագրվել էր հիմնական միջոցների համախառն կուտակման մասով, ինչն ըստ Ս. Գարդոյի և Մ. Ռեյների (2010թ.) ՀՆԱ-ի ամենացիկ իկ ծախսային բաղադրիչն է, որի վրա ուղղակիորեն ազդում է ֆինանսավորման առկայությունը և դրա գինը³⁰: Նմանատիպ արդյունք էր գրանցել ՀՀ-ում: Այսպես՝ 2009թ.-ին նախորդ տարվա համեմատ հիմնական միջոցների համախառն կուտակումը կրճատվել էր 25.4%-ով (հավելված 2, աղյուսակ 1): ՕՌԵՆ-ների (տեղական շուկայում գործող օտարերկրյա կապիտալ ընկերությունների կողմից վերաներդրված շահույթի կամ արտասահմանյան ընկերությունների կողմից տեղական ընկերությունների բաժնետիրական կապիտալում ներդրումների) ծավալների կրճատումը, պայմանավորված ինչպես տվյալ, այնպես էլ այլ երկրներում տնտեսական ակտիվությամբ բացասաբար է անդրադառնում հիմնական միջոցների համախառն կուտակման, ինչպես նաև աշխատանքի շուկայի վրա (եթե օտարերկրյա կապիտալ ընկերությունների կողմից վերաներդրված շահույթը (կախված երկրի առանձնահատկություններից) հիմնականում ուղղվում է ներմուծվող ապրանքների ձեռքբերման վրա, ապա վերջինիս ծավալի փոփոխությունը ազդում է նաև ներմուծման ծավալների վրա): 2009թ.-ին ՀՀ-ում նախորդ տարվա համեմատ հիմնական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալը կրճատվեց 268.8 մլն ԱՄՆ դոլարով³¹: Մասնավոր ընկերությունների և տնային տնտեսությունների նվազող եկամուտները կրճատում են պետական բյուջե հավաքագրվող եկամուտների ծավալը՝ ներառյալ հարկային («եկամտի էֆեկտ»-ի ազդեցություն), ինչի արդյունքում կառավարությունը կրճատում է սոցիալական պաշտպանությանը, առողջապահությանը, կրթությանը, ենթակառուցվածքների բարեկարգմանն ուղղվող ծախսերը: Կարող են կրճատվել նաև մասնավոր ձեռնարկություններին տրամադրվող արտոնությունները և լրավճարները, եթե կառավա-

³⁰Gardó, Sándor, Reiner, Martin (2010). "The Impact of the Global Economic and Financial Crisis on Central, Eastern and South-Eastern Europe: A Stock-Taking Exercise," ECB Occasional Paper Series, No 114, European Central Bank, Frankfurt am Main: Germany, p.35.

³¹ ՀՀ ԱՎԾ-ի «Օտարերկրյա ներդրումներ»-ի տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=246>):

րությունը պետական պարտքի (հիմնականում արտաքին՝ կախված մակրոտնտեսական կայունութիւնից) ավելացման միջոցով չկարողանա հաղթահարել ռեցեսիայի բացասական հետևանքները՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելով: Հարկային եկամուտների փոփոխութիւնը կրճատում է կառավարութեան կողմից հիմնական միջոցների ձեռքբերման, ինչպես նաև բնակչութեան անհատական, կուլտիվ պահանջմունքների բավարարմանն ուղղվող ծախսերը: 2009թ.-ին ՀՀ պետական բյուջեի հարկերից, տուրքերից և պարտադիր սոցիալական ապահովութեան վճարներից ստացվող եկամուտները կրճատվեցին մոտ 13.9% (հավելված 2, աղյուսակ 2), ՀՀ կառավարութեան պարտքը ավելացավ 1.39 մլրդ ԱՄՆ դոլարով կամ 88.1% (հավելված 2, աղյուսակ 3), ինչն էլ հնարավորութիւն տվեց ՀՀ կառավարութեանը ավելացնելու սոցիալական պաշտպանութեան, առողջապահութեան, կրթութեան, բնակարանային շինարարութեան և կոմունալ ծառայութիւնների վրա կատարվող ծախսերը (հավելված 2, աղյուսակ 10)՝ ճգնաժամի բացասական ազդեցութիւնը մեղմելու համար: Բյուջեի ծախսային մասը ապահովելու և սոցիալական լարվածութիւնը մեղմելու տեսանկյունից եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում առանձնակի դեր են խաղում օտարերկրյա պետութիւններից, միջազգային կառույցներից ստացվող դրամաշնորհները, օգնութիւնը կամ ֆինանսական աջակցութիւնը՝ համապատասխան բարեփոխումների իրականացման համար: 2009թ.-ին ՀՀ-ի ստացած գուտ պաշտոնական աջակցութիւնը, օգնութիւնը նախորդ տարվա համեմատ ավելացել էր 223.3 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 526 մլն ԱՄՆ դոլար³²: Եթե այդ աջակցութիւնը նաև ուղղվում է ներմուծվող ապրանքների և ծառայութիւնների ձեռքբերման վրա (կախված երկրի առանձնահատկութիւններից), ապա վերջիններիս ծավալների փոփոխութիւնը ազդում է ներմուծման ծավալների վրա:

Ներքին պահանջարկի կրճատումը հանգեցնում է ներմուծման ծավալների կրճատմանը, իսկ վերջինիս փոփոխութիւնը արտահանման ծավալների կրճատմանը գերազանցելու դեպքում կարող է բարելավել ապրանքների և ծառայութիւնների արտահանման և ներմուծման սալդոն (ապրանքների և ծառայութիւնների բացասական հաշվե-

³² ՀԲ-ի «World DataBank World Development Indicators» տվյալների բազա առ 2015թ. հուլիսի 1 (<http://databank.worldbank.org/data/views/variableselection/selectvariables.aspx?source=world-development-indicators>):

կշիռ ունեցող երկրների դեպքում): Կենտրոնական արևելյան Եվրոպայի և հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանի երկրների մեծամասնության մոտ ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման սալդոն դրական ազդեցություն ունեցավ այդ երկրների ՅՆԱ-ի աճի տեմպի վրա ՅՖՏԾ-ի ժամանակ³³: ՅՅ-ում ճգնաժամային տարում ապրանքների և ծառայությունների իրական արտահանման և ներմուծման կրճատումը համապատասխանաբար կազմեց՝ 10.4 և 19.2% (հավելված 2, աղյուսակ 1):

Իսկ տարածաշրջանի առաջատար՝ Եկամտի միջին մակարդակ ունեցող և զարգացած երկրների տնտեսական աճի տեմպի դանդաղումը կամ ռեցեսիան կարող է հանգեցնել տեղական բանկերի կողմից ներգրավվող վարկային միջոցների (բազմակողմ համաձայնագրերի հիման վրա միջազգային կառույցներից կամ այլ ֆինանսական միջնորդությամբ զբաղվող հաստատություններից և այլ) ծավալների կրճատմանը, և որպես դրա հետևանք այդ երկրների ռեզիդենտներին տրամադրվող վարկերի ծավալների նվազմանը: Ըստ Ս. Գարդոյի և Մ. Ռեյների (2010թ.) ներքին բանկային ոլորտի կայունության տեսանկյունից կարևոր գործոն է համարվում գլխամասային գրասենյակի կողմից ընդունվող որոշումը՝ բանկի օտարերկրյա մասնաճյուղերի կապիտալ իզացիան համապատասխան մակարդակի վրա պահպանելու վերաբերյալ³⁴: Հասկանալի է, որ ներգրավվող վարկային միջոցների կրճատումը (պայմանավորված համաշխարհային տնտեսության անկմամբ, տոկոսադրույքների բարձրացմամբ և այլն) տեղական բանկային համակարգի միջոցով ազդում է տնտեսության իրական հատվածի վրա, որի բացասական զարգացումները ևս ազդում են բանկային համակարգի վրա (անհուսալի վարկերի աճ և այլն): Բանկերը, խտացնելով վարկի տրամադրման պահանջները, դանդաղեցնում են տնտեսության վերականգնումը: Որպես բացասական սցենար հնարավոր է նաև բանկային ճգնաժամի առաջացումը: 2009թ.-ին ՅՅ-ում առևտրային բանկերի անհուսալի վարկեր/ընդամենը վարկեր հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ աճեց 0.6

³³Gardó, Sándor, Reiner, Martin (2010). "The Impact of the Global Economic and Financial Crisis on Central, Eastern and South-Eastern Europe: A Stock-Taking Exercise," ECB Occasional Paper Series, No 114, European Central Bank, Frankfurt am Main: Germany, p.34.

³⁴Gardó, Sándor, Reiner, Martin (2010). "The Impact of the Global Economic and Financial Crisis on Central, Eastern and South-Eastern Europe: A Stock-Taking Exercise," ECB Occasional Paper Series, No 114, European Central Bank, Frankfurt am Main: Germany, p. 33.

տոկոսային կետով՝ կազմելով 4.86%³⁵, S/S-ներին տրված վարկերի ծավալը նվազեց 7.4%-ով, մինչդեռ առևտրային բանկերի կողմից մասնավոր ընկերություններին տրված վարկերի ծավալը աճեց 37%-ով (գծապատկեր 2.1.6, 2.1.7): Ընդհանուր առմամբ բանկային համակարգի ազդեցությունը ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա 2009թ.-ին եղել է աննշան (ճգնաժամի ազդեցության խորացման տեսանկյունից): Իսկ տնտեսության ռեցեսիայից դուրս գալու վրա ազդող հիմնական գործոնը՝ ներքին պահանջարկի հնարավորինս արագ վերականգնումն է արտաքին պահանջարկի կրճատման, արտասահմանից ստացվող տրանսֆերտների պայմաններում:

Այսպես՝ մակրոտնտեսական խոցելիությունը, ընդհանուր առմամբ, կարող է բնորոշվել որպես արտաքին շուկերի հանդեպ տնտեսության անպաշտպանվածություն, որը հանգեցնում է երկրի զարգացման խաթարմանը: Վերջինս պայմանավորված է տնտեսության իրական հատվածի և արտաքին տնտեսական գործոնների կապերով: Առաջնային դեր է խաղում տարածաշրջանում «առաջատար» համարվող եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների տնտեսական աճի տեմպերը՝ որպես դեպի եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներ «ռեցեսիայի էֆեկտի» տարածման ուղի: Իսկ հիմնականում մետաղներ, հանածոներ և գյուղմթերք արտահանող և եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների դեպքում վերջիններիս արտահանման ծավալների վրա ազդում են դրանց գները, ինչն իր հերթին պայմանավորված է զարգացած և եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների աճի տեմպերով (համաշխարհային պահանջարկ): Եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում հիմնականում ներքին պահանջարկի անկման չափով և վերականգման տևողությամբ է պայմանավորված երկրում ռեցեսիայի տևողությունը: Արտաքին շուկերի բացասական ազդեցությունը հաղթահարելու և մեղմելու համար որոշիչ գործոն է հանդիսանում տնտեսության ճկունությունը: Վերջինս բնութագրող ցուցանիշների արժեքները կանխորոշում են շուկերի բացասական ազդեցությունը մեղմելու և հաղթահարելու երկրի կարողությունը (պետական պարտքի ավելացում և այլն): Իսկ միջնաժամկետ հատվածում զարգացող երկրները միայն տնտեսության

³⁵ Հ-ի «World DataBank World Development Indicators» առցանց տվյալների բազա (վերջին մուտք՝ 08.05.2015թ., <http://databank.worldbank.org/data/views/variableselection/selectvariables.aspx?source=world-development-indicators>):

ճկունություն աստիճանի բարձրացման միջոցով կկարողանան մեղմել և հաղթահարել արտաքին շուկերի նկատմամբ տնտեսության իրական հատվածի խոցելիությունն իր ոլորտի բացասական ազդեցությունները:

1.2 ԱՎՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԳՈՐԾՈՆԵՐԻ ՀԱՄԱԽՈՒՄԲԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՎՐԱ

Արտաքին շուկերով պայմանավորված եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում բավականին մեծ չափերի հասնող ընթացիկ հաշվի պակասուրդի վատթարացումը (արտահանման ծավալների, տրանսֆերտների կրճատում և այլն) հանգեցնում է արժույթային ճգնաժամի: Մ. Բլիները (2005թ.) նշում է, որ արժույթային ճգնաժամի սահմանման ժամանակ այլ հեղինակների կողմից կատարված հետազոտություններում հաշվի է առնվել մեծ չափերի հասնող սովորական արժեզրկումը, այլ ոչ թե սպեկուլյատիվ հարձակման հետևանքով ազգային արժույթի արժեզրկումը, մինչդեռ եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում ազգային արժույթի արժեզրկումը, սովորաբար, պայմանավորված է «ընթացիկ հաշվի անհավասարակշռությամբ»³⁶: Ինքնին ֆինանսական ճգնաժամերը (ինչպես ին է արժույթային ճգնաժամը և այլն) խիստ բացասաբար են ազդում տվյալ երկրի տնտեսության իրական հատվածի վրա:

Այժմ փորձ ենք անդրադառնալ ֆինանսական ճգնաժամերի տեսակների և դրանց ազդեցությանը տնտեսության իրական հատվածի վրա: Դեռևս գոյություն ունի ֆինանսական ճգնաժամի միասնական սահմանում: Վերլուծությունները և սահմանումները հիմնականում վերաբերում են ֆինանսական ճգնաժամերի առանձին տեսակների: Տարբեր սահմանումների միջոցով որոշվում է ֆինանսական ճգնաժամերի սկիզբը, կիրառելով երկու՝ «սահմանային արժեքի» և «իրադարձությունների» մեթոդները³⁷: 1987թ.-ին Բ. Այ խենգրինը և Ռ. Պորտենը ֆինանսական ճգնաժամը սահմանել են որպես ֆինանսական

³⁶Bleaney, Michael (2005). "The Aftermath of a Currency Collapse: How Different are Emerging Markets?", *The World Economy*, Blackwell Publishing Ltd. (Oxford, United Kingdom), Volume 28, Issue 1, p.79.

³⁷Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). *This Time is Different: Eight Centuries of Financial Folly*, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, pp.4-14.

շուկաների հիմնախնդիր (բնականոն գործունեության խաթարում), որը, սովորաբար, պայմանավորված է ակտիվների գների անկմամբ և վարկառուների ու ֆինանսական միջնորդների անվճարունակությամբ, ինչը տարածվում է ամբողջ ֆինանսական համակարգում՝ խաթարելով տնտեսության մեջ կապիտալի տեղաբաշխման գործընթացը³⁸: Իսկ Ս. Քլասսենսը և Ա. Քոզեն (2013թ.), հիմք ընդունելով վերը նշված մոտեցումը, առանձնացնում են չորս տեսակի ֆինանսական ճգնաժամեր, որոնք որոշվում են քանակական և որակական մեթոդներով³⁹: Նշված չորս տեսակի ճգնաժամերի սահմանումները ներկայացված են աղյուսակ 1.2.1-ում:

Աղյուսակ 1.2.1

Ֆինանսական ճգնաժամերի սահմանումները⁴⁰

Տեսակ	Սահմանում
	<i>Քանակական մեթոդաբանության ամբողջական</i> Ներառում է ազգային արժույթի վրա սպեկուլյատիվ հարձակում, որի Արժու - հետևանքով գրանցվում է դեալ վաճառ (կամ կտրուկ արժեզրկում), որը թային ստիպում է պետական կառույցներին պաշտպանել ազգային արժույթը՝ ճգնաժամ ախտաբանում մեծ չափերի հասնող միջազգային պահուստները, կամ կտրուկ բարձրացնելով տոկոսադրույթները, կամ էլ կապիտալի վրա սահմանափակումներ դնելով:

Աղյուսակ 1.2.1-ի շարունակության ու ն

Յանկար-Մեծ չափի հասնող օտարերկրյա կապիտալ հոսքերի կրճատում (շատ դեպ - ծակի քերում անսպասելի), կամ էլ դեպի տվյալ երկիր համախառն կապիտալ դադար հոսքերի կտրուկ փոփոխություն (reversal), որտեղ հավանաբար տեղի է ունեցել վարկերի ծավալների կտրուկ անկում:	
	<i>Որակական մեթոդաբանության ամբողջական</i>
Պարտքային ճգնաժամ	<i>Արտաքին պարտքի ճգնաժամ</i> Տեղի է ունենում այն ժամանակ, երբ երկիրը ի վիճակի չէ (կամ չի ցանկանում) սպասարկել իր արտաքին պարտքը: Այն կարող է ինչպես պետական կամ մասնավոր պարտքային ճգնաժամ (կամ էլ երկուսը միասին):
	<i>Ներքին պետական պարտքի ճգնաժամ</i> Տեղի է ունենում, երբ երկիրը չի կատարում իր ներքին հարկաբյուջե-տային պարտավորությունները՝ ուղղակիորեն դեֆոլտի գնալու, ինֆլյացիայի, սեփական արժույթի արժեքի նվազեցման (debasement) ճանապարհով, կամ էլ ֆինանսական ռեպրեսիայի որևէ տեսակի միջոցով:
Բանկային ճգնաժամ	<i>Յամակարգային բանկային ճգնաժամ</i> Կային Փաստացի կամ պոտենցիալ բանկերից ավանդների ետ պահանջում կամ ճգնաժամային խնդիրներ, որոնք կարող են հանգեցնել նրան, որ բանկերը ժամանակավորապես դադարեցնեն պահվելների կոնվերտացիան, կամ էլ ստիպել կառավարությանը միջամտել՝ այն կանխելու նպատակով (մեծ չափերի հասնող լիկվիդային միջոցներ կամ կապիտալ տրամադրելով):

³⁸Eichengreen, B., Portes, R. (1987). "The Anatomy of Financial Crises," NBER working paper series, NBER Working Paper No. 2126, National Bureau of Economic Research, Cambridge, MA: United States, pp.1-2.

³⁹Claessens, Stijn and Kose, Ayhan M. (2013). "Financial Crises: Explanations, Types, and Implications," IMF Working Paper No. 13/28, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, pp.11-12.

⁴⁰Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, նախորդ տողատակի աղբյուրում բերված ճգնաժամերի տեսակների սահմանումների հիման վրա:

Այժմ դիտարկենք տարբեր տեսակի ճգնաժամերի ազդեցությունը տնտեսության իրական հատվածի վրա: Ս. Բլասսենսը և Ա. Քոզեն (2013թ.) համապարփակ տեսքով ներկայացնում են տարբեր տեսակի ճգնաժամերի ազդեցությունը տնտեսության իրական հատվածի վրա, որոնք ներկայացվում են ստորև⁴¹:

Ֆինանսական ճգնաժամերը խիստ բացասաբար են ազդում տնտեսական ակտիվության վրա, իսկ ֆինանսական ճգնաժամերով պայմանավորված ռեցեսիաները, սովորաբար, ավելի խորն են լինում, քան երբ դրանք պայմանավորված են սովորական գործարար ցիկլով: Այս ռեցեսիաների միջին տևողությունը ավելի երկար է լինում՝ մոտ 6 եռամսյակ, մինչդեռ սովորական ռեցեսիայի տևողությունը, ընդհանուր առմամբ, 4 եռամսյակ է, իսկ վերջիններիս պատճառով ՅՆԱ-ի անկումը ավելի մեծ է, քան սովորական ռեցեսիայի ժամանակ: Ֆինանսական ճգնաժամերով պայմանավորված ռեցեսիաների ժամանակ սպառման մակարդակի, ներդրումների, արդյունաբերական արտադրանքի ծավալի, զբաղվածության մակարդակի, արտահանման և ներմուծման ծավալների կրճատումը ավելի մեծ է լինում, քան սովորական ռեցեսիաների ժամանակ: Օրինակ՝ սովորական ռեցեսիաների ժամանակ, ընդհանուր առմամբ, սպառման աճի տեմպը դանդաղում է (բայց չի դառնում բացասական), մինչդեռ ֆինանսական ճգնաժամով պայմանավորված ռեցեսիայի ժամանակ վերջինիս մակարդակը կրճատվում է: Ֆինանսական ճգնաժամերից հետո տնտեսության վերականգնումը, սովորաբար, դանդաղում է, ինչը պայմանավորված է ներքին թուլությամբ և վարկերի տրամադրման խիստ պայմաններով: Իսկ ինչ վերաբերում է միջնաժամկետ ազդեցությանը, ապա բանկային ճգնաժամերից հետո ՅՆԱ-ի վերականգնումը շատ ավելի դանդաղ է տեղի ունենում: Հարկաբյուջեային գործընթացի վերաբերյալ պետք է նշել, որ բյուջեի վրամեծ բեռ է հանդիսանում բանկային ճգնաժամի առաջացումը: Այսպես՝ եկամտի միջին մակարդակ ունեցող երկրում բյուջեի վրա բեռը միջինում կազմում է ՅՆԱ-ի 6.8%, իսկ բանկային ճգնաժամերի հետևանքով այն կարող է կազմել ՅՆԱ-ի մոտ 10%-ը (զարգացած երկրներում՝ 3.8%): Հիմք ընդունելով այլ հեղինակների գնահատականները՝ Ս. Բլասսենսը և Ա. Քոզեն նշում են, որ պարտքային ճգնաժամի ազդեցու-

⁴¹Claessens, Stijn and Kose, Ayhan M. (2013). "Financial Crises: Explanations, Types, and Implications," IMF Working Paper No. 13/28, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, pp.28-30.

թյուրը տնտեսության իրական հատվածի վրա ավելի մեծ է, քան բանկային և արժույթային ճգնաժամերի ժամանակ, իսկ ՅՆԱ-ի անկումը սովորաբար, պարտքային ճգնաժամից մեկ տարի անց կազմում է 3-5%, իսկ 8 տարի անց՝ 6-12%, թեպետ արժույթային ճգնաժամերը հաճախ հանգեցնում են ՅՆԱ-ի կրճատմանը: Ֆինանսական հատվածում առաջացած խնդիրները, ինչպես նաև վատթարացող տնտեսական վիճակը հանգեցնում են պետական պարտքի կտրուկ մեծացման: Յեղիսակները նշում են նաև, որ հարկային եկամուտների զգալի կրճատման և պետական բյուջեի ծախսային մասի ավելացման հետևանքով բանկային ճգնաժամից 3 տարի անց կառավարության պարտքը միջինում ավելանում է 86%-ով: Ս. Քլասսենսը և Ա. Քոզեն նշում են, որ վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով բյուջեի վրա բեռը (որպես խթանող հարկաբյուջետային քաղաքականության և կրճատվող հարկային եկամուտների հետևանք) զարգացած երկրներում միջինում կազմել է ՅՆԱ-ի 21.4%, իսկ եկամտի միջին մակարդակ ունեցող երկրներում՝ 9.1%:

Դիտարկենք նաև տարբեր տեսակի ճգնաժամերի ազդեցությունը աղքատության մակարդակի վրա: 2. Նիկոլոսկին (2011թ.), գնահատելով զարգացող երկրներում (մեկ շնչի հաշվով ցածր և միջին եկամուտներ ունեցող 90 երկրի տվյալներ 1970-2007թթ. ժամանակահատվածի համար) հիմնական համարվող երեք ֆինանսական ճգնաժամերի (արժույթային, բանկային և պարտքային) ազդեցությունը աղքատության վրա, եկել է այն եզրակացության, որ աղքատության վրա ամենանշանակալի ազդեցությունն է գործում արժույթային ճգնաժամը, ինչի մասին փաստում են նաև հեղինակի կողմից կատարված այլ աշխատությունների ուսումնասիրության արդյունքները (աղյուսակ 1.2.2)⁴²:

Յեղիսակի կողմից արժույթային ճգնաժամի գնահատման արդյունքները համահունչ են ակնկալվող արդյունքներին, քանի որ գնաճը աղքատների վրա խիստ բացասաբար է անդրադառնում, ինչն էլ համընկնում է Վ. Իսթելիի և Ս. Ֆիշերի (2000թ.) վերլուծության արդյունքների հետ (38 երկրից 31,869 տնային տնտեսությունների

⁴²Nikoloski, Zlatko (2011). "Impact of Financial Crises on Poverty in the Developing World: An Empirical Approach," *Journal of Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 47, No. 11, pp.1760–1761, 1764-1769.

հարցման տվյալների հիման վրա), համաձայն որի իրական եկամուտների կրճատման դեպքում աղքատների համար գնաճն ավելի մեծ բացասական ազդեցություն է թողնում աղքատների վրա, քան հարուստների⁴³:

Աղյուսակ 1.2.2

Ճգնաժամերի տեսակները և դրանց ազդեցությունները աղքատության վրա⁴⁴

Ճգնաժամի տեսակ	Ազդեցությունն աղքատության վրա (ակնկալվող սրդյունք)	Ազդեցությունն աղքատության վրա (գնահատման սրդյունք)
Արժույթային	<ul style="list-style-type: none"> Աղքատության մակարդակի և խորության ցուցանիշի փոփոխություն (աճ) Գների բարձրացումը (հատկապես պարենային ապրանքների գները) անհամեմատ առավել մեծ ազդեցություն է ունենում աղքատների վրա Աշխատանքի շուկայի և տնտեսական ակտիվության ամբողջական ավորված աղքատների վիճակի վատթարացում 	<p>Օրեկան 1.25 ԱՄՆ դոլարի դեպքում <i>Աղքատության մակարդակ</i></p> <p>Ճգնաժամը ավելացնում է աղքատության մակարդակը, ընդհանուր առմամբ, 4.44 տոկոսային կետով տրոփ ժամանակահատվածում:</p> <p><i>Աղքատության խորություն</i></p> <p>Ճգնաժամը այդ ցուցանիշը ավելացնում է, ընդհանուր առմամբ, 2.79 տոկոսային կետով տրոփ ժամանակահատվածում:</p>
Բանկային	<ul style="list-style-type: none"> Աղքատության մակարդակի և խորության ցուցանիշի փոփոխություն (աճ) Ուղղակի ազդեցությունը պետք է լինի սահմանափակ 	<p>Օրեկան 1.25 ԱՄՆ դոլարի դեպքում <i>Աղքատության մակարդակ</i></p> <p>Վիճակագրորեն ոչ նշանակալի ազդեցություն է տրոփ ժամանակահատվածում:</p> <p><i>Աղքատության խորություն</i></p> <p>Ճգնաժամը այս ցուցանիշը ավելացնում է, ընդհանուր առմամբ, 2.21 տոկոսային կետով տրոփ ժամանակահատվածում:</p>
Պարտքային	<ul style="list-style-type: none"> Աղքատության մակարդակի անուղղակի աճ՝ կառավարության ծախսերի կրճատման պատճառով 	<p>Օրեկան 1.25 ԱՄՆ դոլարի դեպքում <i>Աղքատության մակարդակ</i> և <i>խորություն</i></p> <p>Վիճակագրորեն ոչ նշանակալի ազդեցություն է տրոփ ժամանակահատվածում:</p>

Անդրադառնանք նաև ռեցեսիաները պայմանավորող դեպքերին կամ իրադարձություններին: Ս.Բլասսենսը և Ս. Ղոշը (2013թ.)⁴⁵ (23 զարգացած և 38 եկամտի միջին մակարդակ ունեցող երկրի 1960-2011թթ. ընկած ժամանակահատվածի եռամսյակային տվյալների ուսումնասի-


⁴³Easterly, William and Fischer, Stanely (2000). "Inflation and the Poor", World Bank policy research working paper No. 2335, The World Bank, Washington, D.C.:United States, pp.3, 7-9, 13-14, 16-17, 20.
⁴⁴Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով հետևյալ հոդվածը: Nikoloski, Zlatko (2011). "Impact of Financial Crises on Poverty in the Developing World: An Empirical Approach," *Journal of Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 47, No. 11, pp.1760-1761, 1767, 1769.
⁴⁵Claessens, S., Ghosh, Swati R. (2013). "Capital Flow Volatility and Systemic Risk in Emerging Markets: The Policy Toolkit," Chapter 3 in *Dealing with the Challenges of Macro Financial Linkages in Emerging Markets*, eds. Otaviano Canuto and Swati R. Ghosh, A World Bank Study, The World Bank, Washington, DC.: United States, pp.93-94.

րու թյան հիման վրա) պարզել են, թե ֆինանսական հատվածին բնորոշ որ դեպքերն են տեղի ունենում ռեցեսիաների և տնտեսության վերականգնման ընթացքում (գծապատկեր 1.2.1 և 1.2.2)՝ կենտրոնանալով միայն «արտառոց երևույթների» վրա և բացառելով սովորական համարվող վարկերի ծավալների աճը և տնտեսական անկումները, ակտիվների գների անկումը կամ աճը, ՀՆԱ-ի նկատմամբ փոքր չափերի հասնող կապիտալի ներհոսքը կամ արտահոսքը, որոնք, սովորաբար, ուղեկցում են գործարար ցիկլերին:


Գծապատկեր 1.2.1-ից կարելի է նկատել, որ եկամտի միջին մակարդակ ունեցող երկրներում ռեցեսիաների առաջացումը հիմնականում պայմանավորված է եղել ֆինանսական ճգնաժամերով (136 դեպքից 90 դեպք), որին հետևել են արժեթղթերի գների անկումը (42 դեպք), 13-ի դեպքում այն պայմանավորված է եղել բնակարանների գների անկմամբ⁴⁶: Գծապատկեր 1.2.1-ից և 1.2.2-ից կարելի է եզրակացնել նաև, որ որոշ ֆինանսական ճգնաժամերին նախորդել են կապիտալ հոսքերի, արժեթղթերի և բնակարանների գներին զգալի աճը: Հետևաբար, արտաքին շուկերով պայմանավորված որևէ տեսակի ճգնաժամի առաջացումը, որին նախորդել են գծապատկեր 1.2.2-ում նշված դեպքերը, խիստ բացասաբար է անդրադառնում տնտեսության վերականգնման տևողության վրա:

Վերոգրյալից կարելի էզրակացնել, որ եկամտի միջին մակարդակ ունեցող երկրներում ռեցեսիաների գերակշիռ մասը հիմնականում պայմանավորված է եղել ֆինանսական ճգնաժամերով, որի հետևանքով էլ ռեցեսիաների տևողությունն ավելի երկար է լինում, իսկ տնտեսության վերականգնումը դանդաղում է, ինչն էլ ազդում է բնակչության կենսամակարդակի վրա՝ հանգեցնելով աղքատության մակարդակի և խորության ցուցանիշի փոփոխության (հատկապես արժույթային ճգնաժամի հետևանքով):

⁴⁶Նույն տեղում, էջ 95:



Գծապատկեր 1.2.1. 1960-2011թթ. ռեցեսիաները պայմանավորած հիմնական գործոնները (% , ընդհանուր ռեցեսիաների քանակի մեջ (N= 156, 137))⁴⁷



Գծապատկեր 1.2.2. 1960-2011թթ. տնտեսության վերականգնումը պայմանավորած չորս հիմնական գործոնները (% , ընդհանուր տնտեսության վերականգնման քանակի մեջ (N= 134, 116))⁴⁸

Իսկ եթե ռեցեսիան պայմանավորող այլ իրադարձությունները (վարկավորման կրճատում, բնակարանների գների անկում) ֆինանսական ճգնաժամերի հետևանք են, կամ ել նախորդել են այդ ֆինանսական ճգնաժամերին (հատկապես արտաքին շուկով պայմանավորված), ապա դրանք ևս դանդաղեցնում են ներքին պահանջարկի

⁴⁷ Claessens, Stijn, Ghosh, Swati R. (2013). "Capital Flow Volatility and Systemic Risk in Emerging Markets: The Policy Toolkit," Chapter 3 in *Dealing with the Challenges of Macro Financial Linkages in Emerging Markets*, eds. Otaviano Canuto and Swati R. Ghosh, A World Bank Study, The World Bank, Washington, DC.: United States, p.95. Նշում՝ հաշվարկները կատարված են նշված էջում ներկայացված աղյուսակի տվյալների հիման վրա:

⁴⁸ Նույն տեղում:

վերականգնումը: Մյուս կողմից, եթե տնտեսական աճը պայմանավորված է եղել մեծ չափերի հասնող կապիտալի հոսքերի աճով, որոնք հնարավորություն են տալիս բանկային համակարգին ավելացնելու իրական հատվածին տրամադրվող վարկերի ծավալը, ապա այդ հոսքերի կրճատումը խիստ բացասաբար է ազդում ներքին պահանջարկի աճի տեմպերի վրա, անդրադառնում է մակրոտնտեսական կայունության վրա, ինչպես նաև մեծացնում է \$ինանսական հատվածում առկա համակարգային ռիսկերը (հավելված 1, գծապատկեր 1): Մակրոտնտեսական կայունության տեսանկյունից (մակրոտնտեսական խոցելիություն) մեծ չափերի հասնող կապիտալի ներհոսքը (զուտ արտահայտությամբ) բացասաբար են ազդում տվյալ երկրում խնայողությունների և ներդրումների, ազգային արժույթի փոխարժեքի, գնաճի և ընթացիկ հաշվի վրա՝ հատկապես ազատ լողացող փոխարժեք ունեցող երկրներում ազգային արժույթը արժևորվում է, իսկ ընթացիկ հաշվի պակասուրդն ավելի է մեծանում, արձանագրվում է գնաճ և այլն⁴⁹:

Մյուս կողմից, ընթացիկ հաշվի պակասուրդն այն ցուցանիշն է, որը մատնանշում է երկրի մակրոտնտեսական խոցելիությունը արտաքին շուկերի հանդեպ, եթե այն մեծ չափերի է հասնում: Խնդիրը այդ պակասուրդի պահպանման կամ կրճատման մեջ է, քանի որ վերջինիս զգալի փոփոխությունը արժույթային ճգնաժամի պատճառ է հանդիսանում: Ըստ Ջ. Միլեսի-Ֆերրեթիի և Ա. Ռազինի (1996թ.) ընթացիկ հաշվի պակասուրդ/ՅՆԱ հարաբերակցության, օրինակ, 5%-ը, ըստ երկրան անհանգստանալու տեղիք պետք է տա, հատկապես եթե պակասուրդը \$ինանսավորվում է պարտքի, կամ էլ պահուստների հաշվին, սակայն նախքան որևէ չափ որպես սահմանային շեմ ընդունելը անհրաժեշտ է հաշվի առնել, թե ո՞ր գործոնները պետք է դիտարկել, համաձայն որոնց այդ չափը կարելի է համարել որպես կայուն մակարդակ: Ըստ հեղինակների վերլուծության, երկար ժամանակ պահպանվող ընթացիկ հաշվի պակասուրդը ճգնաժամի պատճառ է դառնում այն երկրներում, որտեղ արտահանող ոլորտի մասնաբաժինը տնտեսության մեջ փոքր է, իրական փոխարժեքը արժևորված է պատմական միջինի համեմատ և խնայողությունների

⁴⁹Claessens, Stijn, Ghosh, Swati R. (2013). "Capital Flow Volatility and Systemic Risk in Emerging Markets: The Policy Toolkit," Chapter 3 in *Dealing with the Challenges of Macro Financial Linkages in Emerging Markets*, eds. Otaviano Canuto and Swati R. Ghosh, A World Bank Study, The World Bank. Washington, DC: United States, p.108.

մակարդակը ցածր է: Իսկ ընթացիկ հաշվի կայունության տեսանկյունից կարևոր են կառավարության կողմից վարվող քաղաքականության շարունակականությունը, վերջինիս փոփոխությունները: Յեղիսակները մանրամասն անդրադարձնում են նաև կայունության ցուցանիշներին, որոնցով էլ բացատրվում է ընթացիկ հաշվի պակասուրդի կայունությունը՝ կառուցվածքային ցուցանիշներ (տնտեսական աճ, տնտեսության բացություն, առևտուր և այլն), մակրոտնտեսական քաղաքականության ցուցանիշներ (բյուջեի պակասուրդ և այլն)⁵⁰: Այստեղ հարցը կայանում է նրանում, թե արդյոք ի՞նչի հաշվին է ֆինանսավորվում կամ պահպանվում ընթացիկ հաշվի պակասուրդը: Եթե պակասուրդը հիմնականում պահպանվում է տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների (ուղղակի և արտֆելային) հաշվին, ապա երկրի իրական հատվածի խոցելիությունը պայմանավորված է այդ հոսքերի ծավալների կրճատմամբ: Իսկ մեծ չափերի հասնող օտարերկրյա ներդրումների ծավալների կտրուկ կրճատման դեպքում (մետաղների գների կտրուկ անկման, տարածաշրջանում առաջատար եկամտի միջին մակարդակ ունեցող երկրում, կամ համաշխարհային տնտեսության ռեցեսիայի հետևանքով) տեղի է ունենում «հանկարծակի դադար» տեսակի ճգնաժամ, որն էլ կարող է արժույթային ճգնաժամի հանգեցնել (լողացող փոխարժեքի ռեժիմի դեպքում): Եթե ընթացիկ հաշվի պակասուրդը հիմնականում պահպանվում է առևտրային բանկերի կողմից ներգրավվող օտարերկրյա վարկերի միջոցով, որոնք ուղղվում են տնտեսության իրական հատված, ապա այդ հոսքերն առաջացնում են վարկային բում և մեծացնում են արտաքին պարտքի չափը: Իսկ արտաքին շուկերով պայմանավորված (այլ երկրների ֆինանսական հատվածներում առաջացած խնդիրների պատճառով և այլն) տրամադրվող վարկերի ծավալի փոփոխությունը ուղղակիորեն ազդում է մասնավոր հատվածի գործունեության վրա, ինչն էլ կրճատում է ներքին պահանջարկը, ճնշումներ է գործում ազգային արժույթի վրա, որն էլ ազդում է այդ վարկերի վերադարձելիության վրա (անհուսալի՝ հատկապես արտարժույթով տրամադրված վարկերի քանակի աճ): Այս բացասական զարգացումները կարող են բանկային և արժույթային ճգնաժամի պատ-

⁵⁰Milesi-Ferretti, Gian Maria and Razin, Assaf (1996). "Current-Account Sustainability," Princeton Studies in International Finance No 81, International Economics Section, Department of Economics, Princeton University, Princeton, New Jersey, pp.1-2, 5, 21-30.

ճառ դառնալ : Մյուս կողմից, արտաքին շուկերը կարող են ազդել կառավարության կարողության վրա՝ սպասարկելու իր կողմից ստանձնած պարտավորությունները: Համալսարանի տնտեսության անկումը, տարածաշրջանի առաջատար համարվող եկամտի միջին մակարդակ ունեցող երկրի տնտեսական աճի տեմպերը լրացուցիչ բեռ են հանդիսանում բյուջեի վրա (արտահանման, տրանսֆերտների կրճատման հետևանքով անուղղակի և ուղղակի հարկերի տեսքով): Իսկ այս պարագայում ընթացիկ հաշվի խորացող անհավասարակշռության հետևանքով ազգային արժույթի արժեզրկումը դժվարացնում է արտաքին պարտքի սպասարկումը և մարումը (հատկապես, երբ արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը բավականին մեծ է), ինչն էլ կարող է հանգեցնել պարտքային ճգնաժամի: Իսկ Բ. Հերցն ու Հ. Թոնգը (2008թ.) իրենց կողմից կատարված հետազոտության արդյունքների հիման վրա նշում են, որ ինչպես պարտքային, այնպես էլ արժույթային ճգնաժամերի պատճառները նույնն են՝ միջազգային պահուստների և ներմուծման հարաբերակցության ցածր մակարդակը և ՀՆԱ-ի ցածր աճի տեմպերը, ընդհանուր մակրոտնտեսական կայունությունը, որոնք կարևոր դեր են խաղում երկրում կրկնակի ճգնաժամեր առաջացնելու գործում⁵¹: Մյուս կողմից, եթե ասիանյութների և ծառայությունների հաշվի մեծ չափերի հասնող պակասուրդը մեղմվում է սկզբնական և երկրորդային եկամուտների հաշիվների միջոցով (աշխատողների վարձատրություն և անձնական տրանսֆերտներ), և ընթացիկ հաշվի պակասուրդը բացասական է ու մեծ չափերի է հասնում, ապա ըստ Մ. Բուգամելիի և Ֆ. Փաթերնոյի (2005թ.) այս հոսքերն առնվազն ՀՆԱ-ի 3-4% կազմելու դեպքում ավելի են նպաստում երկրում ֆինանսական կայունությանը: Ըստ հեղինակների, եթե տրանսֆերտների ծավալները չկրճատվեն, ապա նույնիսկ մակրոտնտեսական կայունությունը նկարագրող որոշ փոփոխականների արժեքները (պետական պարտք) չեն ազդի ներդրողների որոշումների վրա, որի հետևանքով էլ չեն կրճատվի կապիտալ հոսքերը դեպի այդ երկիր, որի հաշվին էլ ընթացիկ հաշվի պակասուրդը կպահպանվի⁵²: Սա նաև փաստում է տրանս-

⁵¹Herz, Bernhard and Tong, Hui (2008). "Debt and Currency Crises—Complements or Substitutes?" *Review of International Economics*, Wiley-Blackwell, (Oxford, United Kingdom), Volume 16, Issue 5, p.968.

⁵²Bugamelli, Matteo, and Paternò, Francesco (2005). "Do Workers' Remittances Reduce the Probability of Current Account Reversals?" World Bank Policy Research Working Paper No. 3766, The World Bank, Washington, DC: United States, p.4.

Ֆերտների դերի մասին այդ երկրների պարագայում, որի ծավալների փոփոխությունը բացասաբար է անդրադառնում ինչպես ընթացիկ, այնպես էլ ֆինանսական հաշիվների վրա:

Վերջին 3 տասնամյակների ընթացքում ճգնաժամերի բավականին շատ դեպքեր են գրանցվել (հավելված 1, գծապատկեր 2), և ըստ որոշ հեղինակների դապայմանավորված է ավելի ազատական ֆինանսական շուկաներով, ներառյալ՝ ազգային արժույթի և ողացող փոխարժեքը և ավելի մեծ չափերի հասնող ֆինանսական ինտեգրվածությունը)⁵³:

Ս. Բլասսենսը և Ս. Գոշը (2013թ.) եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների մոտ ֆինանսական ճգնաժամի առաջացման ռիսկը պայմանավորում են միջազգային ֆինանսական ինտեգրվածության շրջանակի հետ, ինչն էլ վերջիններիս մի շարք մարտահրավերների առաջ է կանգնեցնում, քանի որ՝

- այս երկրներում, սովորաբար, կապիտալ հոսքերի ծավալն ավելի մեծ է տնտեսության չափի և կլանման կարողության համեմատ,
- այս երկրների շուկերի նկատմամբ հակվածությունը ավելի մեծ է, և դրա պատճառը տնտեսության չափն է և դիվերսիֆիկացիայի աստիճանը,
- ցանկացած տիպի շուկն այս երկրներում ավելի արագ է տարածվում կառուցվածքային և ինստիտուցիոնալ բնութագրիչների պատճառով⁵⁴:

Մյուս կողմից, տվյալ երկրում ֆինանսական ճգնաժամի առաջացման պատճառը կարող է լինել այլ երկրում առաջացած ճգնաժամը: Ուստի անդրադառնանք ճգնաժամերի տարածման և փոխանցման առանձնահատկություններին:

Մ. Ֆրեթցշերը (2002թ.) փոխանցված ճգնաժամը (contagion) սահմանում է որպես «ճգնաժամ, որը փոխանցվել է տվյալ երկիր, ոչ թե տվյալ երկրի մակրոտնտեսական հիմքերի խաթարման պատճառով (չնայած նրան, որ դա ազդելու է տվյալ երկրի մակրոտնտեսական կայունության վրա), այլ տվյալ երկրի և այն երկրի «մերձեցվածության» պատճառով, որտեղ տեղի է ունեցել ճգնաժամը» և որպես ճգնաժամի փոխանցման ուղիներ հեղինակը նշում է իրական

⁵³Claessens, Stijn and Kose, Ayhan M. (2013). "Financial Crises: Explanations, Types, and Implications," IMF Working Paper No. 13/28, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.26.

⁵⁴Claessens, Stijn, Ghosh, Swati R. (2013). "Capital Flow Volatility and Systemic Risk in Emerging Markets: The Policy Toolkit," Chapter 3 in *Dealing with the Challenges of Macro Financial Linkages in Emerging Markets*, eds. Otaviano Canuto and Swati R. Ghosh, p.91-92. Washington, DC: World Bank. (307p.).

(առևտրային մրցակցության միջոցով) և ֆինանսական (երկրների մրցակցությունը բանկային վարկերի համար երրորդ շուկաներում) փոխախառնությունները, ինչպես նաև երկրների արժեթղթերի շուկաների ինտեգրվածության աստիճանը⁵⁵: Իսկ Կ. Ռեյնհարթը և Կ. Ռոգոֆֆը (2009թ.) փորձել են շեշտադրել այն հիմնարար տարբերությունները, որը գոյություն ունի ընդհանուր շուկերով պայմանավորված միջազգային փոխանցման (international transmission) և այն փոխանցման միջև, որն էպիկենտրոնից տարածվում է այլ երկրներ (cross-border contagion), ինչպես նաև նշել են, որ ընդհանուր շուկերն արտաքին լինելուց բացի, կարող են լինել նաև ներքին, և դա բացատրել են ընդհանուր ներքին մակրոտնտեսական հիմքերով («բնակարանային փուլիկ», կապիտալ հոսքերի ներհոսք և այլն)⁵⁶: Իսկ ըստ Փ. Փեսենտիի և Ս. Թիլլեի (2000թ.) դրանք նաև համարվում են ներքին խոցելիության ընդհանուր տարրեր⁵⁷: ճգնաժամերի փոխանցումը կամ տարածումը բացատրող գործոնների կատեգորիաները ներկայացված են հավելված 1-ի աղյուսակ 1-ում, որոնց միջոցով կարելի է բացատրել ցանկացած ճգնաժամի տարածում կամ փոխանցում (հատկապես զարգացած և եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների դեպքում): Այդ իսկ պատճառով այս գործոնների շրջանակը կարելի է համարել ընդգրկուն՝ ինչպես «ճգնաժամերի կլաստեր» կոչված երևույթը, այնպես էլ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամերի տարածումը կամ փոխանցումը բացատրելու տեսանկյունից (ինչպես ՅՖՏԾ-ին նախորդած, այնպես էլ այդ ժամանակահատվածին վերաբերող): Անդրադառնալով այդ արդյունքներին և դիտարկելով ճգնաժամերի փոխանցումն՝ ըստ 1996-2002թթ. հրապարակած աշխատությունների: Տարբեր հեղինակների⁵⁸ կողմից

⁵⁵Fratzscher, Marcel (2002). "On Currency Crises and Contagion," ECB Working Paper No 139, The European Central Bank, Frankfurt am Main: Germany, pp.6-8.

⁵⁶Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). *This Time is Different: Eight Centuries of Financial Folly*, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, pp.240-241.

⁵⁷Pesenti, Paolo and Tille, Cedric (2000). "The Economics of Currency Crises and Contagion: An Introduction," FRBNY Economic Policy Review, Federal Reserve Bank of New York (New York, NY: United States), Vol. 6, Issue 3, p.8.

⁵⁸Fratzscher, M. (2002). "On Currency Crises and Contagion," ECB Working Paper No 139, European Central Bank, Frankfurt am Main: Germany, pp.6, 8-27: Caramazza, F., Ricci, L., and Salgado, R. (2000). "Trade and Financial Contagion in Currency Crises," IMF Working Paper No. 55, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, pp.17-30, 31-35: Kruger, Mark, Osakwe, Patrick N., Page, Jennifer (2000). "Fundamentals, Contagion and Currency Crises: An Empirical Analysis," *Development Policy Review*, Blackwell Publishing Ltd. (Oxford, United Kingdom), Vol. 18, No. 3, pp. 258, 261-265, 266, 267-268, 270-271: Eichengreen, B., Rose, A. and Wyplosz, C. (1996). "Contagious Currency Crises," NBER Working Paper Series, NBER Working Paper No. 5681, National Bureau of Economic Research, Cambridge, MA:

ստացված արդյունքների հիման վրա միանշանակ կարելի է եզրակացնել, որ եկամտի միջին մակարդակ ունեցող երկրներում ճգնաժամերի տարածումը կամ փոխանցումը միայն երկրների միջև իրական կամ ֆինանսական հատվածի գոյություն ունեցող կապերով հնարավոր չէ բացատրել: Բացի նրանից, որ տնտեսությունները եղել են խոցելի արտաքին շոկերի հանդեպ, այդ երկրներում մակրոտնտեսական հիմքերը ևս պայմանավորել են ճգնաժամերի առաջացումը (մակրոտնտեսական քաղաքականությամբ պայմանավորված խոցելիություն): Դիտարկված ճգնաժամերի դեպքում հատկապես մեծ դերակատարում ունեցան բանկային և արժեթղթերի շուկաների փոխկախվածությունները, թեպետ իրական հատվածի կամ առևտրի փոխկախվածությունը ևս կարևոր դեր է խաղացել: Իսկ Մ. Ֆրեթցզերը (2002թ.) նշում է, որ չկա որևէ փոփոխական, որը վիճակագրորեն նշանակալի լիներ բոլոր երկրների դեպքում (24 եկամտի միջին մակարդակ ունեցող երկիր) ժամանակի ընթացքում, քանի որ երկրներից շատերի դեպքում կամ արտաքին պարտքի մեծ չափը, տեղական վարկերի ծավալների արագ աճը (վարկային բում), կամ էլ տեղական արժույթի գերարժևորված (overvalued) փոխարժեքն են եղել այն գործոնները, որոնք կարևոր են արտարժույթի շուկաների զարգացումները հասկանալու համար: Յեղիևակը նաև նշում է, որ չիմանալով, թե ո՞ր մակրոտնտեսական փոփոխականն է կարևոր, ո՞ր երկրի համար, և ո՞ր պայմանների դեպքում, բավականին բարդ է ընդհանուր բացատրություն գտնել տարբեր ճգնաժամերի համար, ինչն ավելի է բարդացնում միայն մակրոտնտեսական փոփոխականների հիման վրա հուսալի կանխատեսումներ անելը⁵⁹: Իսկ Ֆ. Քարամազզան և այլոք (2000թ.) նշում են, որ այն երկրներում, որտեղ ընթացիկ հաշվի պակասորդը մեծ է, մակրոտնտեսական հիմքերը կարևոր դեր են խաղում իրական կամ առևտրի կապերով տարածումը դիտարկելիս (ճգնաժամի մեջ գտնվող երկրի ազգային արժույթի արժեզրկմամբ և ՀՆԱ-ի կրճատմամբ պայմանավորված տվյալ երկիր ճգնաժամը դիտարկելիս)⁶⁰:

United States, pp.3, 19, 29-37: Glick, R. and Rose, A.K. (1998). "Contagion and Trade: Why Are Currency Crises Regional?" NBER working paper series, NBER Working Paper No. 6806, National Bureau of Economic Research, Cambridge, MA: United States, pp.1-2, 6-7, 8-17:

⁵⁹Fratzcher, Marcel (2002). "On Currency Crises and Contagion," ECB Working Paper No 139, European Central Bank, Frankfurt am Main: Germany, pp. 7, 21.

⁶⁰Caramazza, F., Ricci, L. and Salgado, R. (2000). "Trade and Financial Contagion in Currency Crises," IMF Working Paper No. 55, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.35.

Անդրադարձնանք նաև ՀՖՏԾ-ի ժամանակ ճգնաժամերի տարածման և փոխանցման առանձնահատկություններին: Ըստ Կ. Ռեյնհարթի-ի և Կ. Ռոգոֆֆ-ի (2009թ.) ճգնաժամի փոխանցումը կարելի է բացատրել երկրների միջև առկա կապերով և ընդհանուր շուկերով: Ուղղակի կապերից մեկն եղել է Գերմանիայի և այլ երկրների ֆինանսական հաստատությունների ընդգրկվածության աստիճանը ԱՄՆ-ի subprime շուկայում («CDS» (Credit Default Swap) տիպի ածանցյալ ֆինանսական գործիքում ներդրումներ կատարելու ճանապարհով)⁶¹, որի շնորհիվ էլ ԱՄՆ-ի ֆինանսական ճգնաժամը փոխանցվեց այլ երկրներ: Հեղինակների կարծիքով, մի շարք երկրներում ԱՄՆ-ի հետ միաժամանակ տնտեսական խնդիրների առաջացման պատճառը՝ զարգացած երկրների և ԱՄՆ-ի տնտեսության կարգավորման նմանությունն էր: Եվրոպայում և մի շարք այլ երկրներում առաջին ընդհանուր գործոնը՝ անշարժ գույքի ազգային շուկայի փուլերը էին, իսկ երկրորդը՝ ընթացիկ հաշվի մեծ չափերի հասնող պակասուրդը, որը պահպանվում էր մեծ չափերի հասնող կապիտալի ներհոսքով (օրինակ՝ Իսպանիայում և այլն), ինչն էլ այդ երկրներում վարկային բուլմի և ակտիվների գների զգալի աճի պատճառ հանդիսացավ, որն էլ դրանց խոցելի էր դարձրել այդ ակտիվների գների անկման և կապիտալ հոսքերի ծավալների կրճատման նկատմամբ (անկախ ԱՄՆ-ում գրանցվող զարգացումներից): Կ. Ռեյնհարթը և Կ. Ռոգոֆֆը նաև առանձնացրել էին «ընդհանուր վարկային» ճգնաժամի փոխանցման ուղին: Հատկապես Ասիական երկրների վրա խիստ բացասաբար ազդեց զարգացած երկրների ռեցեսիան, քանի որ դրանք արտահանում են մշակող արդյունաբերության արտադրանքի համար որոշակի բաղադրիչներ, որոնց առաձգականությունը եկամտի նկատմամբ բարձր է, քան մետաղների, հանածոների դեպքում: Հարուստ արևմտյան Եվրոպայի գործընկեր երկրներում ռեցեսիան բացասաբար անդրադարձավ Արևելյան Եվրոպայի երկրների վրա, իսկ Մեքսիկայի և Կենտրոնական Ամերիկայի դեպքում խիստ բացասաբար անդրադարձավ ԱՄՆ-ի տնտեսական անկումը, քանի որ այդ երկրները մեծապես կախված էին ԱՄՆ-ից ստացվող տրանսֆերտներից: Հոլմբ և հանածոներ արտահանող երկրների վրա բացասական ազդեցություն

⁶¹Шарипов М.А. Деривативы и финансовый кризис // Экономика и менеджмент инновационных технологий. 2012. № 5 [Электронный ресурс]. URL: <http://ekonomika.snauka.ru/2012/05/809> (дата обращения: 28.09.2015).

գործեց համաշխարհային պահանջարկի կրճատումը, որի հետևանքով 2008թ.-ի աշնանն արձանագրվեց գների անկում⁶²: Այլ հեղինակների կողմից նշվել են ՌՖՏԾ-ի տարածման և փոխանցման հետևյալ չորս հիմնական ուղիները.

1. **Subprime** շուկա (այլ երկրների ֆինանսական հաստատությունների կապը **subprime** արժեթղթերի շուկայի հետ),

2. Ներդրողների վարքագիծը, որը բացատրվում էր երկու գործոնով`

- Նախորդ տարիներին ռիսկերը ցածր գնահատելու արդյունքի գիտակցումը (ներառյալ «ռիսկային» համարվող երկրներին վարկերի տրամադրումը),

- Արժեթղթերի և անշարժ գույքի շուկաների «փուլ չիկները»:

3. Ֆինանսական համակարգերի բացասական ազդեցությունը (օտարերկրյա բանկերի կողմից իրենց միջոցների վերադարձը և սեփական երկրում վարկավորման ծավալների սահմանափակումը, ինչպես նաև վարկառու երկրների կախվածությունը օտարերկրյա ներդրողների կողմից պարտատուներում կատարված ներդրումներից),

4. Համաշխարհային առևտրի ծավալների կրճատումը (հիմնականում երկարաժամկետ օգտագործման և ներդրումների համար նախատեսվող ապրանքների, մետաղների, հանածոների և գյուղմթերքի նկատմամբ պահանջարկի կրճատումը)⁶³:

Ֆ. Լեյնը և Ջ. Միլեսի-Ֆերրեթին (2010թ.) Էկոնոմետրիկ գնահատման արդյունքների հիման վրա պարզել են, որ 162 երկրի ընտրանքում ներառված այն երկրներում, որտեղ նախքան ՌՖՏԾ վարկերի աճը բավականին մեծ էր (2004-2007թթ.), ընթացիկ հաշվի պակասուրդը ՌՆԱ-ի նկատմամբ մեծ չափերի էր հասնում և մեկ շնչի հաշվով ՌՆԱ-ն համեմատաբար մեծ էր, ՌՆԱ-ի աճի տեմպերը ճգնաժամի ժամանակ զիջում էին այն երկրներին, որտեղ այս երևույթները չէին արձանագրվել⁶⁴:

Ինչպես հայտնի է, արտաքին շուկերը երկրի ներսում տարբեր տեսակի ֆինանսական ճգնաժամերի պատճառ կարող են հանդիսանալ ,

⁶²Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). *This Time is Different: Eight Centuries of Financial Folly*, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, p.242-247.

⁶³Lane, Philip and Milesi-Ferretti, Gian Maria (2010). "The Cross-Country Incidence of the Global Crisis," IMF Working Paper No. 10/171, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, pp.5-6.

⁶⁴Լոլյն տեղում, էջ 11-13, 31:

իսկ ճգնաժամերը կարող են զուգորդված կերպով ընթանալ, ինչը պայմանավորված է երկրի միջազգային ֆինանսական ինտեգրվածության աստիճանով: Տնտեսական աճի վրա ֆինանսական ճգնաժամերի ազդեցությունն ավելի մեծ է, քան սովորական ռեցեսիայի ժամանակ, իսկ վերականգնումն էլ ավելի դանդաղ է ընթանում: Սոցիալական ազդեցության տեսանկյունից, ամենամեծ բացասական ազդեցությունն արձանագրվում է արժույթային ճգնաժամերի ժամանակ: Իսկ եկամտի միջին մակարդակ ունեցող երկրներում արձանագրված ռեցեսիաների մեծ մասը պայմանավորված է եղել ֆինանսական ճգնաժամերի առաջացմամբ, որոնց, որոշ դեպքերում, նախորդել են վարկային բուժմերը, արժեթղթերի գների և անշարժ գույքի գների մեծ չափերի հասնող աճը, որոշ երկրների ընթացիկ հաշվի պակասուրդը, որոնք համարվում են ընդհանուր ներքին շուկեր կամ էլ մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող ներքին մակրոտնտեսական հիմքեր: Այս գործոնների առկայությունն ավելի խոցելի է դարձնում երկիրը արտաքին շուկերի հանդեպ: Մակրոտնտեսական ցուցանիշներից կամ հիմքերից մեկի՝ ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորման, պահպանման, կամ մեղմացման աղբյուրների փոփոխությունը պայմանավորում է, թե ո՞ր տեսակի ճգնաժամը կարող է տեղի ունենալ տվյալ երկրում, և հատկապես ո՞ր տեսակի ճգնաժամերը կարող են հաջորդել դրան: Գնաժամերի փոխանցման կամ տարածման ժամանակ գործոններից յուրաքանչյուրը տարբեր կերպ է ազդում երկրի տնտեսության վրա՝ կախված ընդհանուր շուկի և երկրի մակրոտնտեսական հիմքերի, տնտեսության իրական հատվածի և արտաքին տնտեսական գործոնների կապերից, ինչպես նաև ֆինանսական հատվածի միջազգային ինտեգրվածության աստիճանից: Յետևաբար, երկրի մակրոտնտեսական խոցելիությունը չի կարելի դիտարկել միայն ճգնաժամերի փոխանցման, տարածման, ընդհանուր շուկերի և մակրոտնտեսական հիմքերի տեսանկյունից:

1.3 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԳԼԱՅԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Անշուշտ, երկրի մակրոտնտեսական խոցելիությունը գնահատելու ժամանակ պետք է հաշվի առնել տվյալ երկիր ճգնաժամը փոխանցող գործոնները, ինչպես նաև մակրոտնտեսական հիմքերը: ԱՄՆ-ն եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների համար 2011թ.-ին մշակել էր անալիտիկ հայեցակարգային մոդել՝ այդ երկրների խոցելիությունը տարբեր եղանակներով գնահատելու նպատակով (հավելված 1, գծապատկեր 3):

Անդրադառնանք ԱՄՆ-ի կողմից առաջարկված եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների մակրոտնտեսական խոցելիության գնահատման եղանակներին:

Ճգնաժամի ռիսկի մոդելները⁶⁵ կիրառվում են արտաքին շուկերի ազդեցությամբ պայմանավորված տնտեսական անկման հանդեպ երկրի խոցելիության քանակական գնահատման համար: Այսպիսի մոդելների հիմքում, սովորաբար, ընկած են նախորդ ճգնաժամերը և մակրոտնտեսական հիմքերը նկարագրող տարբեր փոփոխականների միջև փոխկապվածությունները: Այս նպատակով ԱՄՆ-ն մշակել է հատուկ խոցելիության ինդեքս (հավելված 1, աղյուսակ 2), որի կառուցման ժամանակ դիտարկվել են բազմաթիվ փոփոխականներ՝ տնտեսության ընդհանուր «առողջական վիճակը» (նախորդ տարվա ՅՆԱ-ի աճի տեմպը և գնաճը), արտաքին (արտահանման աճի տեմպը, միջազգային պահուստները, ընթացիկ հաշվի պակասուրդը կամ ավելցուկը, արտաքին պարտքը), ինչպես նաև պետական հատվածի գործունեությունը նկարագրող (պետական ծախսերը, պետական բյուջեի պակասուրդը կամ ավելցուկը և պետական պարտքը): Նշված ցուցանիշները ներառվում են խոցելիության ինդեքսում՝ հիմք ընդունելով արտաքին շուկերով պայմանավորված տնտեսական անկումների դեպքերը, որոնք հանգեցնում են արտաքին պահանջարկի, առևտրի պայմանների, օտարերկրյա ուղղակի ներդրումների, օգնությունների և տրանսֆերտների բացասական փոփոխությունների: ԱՄՆ-ն ինդեքսի մեջ ներառել է նաև ՅԲ-ի կողմից մշակած երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ գնահատման ինդեքսը (CPIA)՝ որպես դրա որակի ցուցանիշ: Վիճակագրական վերլուծության արդյունքների հիման վրա բացահայտվել է յուրաքանչյուր հնարավոր

⁶⁵Այս գնահատման մեթոդի հիմքում հետևյալ աղբյուրն է՝ International Monetary Fund, (2011) "Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries," The International Monetary Fund, Washington, D.C.: United States, pp.13-16. Available at: www.imf.org/external/np/pp/eng/2011/030911.pdf (last accessed: 17/03/2015):

ցուցանիչի այն սահմանային շեմը, որը գերազանցելու դեպքում այն մեկնաբանվում է որպես արտաքին շոկերով պայմանավորված ճգնաժամի առաջացման ավելի մեծ հավանականության ազդանշան: Ընտրված ցուցանիչները խմբավորվել են ոլորտային ինդեքսների մեջ (համապատասխան կշիռ տալով նրանցից յուրաքանչյուրին), որոնք հանդես են եկել որպես ընդհանուր խոցելիության ինդեքսի բաղադրիչներ:

Տարածման և սցենարային վերլուծության⁶⁶ հիմքում ընկած է համապատասխան փոխանցման ուղու համապարփակ և համակարգային ուսումնասիրությունը՝ տարբեր շոկերի հանդեպ երկրի տնտեսության զգայունությունը բացահայտելու նպատակով: Թեմատիկ վերլուծությունը կարող է ներառել համաշխարհային տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունները, իսկ որպես հիմնական փոխանցման ուղիներ պետք է դիտարկվեն առևտրային կապերը, ՕՈՒՆ-ները, օգնությունը և տրանսֆերտները: Տարբեր զարգացած և եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների ազդեցությունը ներկայացնելու նպատակով վերլուծության հիմքում ընկած են եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների ՕՈՒՆ-ներին, տրանսֆերտների հոսքերին, օգնությանը, ինչպես նաև երկկողմանի առևտրին վերաբերող տվյալները: Չարգացած և եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների տնտեսական աճի տեմպերի փոփոխության հետևանքով դեպի եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներ ուղղվող առևտրային և ֆինանսական հոսքերի փոփոխությունները քանակապես գնահատելու համար կիրառվում են պանելային ռեգրեսիայի արդյունքում ստացված առաձգականության գործակիցները: Վերջիններիս գնահատականների հիման վրա որոշվում է եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրի վրայլ երկրներից տնտեսական զարգացումների բացասական ազդեցության ակնկալվող չափը (առևտրային և ֆինանսական հոսքերի առումով): Երկրներին բնորոշ օրինաչափություններն օգտագործվում են տվյալ երկրի առևտրի պայմանների փոփոխության վրա մետաղների, հանածոների, գյուղմթերքի գների փոփոխության ազդեցությունը ներկայացնելու համար: Սցենարային վերլուծության հիմքում ընկած են

⁶⁶Այս գնահատման մեթոդի հիմքում հետևյալ աղբյուրն է՝ International Monetary Fund (2011). "Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries," The International Monetary Fund, Washington, D.C.: USA, pp.17-19:

տարբեր երկրներին վերաբերող կանխատեսումները, իսկ սցենարների պարամետրերի հիմքում՝ անալիտիկ գործիքակազմը: Միաժամանակ, սիմուլյացիաների հիման վրա բացահայտվում է արտաքին շուկերի ազդեցությունը այլ հատվածների կամ ոլորտների վրա (արտաքին, հարկաբյուջետային):

Տնտեսության խոցելիության ընդհանուր ինդեքսի հետ կապված նշենք, որ թեև ՅՆԱ-ի մեկ շնչի հաշվով ՀՀ-ն ԱՄՆ-ի կողմից դասակարգված է որպես եկամտի ցածր մակարդակ ունեցող երկիր, սակայն գնողունակության պարիտետով արտահայտված ՅՆԱ-ի չափը գերազանցել է շեմային արժեքին, ինչպես նաև չի բավարարել այլ լրացուցիչ չափանիշի, որի հետևանքով Հայաստանը, ինչպես նաև Վրաստանը չեն ներառվել այն երկրների ցանկում, որոնց հիման վրա հաշվարկվել են կշիռները և սահմանային շեմերը⁶⁷: Հետևաբար, այս ինդեքսի միջոցով հնարավոր չէ ՀՀ-ի պարագայում հաշվարկել արտաքին շուկերի հանդեպ երկրի մակրոտնտեսական խոցելիության աստիճանը: Նշենք նաև, որ սցենարային կամ տարածման վերլուծության մոտեցումները կիրառելի են ՀՀ-ի պարագայում: Այս դեպքում հնարավոր է համապատասխան ժամանակային շարքերի հիման վրա գնահատել ԱՄՆ-ի կողմից նշված փոխանցման ուղիներից յուրաքանչյուրի՝ (ինչպես կոնկրետ երկրին վերաբերող, այնպես էլ ընդհանուր) ազդեցության չափը ՅՆԱ-ի վրա: Իսկ այլ կառույցների կողմից հրապարկվող ՀՀ-ի, եկամտի միջին մակարդակ ունեցող տարածաշրջանային առաջատարի (ՀՀ-ի պարագայում՝ ՌԴ-ի) և այլ երկրների տնտեսություններին վերաբերող կանխատեսումների հիման վրա կարելի է Հայաստանի համար սցենարային վերլուծության ունենալ իրականացնել իրական ՅՆԱ-ի վրա արտաքին շուկերի ազդեցության գնահատման համար (գնահատված ազդեցության չափերի հիման վրա):

Եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների համար 1998թ.-ից սկսվեցին կիրառվել «վաղաժամ ազդանշանային համակարգ»-ի մոդելները⁶⁸, որոնց հիմքում մակրոտնտեսական անկայունություններ, և սկզբնական շրջանում դրանց հիմնական նպատակն էր կանխատեսել բանկային ու արժույթային ճգնաժամերի

⁶⁷International Monetary Fund (2011). “Managing Volatility-A Vulnerability Exercise for Low-Income Countries,” The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.30.

⁶⁸Claessens, Stijn and Kose, Ayhan M. (2013). “Financial Crises: Explanations, Types, and Implications,” IMF Working Paper No. 13/28, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.33.

տեղի ունենալը: Անդրադարձնանք այդ գնահատման արդյունքներից որոշներին: Այսպես, Կամինսկին և այլոք (1998թ.), ուսումնասիրելով զարգացող երկրներում (հիմնականում եկամտի միջին մակարդակ ունեցող) արժույթային ճգնաժամերը կանխատեսող փոփոխականները (միջինում 61 ճգնաժամ յուրաքանչյուր ցուցանիշի գծով) առաջարկել են յուրահատուկ «վաղաժամ ազդանշանային համակարգ»: Վերջինիս իմաստը կայանում է նրանում, որ անհրաժեշտ է մոնիտորինգի ենթարկել որոշակի ցուցանիշների փոփոխությունները նախաճգնաժամային ժամանակահատվածի կտրվածքով: Առաջարկված մոտեցումների հիման վրա պարզվել է, թե որ մակրոտնտեսական փոփոխականների (արտահանում, փոխարժեքի տատանումը տրենդից, M2/միջազգային պահուստ, ՅՆԱ-ի ինդեքս և արժեթղթերի գների ինդեքս) սահմանային արժեքների գերազանցումն էլավագույնս հանդես գալիս որպես արժույթային ճգնաժամի ազդանշան, կապված այն իրողության հետ, որ հետագա 24 ամսվա ընթացքում կարող է արժույթային ճգնաժամ արձանագրվել⁶⁹: Սակայն, ըստ ԱՄՅ-ի (1998թ.) գրեթե անհնար է բացահայտել որևէ ցուցանիշների համակարգ, որի միջոցով հնարավոր լինի նախորոք (բավականին վաղ ժամկետում) պարզել ապագա ճգնաժամերի առաջացումը: Իսկ այն մակրոտնտեսական փոփոխականները, որոնք պարբերաբար առնչվել են ճգնաժամի հանդեպ տնտեսության խոցելիության հետ, կարող են «կիրառվել այն իրավիճակների բացահայտման համար, որոնց առկայության դեպքում տնտեսությունը կանգնած է ֆինանսական ճգնաժամի ռիսկի առջև»⁷⁰: Վեց ասիական և չորս Լատինական Ամերիկայի երկրների արժույթային ճգնաժամի նկատմամբ մակրոտնտեսական խոցելիությունը գնահատելու համար ԱՄՅ-ն իր կողմից մշակված մակրոտնտեսական խոցելիության ինդեքսի մեջ ներառել է երեք ցուցանիշ (իրական փոխարժեքի արժևորում, ներքին իրական վարկերի աճ և M2/միջազգային պահուստ): Ինդեքսի միջոցով հնարավոր է մատնանշել ռիսկը, սակայն այն չի կարող կանխատեսել ճգնաժամի առաջացումը, քանի որ վերջինս կարող է տեղի չունենալ կախված կառավարության կողմից որդեգրված քաղաքականության

⁶⁹ Kaminsky, Graciela, Lizondo, Saul and Reinhart, Carmen (1998). "Leading Indicators of Currency Crises", IMF Staff Papers, Palgrave Macmillan (New York, NY: United States), Vol. 45, No. 1, pp.1-24.

⁷⁰International Monetary Fund (1998). "Financial Crises: Characteristics and Indicators of Vulnerability," Chapter IV, in IMF (ed.), *World Economic Outlook. Financial Crises: Causes and Indicators*. The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.88.

հարցերով զբաղվել է ՀՀ ԿԲ-ի աշխատակից, տնտեսագետ Յ. Ավետիսյանը: Հեղինակը նշում է, որ ինքը համակարծիք է տնտեսագետների շրջանում գոյություն ունեցող այն կարծիքի հետ, որ անկախ բարդության աստիճանից, վաղաժամ ազդանշանային համակարգերը չեն կարող կանխատեսել արժույթային ճգնաժամերը բացարձակ ճշգրտությամբ, ինչպես նաև այն, որ իր կողմից մշակված մոդելները չեն կարող փոխարինել տնտեսության մանրամասն վերլուծությանը՝ ճգնաժամերի նկատմամբ հակվածությունը գնահատելու նպատակով: Այդ մոդելներն ունեն կանխատեսումներ անելու բարձր կարողություն և կարող են օգտագործվել ոչ միայն արժույթային, այլ նաև այլ տեսակի ֆինանսական ճգնաժամերի առաջացումը կանխատեսելու նպատակով, և որպես լավագույն տարբերակ նշում է *դասակարգումների և ռեգրեսիոն ծառերի (CART) մեթոդաբանության* կառուցած մոդելը՝ հիմք ընդունելով վերջինիս կանխատեսումային որակները: Վաղաժամ ազդանշանային համակարգի մեթոդաբանությանը հեղինակը հաշվարկել է առաջանցիկ համարվող ցուցանիշների կարևորությունը, բացարձակ և հարաբերական շեմերը, պայմանական հավանականությունները: Միաժամանակ, հեղինակը պարզել է, որ իր կողմից դիտարկված 24 փոփոխականներից 9-ը ապագայում ճգնաժամերի առաջացման վերաբերյալ ազդանշան են արձանագրում առնվազ 3 եռամսյակ առաջ (CART-ի փոփոխականների կարևորության և զգայունության LOVO թեստի արդյունքների հիման վրա): Իսկ ինչ վերաբերում է ՀՀ տվյալներով դասակարգումների և ռեգրեսիոն ծառերի մեթոդաբանությանը կառուցած վերջնական մոդելին, ապա հեղինակը նշում է, որ Հայաստանում դիտարկված ճգնաժամային երևույթների բացատրության արտաքին գործոններից բարձր նշանակալիություն է ստանում վարակի էֆեկտի (փոխանցվող ճգնաժամ (contagion)) ցուցանիշը, և ոչ թե համաշխարհային տնտեսական աճի և նավթի համաշխարհային գների ցուցանիշները: Հեղինակը նաև հավելում է, որ արձանագրված արժույթային ճգնաժամերի կանխատեսման գործում կարևորվում է ներքին տնտեսական զարգացման առնչվող գործոնների քննարկումը՝ որպես հիմնարար առաջանցիկ ցուցանիշներ: Իսկ ինչ վերաբերում է արժույթային ճգնաժամը կանխատեսող գործոններին, ապա այստեղ առաջատարները վարկավորում/

ավանդներ և բանկերի արտաքին ակտիվներ/պարտավորություններ հարաբերակցություններն են եղել⁷⁵:

Այս մեթոդաբանությամբ ստացված արդյունքները փաստում են, որ ՀՀ-ում արժույթային ճգնաժամի առաջացման գործում կարևոր դեր է խաղացել ճգնաժամի փոխանցումը: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ՌԴ-ում ճգնաժամի առաջացումը նպաստել է ՀՀ-ում արժույթային ճգնաժամի առաջացմանը: Ինչ վերաբերում է համաշխարհային տնտեսության աճի տեմպին, ապա դակարող է անդրադառնալ ՀՀ տնտեսության վրա՝ հիմնականում կապված այլ երկրներից ստացվող տրանսֆերտների, արտահանման (հատկապես մետաղների և հանածոների), ինչպես նաև ՕՈՒՆ-ների ծավալների հետ: Ներքին տնտեսական զարգացման առաջվող գործոնների տեսանկյունից կարևորվում են վարկավորման ծավալների և անշարժ գույքի գների փոփոխությունները, որոնք ներքին շուկերը կամ ռեցեսիաները պայմանավորող գործոններ են: Պետք է նշել, որ միայն տնտեսության մանրամասն վերլուծությունը հնարավորություն կտա պարզելու այն գործոնները (հատկապես արտաքին), որոնց հանդեպ էլ խոցելի է տվյալ երկիրը, և որոնք էլ կարող են պայմանավորել արժույթային ճգնաժամի առաջացումը տվյալ երկրում (ներքին շուկերի առկայության պարագայում ևս): Մանրամասն վերլուծության արդյունքները հնարավորություն կտան կառավարությանը հակաճգնաժամային միջոցառումների ճիշտ գործիքակազմ ընտրել, և վերջիններս իրականացնել ավելի բարձր արդյունավետությամբ:

Մակրոտնտեսական խոցելիությունը որոշվում է նաև ելնելով յուրահատուկ, կառուցվածքային պայմաններից, որոնք երկրում տնտեսական կամ ֆինանսական ճգնաժամերի պատճառ են հանդիսանում: Եվ հաշվի առնելով երկրի շուկերը հաղթահարելու սահմանափակ կարողությունը (ինչն էլ, հավանաբար, ավելի խորը ազդեցություն է թողնում տնտեսության վրա), որոշ հեղինակներ դիտարկում են երկրի մակրոտնտեսական խոցելիությունը երկրի շուկերի հանդեպ հակվածության և դրանց նկատմամբ ճկունության համատեքստում⁷⁶: Լ. Բրիգոլզիոն և այլոք (2009թ.) իրենց կողմից

⁷⁵Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2012»: -Երևան, 2013թ., էջ 84-85, 96-97, 151 (63-151):

⁷⁶Seth, Anuradha and Ragab, Amr (2012). "Macroeconomic Vulnerability in Developing Countries: Approaches and Issues," Working Paper number 94, International Policy Centre for Inclusive Growth (IPC - IG), Poverty Practice, Bureau for Development Policy, UNDP, Brasilia: DF – Brazil, p.2.

առաջարկած հայեցակարգային մոդելի հիման վրա կառուցել են ճկունության ինդեքս, որը չորս բաղադրիչների՝ մակրոտնտեսական կայունության, շուկայի արդյունավետության, պետական կառավարման որակի և սոցիալական զարգացման մակարդակի արժեքների միջինն է, իսկ յուրաքանչյուրի արժեքը համարվում է դրանցում ներառված ցուցանիշների արժեքների միջինը, որոնք նորմավորվում են տվյալների համադրելիությանը պահպանելու նպատակով՝ ստանդարտացումը կատարելով ըստ հետևյալ բանաձևի՝

$$XS_{ij} = (X_{ij} - \min X_j) / (\max X_j - \min X_j) \quad j=1, 2, \dots, 4, i=1, 2, \dots, N: (1.3.1)$$

Որտեղ՝

XS_{ij} -ն i -րդ երկրի j -րդ բաղադրիչի ստանդարտացված, նորմալացված արժեքն է:

X_{ij} -ն տվյալ ցուցանիշի փաստացի արժեքն է:

$\min X_j$ -ն j -րդ բաղադրիչի նվազագույն արժեքն է:

$\max X_j$ -ն j -րդ բաղադրիչի առավելագույն արժեքն է:

N -ն երկրների քանակն է:

Նորմավորված փոփոխականն ընկած է 0-ից 1 միջակայքում: Իսկ բաղադրիչների հաշվարկի ժամանակ ներառել են 86 երկիր (ՀՀ-ն դրանց շարքում չի եղել)⁷⁷:

Պ. Գվիլլամոնթը (2009թ.) առաջարկել էր զարգացող երկրների տնտեսական խոցելիությանը գնահատելու համար իր մոտեցումը՝ կառուցելով մակրոտնտեսական խոցելիության ինդեքս (EVI): Յեղիևակը ինդեքսի մեջ ներառել է երկու՝ անպաշտպանվածության և շուկայի ինդեքսները, որոնց տրվել են հավասար կշիռներ: Իսկ ինդեքսի հաշվարկի ժամանակ յուրաքանչյուր բաղադրիչում ներառված ցուցանիշները բերվել են միևնույն չափողականության՝ առավելագույն և նվազագույն արժեքների հիման վրա: Նշված ինդեքսի հաշվարկման համար առաջարկվել էր կիրառել հետևյալ բանաձևը՝

$$EVI = \sqrt{(1 - EXP)(1 - SH)}: (1.3.2)$$

Որտեղ՝

EVI-ն տնտեսական խոցելիության ինդեքսն է:

EXP-ն անպաշտպանվածության ինդեքսն է:

⁷⁷ Briguglio, Lino, Cordina, Gordon, Farrugia, Nadia, and Vella, Stephanie (2009). "Economic Vulnerability and Resilience: Concepts and Measurements," *Oxford Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 37, No. 3, pp.234-239, 244-245.

SH-ն շոկերի ինդեքսն է⁷⁸:

Որոշ հեղինակներ իրենց աշխատության ունենրում ևս զբաղվել են մակրոտնտեսական խոցելիության ինդեքսի կառուցմամբ⁷⁹: Իսկ այդպիսի ինդեքսները չափում են կոնկրետ պահին տվյալ երկրի դիրքը այլոց համեմատ, ինչը նշանակում է, որ այդ նույն երկրների արդյունքների համեմատությանը հաջորդ տարի նպատակահարմար է, քանի որ նորմավորման ժամանակ տվյալ ցուցանիշի առավելագույն և նվազագույն արժեքներն են կարևոր: Հաջորդ տարվա առավելագույն և նվազագույն արժեքներից կախված որոշվում է տվյալ երկրի ցուցանիշի արժեքը, և այն կարող է չարտացոլել այն բարելավումը, որը տվյալ երկիրը կարող է արձանագրել նախորդ տարվա համեմատ:

Հայ տնտեսագետներից է. Չալիսյանը հաշվարկել է խոցելիության ինդեքսը 71 երկրի կտրվածքով և առաջարկել է տնտեսական խոցելիության ինդեքսի որոշման համար օգտագործել հետևյալ ցուցանիշները.

- տնտեսության բացությունը,
- արտահանման կենտրոնացվածությունը,
- Էներգառեսուրսների ներմուծման մակարդակը,
- երկրի տարածքի մեծությունը,
- արտաքին պարտքի մակարդակը,
- դրամական փոխանցումների բաժինը համախառն ազգային եկամտում,
- Ֆինանսական բացության մակարդակը՝ որպես ներդրումների ել խնայողությունների տարբերության հարաբերակցություն և ՅՆԱ-ին:

Հեղինակի հաշվարկների արդյունքում ՀՀ մակրոտնտեսական խոցելիության ինդեքսի արժեքը կազմել էր 0.44, ինչը նշանակում է, որ տնտեսության խոցելիության մակարդակը բավականին բարձր է, և 71 երկրի շարքում ՀՀ-ն զբաղեցրել է 14-րդ տեղը⁸⁰:

⁷⁸ Guillaumont, Patrick (2009). "An Economic Vulnerability Index: Its Design and Use for International Development Policy," *Oxford Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 37, No. 3, p.204-205.

⁷⁹ Brigglio, Lino (1995). "Small Island Developing States and Their Economic Vulnerabilities," *World Development*, Pergamon-Elsevier Science Ltd. (Oxford, United Kingdom), Vol. 23, No. 9, pp.1615-1632, և այլն:

⁸⁰ Չալիսյան Էմիլ: Տնտեսական խոցելիությունը և դրա բաղադրիչները // Հայաստան. Եկոնոմիկան ֆինանսներ.-2011.-թիվ 2 (128).- Էջ 10-11. -Երևան:

Այս պիսով, ներկայացված մոտեցումների հիման վրա պարզ է դառնում, որ յուրաքանչյուր երկրի մակրոտնտեսական խոցելիության աստիճանը որոշելու համար անհրաժեշտ է տնտեսության մանրամասն վերլուծություն, որտեղ ներառված են լինելու ինչպես տնտեսության խոցելիությունը արտաքին շուկերի հանդեպ, մակրոտնտեսական հիմքերը: Կարևոր դեր է խաղում այլ երկրներում տնտեսական և ֆինանսական ճգնաժամերի հետևանքով բացասական ազդեցության տվյալ երկիր փոխանցելու ուղիների կամ գործոնների ուսումնասիրությունը, քանի որ վերջիններիս ծավալների փոփոխությամբ է որոշվելու իրական ՀՆԱ-ի վերջնական մեծությունը: Այս գործոնների փոփոխությունների գնահատված արժեքները հնարավորություն կտան պարզելու ՀՆԱ-ի փոփոխության ակնկալվող վիճակագրորեն նշանակալի չափը: Այնուհետև, այլ երկրների տնտեսական վիճակին, մետաղների, հանածոների գներին վերաբերող տեղեկատվության և այլ կանխատեսումների հիման վրա կարելի է ստանալ արտաքին շուկերի հետևանքով ՀՀ տնտեսության վրա բացասական ազդեցության չափը, ինչն էլ իր հերթին թույլ կտա ՀՀ կառավարությանն ընտրելու երկրի տնտեսության ճկունության մակարդակի բարձրացման, ինչպես նաև հակաճգնաժամային միջոցառումներին ուղղված համապատասխան միջոցառումներ:

ԳԼՈՒԽ 2


ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼ ԻՈՒ ԹՅԱՆ ՀԻՄՆԱԽԱԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՊԱՅՄԱՆԱԿՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

2.1 ՏՆՏԵՍՈՒ ԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼ ԻՈՒ ԹՅՈՒՆԸ ԼԿԱՐԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒ ԹՅՈՒՆԸ

Մակրոտնտեսական կայունության ապահովմանը հիմնականում խոչընդոտում են ֆինանսատնտեսական ճգնաժամերը՝ ճգնաժամի «վարակի» տարածման տեսանկյունից: Հիմք ընդունելով Հ. Ավետիսյանի եզրահանգումն այն մասին, որ ՀՀ-ում արտաքին գործոնների ազդեցությամբ պայմանավորված արժույթային ճգնաժամի առաջացումը բացատրում է «վարակի» էֆեկտը կամ ճգնաժամի փոխանցումը, ինչպես նաև եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրների և տարածաշրջանում առաջատար համարվող եկամտի միջին մակարդակ ունեցող երկրների ՀՆԱ-ների աճի միջև ուժեղ փոխկապվածության մասին Ե. Դաբլա-Նորրիսի և այլոց տեսակետը (2012թ.), կարող ենք նշել, որ ՀՀ-ում կարևորվում է ՌԴ տնտեսության դերը՝ որպես ֆինանսատնտեսական ճգնաժամի փոխանցման կարևոր արտաքին աղբյուր (ռեցեսիայի էֆեկտ), հատկապես արտահանման, տրանսֆերտների և ՕՈՒՆ-ների ծավալների փոփոխության հետ կապված: Մյուս կողմից, ճգնաժամերի փոխանցման և մակրոտնտեսական խոցելիության տեսանկյունից կարևորվում են մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող մակրոտնտեսական կայունության հիմքերը կամ ցուցանիշները, որոնք համարվում են ճգնաժամը կանխատեսող կարևոր ցուցանիշներ: Հիմք ընդունելով Հ. Ավետիսյանի (2013թ.), Ֆ. Լեյնի և Ջ. Միլեսի-Ֆերրեթի (2010թ.), Մ. Գոլդսթեյնի (2000թ.), Ս. Բլասենսի և Ա. Քոզեի (2013թ.), Կ. Ռեյնհարթի և Կ. Ռոգոֆֆի (2009թ.), Մ. Ֆրեթցզերի (2002թ.) և այլոց եզրահանգումները՝ որպես մակրոտնտեսական խոցելիությունը, ընդհանուր ներքին շուկերը և մակրոտնտեսական կայունության հիմքերը նկարագրող ցուցանիշներ կամ երևույթներ կոհտարկվեն ընթացիկ հաշվի պակա-

սուբորգ/ՐՆԱ հարաբերակցությունը, վարկերի ծավալների և անշարժ գույքի (բնակարանների) գների փոփոխության միտումները:

Այժմ ներկայացնենք և պարզաբանենք ՀՀ ընթացիկ հաշվի պակասուրդը, որը 2005թ.-ից սկսեց մեծանալ, և արդեն 2007թ.-ին կազմում էր՝ 677.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ ընթացիկ հաշվի պակասուրդ/ՐՆԱ հարաբերակցությունն արդեն գերազանցել էր 5%-ը, և կազմել էր 7.36%: 2008թ.-ին ընթացիկ հաշվի պակասուրդը նույնպես կտրուկ մեծացավ, հասնելով 1,658.9 մլն ԱՄՆ դոլարի, իսկ ընթացիկ հաշվի պակասուրդ/ՐՆԱ հարաբերակցությունը կազմեց 14.22% (գծապատկեր 2.1.1):




Գծապատկեր 2.1.1 Ընթացիկ հաշվի պակասուրդը (2003-2014թթ.)⁸¹

2007թ.-ին ընթացիկ հաշվի պակասուրդի չափը 2000-2006թթ. միջին պակասուրդի ցուցանիշին գերազանցում էր մոտ 4 անգամ, իսկ 2008թ.-ի չափը 2000-2007թթ. միջին չափին գերազանցում էր մոտ 7 անգամ⁸²: Հետևաբար, արդեն 2008թ.-ին կարելի էր ակնկալել ճգնաժամ: Սակայն, այս պարագայում ինդիքն՝ ընթացիկ հաշվի պակասուրդի պահպա-

⁸¹ ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» տվյալների բազա 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>): ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական ցուցանիշների «ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (եռամսյակային)» տվյալների բազա (<http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>): Ըստ «ԱՀՀ 1993»-ի:

⁸² ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական ցուցանիշների «ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (եռամսյակային)» տվյալների բազա (<http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>): Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

Նու մն էր, որովհետև ցանկացած շուկայի հանգեցնում է ճգնաժամի: Քանի որ ընթացիկ հաշվի մեծ պակասումը կարող է ծածկվել օտարերկրյա կապիտալի ներհոսքով, 2007թ.-ի ՕՌՆ-ները միայն որոշակիորեն կարողացան մեղմել իրավիճակը, իսկ 2008թ.-ի պակասումը չափը միայն ՕՌՆ-ներով հնարավոր չէր ֆինանսավորել (գծապատկեր 2.1.2): Ուստի այդ չափով անհրաժեշտ էր պահուստների կամ պարտքի մեծությամբ փոփոխություն:



Գծապատկեր 2.1.2 Օտարերկրյա ուղղակի ներդրումները ՀՀ-ում (2003-2014թթ.)⁸³

Մյուս կողմից, ընթացիկ հաշվի պակասումը արտաքին աշխարհից վարկավորման հետևանք է⁸⁴, և տվյալ պարագայում երկրի կախվածությունը կապիտալի արտաքին աղբյուրներից հանդես է գալիս որպես երկրի խոցելիության աղբյուր, ինչը ևս շեշտադրում է ընթացիկ հաշվի պակասումի պահպանման խնդիրը: 2004-2006թթ. օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերը գերազանցում էին ընթացիկ հաշվի պակասումի չափը, ինչը հնարավորություն էր տալիս որոշա-

⁸³ ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» տվյալների բազա 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>): ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական ցուցանիշների «ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (եռամսյակային)» տվյալների բազա (<http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>): Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

⁸⁴ Pesenti, Paolo and Tille, Cedric (2000). "The Economics of Currency Crises and Contagion: An Introduction," FRBNY Economic Policy Review, Federal Reserve Bank of New York, New York, NY: United States, Vol. 6, Issue 3, p.5.

կիրորեն ավելացնելու պակասուրդի չափը: 2007թ.-ին ՕՈՒՆ-ները զիջում էին ընթացիկ հաշվի պակասուրդի չափին, ինչը նշանակում էր, որ ՕՈՒՆ-ների հետագա ծավալների կրճատման պարագայում ընթացիկ հաշվի պակասուրդը կարող էր պահպանվել հիմնականում արտաքին պարտքի ավելացման միջոցով:

2008թ.-ին ՕՈՒՆ-ները կազմեցին մոտ 943.7 մլն ԱՄՆ դոլար, մինչդեռ այդ նույն տարում ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել էր 1,658.9 մլն ԱՄՆ դոլար (գծապատկեր 2.1.1, 2.1.2): 2008թ.-ին պահուստային ակտիվների փոփոխությունը կազմեց մոտ՝ 231 մլն ԱՄՆ դոլար, \$ինանսական հաստատությունների կողմից ստացված երկարաժամկետ վարկերի ծավալը կազմեց 292.55 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ կառավարության՝ 144.95 մլն ԱՄՆ դոլար (զուտ պարտավորությունների ստանձնումը, ընդհանուր առմամբ կազմել էր 485.17 մլն ԱՄՆ դոլար)⁸⁵: Իսկ արդեն 2009թ.-ի 1,425.5 մլն ԱՄՆ դոլարի ընթացիկ հաշվի պակասուրդը (գծապատկեր 2.1.1) ՕՈՒՆ-ների կրճատման պարագայում (գծապատկեր 2.1.2) հնարավոր կլիներ \$ինանսավորել արտասահմանից ստացվող վարկերի և պահուստների միջոցով՝ հաշվի առնելով տնտեսական անկումը, հարկային եկամուտների կրճատումը և այլն (հավելված 2, գծապատկեր 1, աղյուսակ 2): 2009թ.-ին միայն վարկերի գծով զուտ պարտավորությունների ստանձնումը կազմել էր 1,375.77 մլն ԱՄՆ դոլար⁸⁶: Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը 2009-2014թթ. ընթացքում 16.48%-ից դարձել էր 7.8% (գծապատկեր 2.1.1): Սա նշանակում է, որ այդ պակասուրդի կրճատման կամ պահպանման խնդիրը Կառավարության առաջնահերթություններից մեկը պետք է լինի՝ մեծացնելով ՕՈՒՆ-ների կամ արտահանման ծավալները: Առաջինի դեպքում հոսքերի կայուն մակարդակը հնարավորություն կտա պահպանելու պակասուրդը, ինչպես նաև որոշակիորեն ավելացնելու այն, իսկ երկրորդի դեպքում՝ կրճատել: Իսկ եթե միջնաժամկետ հատվածում միգրացիայի տեմպերը ավելանան, արտահանման ծավալների աճը հնարավորություն կտա կրճատելու ընթացիկ հաշվի պակասուրդը (թեպետ ներմուծման ծավալները կկրճատվեն, սակայն այստեղ որոշիչը կլինի ՀՀ ռեզիդենտների իրական եկամուտների փոփոխության չափը), ինչպես


⁸⁵ ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» տվյալների բազա առ 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>):

⁸⁶ Նույն տեղում:


նաև սպասարկելու արտաքին պարտքը (ապահովելով նաև փոխարժեքի որոշակի կայուն մակարդակ՝ արտաքին պարտքի սպասարկման տեսանկյունից), նույնիսկ եթե ՀՀ-ն չներգրավի ՕՌԼ-ներ: Ինչ վերաբերում է ընթացիկ հաշվի պակասուրդի պահպանմանը 2011-2014թթ., ապա ՕՌԼ-ները դաչեին կարող ապահովել, և այն հիմնականում \$ինանսավորվել էր մասնավոր հատվածի կողմից: Այդ նույն ժամանակահատվածում վարկերի գծով \$ինանսական հաստատությունների կողմից ստանձնած գուտպարտավորությունները համապատասխանաբար կազմել էին՝ 291.5, 302.6, 156.2 և 224.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ այլ հատվածներինը միայն 2013-2014թթ. կազմել էին համապատասխանաբար՝ 295.3 և 104.3 մլն ԱՄՆ դոլար, ինչն էլ հանգեցրեց արտաքին պարտքի մեծացմանը⁸⁷: Մասնավոր ընկերություններին, տնային տնտեսություններին և բանկերին արժույթով տրամադրվող վարկերը խոցելի են դարձնում ազգային արժույթը՝ փոխարժեքի տատանման տեսանկյունից: Իսկ, ընդհանուր առմամբ, \$ինանսական հաստատությունների և այլ հատվածների համախառն արտաքին պարտքի տարեկան դիրքերը միասին 2014թ.-ին կազմում էին 3.6 մլրդ ԱՄՆ դոլար, մինչդեռ այս ցուցանիշը 2010թ.-ին կազմում էր 2.23 մլրդ ԱՄՆ դոլար⁸⁸: Վերջինս հիմնականում բացատրվում էր սպառման բարձր մակարդակով, համախառն ներքին խնայողությունների մակարդակի փոփոխությամբ 2010-2014թթ., որի վրա էլ ազդել էին եկամտի առաջնային աղբյուր հանդիսացող՝ իրական աշխատավարձի աճի տեմպերը (գծապատկեր 2.1.3, 2.1.4):

⁸⁷ ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» տվյալների բազա առ 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>):

⁸⁸ ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Համախառն արտաքին պարտք 6» տվյալների բազա առ 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>):



Գծապատկեր 2.1.3 Իրական միջին ամսական աշխատավարձի աճի տեմպը (2006-2014թթ.)⁸⁹



Գծապատկեր 2.1.4 Արտահանման, ներդրումների և ներքին համախառն խնայողությունների հարաբերակցությունը ՀՆԱ-ին (2003-2014թթ.)⁹⁰

⁸⁹ ՀՀ ԱՎԾ, Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում 2006-2010, 2007-2011, 2009-2013, 2010-2014, 2011թ., 2012թ., 2014թ., 2015թ., համապատասխանաբար էջեր՝ 14, 26, 10, 10 ք. Երևան: ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2010-2014, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2015թ., էջ 168: Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից: Նշում՝ 2005=100:

⁹⁰ ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական ցուցանիշների «ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (Եռամսյակային)» տվյալների բազա (<http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>): Ըստ «ԱՀՀ 1993»-ի: Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

Գծապատկեր 2.1.3-ից կարելի է եզրակացնել, որ 2006-2008թթ. իրական միջին ամսական աշխատավարձերի աճից հետո, 2010-2013թթ. ժամանակահատվածում միայն 2012թ.-ին էր աճարձանագրվել նախորդ տարվա համեմատ, սակայն 2013թ.-ի միջին ամսական աշխատավարձի իրական մակարդակը դեռ զիջում էր ճգնաժամային տարվա՝ 2009թ.-ի մակարդակին (գնողունակության տեսանկյունից): Իսկ արդեն 2014թ. արձանագրվեց իրական միջին ամսական աշխատավարձի աճ (5.08%): Ինչ վերաբերում է եկամտի մեկ այլ աղբյուրին՝ Հայաստանից դուրս ապրող բարեկամներից ստացվող իրական տրանսֆերտներին, ապա 2010-2014թթ. ոչ բոլոր դեցիլային խմբերում էր աճարձանագրվել (հավելված 2, աղյուսակ 4): 2013թ.-ին այս աղբյուրից ստացվող եկամուտների առավելագույն մասնաբաժինն ընդհանուր դրամական եկամուտների մեջ արձանագրվել էր X դեցիլային խմբում՝ կազմելով 13.7%, իսկ 2014թ.-ին՝ 14.4%⁹¹: 2008թ.-ի համեմատ 2012-2014թթ. եկամուտներն ավելի անհավասարաչափ էին բաշխված (հավելված 2, գծապատկեր 3):

Իրական դրամական եկամուտների փոփոխությունն ազդեց համախառն ներքին խնայողությունների մակարդակի վրա (գծապատկեր 2.1.4), իսկ սպառման տվյալ մակարդակի պահպանման, ներդրումների աղբյուր հանդես էին գալու օտարերկրյա վարկերը, որոնք տնային տնտեսություններին, մասնավոր ընկերություններին տրամադրվում էին ՀՀ առևտրային բանկերի կողմից (գծապատկեր 2.1.6, 2.1.7): Իսկ համադրելով 2011-2014թթ. ՀՆԱ-ի, տնտեսության ոլորտների իրական տարեկան աճի տեմպերը⁹², տնտեսության հիմնական ճյուղերի նպաստումները ՀՆԱ-ի իրական աճի տեմպին⁹³, հիմնական միջոցների համախառն կուտակման մեջ մասնավոր հատվածի մասնակցությունն չափը (գծապատկեր 2.2.2), ՕՈՒՆ-ների կառուցվածքը⁹⁴, արդյունաբերական արտադրանքի ծավալի ինդեքսներն (ըստ տնտեսական գործունեության տեսակների)⁹⁵, արտահանման

⁹¹ ՀՀ ԱՎՃ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական վերլուծական գեկույց, ք. Երևան, 2014թ., 2015թ., համապատասխանաբար էջեր՝ 109-110, 113:

⁹² ՀՀ ԱՎՃ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՀՆԱ-ի արտադրությունը ըստ S9S7 խմբ. 2 (NACE 2) դասակարգման» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>):

⁹³ ՀՀ Ֆինանսների նախարարության կայք, <http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>:

⁹⁴ ՀՀ ԱՎՃ-ի «Օտարերկրյա ներդրումներ»-ի տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=246>):

⁹⁵ ՀՀ ԱՎՃ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015, ք. Երևան, 2015թ., էջ 255-257:

կառուցվածքի հետ (ապրանքներ և ծառայություններ)⁹⁶, կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ի իրական աճին նպաստել են այն ոլորտները, որոնք տեխնոլոգիաների տեսանկյունից հիմնականում չեն համարվում կապիտալատար: Իսկ սանշանակում է, որ մասնավոր հատվածի ներդրումները հիմնականում իրականացվել են արտահանող ընկերությունները և այն ընկերությունները (ներառյալ օտարերկրյա կապիտալով), որոնց ճյուղերում (ներքին շուկայում) առկա է եղել ուժեղ մրցակցություն (բաժին 2.2): 2012-2014թթ. համախառն ներքին խնայողությունների բացասական ցուցանիշի պարագայում վիճակը հնարավոր է մեղմել օտարերկրյա ներդրումների ներհոսքի աճով, ինչն էլ կարող է ընթացիկ հաշվի պակասուրդի պահպանման հարցը լուծել:

Ընդհանուր առմամբ, 2007-2008թթ. ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՀԱ հարաբերակցությունը մատնանշում էր վտանգ, որ ցանկացած արտաքին շուկայորոշ է ՀՀ-ում արժույթային ճգնաժամ առաջացնել: 2011-2014թթ. այդ հարաբերակցությունը նվազում էր և 2014թ.-ին կազմել էր 7.8%: Հ. Ավետիսյանի և այլոց (2012թ.) հաշվարկների համաձայն ՀՀ վճարունակության և արտաքին պարտքի կայունության տեսանկյունից ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՀԱ հարաբերակցության միջին կայուն մակարդակը 6.1-6.2% է կազմել: Գնահատված ռեգրեսիոն հավասարման արդյունքների հիման վրա ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՀԱ հարաբերակցության 6.9%-ը համարվել էր երկարաժամկետ կայուն մակարդակ, իսկ ՀՀ-ում արժույթային և տնտեսական ճգնաժամների առաջացման տեսանկյունից հեղինակները որպես ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՀԱ հարաբերակցության վտանգավոր շեմ նշել են 9%-ը (զարգացող երկրների դեպքում համապատասխանաբար 5.5 և 8.6%՝ Դասակարգումների ծառի մոտեցմամբ գնահատված)⁹⁷: Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արժույթային ճգնաժամի առաջացման տեսանկյունից կարևոր գործոն է ճգնաժամի փոխանցումը կամ «վարակի էֆեկտը», ապա ՀՀ-ում ավելի ցածր արժեքի դեպքում էլ կարող է առաջանալ արժույթային ճգնաժամ (արտաքին շուկայի հետևանք):

⁹⁶ ՀՀ ԱՎԾ-ի «Արտաքին առևտրի (ըստ ապրանքների անվանացուցակի 4-նիշ դասակարգման)» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=379>): ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» տվյալների բազա առ. 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>):

⁹⁷ Ավետիսյան, Հ., Գրիգորյան, Վ., Դալլաբյան, Ա., Սարգսյան, Հ., «Ընթացիկ հաշվի կայունության գնահատման մոտեցումները Հայաստանում», աշխատանքային փաստաթուղթ 08/12-01, ՀՀ Կենտրոնական բանկ, -Երևան, 2012թ., էջ 28, 81-82:

Յետևաբար, ՀՀ տնտեսության դեպքում արժույթային ճգնաժամերի առաջացման գործում կարևոր դեր են խաղում արտաքին տնտեսական գործոնների և տնտեսության իրական հատվածի կապը:

Ինչ վերաբերում է ընթացիկ հաշվի կառուցվածքին, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկզբնական և երկրորդային եկամուտների հաշվեկշիռը եղել է դրական, անընդհատաճել է նախքան 2009թ.-ի ճգնաժամը և դրանից հետո⁹⁸, ընթացիկ հաշվի պակասուրդը հիմնականում պայմանավորված է ապրանքների և ծառայությունների ներմուծմամբ: 2011-2014թթ. ծառայությունների հաշվեկշիռը բարելավումը պայմանավորված է մեթոդաբանության փոփոխությամբ⁹⁹, որի պատճառով էլ արտասահմանում շինարարության բաժնի հաշվեկշիռը¹⁰⁰ 2011թ.-ին արդեն 176.2 մլն ԱՄՆ դոլար էր կազմում՝ նախորդ տարվա -5.4 մլն ԱՄՆ դոլարի համեմատ, իսկ 2013-2014թթ.՝ համապատասխանաբար 214.5 և 208.7 մլն ԱՄՆ դոլար¹⁰¹: Իսկ սկզբնական և երկրորդային եկամուտների դրական հաշվեկշիռը հիմնականում պայմանավորված է աշխատողների վարձատրությամբ և անձնական տրանսֆերտներով:

2003-2005թթ. ապրանքների ներմուծումը գերազանցում էր արտահանմանը մոտ 2 անգամ, 2007թ.-ին՝ մոտ 3 անգամ, 2008թ.-ին արձանագրվեց առավելագույն ցուցանիշը (2003-2014թթ.)՝ ապրանքների ներմուծումը գերազանցում էր արտահանմանը մոտ 4 անգամ, իսկ 2011-2014թթ.՝ մոտ 3 անգամ¹⁰²: 2011-2013թթ. ընթացքում ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական աճի տեմպը եղել է բացասական (հավելված 2, աղյուսակ 1), իսկ արդեն 2014թ.-ին արձանագրվել էր 7.7% աճ (այս երևույթը կարելի է որոշակիորեն բացատրել Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու

⁹⁸ Եզրակացության համար հիմք է հանդիսացել հետևյալ աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» տվյալների բազա առ 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>):

⁹⁹ International Monetary Fund (2009). *Balance of Payments and International Investment Position Manual*, Sixth Edition (BPM6), International Monetary Fund, Washington, D.C.: United States, pp. 272-277.

¹⁰⁰ ՀՀ ԿԲ-ի արտաքին հատվածի վիճակագրության «Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշիռի» տվյալների բազայում (<https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>) ներկայացված մեթոդական պարզաբանում:

¹⁰¹ ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» տվյալների բազա առ 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>):

¹⁰² ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 5» տվյալների բազա առ 30.06.2014թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>): ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2014 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործոնների տնտեսական ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման), 2015թ. էջ 40, ք. երևան: Նշում՝ ըստ առևտրի վիճակագրության, արտահանումը՝ \$OF, իսկ ներմուծումը՝ ՍԻՖ գներով: Հաշվարկները իրականացվել են հեղինակի կողմից:

հանգամանքով, քանի որ ակնկալվող մաքսատուրքերի փոփոխության սպասումը հանգեցրել էր ապրանքների և/կամ ծառայությունների ներմուծման ծավալների ավելացմանը (օրինակ՝ մարդատար ավտոմեքենաների պարագայում ներմուծման \$իզիկական ծավալի աճը 2014թ.-ին նախորդ տարվա համեմատ կազմել էր 16.4%)¹⁰³: Այդ իսկ պատճառով 2014թ.-ի ցուցանիշը հնարավորություն է չի տալիս բացահայտել 2011-2014թթ. իրական միտումը: Իսկ ինչ վերաբերում է 2011-2013թթ. ժամանակահատվածին, ապա թեպետ ապրանքների և ծառայությունների ներմուծման անվանական ծավալն աճել էր, ՀՀ տարածքում տարեց տարի ավելի քիչ ներմուծված ապրանքներ ու ծառայություններ են սպառվել կամ մատուցվել: Հետևաբար, 2011-2013թթ. ապրանքների և ծառայությունների ներմուծման անվանական ծավալի աճը հիմնականում պայմանավորված է եղել գների աճով:

Անդրադառնանք ՀՆԱ-ի հիմնական ծախսային բաղադրիչների վիճակագրորեն նշանակալի ազդեցությանը ապրանքների ու ծառայությունների իրական ներմուծման վրա՝ նախքան Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը (2000թ. առաջին եռամսյակից մինչև 2008թ. երկրորդ եռամսյակն ընկած ժամանակահատված) և 2000-2014թթ. ժամանակահատվածի կտրվածքով (եռամսյակային տվյալներով), որոնք կարող են որոշակիորեն պարզաբանել, թե ՀՆԱ-ի իրական ծախսային բաղադրիչի փոփոխությունն ինչպե՞ս ընդհանուր առմամբ կանդրադառնա ապրանքների և ծառայությունների իրական ներմուծման վրա՝ այլ հավասար պայմանների դեպքում: Հավասարումների գնահատման համար օգտագործվել են բոլոր փոփոխականների իրական,¹⁰⁴ սեզոնային ճշգրտված արժեքները (սահող միջինի եղանակով հարթեցված), որոնք բերվել են առաջին տարբերության մեջ՝ փոփոխականների ստացիոնարությունն ապահովելու նպատակով (հավելված 3, աղյուսակ 2, 3): Ավտոկորելյացիայի դեպքում կիրառվել է ավտոռեգրեսիոն (AR), ինչպես նաև սահող միջինի (MA) համապատասխան կարգի պրոցեսը, իսկ

¹⁰³ՀՀ ԱՎԾ-ի «Արտաքին առևտրի (ըստ ապրանքների անվանացուցակի 4-նիշ դասակարգման)» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=379>):

¹⁰⁴ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ազգային հաշիվները 2009, 2010, 2011, 2012 (Տարեկան և եռամսյակային տվյալներ), 2009թ., 2010թ., 2011թ., 2012թ., համապատասխանաբար էջեր՝ 240, 212, 212, 214-215, ք. երևան: ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների եռամսյակային ցուցանիշների «ՀՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>)՝ ըստ «ԱՀՀ 1993»-ի: Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից: Նշում՝ 2005=100:

հավասարումների գնահատումն իրականացվել է նվազագույն քառակուսիների մեթոդով՝ (OLS) «E-views 4.0» համակարգչային ծրագրի կիրառմամբ: Գործոնների նշանակումները ներկայացված են հավելված 3-ի աղյուսակ 1-ում: Իսկ դիտարկելով վերոբերյալ գործոնների միջև փոխկապվածության գործակիցները 2 ժամանակահատվածի կտրվածքով (հավելված 3, աղյուսակ 4, 5), պարզ է դառնում, որ տվյալ գործոնների միջև փոխկապվածության գործակիցները չեն գերազանցում 0.7-ի արժեքայինը շեմը, ինչը նշանակում է, որ մոլիտիկոլիներում խնդիր տվյալ դեպքում չի առաջանում:

Կատարված գնահատման արդյունքները փաստում են այն մասին, որ նախքան ճգնաժամը (գնահատում #1, հավելված 3, աղյուսակ 6) ապրանքների և ծառայությունների իրական ներմուծման վիճակագրորեն նշանակալի փոփոխության վրա ազդել են ապրանքների և ծառայությունների արտահանման, հիմնական միջոցների համախառն կուտակման, ինչպես նաև պետական հիմնարկների և տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի փոփոխությունները, սակայն, ժամանակահատվածը, ինչպես նաև մեծության չափը տարբերվում են (այլ հավասար պայմանների դեպքում): Նշենք, որ նմանատիպ պատկեր էր արձանագրվել 2000-2014թթ. ժամանակահատվածի կտրվածքով եռամսյակային տվյալների հիման վրա գնահատման արդյունքում (գնահատում #1, հավելված 3, աղյուսակ 6): Իսկ երկու գնահատման արդյունքում ստացված արդյունքները (ընտրված բաղադրիչներից յուրաքանչյուրի t-րդ ժամանակահատվածում 1 մլրդ ՀՀ դրամի փոփոխության ազդեցության չափը) ներկայացված են աղյուսակ 2.1.1-ում:

Աղյուսակ 2.1.1

Երդ ժամանակահատվածում 1 մլրդ ՀՀ դրամով իրական ՀՆԱ-ի հիմնական ծախսային բաղադրիչներից յուրաքանչյուրի ազդեցությունն ապրանքների և ծառայությունների ներմուծման վրա¹⁰⁵

ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչ	Գնահատում #1	Գնահատում #2
-------------------------	--------------	--------------

¹⁰⁵ Աղյուսակը կազմվել է հավելված 3-ի աղյուսակ 6-ի և 7-ի հիման վրա: Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից: Նշում՝ փակագծերում t վիճակագրի արժեքներն են՝ *նշանակալի է 10% մակարդակում, ** նշանակալի է 5% մակարդակում, *** նշանակալի է 1% մակարդակում:

	Ակնկալվող միջին չափ	Ժամանակահատված	Ակնկալվող միջին չափ	Ժամանակահատված
Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսեր	224.64 մլն ՀՀ դրամ (1.90)*	t+3-րդ	290.14 մլն ՀՀ դրամ (2.44)**	t+2-րդ
Պետական հիմնարկներին վերջնական սպառման ծախսեր	937.65 մլն ՀՀ դրամ (1.84)*	t-րդ	705.54 մլն ՀՀ դրամ (1.96)*	t-րդ
Հիմնական միջոցների համախառն կուտակում	358.02 մլն ՀՀ դրամ (2.10)**	t+3-րդ	320.82 մլն ՀՀ դրամ (4.00)***	t+1-րդ
Ապրանքների և ծառայությունների արտահանում	642.86 մլն ՀՀ դրամ (3.77)***	t-րդ	426.72 մլն ՀՀ դրամ (3.44)***	t-րդ

Երկու գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա կարող ենք հանգել հետևյալ եզրահանգումների՝

1. Ներմուծվող ապրանքների (կամ ծառայությունների) օգտագործմամբ ՀՀ-ում ստեղծվող և արտահանման համար նախատեսված ապրանքների կամ մատուցվող ծառայությունների միջոցով ստեղծված ավելացված արժեքն աճել է: Իսկ սանշանակում է, որ ներմուծման ծավալների փոփոխությունը հիմնականում պայմանավորված է լինելու ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների և վերջինիս կառուցվածքի փոփոխությամբ: Եթե արտահանման ծավալների աճը պայմանավորված լինի ցածր տեխնոլոգիական, աշխատատար ոլորտների արտադրանքի արտահանման ծավալների աճով, ապա այդ դեպքում ներմուծման ծավալներն ավելի շատ կաճեն, քան եթե արտահանման աճը պայմանավորված լինի գիտատար, միջինից բարձր տեխնոլոգիական ոլորտներում ստեղծված արդյունքի արտահանման ծավալների աճով: Իսկ հիմք ընդունելով ՀՀ-ում ապրանքների և ծառայությունների վրա զբոսաշրջիկների կատարած իրական ծախսերի աճի տեմպերը 2010-2014թթ. (հավելված 2, աղյուսակ 9), ապա կարելի է ասել, որ զբոսաշրջիկների թվաքանակի աճով պայմանավորված իրական արտահանման ծավալների աճը գուցե փոխվելու է ապրանքների իրական ներմուծման որոշակի փոփոխության հետ: Իսկ այս համատեքստում ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության արաջնահերթությունները կարող են լինել հետևյալը՝

- Արտահանման կառուցվածքի պահպանման դեպքում՝ դեպի զարգացած երկրներ արտահանման ծավալների աճի խթանումը (հատկապես ԵՄ)՝ միջնաժամկետ հատվածից սկսած, ինչը կմեծացնի ՀՀ-

ուժ ստեղծվող ավելացված արժեքի մեծություները, ինչպես նաև ավելի բարձր ավելացված արժեք ստեղծող ապրանքների արտադրության վրա կենտրոնացումը (տվյալ ոլորտների և կառուցվածքի շրջանակում):

- Գիտատար, բարձր տեխնոլոգիական ոլորտների զարգացմանը (որի հիմքերը կդրվեն կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում) զուգահեռ այդ ոլորտների արտահանման ծավալների աճի խթանումը երկարաժամկետ հատվածում:

2. Յառաջի առնելով այն հանգամանքը, որ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը 2010-2014թթ. աճել են (հավելված 2, աղյուսակ 1), թեպետ 2013-2014թթ. արձանագրած աճը նախորդ տարվա համեմատ չի գերազանցել 1%-ը, իսկ տնային տնտեսության մեկ շնչի հաշվով իրական սպառողական ծախսերի աճը (հավելված 2, աղյուսակ 5) 2011-2014թթ. (բացառությամբ 2013թ.-ի) չի ուղեկցվել նույն ժամանակահատվածում տնային տնտեսության մեկ շնչի հաշվով սննդամթերքի վրա կատարված իրական ծախսերի աճով (հավելված 2, աղյուսակ 6), ապակարելի է եզրակացնել, որ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի փոփոխության վիճակագրորեն նշանակալի ազդեցության միջին ակնկալվող չափի փոփոխությունը և ժամանակահատվածը (Գնահատում #1-ի համեմատ) հիմնականում արտացոլել է S/S-ների պահանջմունքների փոփոխությունը (ոչ պարենային ապրանքների սպառում և ծառայություններ): Ընդհանուր առմամբ 2013-2014թթ. տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի աճի տեմպերը փաստել էին այն մասին, որ եթե տնային տնտեսությունների իրական եկամուտները զգալիորեն չաճեն (հիմք ընդունելով նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրված վարկերի ծավալները (աղյուսակ 2.1.6 և 2.1.7)), վերջնական սպառման ծախսերը կամ կպահպանվեն տվյալ մակարդակի վրա, կամ կաճեն ոչ մեծ չափերով (2013-2014թթ. ՀՆԱ-ի աճի տեմպերի առնվազն պահպանման դեպքում): Յետևաբար, այս ծախսային բաղադրիչի ծավալների աճը միջնաժամկետ հատվածում չի հանգեցնի իրական ներմուծման ծավալների կտրուկ փոփոխության, իսկ կրճատումն (կախված ՀՀ տնտեսության զարգացումներից) կհանգեցնի ապրանքների և ծառայությունների իրական ներմուծման ծավալների կրճատման:

3. Հիմք ընդունելով պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերի աճի միտումները 2010-2014թթ. (հավելված 2, աղյուսակ 1), ինչպես նաև նույն ժամանակահատվածում պետական բյուջեից ծառայությունների և ապրանքների ձեռք բերման վրա ծախսվող գումարների իրական արժեքները (հավելված 2, աղյուսակ 7) կարելի է ենթադրել, որ ինչ-որ չափով տեղի է ունեցել ներմուծման փոխարինում՝ տեղական արտադրության ապրանքներով: Այսպիսով, կարելի է ասել, որ եթե միջնաժամկետ հատվածում պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերի աճը որոշակիորեն ուղեկցվի ներմուծման փոխարինման ավելացմամբ, ապա իրական ներմուծման ծավալները կտրուկ աճ չեն արձանագրի: Իսկ տնտեսության անկման հետևանքով պետական բյուջեից ծառայությունների և ապրանքների ձեռք բերման վրա ծախսվող գումարների իրական աճն, ինչպես տեղի էր ունեցել 2009թ. (հավելված 2, աղյուսակ 7)՝ կհանգեցնի ապրանքների և ծառայությունների իրական ներմուծման ծավալների ավելացման (այլ հավասար պայմանների դեպքում):

4. Հիմնական միջոցների համախառն կուտակման դեպքում ներդրումներն ուղեկցվել են տեղական արտադրության ապրանքների (կամ ծառայությունների) օգտագործման ծավալների որոշակի աճով: Իսկ հաշվի առնելով հիմնական միջոցների համախառն աճի տեմպերը 2010-2014թթ., ինչպես նաև այդ նույն ժամանակահատվածում մասնավոր հատվածի մասնաբաժինը հիմնական միջոցների համախառն կուտակման մեջ (գծապատկեր 2.2.2), ապա միջնաժամկետ հատվածում իրական ներմուծման վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը պայմանավորված կլինի նրանով, թե կկարողանա արդյո՞ք ՀՀ-ն ներգրավել հատկապես «արդյունավետություններն փնտրող»¹⁰⁶ օտարերկրյա ընկերություններ, որոնց նպատակն է մուտք գործել հատկապես տարածաշրջանային (ԵԱՏՄ, Իրան) շուկա, ինչպես նաև արտադրողականությամբ ճշգրտված ՀՀ աշխատուժի

¹⁰⁶ UNCTAD (1998). *World Investment Report 1998: Trends and Determinants*, United Nations Conference on Trade and Development, Geneva, Switzerland, pp.90-91: ՀԲ-ի կայք, <http://blogs.worldbank.org/psd/why-does-efficiency-seeking-fdi-matter>: Այս տեղ ներկայացվում են այս տեսակի նկարագիրը: Իսկ ԱՊՀ-ին առնչվող գործոններին, որոնք գրավիչ կլինեն օտարերկրյա ներդրողներին (այս տեսակի կտրվածքով) անդրադարձ է կատարվել հետևյալ աղբյուրում: Kudina, Alina and Jakubiak, Malgorzata (2008). "The Motives and Impediments to FDI in the CIS," paper submitted for the the OECD Global Forum on International Investment VII as background material for Breakfast Session 1: New frontiers in investment promotion in the programme, Paris, France, March 28, 2008, p.6, 14-15. Available at: <http://www.oecd.org/investment/globalforum/40401047.pdf>.

համեմատաբար ցածր վարձատրու թյ ու նից օգտվել ու ցանկություն ու նեցող և ՀՀ-ում դուստր ձեռնարկությունների կամ մասնաճյուղերի բացման ճանապարհով գլխամասային գրասենյակների արտապատվիրված աշխատանքներ իրականացնող ընկերություններ (հատկապես ԵՄ-ից), ինչպես նաև նրանով, թե ինչպե՞ս կփոխվեն արտահանման կառուցվածքը (կախված ՀՀ ապրանքների համար սպառման շուկա հանդիսացող երկրների տնտեսական աճի տեմպերից) և ծավալները, և ինչպիսի՞ն կլինի մրցակցությունը ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերում: Հակառակ դեպքում՝ ընկերությունների կողմից իրականացվող ներդրումների ծավալների կրճատումը կհանգեցնի իրական ներմուծման ծավալների կրճատման:


Հետևաբար, միջնաժամկետ հատվածում ՀՀ ընթացիկ հաշվի պակասուրդի (հատկապես ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի) պահպանման կամ կրճատման համար (առնվազն սկզբնական և երկրորդային եկամուտների հաշվեկշռի պահպանմամբ, որն իր հերթին հիմնականում պայմանավորված է լինելու ՌԴ տնտեսության աճի տեմպերով) Կառավարությունը կանգնած է երկու ռազմավարական ընտրություն (գծապատկեր 2.1.5) առջև՝

1. Կառավարության արտահանման խթանմանն ուղղված միջոցառումների շնորհիվ արտահանման ծավալների աճի ապահովում հատկապես վերը ներկայացված երկու ուղղություններից առաջինի ընտրությամբ, որը կարող է ուղեկցվել ՕՌԼ-ների ներգրավմամբ, ինչը հնարավորություն կտա պահպանել փոխարժեքի կայունությունը և ապահովել արտաքին պարտքի սպասարկումը:

2. Օտարերկրյա ընկերությունների ներգրավում, որը պետք է լինի թիրախավորված: Տվյալ պարագայում, օտարերկրյա ընկերությունների ներգրավումը կնպաստի միայն ընթացիկ հաշվի պակասուրդի առկա մակարդակի պահպանմանը, մինչդեռ հետագայում արտահանման մտադրությամբ «ռեսուրս», «արդյունավետություն և փրկություն» օտարերկրյա ընկերությունների ներգրավման դեպքում նախկին պահպանվի ընթացիկ հաշվի պակասուրդի առկա մակարդակը, իսկ այնուհետև կնպաստի արտահանման ծավալների աճին, ինչն էլ իր հերթին կհանգեցնի ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը:

Այժմ անդրադառնանք տնտեսության խոցելիությունը նկարագրող մեկ այլ ցուցանիշի՝ վարկերի ծավալների փոփոխության միտմանը, քանի որ, եթե վարկերի ծավալների աճը

պայմանավորված է արտաքին պարտքի մեծացմամբ, ապա դա երկիրն ավելի խոցելի է դարձնում արտաքին շոկերի հանդեպ: Իսկ եթե տնտեսական աճը պայմանավորված է եղել արտաքին վարկերի ծավալների աճով, ապա արտաքին շոկերի հետևանքով կարող է տնտեսական անկում գրանցվել:




Գծապատկեր 2.1.5. ՀՀ ընթացիկ հաշվի պակասուրդի պահպանումը կամ կրճատումը*

**Նշում՝ գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:*

Եթե 2005թ. առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 8.7% էր կազմում, ապա 2008թ. այն դարձավ 17.8%¹⁰⁷: Մասնավոր ընկերությունների կողմից ՀՀ առևտրային բանկերից ստացված վարկերի ծավալներն այդ նույն ժամանակահատվածում աճել էին մոտ 3 անգամ (գծապատկեր 2.1.6): Վարկերի ծավալների այսպիսի աճը որոշակիորեն կսահմանափակեր մասնավոր ընկերությունների կողմից վարկերը մարելու և ճգնաժամին դիմակայելու կարողությունը (եթե տեղի ունենար ճգնաժամ կարճաժամկետ հատվածում): Իսկ, ընդհանուր առմամբ, վարկեր/ ՀՆԱ այս հարաբերակցությունն այդքան էլ մեծ չէր, որ երկրում 2009թ.-ին առաջացնեք բանկային և արժույթային ճգնաժամեր: 2009թ.-ին մասնավոր ընկերությունների կողմից ՀՀ առևտրային բան-

¹⁰⁷ ՀՀ ԿԲ-ի Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրության «Բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ/վարկեր/ՀՆԱ» տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>):

կերից ստացված վարկերի ծավալը 2008թ.-ի համեմատ աճեց 37%-ով: Իսկ 2014թ.-ին 2011թ.-ի համեմատ ՀՀ առևտրային բանկերի կողմից մասնավոր ձեռնարկու թյ ու ններին տրամադրված վարկերի ծավալ ները ավելացել էին մոտ 2 անգամ:




Գծապատկեր 2.1.6. Առևտրային բանկերի կողմից մասնավոր ձեռնարկու թյ ու ններին տրամադրված վարկերը 2003-2014թթ. (մլ ռդ ՀՀ դրամ)¹⁰⁸

ՀՀ առևտրային բանկերի կողմից S/S-ներին տրամադրված վարկերի ծավալ ները 2008թ.-ին 2005թ.-ի համեմատ ավելացել էին մոտ 4 անգամ (գծապատկեր 2.1.7), ինչը նշանակում էր, որ եթե S/S-ների կողմից եկամտի տարբեր աղբյուրներից ստացվող գումարների անկում արձանագրվեր, նրանք որոշակի դժվարություններ կու նենային 2009թ.-ի ճգնաժամի հետևանքները հաղթահարել իս: ճգնաժամի տարում 2008թ.-ի համեմատ տրամադրվող վարկերի ծավալ ների կրճատում նկատվեց 24.7 մլ ռդ դրամի չափով, ինչը վկայում է բանկերի կողմից հիմնականում զգուշավոր քաղաքականության որդեգրման մասին: Իսկ 2014թ.-ին 2011թ.-ի համեմատ ՀՀ առևտրային բանկերի կողմից տնային տնտեսություններին տրամադրված վարկերի ծավալ ները ավելացել էին մոտ 2 անգամ (812.2 մլ ռդ. դրամ՝ 2011թ. 478.7 մլ ռդ ՀՀ դրամի փոխարեն): Այ դ ն ու յ ն ժամանակահատվածում S/S-ներին տրված սպառո-

¹⁰⁸ ՀՀ ԿԲ-ի դրամավարկային և ֆինանսական վիճակագրության «Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալ ները (ամսական)» տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>): Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

ղական վարկերի ծավալը աճել էր մոտ 2.1 անգամ՝ կազմելով 451.5 մլրդ ՀՀ դրամ 2014թ.-ին (2011թ.-ի 271.4 մլրդ ՀՀ դրամի համեմատ), իսկ հիփոթեքային վարկերի ծավալների աճը կազմեց մոտ 56.3% (գծապատկեր 2.1.8): Այս հանգամանքը կարելի է բացատրել նրանով, որ S/S-ներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալի աճը, հավանաբար, ուղեկցվել է վարկառուների թվաքանակի առնվազն պահպանմամբ, սակայն վարկերը տրամադրվել են հիմնականում վարկուհու S/S-ներին, որոնց վարկի գումարը կարող էր որոշակիորեն մեծ լինել (հատկապես հիպոթեքային վարկերի գծով):




Գծապատկեր 2.1.7. Առևտրային բանկերի կողմից տնային տնտեսությանը ուղևորված վարկերը 2003-2014թթ. (մլրդ ՀՀ դրամ)¹⁰⁹

Այս պարագայում առաջնայինը պետք է լինի իրական եկամուտների մակարդակի պահպանումը՝ ներկա սպառման մակարդակը պահպանելու և վարկերը վերադարձնելու համար: Յետևաբար, միջնաժամկետ հատվածում իրական աշխատավարձերի կամ եկամտի այլ աղբյուրներից ստացվող գումարների իրական կրճատման պարագայում S/S-ները դժվարության են հանդիպում պահպանելու իրենց սպառման մակարդակը, ինչը բացասաբար կանդրադառնա ՀՆԱ-ի ամենամեծ

¹⁰⁹ ՀՀ ԿԲ-ի դրամավարկային և ֆինանսական վիճակագրության «Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալները (ամսական)» տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>): Չափարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

ծախսային բաղադրիչի՝ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի աճի տեմպի վրա (հավելված 2, աղյուսակ 1):



Գծապատկեր 2.1.8. ՀՀ առևտրային բանկերի կողմից S/S-ներին տրամադրված հիմնական վարկառեսակները 2005-2014թթ. (մլրդ ՀՀ դրամ)¹¹⁰

Ինչպես ՀՀ մասնավոր ձեռնարկությունները, այնպես էլ S/S-ները միջնաժամկետ հատվածում խոցելի են արտաքին շուկերի հանդեպ, հատկապես դրանց հետևանքով առաջացած արժույթային ճգնաժամի նկատմամբ՝ վերջինիս սոցիալական ազդեցության և արտարժույթով վարկերի առկայության տեսանկյունից: Իսկ շուկերի տեղի ունենալու դեպքում վիճակի մեղմացման տեսանկյունից առաջնային են դառնում ՀՀ կառավարության կողմից իրականացվող հակաճգնաժամային միջոցառումները:

2011թ. համեմատ 2014թ.-ին առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկեր/ՅԱ հարաբերակցությունը 33.6%-ից դարձավ 42.7%¹¹¹, ինչն էլ նպաստել էր տնտեսական աճին, և վկայում էր այն մասին, որ եթե միջնաժամկետ հատվածում արտաքին շուկով պայմանավորված ՀՀ-ում գրանցվի ռեցեսիաների շրջանակում մակրոտնտեսական կայունության հիմքերը նկարագրող այս ցուցանիշով (վարկերի աճի տեմպ)

¹¹⁰ ՀՀ ԿԲ-ի դրամավարկային և ֆինանսական վիճակագրության «Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ոլորտների (ամսական)» տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>):

¹¹¹ ՀՀ ԿԲ-ի ֆինանսական կազմակերպությունների վիճակագրության «Բանկային համակարգի ակտիվներ/ՅԱ/վարկեր/ՅԱ» տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>):

պայմանավորված ռեցեսիայի խորությունը կախված է լինելու ՅՅ S/S-ների և արտահանման շուկա հանդիսացող երկրների S/S-ների իրական եկամուտների փոփոխությունից (ՅՅ և այլ երկրների ազգային արժույթների արժեզրկման չափով պայմանավորված): Այստեղ մտահոգիչը ոչ միայն այս ժամանակահատվածում վարկերի ծավալի աճն է, այլ նաև արտարժույթով տրամադրված վարկերի ծավալի աճը, ինչն էլ նշանակում է, որ ՅՅ մասնավոր ձեռնարկությունները և S/S-ները խոցելի են դարձել ոչ միայն արտաքին շուկերի հանդեպ՝ տնտեսության իրական հատվածում գրանցված զարգացումների պատճառով, այլ նաև այդ շուկի հետևանքով ՅՅ դրամի արժեզրկման նկատմամբ, ինչն էլ կարող է ավելացնել անհուսալի վարկերի թիվը և վատագույն սցենարի դեպքում բանկային ճգնաժամի պատճառ հանդիսանալ միջնաժամկետ հատվածում՝ արտաքին շուկերի տեղի ունենալու դեպքում: Եթե 2011թ.-ին անհուսալի վարկերը կազմում էին ընդհանուր համախառն վարկերի մոտ 3.4%-ը, ապա արդեն 2014թ.-ին այդ ցուցանիշը կազմել էր մոտ 7%¹¹²: Իսկ, ընդհանուր առմամբ, ձեռնարկությունների վարկունակության և մրցունակության բարձրացման տեսանկյունից արտադրողականությունն է լինելու այն վճռորոշ գործոնը, որը հնարավորություն կտա ձեռնարկություններին ավելի մեծ եկամուտներ ապահովել, ինչպես նաև մարել վարկերը, ինչն էլ իր հերթին պայմանավորված է ներդրումների ծավալների աճով:

Այժմ անդրադառնանք երկրի մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող ևս մեկ ցուցանիշի կամ ներքին շուկի՝ բնակարանների գների աճի տեմպին: 2008թ.-ի չորրորդ եռամսյակում ՅՅ-ում սկսեց 5 եռամսյակ տևած ռեցեսիան, իսկ ՅՆԱ-ի անկումը կազմեց 5.9% (հավելված 2, աղյուսակ 1), որը հիմնականում պայմանավորված էր շինարարության ոլորտի -14.5% անկմամբ (ոլորտի մասնաբաժինը ՅՆԱ-ի կառուցվածքում 2008թ.-ի 4-րդ եռամսյակում 25.1% էր)¹¹³: Շինարարության ոլորտի աճի տեմպը 2003-2007թթ. գերազանցում էր 15%-ը, ինչն

¹¹² ՅՔ-ի «World DataBank World Development Indicators» արցանց տվյալների բազա առ 2015թ. հունիսի 1 (<http://databank.worldbank.org/data/views/variableselection/selectvariables.aspx?source=world-development-indicators>):

¹¹³ ՅՅ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՅՆԱ-ի արտադրությանը (ԵՅՅ-95 Ա17 խմբավորմամբ՝ SՊՏՅԴ (NACE 1.1.) դասակարգմամբ)», եռամսյակային ցուցանիշների «ՅՆԱ-ի արտադրությանը (ԵՅՅ-95 Ա17 խմբավորմամբ՝ SՊՏՅԴ (NACE 1.1.) դասակարգմամբ)» տվյալների բազաներ՝ ըստ «ԱՅՅ 1993»-ի (<http://www.armstat.am/am/?nid=263>):

Էլ հանգեցրեց նրան, որ այս ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2003թ.-ի 15.7%-ից դարձել էր 24.5% 2007թ.-ին¹¹⁴: Ճինարարության նպաստումը ՀՆԱ-ի իրական աճին բավականին մեծ էր 2006-2007թթ. տնտեսության այլ ճյուղերի համեմատ¹¹⁵: Հետևաբար, այս ոլորտի վրա արտաքին շուկերի ազդեցությունը խիստ բացասաբար էր անդրադառնալու ՀՆԱ-ի իրական աճի վրա, քանի որ նախքան ճգնաժամը շինարարության ոլորտի աճը հիմնականում պայմանավորված էր ոլորտում կատարված ներդրումներով՝ դրամական փոխանցումները (տրանսֆերտների զգալի մասնաբաժինը, որպես ներդրումների հիմնականում ուղղվում էին դեպի շինարարություն)¹¹⁶ և օտարերկրյա ուղղակի ներդրումները սփյուռքից¹¹⁷:

Ըստ Ն. Օոմեսի-ի և այլոց (2009թ.) «վերջերս բնակելի շենքերի շինարարությունը Հայաստանում մեծամասամբ համարվում է արտաքին պահանջարկով պայմանավորված... որ անշարժ գույքի վաճառքի կեսից ավելին (ներառյալ կորպորատիվ շինարարությունը) կատարվում է օտարերկրացիների՝ մեծամասամբ Ռուսաստանից և Միջին Արևելքի սփյուռքահայության կողմից»¹¹⁸: Իսկ համաշխարհային տնտեսության՝ մասնավորապես ՌԴ տնտեսության անկումը, հանգեցրեց ՀՀ փոխանցվող տրանսֆերտների, ՕՈՒՆ-ների ծավալների կրճատման, ինչն էլ բացասաբար անդրադարձավ ոլորտի վրա: Քանի որ բնակարանների շինարարությունը պայմանավորված էր արտաքին պահանջարկով և տրանսֆերտների զգալի մասն ուղղվում էր բնակարան ձեռք բերելուն, այս ամենը, հատկապես ք. Երևանում (մասնավորապես Կենտրոն և Արաբկիր համայնքներում) հանգեցրեց բնակարանների գների կտրուկ աճի 2004-2007թթ. (հավելված 2, գծապատկեր 4): Եթե Կենտրոնում 2004թ.-ին բնակարանների 1 քառ. մ գինը 246,500 դրամ էր, ապա 2007թ.-ին այդ գինն արդեն հասել էր 448,300 դրամի: Նմանատիպ միտում էր արձանագրվել նաև Արաբկիր վարչական շրջանում: 2008թ.-ին գները ևս աճ արձանագրեցին: Թեպետ ՀՖՏԾ-ը սկսել էր 2008թ.-ի

¹¹⁴ ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՀՆԱ-ի արտադրությանը (ԵՀՀ-95 Ա17 խմբավորմամբ՝ ՏԳՏՀԴ (NACE 1.1.) դասակարգմամբ)», տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>): Ըստ «ԱՀՀ 1993»-ի:

¹¹⁵ ՀՀ Ֆինանսների նախարարության կայք, <http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>:

¹¹⁶ Public Forum Armenia (2008). “*Implications of the World’s Financial Crisis for Armenia’s Economy*”, PFA, Washington, D.C.: United States p.6. Available at: http://www.pf-armenia.org/sites/default/files/documents/files/CRISIS_REPORT--FINAL.pdf

¹¹⁷ OECD (2011). *Development in Eastern Europe and the South Caucasus: Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova and Ukraine*, OECD Publishing, Paris, France, p.19.

¹¹⁸ Oomes, N., Minasyan, G., Stepanyan, A. (2009). “*In Search of a Dramatic Equilibrium: Was the Armenian Dram Overvalued?*” IMF Working Paper No. 09/49, IMF, Washington, D.C.: United States, pp.9-10.

սեպտեմբերի կեսին և չորրորդ եռամսյակում շինարարության անկումը -14.5% էր կազմել, 2008թ.-ի երկրորդ կիսամյակում Կենտրոնում և Արաբկիրում գները նախորդ կիսամյակի համեմատ աճ արձանագրեցին (Կենտրոնում՝ 475,500-ից դարձել էր 491,100 դրամ, իսկ Արաբկիրում՝ 401,200-ից 405,500 դրամ), իսկ արդեն 2009թ.-ի առաջին կիսամյակում երկու շրջաններում էլ գները անկում արձանագրեցին¹¹⁹: 2011թ.-ին երկու վարչական շրջաններում գները 2010թ.-ի համեմատ նվազել էին: Այնուհետև, 2013թ.-ին նախորդ տարվա համեմատ գները որոշակիորեն աճեցին, իսկ 2014թ.-ին գրեթե նույն մակարդակի են (հավելված 2, գծապատկեր 4): 2011-2014թթ. միտումները փաստում են այն մասին, որ եթե ՀՀ-ում միջնաժամկետ հատվածում արտաքին շուկերով պայմանավորված տնտեսական անկում արձանագրվի, այն ավելի չի խորանա այս ներքին շուկի կամ մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող ցուցանիշի (բնակարանների գների աճի տեմպի) պատճառով:

ՀՀ-ում ընթացիկ հաշվի պակասուրդ/ՅՆԱ հարաբերակցությունը 2007-2008թթ. հանդես եկավ որպես լավ ցուցանիշ, որը մատնանշում էր \$ինանսատնտեսական ճգնաժամի առաջացման վտանգը, իսկ 2013-2014թթ. ցուցանիշը բարձր էր ՀՀ վճարունակության և արտաքին պարտքի կայունության համար անհրաժեշտ շեմից, բայց չէր գերազանցում ՀՀ-ում արժույթային և տնտեսական ճգնաժամերի առաջացման տեսանկյունից վտանգավոր շեմը: Սակայն ՀՀ-ում փոխանցվող արժույթային ճգնաժամ կարող է առաջանալ ավելի ցածր մակարդակի դեպքում ևս, քանի որ ՀՀ տնտեսության պարագայում կարևոր գործոն է արտաքին տնտեսական գործոնների և տնտեսության իրական հատվածի կապը, ինչն էլ ՀՀ տնտեսությունը խոցելի է դարձնում արտաքին շուկերի հանդեպ: ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալը (հատկապես արժույթային) 2011-2014թթ. ընթացքում ավելի խոցելի էր դարձրել ՀՀ տնտեսությունն արտաքին շուկերի հանդեպ, իսկ վերջիններիս դրսևորման դեպքում երկրում արձանագրված ռեցեսիան կարող է ավելի երկար տևել: Հետևաբար, միջնաժամկետ հատվածում ընթացիկ հաշվի պակասուրդի պահպանման և կրճատման (սկզբնական և երկրորդային եկամուտների ծավալների պահպանման դեպքում), ինչպես նաև փոխարժեքի կայուն-

¹¹⁹ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թվականի հունվար-սեպտեմբերին, ք. Երևան, 2009թ., էջ 140:

նույն ժամանակ արտաքին պարտքի սպասարկման նպատակով անհրաժեշտ է լինելու ներգրավել ՕՈՒՆ-ներ և մեծացնել արտահանման ծավալները: Չնայած նրան, որ այս հոսքերի աճը ևս մեծացնում է տնտեսության խոցելի ուժայնաստիճանը, այնուամենայնիվ, տնտեսության և արտահանման դիվերսիֆիկացիայի աստիճանի բարձրացումը կարող է նպաստել տնտեսության ճկունության մեծացմանը, որի շնորհիվ հնարավոր կլինի ավելի հեշտությամբ հաղթահարել արտաքին շուկերի բացասական ազդեցությունը:

2.2 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Արտաքին շուկերի հանդեպ ՀՀ տնտեսության խոցելի ուժայնաստիճանի գնահատման նպատակով անհրաժեշտ է պարզել, թե նախքան ճգնաժամը և դրանից հետո ՀՀ տնտեսական աճը հատկապես ո՞ր գործոններով է պայմանավորված եղել: Եթե ՀՀ տնտեսական աճը պայմանավորված է եղել կապիտալի պաշարի աճի տեմպերով, ապա այս դեպքում առաջնային պետք է լինեն ներդրումները: Իսկ եթե ներդրումներն իրականացվում են հիմնականում օտարերկրյա կապիտալով ընկերությունների կողմից (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ընկերություններ), ապա առաջնային է դառնում ՕՈՒՆ-ների ներգրավումը: Պետք է նշել, որ ՕՈՒՆ-ների ծավալների կրճատումը կամ դանդաղ տեմպերով աճը հիմնականում պայմանավորված է արտաքին շուկերով (այլ երկրների ռեցեսիան, մետաղների հումքի գների անկումը և այլն): Այժմ ներկայացնենք տնտեսական աճի աղբյուրների վիճակագրական վերլուծությունը (growth accounting)՝ հիմք ընդունելով նեոդասական Կոբբ-Դոլգի արտադրական ֆունկցիան¹²⁰ (լոգարիթմաձև)։

$$\log Y_t = \log A_t + \alpha \cdot \log K_t + (1-\alpha) \cdot \log L_t \quad (2.2.1)$$

Որտեղ՝

¹²⁰ Abel, A.B., Bernanke, B.S., (2001). *Macroeconomics*, Update Edition (Fourth edition), Addison-Wesley, Boston (MA), United States, pp.62-63: Iradian, G. (2007). "Rapid Growth in Transition Economies: Growth-Accounting Approach," IMF Working Paper No 07/164, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.9: Loukoianova, Elena, Unigovskaya, Anna (2004) "Analysis of Recent Growth in Low-Income CIS Countries," IMF Working Paper No 04/151, International Monetary Fund, Washington D.C.: United States, p.11.

Y_t –ն՝ t-րդ ժամանակահատվածում իրական համախառն ներքին արդյունքն է:

K_t -ն՝ t-րդ ժամանակահատվածում կապիտալի իրական պաշարն է:

L_t -ն՝ t-րդ ժամանակահատվածում զբաղվածների թիվն է:

A_t -ն՝ t-րդ ժամանակահատվածում ընդհանուր գործոնային արտադրողականությանը (total factor productivity):

α -ն՝ կապիտալի նկատմամբ ՅՆԱ-ի առաձգականությանը բնութագրող պարամետր է:

$1-\alpha$ -ն՝ զբաղվածության նկատմամբ ՅՆԱ-ի առաձգականությանը բնութագրող պարամետր է:

Այնուհետև՝ տվյալ տարվա իրական ՅՆԱ-ն, կապիտալի իրական պաշարը, ընդհանուր գործոնային արտադրողականությանը և զբաղվածների թիվը բաժանելով նախորդ տարվա վրա (t-րդ տարվա հարաբերակցությանը նախորդ տարվան (t-1)) ստանում ենք հետևյալը՝

$$\log(Y_t/Y_{t-1}) = \log(A_t/A_{t-1}) + \alpha \cdot \log(K_t/K_{t-1}) + (1-\alpha) \cdot \log(L_t/L_{t-1}) \quad (2.2.2)$$

Իր հերթին բանաձև 2.1.2-ը աճի տեմպերով ներկայացնելու դեպքում ստանում ենք հետևյալը՝

$$g_Y = g_A + \alpha \cdot g_K + (1-\alpha) \cdot g_L \quad (2.2.3)$$

որտեղ՝

g_Y , g_A , g_K , g_L ՝ համապատասխանաբար ՅՆԱ-ի (g_Y), ընդհանուր գործոնային արտադրողականության (g_A), կապիտալի պաշարի իրական աճի (g_K), ինչպես նաև զբաղվածների թվաքանակի աճի տեմպն է (g_L):

Կապիտալի պաշարի հաշվարկի համար օգտագործվել է հետևյալ բանաձևը՝

$$K_{(t+1)} = K_t + I_t - \delta \cdot K_t^{121} \quad (2.2.4)$$

որտեղ՝

I_t –ն՝ t-րդ ժամանակահատվածի ներդրումներն են՝ որպես ընդհանուր ներդրումների աղբյուր հանդես է գալիս համախառն կուտակումը (հիմք ընդունելով Գ. Իրադյանի 2009թ.-ի պարզաբանումը վիճակագրական տվյալի աղբյուրի վերաբերյալ¹²²):


δ -ն՝ կապիտալի պաշարի ամորտիզացիայի դրույթաչափն է:

¹²¹ Iradian, Garbis (2007). "Rapid Growth in Transition Economies: Growth-Accounting Approach," IMF Working Paper No 07/164, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, p.9.

¹²² Iradian, G. (2009). "What Explains the Rapid Growth in Transition Economies?," IMF Staff Papers, Palgrave Macmillan (New York, NY: United States), Vol. 56, No. 4, p.846:

Համաձայն 2.2.4 բանաձևի δ -ն հաստատուն է, ինչը նշանակում է, որ կապիտալի պաշարի ամորտիզացիայի դրույթաչափը տարիների ընթացքում չի փոխվում: Գ. Իրադյանը (2007թ.) այն 1996–2006թթ. համար ԱՊՀ երկրների պարագայում ընդունել է որպես 5% կամ 0.05 գործակից: Մեր կողմից ՀՀ տնտեսական աճի աղբյուրների վիճակագրական վերլուծության նպատակով կօգտագործվի δ -ի 0.05 արժեքը, իսկ սկզբնական կապիտալի պաշար $K(0)$ /ՀՆԱ հարաբերությունը 1995թ.-ի համար կընդունվի $2^{\text{՝}}$ հաշվի առնելով եկամտի միջին մակարդակ ունեցող Ասիական երկրների ցուցանիշը, ինչպես նաև Գ. Իրադյանի (2007թ.) ենթադրությունը: 1996–2006թթ. կտրվածքով ԱՊՀ 12 երկրի նվերաբերող Գ. Իրադյանի հաշվարկի համաձայն կապիտալի պաշարի նկատմամբ ՀՆԱ-ի առաձգականության (α պարամետր) արժեքը եղել է 0.63, իսկ մեկ այլ հաշվարկում տվյալ պարամետրի արժեքն ենթադրվել է որպես 0.60¹²³: Այդ պատճառով մեր կողմից ՀՀ α պարամետրի արժեքն ընդունվել է 0.6, իսկ $1-\alpha$ -ի արժեքը՝ 0.4:

Եթե 2001-2003թթ. ՀՆԱ-ի աճի տեմպին ամենամեծ չափով նպաստում էր ընդհանուր գործոնային արտադրողականության աճի տեմպը, ապա 2004թ.-ից այդ միտումը փոխվեց (գծապատկեր 2.2.1):



¹²³ Iradian, G. (2007). "Rapid Growth in Transition Economies: Growth-Accounting Approach," IMF Working Paper No 07/164, The International Monetary Fund, Washington, D.C.: USA, pp. 12, 14, 17.

Գծապատկեր 2.2.1 ԶՅ տնտեսական աճի աղբյուրների վիճակագրական վերլուծության արդյունքները (2001-2014թթ.)¹²⁴

2004-2014թթ. ՅՆԱ-ի իրական աճի տեմպն հիմնականում պայմանավորված է եղել կապիտալի պաշարի իրական աճի տեմպերով, չնայած նրան, որ աճի տեմպերը որոշակիորեն դանդաղել են: Յետևաբար, եթե միջնաժամկետ հատվածում ԶՅ տնտեսության իրական հատվածին ուղղվող ներդրումների ծավալները չավելանան, ԶՅ-ն չի կարողանա ապահովել ՅՆԱ-ի աճի ավելի բարձր տեմպեր: Այդ իսկ պատճառով կարևորվում է նաև ՕՈՒՆ-ների ներգրավումը: Մյուս կողմից, այս արդյունքները վկայում են նաև հետևյալի մասին.

1. 2001-2003թթ. ընդհանուր գործոնային արտադրողականության աճի բավականին բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված էին տեխնոլոգիաների որակական փոփոխությամբ, որն ուղեկցվել է նաև զբաղվածների որակական հատկանիշների փոփոխությամբ, ինչն արտացոլել է այդ տարիների զբաղվածների արտադրողականության աճը (համապատասխանաբար՝ 10.6, 31.3 և 13.9% (գծապատկեր 2.2.4))՝ զբաղվածների թվաքանակի կրճատման պարագայում:

2. 2004-2007թթ. թեպետ ՅՆԱ-ի աճի տեմպին ամենամեծ և էական նպաստումը բաժին էր ընկնում կապիտալի պաշարի աճի տեմպին, այնուամենայնիվ, ընդհանուր գործոնային արտադրողականության աճի տեմպերը զիջում էին 2001-2003թթ. տեմպերին, ինչը հիմնականում պայմանավորված էր ՅՆԱ-ի կառուցվածքում շինարարության ոլորտի մասնաբաժնի աճով: Ինչ վերաբերում է ՅՆԱ-ի աճին զբաղվածների թվաքանակի նպաստմանը, ապա այն ոչ բոլոր տարիներին է եղել դրական, թեպետ այդ տարիների արտադրողականության աճի տեմպերը գերազանցել են 10%-ը: Այս տեղից կարելի է ենթադրել, որ, ընդհանուր առմամբ, կապիտալի որակական


¹²⁴ ԶՅ ԱՎԾ, Յայաստանի ազգային հաշիվները 1990-2001, 2009, 2010, 2011, 2012, 2003թ., 2009թ., 2010թ., 2011թ., 2012թ., համապատասխանաբար էջեր՝ 37, 240, 212, 212, 214-215, ք. երևան: ԶՅ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՅՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>) ըստ «ԱՅՅ 1993»-ի: ԱՄՆ-ի «World Economic Outlook» տվյալների բազա առ. 2015թ. հոկտեմբեր (<http://www.imf.org/external/pubs/ft/weo/2015/02/weodata/index.aspx>): ԶՅ ԱՎԾ-ի «ArmStatBank.am»-ի «Բնակչություն և սոցիալական գործընթացներ» բաժնի «Զբաղվածություն և գործազրկություն» ենթաբաժնի «Զբաղվածությունն ըստ ցուցանիշների և տարիների» տվյալների բազա (www.armstatbank.am): Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «ILOSTAT» տվյալների բազա (www.ilo.org/ilostat): Յաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից 1995-2014թթ. ժամանակահատվածի կտրվածքով կապիտալի պաշարի դեպքում, սակայն այս տեղ ներկայացված են 2001-2014թթ. արդյունքները: Նշում՝ 2005=100:

փոփոխությունը (տեխնոլոգիաների որակը) այդքան էլ մեծ չի եղել, ինչը ուղեկցվել է նաև զբաղվածների որակական հատկանիշների փոփոխությամբ:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2011-2014թթ. շինարարության մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում կրճատվել էր¹²⁵, ինչպես նաև նվազել էր ՀՆԱ-ում հիմնական միջոցների համախառն կուտակման մասնաբաժինը (գծապատկեր 2.2.2), իսկ զբաղվածների թվաքանակի փոփոխության նպաստումն իրական ՀՆԱ-ի աճի տեմպին բացասական էր (գծապատկեր 2.2.1), այնուամենայնիվ, ընդհանուր գործոնային արտադրողականության դրական աճի տեմպերը փաստում են կապիտալի (տեխնոլոգիաների) և զբաղվածների որակական փոփոխության մասին: Իսկ սանշանակում է, որ չնայած ներդրումների ծավալների կրճատմանը, նրանք նպաստում էին արտադրողականության աճին, որը պայմանավորված էր նաև զբաղվածների թվաքանակի կրճատմամբ: Հետևաբար, այդ ներդրումները հիմնականում նպաստում էին ավելի նպատակային և արդյունավետ գործընթացների կազմակերպմանը (գործառնական արդյունավետություն): Վերջինս էլ հանգեցրել է զբաղվածների որակական հատկանիշների փոփոխությանը:

Ճգնաժամից հետո ՀՆԱ-ի կառուցվածքում համախառն կուտակման մասնաբաժնի կրճատումը (հավելված 2, աղյուսակ 1) հիմնականում պայմանավորված էր մասնավոր հատվածի ներդրումների կրճատմամբ (գծապատկեր 2.2.2), ինչը ևս մեկ անգամ շեշտադրում է ՕՈՒՆ-ների ներգրավման կարևորությունը, քանի որ կապիտալի պաշարներն այս միտման պահպանման դեպքում կսկսեն նվազել, և միայն զբաղվածների որակական հատկանիշների կտրուկ փոփոխությամբ (որը գրեթե անհնար է, առանց տեխնոլոգիաների որակի կտրուկ փոփոխության) հնարավոր կլինի ՀՆԱ-ի աճի ավելի բարձր տեմպեր ապահովել զբաղվածների թվաքանակի կրճատման պարագայում:

¹²⁵ ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՀՆԱ-ի արտադրողությունը ըստ SՊՏԴ խմբ. 2 (NACE 2) դասակարգման» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>):




Գծապատկեր 2.2.2 Հիմնական միջոցների համախառն կուտակումը (2005-2014թթ.)¹²⁶

Նախքան ՀՆԱ-ի աճի գործում զբաղվածության դերին անդրադառնալը, դիտարկենք կապիտալի իրական արտադրողականության և այլ իրական ցուցանիշների փոփոխության միտումները¹²⁷:

Եթե նախքան ՀՀ ֆինանսատնտեսական ճգնաժամը մեկ շնչի և մեկ զբաղվածի հաշվով կապիտալի պաշարի իրական աճի տեմպերը բավականին բարձր էին (գծապատկեր 2.2.3), ապա 2010թ.-ից սկսած այդ աճի տեմպերը սկսեցին դանդաղել, արտացոլելով հիմնական միջոցների համախառն կուտակման աճի տեմպերը:

¹²⁶ ՀԲ-ի «World DataBank World Development Indicators» տվյալների բազաում 01.07.2015թ. (<http://databank.worldbank.org/data/views/variableselection/selectvariables.aspx?source=world-development-indicators>): ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՀՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>)՝ ըստ «ԱՀՀ 1993»-ի:

¹²⁷ Ցուցանիշների ընտրության և վերլուծության համար հիմք է հանդիսացել հետևյալ աղբյուրը՝ Neuhaus, M. (2006). *The Impact of FDI on Economic Growth: An Analysis for Transition Countries of Central and Eastern Europe*, Physica-Verlag, Springer, Heidelberg, Germany, pp.28-37, 39-74:



Գծապատկեր 2.2.3 Կապիտալի պաշարի հիմնական ցուցանիշները (2003-2014թթ.)¹²⁸

Իրական կապիտալի արտադրողականության պարագայում իրական կապիտալի պաշարի 1 դրամին բաժին էր ընկնում համախառն ներքին արդյունքի արժեքի 0.59-0.60 դրամ 2003-2007թթ., իսկ արդեն 2010-2014թթ. այս ցուցանիշը տատանվել է 0.37-0.38 դրամի շրջանակում:

Հաշվի առնելով վերոգրյալը կարող ենք եզրակացնել հետևյալը (կապիտալի պաշարի աճի տեմպերի առնվազն պահպանման դեպքում՝ միջնաժամկետ հատվածում).

1. Կապիտալի արտադրողականությունը նմանատիպ տեխնոլոգիաների փոխարինման կամ ավելացման դեպքում կմնա գրեթե նույն մակարդակի վրա:

¹²⁸ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ազգային հաշիվները 1990-2001, 2009, 2010, 2011, 2012, 2003թ., 2009թ., 2010թ., 2011թ., 2012թ., համապատասխան արժեքներ՝ 37, 240, 212, 212, 214-215, ք. երևան: ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՀՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>)՝ ըստ «ԱՀՀ 1993»-ի: ԱՄՆ-ի «World Economic Outlook» տվյալների բազա առ. 2015թ. հոկտեմբեր (<http://www.imf.org/external/pubs/ft/weo/2015/02/weodata/index.aspx>): ՀՀ ԱՎԾ-ի «ArmStatBank.am»-ի «Բնակչություն և սոցիալական գործընթացներ» բաժնի «Չբաղվածություն և գործազրկություն» ենթաբաժնի «Չբաղվածություն և ըստ ցուցանիշների և տարիների» տվյալների բազա (www.armstatbank.am): ԱՄԿ-ի «ILOSTAT» տվյալների բազա (www.ilo.org/ilostat): Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից: Նշում՝ 2005=100:


2. Կապիտալի արտադրողականությանը կբարձրանա, եթե տեխնոլոգիաները փոխարինվեն ավելի լավ հատկանիշներ և բնութագրիչներ ունեցող, կամ էլ լիովին նոր տեխնոլոգիաներով:

Իսկ ինչ վերաբերում է իրական կապիտալի սահմանային արդյունքին, ապա դիտարկվող ժամանակահատվածում միայն 2003թ.-ին է եղել 1-ից ավելի, ինչը նշանակում է, որ 2004-2014թթ. կապիտալի պաշարի փոփոխությանը ավելի քիչ ավելացված արժեք է ստեղծել 2003թ. համեմատ: 2012-2014թթ. կապիտալի միջին սահմանային արդյունքը կազմել էր 0.37, ինչը նշանակում է, որ դա կապիտալի արտադրողականության գրեթե նույն արժեքն է:

Այս պարագայում կապիտալի արտադրողականության ներկայիս մակարդակը առնվազն պահպանելու համար (երբ ՀՀ ռեզիդենտը նկերությաններին ներդրումները կրճատվում են) էապես կարևորվում են նոր ներդրումների և, հատկապես, ՕՌՆ-ների ներգրավումը: Նախքան ճգնաժամը օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը որոշակիորեն նպաստել էր հիմնական միջոցների համախառն կուտակման աճին: Հետևաբար, ներդրումների ծավալների հետագա կրճատումը, որը սկսվել էր 2009թ.-ից (չնայած նրան, որ որոշ տարիներին նախորդ տարվա համեմատ աճ է գրանցվել) կհանգեցնի իրական կապիտալի պաշարի աճի տեմպերի դանդաղեցմանը, ինչը նշանակում է, որ ՀՀ-ն միջնաժամկետ հատվածում կգրանցի բավականին ցածր տնտեսական աճի տեմպեր, եթե չկարողանա ներգրավել ՕՌՆ-ներ, կամ էլ, եթե մրցակցությանը ներքին կամ օտարերկրյա շուկաներում չստիպի ռեզիդենտը նկերությաններին իրականացնել ներդրումներ՝ գործառնական արդյունավետության և մասշտաբի էֆեկտի հասնելու նպատակով: Իսկ արտաքին շուկերի առկայության դեպքում կարևորվելու է Կառավարության խթանող քաղաքականության միջոցով երկրի հիմնական միջոցների համախառն կուտակման մակարդակի առնվազն պահպանումը (մասնավոր հատվածի կողմից): ՕՌՆ-ները, բացի նրանից, որ հնարավորություն են տալիս պահպանելու ընթացիկ հաշվի պակասուրդը, կարող են հանդիսանալ նաև կապիտալի պաշարի ավելացման աղբյուր (նոր տեխնոլոգիաների փոխանցման աղբյուր): ՕՌՆ-ների ներգրավումը և ՀՀ ընկերությաններին կողմից ներդրումների ծավալների ավելացումը, հատկապես կարևորվում է նաև նրանով, որ ստեղծում է լրացուցիչ աշխատատեղեր: ՕՌՆ-ները կարող են նաև բիզնես գործ-

ընթացների ներդրմամբ բարձրացել ընդհանուր գործունային արտադրողականության աճի տեմպերը՝ ապահովելով ՀՆԱ-ի աճի ավելի բարձր տեմպեր:

2008թ.-ին նախորդ տարվա համեմատ ՀՀ-ում զբաղվածների թվաքանակի փոփոխությունը 2001-2014թթ. ամենամեծ չափով էր նպաստել ՀՆԱ-ի աճի տեմպին, իսկ 2011-2014թթ., այն եղել է բացասական (գծապատկեր 2.2.1): Եթե այս միտումները դիտարկենք աշխատողների արտադրողականության և ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականության (ϵ) տեսանկյունից, ապա 2008թ.-ին 2007թ. համեմատ զբաղվածների թվաքանակի աճն ուղեկցվել է արտադրողականության նվազմամբ (-0.4%), ինչի մասին է վկայում առաձգականության գործակիցը, որը մեկից բարձր էր (գծապատկեր 2.2.4): 2011-2014թթ. ընթացքում ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականության գործակիցը եղել է բացասական (-0.305), ինչը նշանակում է, որ արտադրողականության աճը պայմանավորված է եղել զբաղվածների թվաքանակի կրճատմամբ, քանի որ ՀՀ տնտեսական աճը չի հանգեցրել զբաղվածների թվաքանակի ավելացմանը (աղյուսակ 2.2.1): Համադրելով այս տվյալներն ընդհանուր գործունային արտադրողականության աճի տեմպերի հետ պարզ է դառնում, որ զբաղվածների որակական հատկանիշների փոփոխությունն է ևս արձանագրվել՝ ընդհանուր առմամբ պայմանավորված որոշակի հմտություններ պահանջող նոր տեխնոլոգիաների կիրառմամբ: Դիտարկելով այս միտումն իրական աշխատավարձերի փոփոխության համատեքստում նշենք, որ 2011-2014թթ. ընթացքում միայն 2012թ.-ին և 2014թ.-ին էր գրանցվել իրական աշխատավարձերի աճ (գծապատկեր 2.1.3), ինչը նշանակում է, որ երկրում, ընդհանուր առմամբ, արտադրողականության աճը ոչ միշտ էր հանգեցնում իրական աշխատավարձերի աճի, ինչն էլ նշանակում է, որ ընդհանուր գործունային արտադրողականության աճի տեմպը հիմնականում պայմանավորված է եղել որոշ, բայց ոչ զգալի տոկոս կազմող զբաղվածների բարձր արտադրողականությամբ:



Չժապարկեր 2.2.4 ՀՀ արտադրողականության աճի տեմպը և ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականության ցուցանիշները (ε) 2001-2014թթ.¹²⁹

Աղյուսակ 2.2.1

ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականության ցուցանիշների մեկնաբանությունը¹³⁰

Առաձգականության ցուցանիշ	ՀՆԱ-ի աճի տեմպ	
	ՀՆԱ-ի դրական աճի տեմպ	ՀՆԱ-ի բացասական աճի տեմպ
$\epsilon < 0$	(-) զբաղվածների թվաքանակի աճ (+) արտադրողականության աճ	(+) զբաղվածների թվաքանակի աճ (-) արտադրողականության աճ
$0 \leq \epsilon \leq 1$	(+) զբաղվածների թվաքանակի աճ (+) արտադրողականության աճ	(-) զբաղվածների թվաքանակի աճ (-) արտադրողականության աճ
$\epsilon > 1$	(+) զբաղվածների թվաքանակի աճ (-) արտադրողականության աճ	(-) զբաղվածների թվաքանակի աճ (+) արտադրողականության աճ

Այս պարագայում զբաղվածության ապահովման և սոցիալական խնդիրների լուծման տեսանկյունից կարևորվում է աշխատատեղերի ստեղծումը՝ նաև ՕՈՒՆ-ների ներգրավմամբ («արդյունավետության փնտրող»), ինչը հնարավորություն կտա պահպանել և կրճատել ընթացիկ հաշվի պակասուրդը: ՀՀ-ն կարող է ՀՆԱ-ի աճի համեմատաբար ոչ բարձր

¹²⁹ ԱՄՆ-ի «World Economic Outlook» տվյալների բազա առ. 2015թ. հոկտեմբեր (http://www.imf.org/external/pubs/ft/weo/2015/02/weodata/index.aspx): ՀՀ ԱՎԾ-ի «ArmStatBank.am»-ի «Բնակչության և սոցիալական գործընթացներ» բաժնի «Զբաղվածություն և գործազրկություն» ենթաբաժնի «Զբաղվածություն և ըստ ցուցանիշների և տարիների» տվյալների բազա (www.armstatbank.am): ԱՄԿ-ի «LOSTAT» տվյալների բազա (www.ilo.org/ilostat): Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից: Նշում՝ 2005=100:

¹³⁰ Kapsos, S. (2005). "The Employment Intensity of Growth: Trends and Macroeconomic Determinants," ILO Employment Strategy Paper, Geneva, Switzerland: International Labor Organization, p.4.

տեմպերի դեպքում մեծացնել աշխատատար ոլորտներում (հիմնականում մշակող արդյունաբերության) զբաղվածների թվաքանակը, որի արդյունքում էլ ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականության գործակիցը կարող է մեծանալ¹³¹: Այս պարագայում հատկապես կարևորվում է արտահանմանն ուղղված ՀՀ արդյունաբերական քաղաքականության բարեհաջող իրականացումը (հատկապես ՕՌԼ-ների ներգրավմամբ զուգորդված), ինչի շնորհիվ հնարավոր կլինի ավելացնել զբաղվածների թվաքանակը և ապահովել տնտեսական աճ¹³²:

Անշուշտ, արտահանման ծավալների հաստատուն աճն ապահովվում է օտարերկրյա շուկաներում մրցակցությանը դիմակայելու միջոցով, ինչը նշանակում է, որ ՀՀ ռեզիդենտ ընկերությունները պետք է ձգտեն գործառնական արդյունավետության, որն անմիջապես կազդի կապիտալի պաշարի աճի տեմպերի վրա, իսկ արդյունավետ տեխնոլոգիաները կբարձրացեն նաև ընդհանուր գործույնի արտադրողականության աճի տեմպը: Մյուս կողմից, բարենպաստ գործարար միջավայրի ստեղծմանն ու արտադրողականության բարձրացմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության շրջանակներում իրականացվող միջոցառումների կարևորագույն բաղադրիչը¹³³ պետք է հանդիսանա օտարերկրյա ներդրումների ներգրավումը: Հետևաբար, անհրաժեշտ է վերլուծել ՀՀ տնտեսության իրական հատվածում իրականացված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալը, արտաքին շուկերի հանդեպ ՕՌԼ-ներ ստացող ոլորտների խոցելիությունը, ինչպես նաև ՀՀ տնտեսության ներդրումային գրավչության մակարդակը (հատկապես ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո նրա հիմնական անդամ ՌԴ-ի տեսանկյունից):

Այժմ փորձենք ավելի մանրամասնորեն անդրադառնալ ՕՌԼ-ներին: ՀՀ-ում 2014թ.-ի ՕՌԼ-ների ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տվյալները հրապարակվել են «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ 6»-ի

¹³¹ Islam, Rizwanul (2004). "The Nexus of Economic Growth, Employment and Poverty Reduction: An Empirical Analysis," Issues in Employment and Poverty Discussion Paper No. 14, Geneva, Switzerland: International Labour Office, p.4: Հեղինակը ներկայացնում է զարգացման տարբեր հիպոթետիկ տարբերակներ:

¹³² ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրային որոշման հավելված, http://www.mineconomy.am/up/files/Razmavarutyun_ardyunaberutyun-65.pdf:

¹³³ Ռազմավարությունում անդրադարձ է եղել նաև գործարար միջավայրի բարելավմանը, բարենպաստ արտաքին ռեժիմների ապահովմանը, առևտրի խոչընդոտների վերացմանը և այլն:

դրույթներին համապատասխան¹³⁴: Այդ իսկ պատճառով ՕՌՆ-ների նախորդ տարիների դինամիկան կներկայացվի առանձին, այնուհետև կդիտարկվեն 2014թ.-ի ՕՌՆ-ների վերաբերյալ տվյալները (ըստերկրների և ոլորտային բաշխվածությամբ):

Տնտեսության իրական հատվածում իրականացված ՕՌՆ-ների հոսքերի ծավալը ճգնաժամի տարում և 2010թ.-ին կրճատվեցին, իսկ 2011թ.-ի ծավալը գերազանցեց 2007թ.-ի մակարդակը, այնուհետև 2012-2013թթ. ՕՌՆ-ների հոսքերի ծավալը զգալիորեն կրճատվեց՝ հատկապես 2013թ.-ին¹³⁵: 2008թ.-ին 2007թ.-ի համեմատ ՌԴ-ի կողմից ՀՀ տնտեսության իրական հատվածում ՕՌՆ-ների կտրուկ աճով է պայմանավորված եղել ՕՌՆ-ների ընդհանուր հոսքի ծավալի աճը, որը հիմնականում վերաբերում էր էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և բարձրորակ օդի մատակարարման և հեռահաղորդակցության ոլորտներին: 2011թ.-ին ՌԴ-ի կողմից իրականացվող ՕՌՆ-ների ծավալները գիջում էին 2008թ.-ի ծավալներին, իսկ 2012-2013թթ. 2011թ.-ի համեմատ այդ ծավալները կտրուկ նվազել էին, որի պատճառը էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և բարձրորակ օդի մատակարարման, ցամաքային և խողովակաշարային տրանսպորտի, հեռահաղորդակցության ոլորտներում ներդրումների ծավալների կրճատումն էր: Իսկ սա նշանակում էր, որ եթե ՌԴ ընկերությունները Հայաստանը դիտարկում էին որպես նոր սպառման շուկա, ապա ՌԴ կապիտալով ընկերությունների կողմից այս ոլորտներում իրականացված ներդրումները հիմնականում նախատեսված են ընթացիկ արտարկան գործուներության արդյունավետության բարձրացման համար:

2009-2013թթ. Ֆրանսիայից ՕՌՆ-ների ծավալների փոփոխությունը պայմանավորված էր հեռահաղորդակցության ոլորտում կատարված ներդրումներով (2012թ.-ին՝ 210.9 մլն ԱՄՆ դոլար, ինչը պայմանավորված էր այդ ոլորտում առկա ուժեղ մրցակցությամբ):

Ինչ վերաբերում է տնտեսության այլ ոլորտներում ռուսական ներդրումների ներգրավման հեռանկարներին, ապա դա հիմնականում կախված է նրանից, թե ԵԱՏՄ-ին միանալուց հետո ՀՀ-ն ինչպես իրեն կդիրքավորի, որպեսզի կարողանա ՀՀ իրական հատված ներգրավել

¹³⁴ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-փետրվարին, ք. Երևան, 2015թ., էջ 82:

¹³⁵ Եթե այլ աղբյուր նշված չէ, ապա այս բաժնում տվյալների աղբյուրը հետևյալն է՝ ՀՀ ԱՎԾ-ի «Օտարերկրյա ներդրումներ»-ի տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=246>):

ցածր, միջին և բարձր տեխնոլոգիական ոլորտները¹³⁶ ներկայացնող ռուսական ընկերություններին: «Արդյունավետություն փնտրող» այս ընկերությունների համար հատկապես գրավիչ կլինի ՀՀ աշխատուժի վարձատրության համեմատաբար ցածր մակարդակը, ինչպես նաև մասնագիտական բարձր որակավորումը: Հետևաբար, ՌԴ ընկերությունների համար մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել գիտատար ոլորտները (օրինակ՝ SS, հետազոտություններ և մշակումներ և այլն):

Ընդհանուր առմամբ, 2011-2013թթ. ՀՀ տնտեսության իրական հատվածում ՕՌԵ-ները հիմնականում իրականացվել են ռեսուրսների աղբյուրներ և շուկա փնտրող ընկերությունների կողմից: 2012-2013թթ. ՕՌԵ-ների զգալի մասն ուղղվել էր հեռահաղորդակցության ոլորտ: 2011-2013թթ. խմիչքների արտադրությունում իրականացված ՕՌԵ-ների ծավալները գրեթե նույն մակարդակի են եղել (համապատասխանաբար 28.95, 23.09 27.89 մլն ԱՄՆ դոլար), և հիմնական ներդրողն է եղել Ֆրանսիան, որի արտադրանքի սպառման հիմնական շուկան հանդիսանում է ՌԴ-ն: 2007-2013թթ. հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման այլ ճյուղերում ՕՌԵ-ների առավելագույն չափն է արձանագրվել 2012թ.-ին՝ 92.83 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2013թ.-ին ՕՌԵ-ների ծավալը կազմեց 30.27 մլն ԱՄՆ դոլար: Այս ոլորտում հիմնական երկու ներդրողներն են եղել Գերմանիան և Շվեյցարիան: Քանի որ հանքագործական արդյունաբերության ոլորտի վրա խիստ բացասաբար է ազդում մետաղների և հումքի միջազգային գների կտրուկ փոփոխությունը (ճգնաժամի տարածման ընդհանուր շուկա), այս ոլորտում իրականացվող ներդրումների և արտահանման ծավալները մեծապես կախված են նրանից, թե ինչպիսին է լինելու մետաղների և հումքի նկատմամբ համաշխարհային պահանջարկի կրճատմամբ պայմանավորված գների անկումը: 2007-2013թթ. այս ոլորտում ՕՌԵ-ների ամենացածր մակարդակն արձանագրվել է 2009թ.-ին: Հյուսիսային բիզնեսի ոլորտում 2010-2011թթ. ՕՌԵ-ների ծավալը համապատասխանաբար կազմել էր 11.07 և 16.0 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2012-2013թթ.՝ 6.14 և 1.48 մլն ԱՄՆ դոլար: Այս ոլորտը, հատկապես խոցելի է այլ երկրների տնտեսական աճի տեմպերի հանդեպ («ռեցեսիայի» կամ «եկամտի» էֆեկտ): Ավանդաբար,

¹³⁶ Եվրոսթատի ոլորտների դասակարգումը՝ http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/High-technology_versus_low-technology_manufacturing:

ՕՈՒՆ-ների մեծ ծավալներ կլանող ոլորտներում (օդային տրանսպորտի, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և բարձրորակ օդի մատակարարման, ցամաքային և խողովակաշարային տրանսպորտի) ՕՈՒՆ-ների ծավալները կտրուկ նվազել էին: Քանի որ այս ոլորտներում գործող ընկերությունները չունեն մրցակիցներ, ապա որոշակի արտադրական արդյունավետության հասնելուց հետո նրանց կողմից իրականացվող ներդրումների ծավալները նվազում են:

2014թ.-ին տնտեսության իրական հատվածում իրականացված օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը կազմել էր մոտ 349,986.3 մլն ՀՀ դրամ, որի զգալի մասը բաժին էր ընկնում ՌԴ-ին (74% կամ 257,386.2 մլն ՀՀ դրամ): Այս ներդրումների գերակշիռ մասը (97%-ը կամ 249,377.6 մլն ՀՀ դրամը) իրականացվել էր էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և բարձրորակ օդի մատակարարման ոլորտներում: ՕՈՒՆ-ների մեծ ծավալներ կլանող հաջորդ երեք ոլորտներն են հանդիսացել խմիչքների արտադրությունը (25,939.9 մլն ՀՀ դրամ), հեռահաղորդակցությունը (18,260.6 մլն ՀՀ դրամ) և հանքագործական արդյունաբերությունը (17,059.8 մլն ՀՀ դրամ): ՕՈՒՆ-ների ծավալների մեծությամբ ՌԴ-ին հաջորդում էր Գերմանիան (19,815.1 մլն ՀՀ դրամ): Չուտ ներհոսքի տեսանկյունից տնտեսության իրական հատվածում իրականացված օտարերկրյա ներդրումների (117,202.3 մլն ՀՀ դրամի) 36.4%-ը բաժին էր ընկնում ՌԴ-ին, իսկ 16.9%-ը՝ Գերմանիային¹³⁷: Ընդհանուր առմամբ, դիտարկված ցուցանիշներն ու միտումները էապես չեն տարբերվել նախքան 2014թ.-ն արձանագրված ցուցանիշներից և միտումներից (թեպետ ցուցանիշները համադրելի չեն ոլորտային և ըստերկրների բաշխվածության տեսանկյունից):

Հաշվի առնելով վերոգրյալը նշենք, որ ՀՀ-ի համար հատկապես կարևորվում է հետևյալը՝

1. Հանքահումքային արդյունաբերության ոլորտին չպատկանող և ՌԴ տնտեսությունից ոչ մեծ կախվածություն ունեցող ոլորտներում ՕՈՒՆ-ների ներգրավում, ինչը հնարավորություն կտա նվազեցնել արտաքին շուկերի հանդեպ ՀՀ տնտեսության խոցելիության աստիճանը:

¹³⁷ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-փետրվարին, ք. Երևան, 2015թ., էջ 81-82, 83-84, 87:

2. «Արդյունավետության փնտրող» տեխնոլոգիական (հատկապես միջին և բարձ) ընկերությունների ներգրավումը, ինչը կհանգեցնի կապիտալի պաշարի, արտադրողականության և իրական ՅՆԱ-ի աճին: Վերջինս կուղեկցվի ՀՀ մուտք գործող նոր ընկերությունների կողմից արդյունավետ կառավարման համակարգի, նորարարական գործընթացների և նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ, ինչպես նաև ընդհանուր գործոնային արտադրողականության աճով և զբաղվածների որակական հատկանիշների բարձրացմամբ:

Տնտեսական աճի աղբյուրների վերլուծության արդյունքները փաստում են այն մասին, որ միջնաժամկետ հատվածում ՀՀ տնտեսական աճի ապահովման տեսանկյունից առաջնային ԷԼԻՆԵԼՈԼ առնվազն ճգնաժամից հետո արձանագրված իրական կապիտալի պաշարի աճի տեմպերի պահպանումը, քանի որ հակառակ դեպքում ՀՀ իրական տնտեսական աճի տեմպերը կլինեն բավականին ցածր: 2011-2014թթ. զբաղվածների թվաքանակի կրճատումը հանգեցրել էր արտադրողականության աճի: Հետևաբար, զբաղվածների թվաքանակի աճը կարող է հանգեցնել արտադրողականության նվազմանը: Այս պարագայում ՀՀ արտաքին մրցունակության բարձրացման տեսանկյունից ևս հատկապես կարևորվելու է աշխատողների արտադրողականության բարձրացումը (հատկապես Կառավարության կողմից իրականացվող ակտիվ քաղաքականության միջոցով): Անշուշտ, իրական կապիտալի պաշարի աճի տեմպերի առնվազն պահպանման համար անհրաժեշտ է ցածր, միջին տեխնոլոգիական և աշխատատար ոլորտների զարգացումը միջնաժամկետ հատվածում, ինչն էլ իր հերթին պայմանավորված է ՕՌԵՆ-ների (հատկապես «արդյունավետության փնտրող») ներգրավմամբ (թեպետ այս ոլորտների զարգացումը կարող է տեղի ունենալ ՀՀ կառավարության աջակցությամբ՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության շրջանակներում, սակայն այս սցենարի դեպքում ֆինանսական միջոցները ոլորտներին կտրամադրվեն ՀՀ պետական բյուջեից, որոնց ծավալը կարող է լինել սահմանափակ, իսկ արտահանման ծավալների փոփոխությունը տեղի ունենա ոչ մեծ տեմպերով), քանի որ ՀՀ-ում մասնավոր հատվածի ներդրումները 2011-2014թթ. որոշակիորեն նվազել էին: ՀՀ-ի կողմից ՕՌԵՆ-ների ներգրավումը կհանգեցնի նաև ՀՀ արտահանման ծավալների

ավելացմանը (ներառյալ՝ ԵՄ անդամ երկրներ): Վերջինս էլ, իր հերթին, կկրճատի ՀՀ ընթացիկ հաշվի պակասումը:

2.3 ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿԱՊԸ

2008թ.-ի սեպտեմբերից սկիզբ առած ՀՏՏԸ-ն ՀՀ տնտեսության համար հանդիսացավ արտաքին շուկերի առաջացման պատճառ: ՀՀ տնտեսության վրա ազդեցություն գործող ընդհանուր շուկերից են մետաղների, հանածոների և գյուղմթերքի համաշխարհային գների անկումը, 2008-2009թթ. համաշխարհային տնտեսության աճի տեմպերի փոփոխությունը (հատկապես ՌԴ-ի՝ որպես տարածաշրջանի «առաջատար» համարվող երկիր): ՌԴ-ում 2008թ.-ի չորրորդ եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՆԱ-ի անկումը կազմեց -1.3%, իսկ ռեցեսիան դրանից հետո տևեց ևս չորս եռամսյակ¹³⁸: Այս բացասական զարգացումները բավականին խորը ազդեցություն գործեցին նաև ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Մի շարք կառույցներ տարբեր զեկույցների միջոցով անդրադարձել են ՀՀ-ում շուկերի տարածման հիմնական ուղիներին: Մեկ զեկույց անդրադարձել է տնտեսական շուկերի տարածմանը նախքան ճգնաժամը, իսկ մյուսը 2009թ.-ի մայիսին ներկայացրել է ՀՀ արժույթային ճգնաժամի արդյունքում սպասվող բացասական ազդեցությունը¹³⁹: Առաջին զեկույցում, որպես ՀՀ-ում ճգնաժամի տարածման ուղի նշվում էին տրանսֆերտների, առևտրի և ներդրումների, ինչպես նաև պետական կառավարման աջակցության ծավալների կրճատումը: Ուղղակի ֆինանսական կապերի վերաբերյալ նշվում էր, որ ՀՀ ֆինանսական համակարգը համաշխարհային շուկաներից համեմատաբար մեկուսացված էր, իսկ բանկային համակարգի կախվածությունն

¹³⁸ «Национальные счета» база данных (ежеквартальные данные в постоянных ценах 2008г. (1995-2014гг.)) Федеральной службы государственной статистики Российской Федерации, доступно: http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/accounts/#:

¹³⁹ Public Forum Armenia (2008). "Implications of the World's Financial Crisis for Armenia's Economy", Washington, D.C., United States, pp.6-13 (available at: http://www.pf-armenia.org/sites/default/files/documents/files/CRISIS_REPORT--FINAL.pdf): UN WFP VAM Food Security Analysis, (2009). *Rapid Assessment of the Impact of the Global Financial Crisis in Armenia*, Rome, Italy: World Food Programme, VAM Food Security Analysis, p.12:


արտասահմանյան վարկերից և դրանից բխող պարտավորություններից այնքան էլ մեծ չէր 2008թ.-ի սեպտեմբերի դրությամբ: Երկրորդ զեկուլյցում նշվում էր, որ ֆինանսական ճգնաժամը ՀՀ տնտեսության վրա բացասաբար էր ազդելու առևտրի (ապրանքներ և ծառայություններ (հատկապես զբոսաշրջությունը՝ սփյուռքից այցելուների)), ՕՈՒՆ-ների և տրանսֆերտների ծավալների կրճատման պատճառով՝ որպես ՌԴ-ում և այլ երկրներում (որոնց հետ ՀՀ-ն ունի տնտեսական կապեր) տնտեսական անկումների հետևանք: Ճգնաժամից հետո (2010թ.) հրապարակված մեկ այլ զեկուլյցում¹⁴⁰ հիմնականում շեշտադրվել էր արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկը, մետաղների և հանածոների գների անկումը, ինչպես նաև տրանսֆերտների և մասնավոր կապիտալ հոսքերի կտրուկ կրճատումը: Ինչ վերաբերում է դեպի ՀՀ ճգնաժամի բացասական ազդեցության փոխանցմանը, նշված զեկուլյցները որպես կարևորագույն ուղի ներկայացնում էին նաև ընդհանուր շուկա՝ մետաղների, հանածոների և գյուղմթերքի համաշխարհային գների անկումը, որն ինքնին փոխանցման ուղի չէ, սակայն անմիջապես է ազդում ՀՀ տնտեսության վրա և համարվում է ընդհանուր շուկա: Համաշխարհային տնտեսության անկմամբ առաջացած շուկերի բացասական ազդեցությունը ՀՀ-ում տարածվել է ՌԴ-ի և այլ երկրների «ռեցեսիայի էֆեկտի» կամ «եկամտի էֆեկտի» հետևանքով (տրանսֆերտների, ՕՈՒՆ-ների, արտահանման ծավալների կրճատում, մետաղների, հանածոների և գյուղմթերքի համաշխարհային գների անկում և այլն):

Քանի որ 2014թ.-ին 2008թ.-ի համեմատ առևտրային բանկերի կողմից ՀՀ մասնավոր հատվածին տրամադրված վարկերի ծավալները (հատկապես դոլարով ստացված) զգալիորեն ավելացել են և կազմել ՀՆԱ-ի 42.7%-ը¹⁴¹, ապա միջնաժամկետ հատվածում արտաքին շուկերի տեղի ունենալու դեպքում մասնավոր հատվածը կարող է որոշակի դժվարություններ ունենալ վարկերը վերադարձնելու հետևանքով, ինչի հետևանքով բանկերը ստիպված կլինեն խստացնել վարկերի տրամադրման պայմանները (որը նաև պայմանավորված կլինի

¹⁴⁰ UNDP (2010). "Poverty and Social Impact Analysis of the Global Economic Crisis: Synthesis Report of 18 Country Studies," New York: United States, p.6.

¹⁴¹ ՀՀ ԿԲ-ի ֆինանսական կազմակերպությունների վիճակագրության «Բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ/վարկեր/ՀՆԱ» տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>):

տնտեսության վիճակով), որի հետևանքով ՀՀ առևտրային բանկերի գուտ պարտավորությունների ծավալների աճի հետևանքով առաջացած արժույթային ռիսկը կարող է հանգեցնել անհուսալի վարկերի քանակի ավելացմանը, ինչն էլ բացասաբար կանդրադառնա ներքին պահանջարկի վրա: Վերջինիս վրա բացասաբար կարող է անդրադառնալ (արտաքին շուկերով պայմանավորված) տեղական բանկերի կողմից ներգրավվող վարկային միջոցների ծավալների կրճատումը և այլն: Իսկ ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա արտաքին շուկերի տարածման առանձնահատկությունները ներկայացված են գծապատկեր 2.3.1-ում: Հասկանալի է, որ ՌԴ-ում տնտեսական վիճակի վատթարացումը կարող է բացասաբար ազդել ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա, անկախ նրանից, թե գրանցվել է Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ, թե ոչ:



Գծապատկեր 2.3.1 ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա արտաքին շուկերի բացասական ազդեցության տարածման գործընթացը*

*Նշում՝ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից:

Այժմ անդրադառնանք ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա արտաքին շուկերի ազդեցությանը: Անշուշտ, ՀՀ-ի համար կարևորվում

Ե ծառայ ու թյ ու ն ն եր ի ար տ ա հ ա ն ու մ ը՝ կ ա պ վ ա ծ զ բ ո ս ա շ ը ջ ու թ յ ան ու յ ու թ ի հ ե տ: Յ ա մ ա ճ ա յ ն Է կ ո ն ո մ ի կ ա յ ի ն ա խ ա ր ա ր ու թ յ ան տ վ յ ալ ն եր ի, Յ Յ ա յ ց ել ա ծ զ բ ո ս ա շ ը ջ ի կ ն եր ի թ վ ա ք ա ն ա կ ը տ ար ե ց տ ար ի ա վ ել ա ց ել Է՝ Ե թ ե 2003թ.-ի ն Յ Յ ա յ ց ել ել Է 206,094 զ բ ո ս ա շ ը ջ ի կ, ա պ ա 2008թ.-ի ն՝ 558,443, ճ գ ն ա ժ ա մ ի տ ար ու մ զ բ ո ս ա շ ը ջ ի կ ն եր ի թ ի վ ը ա վ ել ա ց ա վ 3%-ով (575,281 ա յ ց ել ու), ի ս կ ար դ ե ն 2013-2014թթ. ա յ դ ց ու ց ա ն ի շ ը հ ա մ ա պ ա տ ա խ ա ն ա ք ա ր կ ա զ մ ե ց 1,084,188 և 1,203,746 զ բ ո ս ա շ ը ջ ի կ¹⁴²: Ի ս կ ա յ ց ել ու ն եր ի թ վ ա ք ա ն ա կ ի ա ճ ը հ ա ն գ ե ցր ել Էր Յ Յ -ու մ ա պր ա ն ք ն եր ի և ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր ի իր ա կ ա ն ս պ առ մ ա ն ա ճ ի ն 2009-2014թթ. (հ ա վ ել վ ա ծ 2, ա յ յ ու ս ա կ 9): Ե թ ե Յ Յ -ն 2007թ.-ի ն զ բ ո ս ա շ ը ջ ու թ յ ու ն ի ց ս տ ա ց ել Էր 483.9 մ լ ն Ա Մ Ն դ ու ար (գ ու մ ար, ո թ ը Յ Յ ա յ ց ել ա ծ զ բ ո ս ա շ ը ջ ի կ ն եր ը ծ ա խ ա ել Է ի ն ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր և ա պր ա ն ք ն եր ձ եռ ք բ եր ել ու հ ա մ ար), ա պ ա 2008թ.-ի ն ա յ դ գ ու մ ար ն ար դ ե ն կ ա զ մ ու մ Էր 517.6 մ լ ն Ա Մ Ն դ ու ար, ա յ ն ու հ ե տ ն, ճ գ ն ա ժ ա մ ի տ ար ու մ ա յ ն ո չ մ ե ծ ա ճ ար ձ ա ն ա գր ե ց՝ կ ա զ մ ել ո վ մ ո տ 530 մ լ ն Ա Մ Ն դ ու ար, ի ս կ ար դ ե ն 2013-2014թթ. ա յ դ գ ու մ ար ն եր ը հ ա մ ա պ ա տ ա խ ա ն ա ք ա ր կ ա զ մ ու մ Է ի ն 880.4 և 965.8 մ լ ն Ա Մ Ն դ ու ար¹⁴³: Յ Յ -ու մ մ ե կ զ բ ո ս ա շ ը ջ ի կ ի հ ա շ վ ո վ ա պր ա ն ք ն եր ի և ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր ի վր ա կ ա տ ար ա ծ մ ի ջ ի ն իր ա կ ա ն ծ ա խ ա ը (Յ Յ դր ա մ ո վ ար տ ա հ ա յ տ վ ա ծ) 2010-2014թթ. ա ն ը ն դ հ ա տ ն վ ա զ ու մ Էր, և 2014թ.-ի ն ա յ ն գր ա ն ց ել Էր ն վ ա զ ա գ ու յ ն ց ու ց ա ն ի շ ը 2007-2014թթ. ը ն կ ա ծ ժ ա մ ա ն ա կ ա հ ա տ վ ա ծ ու մ (գ ծ ա պ ա տ կ եր 2.3.2):

¹⁴²

Յ Յ


Է կ ո ն ո մ ի կ ա յ ի

ն ա խ ա ր ա ր ու թ յ ան

կ ա յ ք,

<http://www.mineconomy.am/uploads/20151902175107148.pdf>:

¹⁴³ Յ Յ ԱՎԾ-ի ար տ ա ք ի ն հ ա շ ի վ ն եր ի «Վ ճ ար ա յ ի ն հ ա շ վ ե կ շ ի ո 6» տ վ յ ալ ն եր ի բ ա զ ա առ 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>):



Գծապատկեր 2.3.2 ՀՀ-ում մեկ զբոսաշրջիկի հաշվով կատարված միջին ծախսը (2006-2014թթ.)¹⁴⁴

ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով արտահայտված անվանական ծախսերը նույնպես կրճատվել էին 2012-2014թթ. (թեպետ 2013թ. ՀՀ դրամով արտահայտված ցուցանիշը 2012թ. համեմատ գրեթե նույն մակարդակի էր): Այս դինամիկան փաստում է այն մասին, որ միջինում մեկ զբոսաշրջիկն ավելի քիչ ապրանքներ և ծառայություններ է սպառել ՀՀ-ում (իրական արտահայտությամբ): Իսկ թե համեմատենք այս թվերը ք. երևանում տրված մահճակալ/օրերի քանակի ցուցանիշների հետ, ինչպես նաև 2013թ.-ի ՀՀ սահմանային անցման կետերում միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային հետազոտության արդյունքների հետ¹⁴⁵, կարելի է ենթադրել, որ այս

¹⁴⁴ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, <http://www.mineconomy.am/uploads/20151902175107148.pdf>: ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» տվյալների բազա առ 30.06.2015թ. (<http://www.armstat.am/> am/?nid=443): ՀՀ ԱՎԾ-ի «ArmStatBank.am»-ի «Արտաքին առևտուր» բաժնի «Արտարժույթի փոխարժեքներն ըստ ցուցանիշների և ըստ տարիների» տվյալների բազա (www.armstatbank.am): Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում 2006-2010, 2007-2011, 2009-2013, 2010-2014, 2011թ., 2012թ., 2014թ., 2015թ., համասպառասխանաբար էջեր՝ 14, 26, 10, 10 ք. երևան: Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից: Նշում՝ 2005=100:


¹⁴⁵ ՀՀ ԱՎԾ-ի «ArmStatBank.am»-ի «Տրանսպորտ և շրջապատ շրջանակում» բաժնի «Շրջապատ շրջանակում» ենթաբաժնի «Հյուրանոցներն ըստ մարզերի, ցուցանիշների և տարիների» տվյալների բազա (armstatbank.am): Պետրոսյան Ա., «2013 թվականին Հայաստանի Հանրապետության սահմանային անցման կետերում միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային հետազոտության արդյունքների մասին» հաշվետվություն, ք. երևան, 2014թ. էջ 20-21, 25, 31-32, 53 (100 էջ) (Գերմանիայի դաշնային համագործակցության (GIZ) ծրագրի շրջանակում),

կրճատումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ թեև հյուրանոցներում հանգրվանողների թվաքանակն աճել է, սակայն հայկական արմատներ ունեցողների թվաքանակի (որի մեծամասնությունը ՌԴ-ից է) աճն ավելի մեծ է եղել (հիմնականում հյուրընկալվել են ազգականների մոտ և նրանց այցելության տևողությունն ավելի երկար է եղել, քան օտարերկրացիներինը):

Հետևաբար, միջնաժամկետ հատվածում սփյուռքահայ զբոսաշրջիկների թվաքանակի աճը և նրանց կողմից ՀՀ-ում կատարված ծախսի փոփոխությունը հիմնականում կախված է լինելու ՌԴ-ի, ԵՄ և այլ երկրների տնտեսական աճի տեմպերից, մինչդեռ օտարերկրացիների դեպքում՝ ԵՄ երկրների աճի տեմպն է որոշիչ լինելու: Այս պարագայում ՀՀ-ի համար առաջնային խնդիր է հանդիսանում ավելի շատ օտարերկրացի զբոսաշրջիկների ներգրավումը (ՀՀ-ում ծախսած գումարների տեսանկյունից), ինչը հնարավոր է ապահովել ՀՀ-ի համար թիրախային համարվող շուկաներում ՀՀ-ի մասին պատշաճ իրազեկման և ճիշտ բրենդինգի կազմակերպման միջոցով:

Այժմ անդրադառնանք ապրանքների արտահանմանը, որն հիմնականում իրականացվում է չորս ապրանքային խմբերով՝ պատրաստի սննդի արտադրանք, հանքահումքային արտադրանք, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր (գծապատկեր 2.3.3)¹⁴⁶: Այս չորս խմբերի մասնաբաժինն արտահանման մեջ 2003-2014թթ. տատանվել է 79.6-87.1% միջակայքում (2014թ.՝ 81.2%): ՀՀ-ից ապրանքների արտահանումը 2008թ.-ին նախորդ տարվա համեմատ կրճատվել էր 8.3%-ով, իսկ արդեն 2009թ.-ին անկումը կազմել էր 32.8%՝ 2008թ.-ի համեմատ: 2010թ.-ին արտահանման ծավալները¹⁴⁷ գերազանցեցին 2008թ.-ի ցուցանիշը, իսկ աճը կազմեց 46.6%՝ 2009թ.-ի համեմատ: 2011թ.-ին բոլոր ապրանքախմբերում աճարձանագրվեց:

http://www.mineconomy.am/uploads/2013_թվականին_3_այսատանի_Հանրապետության_սահմանային_անցման_կետերում_միջազգային_այցելություններին_վերաբերյալ_ընտրանքային_հետազոտություն.pdf:
¹⁴⁶Ապրանքների արտահանումն ըստ առևտրի վիճակագրության տարբերվում է հավաքագրված տվյալների ճշգրտման միջոցով \$OP գնեցրով ՀՀ արտահանումից (Վճարային հաշվեկշիռ 5-ի դեպքում): Համադրելիության պահպանման նպատակով ներկայացված են առևտրի վիճակագրության տվյալները:
¹⁴⁷ԱՄՆ դոլարով արտահայտված (արտահանման արժեք):




Գծապատկեր 2.3.3 Ասպրանքների արտահանում մն ըստ հիմնական խմբերի 2003-2014թթ. (մլն ԱՄՆ դոլար)¹⁴⁸

2012-2014թթ. թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և պատրաստի սննդի արտադրանքն էին աճ արձանագրել, իսկ հանքահումքային արտադրանքի և ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրերի խումբը անկում արձանագրեց: 2010-2013թթ. գրեթե կրկնապատկվել էր այլ ասպրանքների արտահանումը, սակայն 2014թ.-ին նախորդ տարվա համեմատ որոշակի անկում գրանցվեց և այլ ասպրանքների արտահանումը կազմեց 290.6 մլն ԱՄՆ դոլար՝ 2013թ.-ի 264.3 մլն ԱՄՆ դոլարի համեմատ: 2014թ.-ին այլ ասպրանքների արտահանման մեջ 30 մլն ԱՄՆ դոլարի արտահանումը գերազանցել են երեք ասպրանքների խումբ (հավելված 2, աղյուսակ 8)՝ կենդանիներ և կենդանական ծագման արտադրանքը (50.5 մլն ԱՄՆ դոլար), բուսական ծագման արտադրանքը (37.8 մլն ԱՄՆ դոլար) և մանածագործական իրերը (50.3 մլն ԱՄՆ դոլար):

¹⁴⁸ ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2006 թվականին, 2010 թվականին, 2011 թվականին, 2012 թվականին, 2013 թվականին, 2014 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ասպրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման), 2007թ., 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ., 2015թ., համապատասխանաբար էջեր՝ 37-40, 39-49, 33-35, 39-43, 39-43, 40-44, ք. երևան:

Ճգնաժամի տարում պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալները կրճատվեցին 40.7%-ով, 2011թ.-ին այն 15.2 մլն. ԱՄՆ դոլարով գերազանցեց նախաճգնաժամային տարում գրանցված մակարդակը՝ կազմելով 183.8 մլն ԱՄՆ դոլար, իսկ արդեն 2013-2014թթ.-ին այն համապատասխանաբար կազմեց 310.2 և 338.1 մլն ԱՄՆ դոլար (գծապատկեր 2.3.3): Արտահանվող պատրաստի սննդի արտադրանքի խմբի մեջ 2013-2014թթ. ներառված են եղել երեք հիմնական ապրանքատեսակներ՝ ըստ 4-նիշ դասակարգման (գծապատկեր 2.3.4):



Գծապատկեր 2.3.4 Պատրաստի սննդի արտադրանքի խմբի երեք հիմնական ապրանքատեսակներն՝ ըստ 4-նիշ դասակարգման 2003-2014թթ. (մլն ԱՄՆ դոլար)¹⁴⁹

«Կոնյակի, ռոմի, ջինի, օղու, լիկյորի»-ի արտահանումը պատրաստի արտադրանքի արտահանման 79.5%-ն էր կազմում, ապա 2013-2014թթ.-ին՝ 60.1 և 48.5%, որը պայմանավորված էր հիմնականում դեպի ՌԴ արտահանման ծավալների կրճատմամբ (2014թ.-ին)¹⁵⁰ և «սիգարետ և սիգար»-ի ապրանքախմբի արտահանման ծավալների աճով: Ինչ վերաբերում է «սիգարետ և սիգար»-ի խմբին, այստեղ արտահանումը 2007թ.-ից ի վեր աճ է արձանագրում, որը պայմանավորված էր ՀՀ-ից դեպի Իրաք արտահանման ծավալների աճով: 2013թ.-ին պատրաստի սննդի արտադրանքի խմբի ընդհանուր ծավալի 60.2%-ը բաժին է ընկել դեպի ՌԴ ար-


¹⁴⁹ ՀՀ ԱՎԾ-ի «Արտաքին առևտրի (ըստ ապրանքների անվանացուցակի 4-նիշ դասակարգման)» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=379>):

¹⁵⁰ Եթե այլ աղբյուր նշված չէ, ապա այս բաժնում տվյալների աղբյուրը հետևյալն է՝ ՄԱԿ-ի «UN COMTRADE DATABASE» առցանց տվյալների բազա (<http://comtrade.un.org/data/>):

տահանմանը, իսկ բացառելով դեպի Իրաք արտահանման ծավալը (ապրանքների բոլոր տեսակների) այն կազմել է 71.1%-ը¹⁵¹, այնուհետև, 2014թ.-ին՝ ՌԴ մասնաբաժինը կազմել էր 50.8% (բացառելով Իրաքը՝ 66.7%): Յետևաբար, միջնաժամկետ հատվածում, այս ապրանքախմբի արտահանման ծավալները հիմնականում կախված են լինելու ՌԴ տնտեսության վիճակից՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՌԴ ռուբլու արժեզրկման չափով պայմանավորված («սիգարետ և սիգար»-ի խմբի արտահանման ծավալների առնվազն պահպանման պարագայում):

Թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբի հիմնական արտահանվող ապրանքը ադամանդե քարն էր, որի արտահանման ծավալները ճգնաժամի տարում կտրուկ անկում գրանցելուց հետո (58.5% 2008թ.-ի համեմատ) աճ արձանագրեցին 2010-2011թթ. (համապատասխանաբար 51.1 և 26.0%), սակայն 2011թ.-ին գրանցված արտահանման ծավալը զիջում էր 2008թ.-ի մակարդակին (գծապատկեր 2.3.5): 2012թ.-ին ադամանդե քարի արտահանման ծավալները որոշակիորեն կրճատվելուց հետո, 2013-2014թթ. համապատասխանաբար կազմեցին 88.1 և 118 մլն ԱՄՆ դոլար: 2011թ. համեմատ 2012-2013թթ. ծավալի փոփոխությունը հիմնականում պայմանավորված էր դեպի Բելգիա արտահանման ծավալների կրճատմամբ (2011թ.՝ 69.3 մլն ԱՄՆ դոլար, 2012թ.՝ 38.4 մլն ԱՄՆ դոլար, 2013թթ.՝ 32.7 մլն ԱՄՆ դոլար): Այս կրճատումը մասնակիորեն փոխհատուցվեց դեպի ՌԴ (2011թ.՝ 22.2 մլն ԱՄՆ դոլար, 2012թ.՝ 24.2 մլն ԱՄՆ դոլար, 2013թ.՝ 34.1 մլն ԱՄՆ դոլար) և Կանադա (2011թ.՝ 4.5 մլն ԱՄՆ դոլար, 2012թ.՝ 6.8 մլն ԱՄՆ դոլար, 2013թ.՝ 13.2 մլն ԱՄՆ դոլար) արտահանման ծավալների աճով: Իսկ 2014թ.-ին դեպի Բելգիա, Կանադա և ՌԴ արտահանման ծավալները համապատասխանաբար կազմեցին՝ 42.6, 10.8 և 35.8 մլն ԱՄՆ դոլար: 2014թ.-ին 2013թ.-ի համեմատ ադամանդե քարի արտահանման ծավալների աճը հիմնականում պայմանավորված էր դեպի Թաիլանդ արտահանման ծավալների աճով (20.9 մլն ԱՄՆ դոլար՝ 2013թ.-ի 0.56 մլն ԱՄՆ դոլարի համեմատ):

¹⁵¹ ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2013 թվականին. Ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2014, էջ 55, 195: Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:



Գծապատկեր 2.3.5 Թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբի երեք հիմնական ապրանքատեսակները 2003-2014թթ. (մլն ԱՄՆ դոլար)¹⁵²

Ոսկու (անմշակ, կիսամշակ, փոշի) արտահանումը ճգնաժամի տարում կտրուկ աճ արձանագրեց (511.9%) 2008թ.-ի համեմատ, այնուհետև՝ որոշակի անկում (2010թ.՝ 12.9%), իսկ 2012-2014թթ. արտահանման ծավալները կազմեցին համապատասխանաբար՝ 77.5, 73.6 և 81.9 մլն ԱՄՆ դոլար (գծապատկեր 2.3.5): 2011-2014թթ. արտահանումը հիմնականում իրականացվում էր դեպի Կանադա (ոսկու արտահանման համապատասխանաբար՝ 92.6, 99.9, 99.7 և 99.6%):


Միջնաժամկետ հատվածում թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբի արտահանման ծավալները, հիմնականում, կախված են լինելու համաշխարհային տնտեսության զարգացման միտումներից և ՌԴ տնտեսական աճի տեմպերից:

2014թ.-ին հանքահումքային մթերքի արտահանման մեջ պղնձի հանքաքարի խտանյութը հիմնական արտահանվող ապրանքն էր (գծապատկեր 2.3.6)¹⁵³: Պղնձի հանքաքարի խտանյութի արտահանումը

¹⁵² ՀՀ ԱՎԾ-ի «Արտաքին առևտրի (ըստ ապրանքների անվանացուցակի 4-նիշ դասակարգման)» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=379>):

¹⁵³ Հանքահումքային մթերքի խմբի մեջ ներառված են այլ ապրանքներ (Էլեկտրաէներգիա և այլն), որոնք հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում ներառված չեն, և այդ ապրանքների արտահանմանն այստեղ անդրադարձ չի կատարվում:

2009թ.-ին նախորդ տարվա համեմատ անկում էր գրանցել մոտ 1.1 մլն ԱՄՆ դոլարով, իսկ արդեն 2010թ.-ին ծավալն ավելի քան կրկնապատկվել էր՝ կազմելով 210.6 մլն ԱՄՆ դոլար, այնուհետև, 2013-2014թթ. արդեն հասել էր 279.9 և 235.9 մլն ԱՄՆ դոլարի:



Գծապատկեր 2.3.6 Պղնձի հանքաքարի խտանյութի, Էլեկտրաէներգիայի և ցեմենտի արտահանումը 2003-2014թթ. (մլն ԱՄՆ դոլար)¹⁵⁴

Հետաքրքրական է նկատել, որ ըստ ՏԳՏՀԴ (NACE 1.1) դասակարգման հանքագործական արդյունաբերության իրական աճի տեմպերը և՛ 2008թ.-ին և՛ 2009թ.-ին դրական էին, համապատասխանաբար կազմելով՝ 3.8 և 6.3%, ինչ էլ վկայում է ֆիզիկական ծավալի աճի մասին (քանի որ իրական աճի տեմպի հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում բազիսային տարվա գները)¹⁵⁵: Վերջինս նշանակում է, որ գների անկման դեմ պայքարելու նպատակով արտահանող ընկերությունները ավելացրել էին արտահանվող ապրանքների ֆիզիկական ծավալը: Դիտարկելով եռամսյակային տվյալները նկատում ենք, որ 2008թ.-ի երրորդ եռամսյակում, երբ մետաղների և հանածոների համախառնային գների անկում էր արձանագրվել, հանքագործական արդյունաբերության իրական աճի տեմպը կազմել

¹⁵⁴ ՀՀ ԱՎԾ-ի «Արտաքին առևտրի (ըստ ապրանքների անվանացուցակի 4-նիշ դասակարգման)» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=379>):
¹⁵⁵ ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՀՆԱ-ի արտադրությունը (ԵՀՀ-95 Ա17 խմբավորմամբ՝ ՏԳՏՀԴ (NACE 1.1) դասակարգմամբ)» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>): Ըստ «ԱՀՀ 1993»-ի:

Եր -14.4%, իսկ արդեն 2008թ.-ի չորրորդ եռամսյակում՝ 27.7%¹⁵⁶: 2009թ.-ի առաջին երկու եռամսյակներում աճի տեմպերը դեռ բացասական էին, սակայն երրորդ և չորրորդ եռամսյակներում աճի տեմպերը համապատասխանաբար կազմեցին 6.8 և 36.4%: Ինչ վերաբերում է 2011-2013թթ., ապա ըստ ՏԳՏՅԴ (NACE 2) դասակարգման հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման իրական աճի տեմպը համապատասխանաբար կազմեց՝ 13.9, 15.7 և 7.1%, իսկ արդեն 2014թ.-ին աճի տեմպը բացասական էր (-5.7%)¹⁵⁷: Հասկանալի է, որ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի իրական աճը պայմանավորված չէ միայն պղնձի հանքաքարի խտանյութի արտահանման ծավալներով (թեպետ այդ ապրանքի արտահանվող ֆիզիկական ծավալը 2014թ.-ին նախորդ տարվա համեմատ աճել էր մոտ 7%-ով, և գների անկում էր արձանագրվել)¹⁵⁸, հետևաբար, ամբողջ ոլորտի իրական ծավալի կրճատումը պայմանավորել են նաև այլ ապրանքները: Հետևաբար, միջնաժամկետ հատվածում պղնձի հանքաքարի խտանյութի արտահանման ծավալների ավելացման, ինչպես նաև հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի զարգացման ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել այս ոլորտի բոլոր ապրանքների համալսարհային շուկայական գների մշտադիտարկում և վերլուծություն: Անշուշտ, համալսարհային շուկայում այս ոլորտի ապրանքների գների տատանման չափը կախված է ինտենսիվ համալսարհային պահանջարկի մեծությունից, որն էլ կպայմանավորի այս ապրանքների արտահանման ֆիզիկական ծավալը:


Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբում գերակշիռ մաս են կազմում չորս հիմնական ապրանքները (գծապատկեր 2.3.7), որոնց արտահանումը 2014թ.-ին մոտ 95.6% է կազմել (հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից գծապատկեր 2.3.3-ի և 2.3.7-ի տվյալների հիման վրա): 2010-2011թթ. այնուամենայնուհայն արթիթեղների, երկաթամիահալվածքի, չզտված պղինձի արտա-

¹⁵⁶ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների եռամսյակային ցուցանիշների «ՀՆԱ-ի արտադրությունը (ԵՀՀ-95 Ա17 խմբավորմամբ՝ ՏԳՏՅԴ (NACE 1.1.) դասակարգմամբ)» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>): Ըստ «ԱՀՀ 1993»-ի:

¹⁵⁷ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների ՀՆԱ-ի արտադրությունը ըստ ՏԳՏՅԴ խմբ. 2 (NACE 2) դասակարգման առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>):

¹⁵⁸ՀՀ ԱՎԾ-ի «Արտաքին առևտրի (ըստ ապրանքների անվանացուցակի 4-նիշ դասակարգման)» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=379>): Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

հանու մն ավելացավ, այնուհետև, 2012-2013թթ. անկում գրանցեց: 2014թ.-ին առավելագույն արժեքն արձանագրվեց ալյու մինե փայլաթիթեղների կտրվածքով 2003թ.-ից սկսած: 2009թ.-ի կտրուկ անկումից հետո մոլիբդենի արտահանման ծավալները 2010-2014թթ. հիմնականում աճում էին, և 2014թ.-ին կազմեցին մոտ 19.0 մլն ԱՄՆ դոլար: Երկաթամիահալվածքի արտահանումը 2012-2013թթ. անկում արձանագրելուց հետո 2014թ.-ին աճ արձանագրեց (109.7 մլն ԱՄՆ դոլար), սակայն այդ ցուցանիշը զիջում էր 2007թ.-ի արդյունքին (235.7 մլն ԱՄՆ դոլարին):



Գծապատկեր 2.3.7. Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբի չորս հիմնական արտանքատեսակների արտահանումը 2003-2014թթ. (մլն ԱՄՆ դոլար)¹⁵⁹

Չզտված պղինձի, երկաթամիահալվածքի, ալյու մինե փայլաթիթեղների և մոլիբդենի (արտադրանք, թափոն և ջարդոն) եռամսյակային արտահանման տվյալների (2010-2014թթ.) վերլուծության հիման վրամիանշանակ հնարավոր չէ պնդել, որ գների բարձրացումը կամ նվազումն ուղեկցվում է արտահանման ֆիզիկական

¹⁵⁹ՀՀ ԱՎԾ-ի «Արտաքին առևտրի (ըստ ապրանքների անվանացուցակի 4-նիշ դասակարգման)» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=379>):

ծավալների ավելացմամբ¹⁶⁰: Ընդհանուր առմամբ, միջնաժամկետ հատվածում այս չորս ապրանքների արտահանման համար վճռորոշ էլիները գների անկման չափը (համաշխարհային պահանջարկի փոփոխությամբ առաջացած), որով էլ պայմանավորված էլիները արտահանման ֆիզիկական ծավալի փոփոխությունը:

2014թ.-ին այլ ապրանքների խմբում ընդգրկված կենդանիներ և կենդանական և բուսական ծագման արտադրանքի հիմնական արտահանվող ապրանքատեսակներն են եղել «ձուկ և խեցգետնավորները, մանրուքները և այլ ծովային անողնաշարավորները» և «ուտելի մրգերը և ընկույզները, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևները և կլեպները», որոնց արտահանման ծավալները դեպի ՌԴ կազմել են համապատասխանաբար մոտ 94.5 և 92%-ը (կամ համապատասխանաբար 28.8 և մոտ 17 մլն ԱՄՆ դոլար): Բուսական և կենդանաբանական արտադրանքի արտահանման 73.2%-ը¹⁶¹ նույնպես բաժին էր ընկել ՌԴ-ին, իսկ մոտ 6%-ը՝ Վրաստանին (կամ համապատասխանաբար 64.6 և 5.1 մլն ԱՄՆ դոլար): 2014թ.-ին մանածագործական իրերի խմբում ներառված «տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով» ապրանքատեսակների արտահանումը կազմել էր 94.2%, որից Իտալիային և Գերմանիային համապատասխանաբար բաժին էր ընկել 67.4 և 25.1%-ը (կամ համապատասխանաբար 31.7 և 11.8 մլն ԱՄՆ դոլար):

Առևտրային գործընկերների հետ կապված նշենք, որ 2003-2014թթ. 10 խոշոր գործընկերների կտրվածքով որոշակի փոփոխություններ են գրանցվել: 2014թ.-ին արտահանման ամենամեծ տոկոսը բաժին էր ընկնում ՌԴ-ին՝ մոտ 20%, որին հաջորդել է Չինաստանը՝ 11% (որը մինչև 2014թ. երբեք չի եղել հիմնական առևտրային գործընկերների շարքում) պայմանավորված պղնձի հանքաքարի խտանյութի արտահանման ծավալների ավելի քան կրկնապատկմամբ (138 մլն ԱՄՆ դոլար՝ 2013թ.-ի 64.8 մլն ԱՄՆ դոլարի համեմատ): Վերջինս որոշակիորեն փոխառուցեց դեպի եվրոպական երկրներ արտահանման ծավալների կրճատումը: 2014թ.-ի 10 հիմնական առևտրային գործընկերների

¹⁶⁰ ՀՀ ԱՎԾ-ի «Արտաքին առևտրի (ըստ ապրանքների անվանացուցակի 4-նիշ դասակարգման)» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=379>): Չափվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:


¹⁶¹ Չափվարկները իրականացվել են հեղինակի կողմից հավելված 2-ի աղյուսակ 8-ի և ՄԱԿ-ի «UN COMTRADE DATABASE» տվյալների բազայից (<http://comtrade.un.org/data/>) վերցված տվյալների հիման վրա:

կառուցվածքը փաստում էր այն մասին, որ թեպետ 2004-2014թթ. ընթացքում արտահանվող ապրանքների կառուցվածքն էապես չէր փոխվել, սակայն գործընկերների առումով եվրոպական երկրներից ուղղվածությունն որոշակիորեն տեղափոխել էր դեպի ՌԴ և Ասիական մայրցամաք¹⁶²: Իսկ սա նշանակում է, որ ավանդական սպառման շուկաներում ՀՀ ապրանքների նկատմամբ պահանջարկի կրճատումը փոխհատուցվելու է դեպի այլ երկրներ արտահանման ծավալների աճով:

Անշուշտ, ՀՀ տնտեսության համար բավականաչափ կարևորվում են նաև տրանսֆերտները, որոնց հետ կապված պետք է նշել, որ ՀՀ-ն անցում է կատարել «Վճարային հաշվեկշիռ 6» մեթոդաբանությանը, համաձայն որի 2011թ.-ից սկսած որոշ տվյալները համադրելի չեն «Վճարային հաշվեկշիռ 5» մեթոդաբանության պահանջների հետ: Այդ պատճառով տրանսֆերտների վերաբերյալ տվյալները կներկայացվեն «Վճարային հաշվեկշիռ 6»-ի դասակարգմանը համապատասխան: 2004-2008թթ. առաջնային կամ սկզբնական (primary income) եկամուտները (աշխատողների գուտ աշխատավարձերը) և անձնական տրանսֆերտները (ընթացիկ տրանսֆերտներ մեզիդեստ և ոչ մեզիդեստ տնային տնտեսությունների միջև) կտրուկ աճ էին արձանագրել: Չուտ աշխատավարձերը այդ նույն ժամանակահատվածում գրեթե եռապատկվել էին, իսկ անձնական տրանսֆերտները՝ կրկնապատկվել¹⁶³: Չուտ աշխատավարձի աճը հիմնականում պայմանավորված էր նրանով, որ ՀՀ մեզիդեստներն ավելի շատ գումարներ էին աշխատում և ուղարկում ՀՀ (մեկ տարուց պակաս աշխատելով արտերկրում): Վերջինս կարող էր բացատրվել էինչպես արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակի աճով, այնպես էլ նրանց կողմից ստացվող գումարների ավելացմամբ: Իսկ անձնական տրանսֆերտների աճը պայմանավորված է այլ երկրների մեզիդեստ համարվող և հայկական արմատներ ունեցող S/S-ների քանակի ավելացմամբ, ինչպես նաև նրանց կողմից ուղարկվող գումարների աճով՝ հատկապես ՌԴ-ից (գծապատկեր 2.3.8):

¹⁶² ՀՀ ԱՎԾ-ի «Արտաքին առևտրի (ըստ երկրների)» տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=380>): ՄԱԿ-ի «UN COMTRADE DATABASE» առցանց տվյալների բազա (<http://comtrade.un.org/data/>):

¹⁶³ ՀՀ ԿԲ-ի արտաքին հատվածի վիճակագրության «Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշիռի» տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>): Հեղինակի սեփական հաշվարկ:



Գծապատկեր 2.3.8 ԶՅ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անուև նով արտերկրներից մուև տք եղած ոչ առևտրայ ին բնուև յ թի տարեկան փոխանցուև մները 2004-2014թթ. (մլ ն ԱՄՆ դուև ար)¹⁶⁴

2009թ.-ին 2008թ.-ի համեմատ գուև տ աշխատավարձերը և անձնական տրանսֆերտները կրճատվեցին համապատասխանաբար 21.9 և 28.1%-ով, իսկ անձնական տրանսֆերտների ծավալը 2010-2013թթ. անընդհատ աճում էր, և 2013թ.-ին 2009թ.-ի համեմատ աճը կազմել էր 60.1%: 2013թ.-ի ծավալը (անվանական, ԱՄՆ դուև արով) գերազանցում էր 2008թ.-ի ցուցանիշին (963.9 մլ ն ԱՄՆ դուև ար՝ 837 մլ ն ԱՄՆ դուև արի համեմատ)¹⁶⁵: Զետաբրբրական է նկատել, որ եթե նախքան ճգնաժամը անձնական տրանսֆերտների ծավալը գերազանցում էր գուև տ աշխատավարձերի ծավալին, ապա ճգնաժամից հետո 2010-2014թթ. ընթացքում հակառակ պատկերն է ստացվել՝ գուև տ աշխատավարձերի ծավալն էր (գուև արած որպես ծառայուև յ ուև ն դասակարգված սեզոնայ ին աշխատողների գուև տ եկամուև տները) յ ուև րաբան չ յ ուև ր տարի գերազանցում անձնական տրանսֆերտներին: 2014թ.-ին 2013թ.-ի համեմատ աշխատողների գուև տ

¹⁶⁴ ԶՅ ԿԲ-ի արտաքին հատվածի վիճակագրուև յ ան «ԶՅ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անուև նով արտերկրից մուև տք եղած և ԶՅ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր ուև արկված դրամական փոխանցուև մներ (տարեկան)» առցանց տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>): Այստեղ ոչ առևտրայ ին փոխանցուև մներ են համարվում ֆիզիկական անձի անուև նով արտերկրից ստացված (ֆիզիկական անձի կողմից արտերկիր փոխանցված) անհատուև յ ց ֆինանսական միջոցները, որոնց նպատակը ընթացիկ կարիքների բավարարուև մն է, ինչպես նաև աշխատանքի դիմաց արտերկրից ստացված (վճարված) աշխատավարձը:

¹⁶⁵ ԶՅ ԿԲ-ի արտաքին հատվածի վիճակագրուև յ ան «Դեպի ԶՅ դրամական փոխանցուև մներն ըստ վճարայ ին հաշվեկշռի» տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>): Զեղիևակի սեփական հաշվարկ:

աշխատավարձերը, որպես ծառայությունն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված գուտեկամուտները և անձնական տրանսֆերտների ծավալները հիմնականում կրճատվեցին ՌԴ արժույթային ճգնաժամի հետևանքով համապատասխանաբար՝ 47.5, 9.5 և 54.2 մլն ԱՄՆ դոլարով, կազմելով՝ 891, 229 և 909.7 մլն ԱՄՆ դոլար¹⁶⁶։ Իսկ միջնաժամկետ հատվածում աշխատողների գուտաշխատավարձերը, որպես ծառայությունն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված գուտեկամուտները և անձնական տրանսֆերտների ծավալները հիմնականում կախված են լինելու ՌԴ տնտեսական վիճակից և միգրացիայի տեմպերից։

Ընդհանուր առմամբ, արտաքին շուկերի հանդեպ ՅՅ տնտեսության իրական հատվածի խոցելիություն վերլուծությունը փաստում է այն մասին, որ 2009թ.-ից սկսած ՅՅ տնտեսության խոցելիության աստիճանն աճել էր ՌԴ տնտեսությանն ավելի ինտեգրված լինելու հետևանքով, մասնավորապես, արտահանման (պատրաստի սննդի, բուսական և կենդանական ծագման արտադրանք, զբոսաշրջություն), աշխատավարձերի (առաջնային կամ սկզբնական եկամուտ) և անձնական տրանսֆերտների հետ կապված։ Թանկարժեք և ոչ թանկարժեք արտանքների արտահանման տեսանկյունից ՅՅ իրական հատվածի խոցելիությունը հետագայում հիմնականում պայմանավորված է լինելու համաաշխարհային տնտեսության զարգացումներով։ 2014թ.-ի տվյալների համաձայն միջնաժամկետ հատվածում ՅՅ հանքագործական արդյունաբերության աճը որոշակիորեն կախված է լինելու նաև Չինաստանի տնտեսական աճի տեմպերից և զարգացումներից։ Իսկ ԵՄ երկրների և Կանադայի տնտեսական աճի ավելի բարձր տեմպերը միջնաժամկետ հատվածում կբարձրացնեն ՅՅ հանքահումքային մթերքի, ոչ թանկարժեք և թանկարժեք մետաղների ու դրանցից պատրաստված իրերի նկատմամբ պահանջարկը։ Ընդհանուր առմամբ, միջնաժամկետ հատվածում ՅՅ տնտեսության աճի տեմպերը հիմնականում պայմանավորված են լինելու ՌԴ տնտեսության աճի տեմպերով (արժույթային ճգնաժամի հետևանքներով պայմանավորված), ինչը կմեծացնի ՅՅ մշակող արդյունաբերության խոցելիություն աստիճանը հատկապես ՌԴ տնտեսական աճի նկատմամբ։

¹⁶⁶ ՅՅ ԿԲ-ի արտաքին հատվածի վիճակագրության «Դեպի ՅՅ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի» տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>):

Բուսական և կենդանաբանական արտադրանքի արտահանման տեսանկյունից ՀՀ գյուղատնտեսության ոլորտը հիմնականում կախված է ոչ միայն ՌԴ տնտեսական աճի տեմպերից, այլ նաև մի շարք բնակլիմայական երևույթներից: Միջնաժամկետ հատվածում ոչ թանկարժեք մետաղների և հումքի համաշխարհային գների տատանումներից են կախված լինելու այս ոլորտի արտադրանքների արտահանման ծավալները, քանի որ գների ոչ մեծ տատանումների ժամանակ արտահանողները կարող են ավելացնել արտահանման ֆիզիկական ծավալները՝ գների անկումը փոխատուցելու նպատակով, մինչդեռ գների կտրուկ անկումը կարող է հանգեցնել արտահանման ծավալների զգալի կրճատման: Չբուսաշրոթյան ոլորտի տեսանկյունից էապես կարևորվում են զարգացած երկրների տնտեսական աճի տեմպերը, քանի որ դրանք պայմանավորում են ՀՀ-ում մեկ այցելուի հաշվով իրականացված ծախսերի մակարդակը: Այս պայմաններում հատկապես կարևորվում է ՀՀ իրական ՀՆԱ-ի վրա արտաքին շուկերի տարածման յուրաքանչյուր ուղու ունեցած ազդեցության գնահատումը: Վերջինս հնարավորություն կտա բացահայտելու իրական ՀՆԱ-ի վրա այդ ուղիներից յուրաքանչյուրի ազդեցության չափը (վիճակագրորեն նշանակալի), ինչպես նաև ՀՀ կառավարությանը հնարավորություն կընձեռի մշակել արդյունավետ հակաճգնաժամային ծրագրեր:

ԳԼՈՒԽ 3

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼ ԻՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

3.1 ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿՐԱ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆ- ՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Տնտեսության ճգնաժամային կառավարման գործընթացում մեծապես կարևորվում է տվյալ երկրի կառավարության դերը: Այսպես՝ միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարությանն անհրաժեշտ է լինելու արտաքին շուկերից ակնկալվող ազդեցության չափի գնահատականը՝ համապատասխան հակաճգնաժամային ծրագրերի մշակման և իրագործման նպատակով:

Ներկայիս տնտեսական պայմաններում կարևորվում են իրական ՀՆԱ-ի վրա արտաքին շուկերի ազդեցությունը տարածող կամ փոխանցող հիմնական գործոններից յուրաքանչյուրի վիճակագրորեն նշանակալի ազդեցության չափի բացահայտումը, ինչպես նաև S/S վերջնական սպառման իրական ծախսերի, ծառայությունների և ապրանքների իրական ներմուծման, հիմնական միջոցների համախառն կուտակման վրա աշխատողների աշխատավարձերի և անձնական տրանսֆերտների ազդեցության չափի բացահայտումը: Մյուս կողմից, դեպի ՌԴ արտահանման ծավալների, աշխատողների աշխատավարձերի, անձնական տրանսֆերտների պարագայում կարևոր գործոն է համարվում մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՌԴ ռուբլու փոխարժեքը (եթե ՀՀ S/S-ները և արտահանողները գումարները ստանում են ԱՄՆ դոլարով): Իսկ եթե ՀՀ ընկերությունների հասույթը և S/S-ներին ուղարկվող գումարները ՌԴ ռուբլով են արտահայտված, ապա այդ դեպքում (գնողունակության տեսանկյունից) կարևորվում է ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը: ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա արտաքին շուկերի ազդեցությունը տարածող կամ փոխանցող հիմնական գործոնների վրա փոխարժեքների տատանումների ազդեցությունը գնահատելիս անհրաժեշտ է ունենալ հստակ տեղեկատվություն, թե ընկերությունների կողմից ստացվող հասույթի, աշխատավարձերի կամ տրանսֆերտների ո՞ր տոկոսն է ռուբլով արտահայտված, և որ տոկոսը ԱՄՆ դոլարով (չնայած նրան, որ

ինչպես վճարային հաշվեկշռի, այնպես էլ արտաքին առևտրի վիճակագրությանը ներկայացվում է ԱՄՆ դոլարով): Այդ պատճառով այստեղ ներկայացվում է 2003-2014թթ. ժամանակահատվածի կտրվածքով (եռամսյակային տվյալներով) իրական ՅՆԱ-ի վրա արտաքին շուկերի ազդեցությանը տարածող կամ փոխանցող հիմնական գործոնների վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը (տրանսֆերտների պարագայում վերջիններիս ազդեցությունն իրական ներմուծման, հիմնական միջոցների համախառն կուտակման և S/S-ների վերջնական սպառման ծախսերի վրա), ինչպես նաև ՌԴ իրական ՅՆԱ-ի ազդեցությունը ՅՆԱ-ի, արտահանման ծավալների վրա¹⁶⁷: Այս գնահատականները հնարավորություն կտան ՅՆԱ կառավարությանը ռեցեսիայի դեպքում համապատասխան միջոցառումներ իրականացնել, ինչպես նաև հետագայում մշակել արդյունավետ տնտեսական ռազմավարություններ:

Բացի ՅՆԱ և ՌԴ իրական ՅՆԱ-ի տվյալների ռեգրեսիոն հավասարումներում կիրառվել են փոփոխականների եռամսյակային՝ ԱՄՆ դոլարով արտահայտված անվանական արժեքները, ինչը պայմանավորված է եղել հետևյալով: Փոփոխականների արժեքները՝ տարբեր երկրներից ԱՄՆ դոլարով ստացվող գումարների հանրագումարն են (ՕՈՒՆ, դրամական փոխանցումներ, զբոսաշրջիկների կողմից ՅՆԱ-ում ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսերը): Այդ արժեքներն իրական դարձնելու համար անհրաժեշտ են յուրաքանչյուր երկրի մասնաբաժնի ընդհանուր չափը (որոնք եռամսյակային և տարեկան կտրվածքով ոչ բոլոր փոփոխականների դեպքում են առկա), ինչպես նաև գնողունակության պարիտետով այն արտահայտելու համար կիրառվող եռամսյակային փոխարկման գործակիցները, որոնք առկա են միայն տարեկան կտրվածքով: Արտահանման խմբերի ԱՄՆ դոլարով արտահայտված անվանական արժեքներն իրականի վերածելու համար անհրաժեշտ են եռամսյակային կտրվածքով դրանց ֆիզիկական ծավալների վերաբերյալ տվյալները, որոնք ՅՆԱՎԾ-ի կողմից հրապարակվում են միայն 2007թ.-ի առաջին եռամ-

¹⁶⁷ Ռեգրեսիոն հավասարումների միջոցով հնարավոր չեղավ պարզել աշխատողների վարձատրության և տրանսֆերտների վրա ՌԴ իրական ՅՆԱ-ի փոփոխության վիճակագրորեն նշանակալի ազդեցության չափը, քանի որ տարբեր ձևափոխումների դեպքում (լոգարիթմական արժեքները առաջին տարբերությամբ վերցնելիս) նվազագույն քառակուսիների մեթոդով հավասարման գնահատումից հետո սխալի բաշխումը նորմալ չէր դառնում:

սյակից սկսած: ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա արտաքին շուկերի ազդեցությունը տարածող կամ փոխանցող հիմնական գործոնների իրական արժեքները հաշվարկելու երկրորդ ձևը՝ դա այդ գումարները ՀՀ դրամի վերածելն է, և համապատասխան գների ինդեքսով այն ճշգրտելը (բացառությամբ արտահանման խմբերի ծավալների): Սակայն, այս դեպքում խնդիրը կայանում է համապատասխան գների ինդեքսի ընտրության մեջ: Օրինակ՝ անձնական տրանսֆերտների դեպքում անհրաժեշտ է այդ գումարների ծախսային ուղղությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Տարբեր S/S-ների կողմից այդ գումարները կարող են տարբեր կերպ ծախսվել (100%-ը կարող է միայն ուղղվել պարենային ապրանքների վրա, իսկ որոշ դեպքերում՝ միայն ծառայությունների վրա), հետևաբար միայն ՍԳԻ-ով ճշգրտումն այդքան էլ ստույգ չէ: Մինևույն խնդիրն է ծագում նաև ՕՈՒՆ-ների ծավալների հետ կապված (հատկապես վերաներդրված շահույթի դեպքում): Այդ պատճառով, այս բաժնում ներկայացված հետագա բոլոր հաշվարկներում կօգտագործվեն ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա արտաքին շուկերի ազդեցությունը տարածող կամ փոխանցող հիմնական գործոնների անվանական արժեքները (ԱՄՆ դոլարով արտահայտված): Տարբեր գնահատումների համար օգտագործվել են եռամսյակային տվյալներ (2003թ.-ի առաջին եռամսյակից մինչև 2014թ.-ի երկրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածի կտրվածքով): Հավասարումների գնահատման համար օգտագործվել են բոլոր փոփոխականների սեզոնային ճշգրտված արժեքները (տվյալները հարթեցվել են սահող միջինի եղանակով), և գնահատումներն իրականացվել են առաջին տարբերությամբ՝ փոփոխականների ստացիոնարությունն ապահովելու նպատակով (հավելված 4, աղյուսակ 2): Իսկ ավտոկորելյացիայի դեպքում կիրառվել է ավտոռեգրեսիոն (AR) համապատասխան կարգի պրոցեսը, ինչպես նաև սահող միջինի (MA) համապատասխան կարգի պրոցեսը: Հավասարումների գնահատումն իրականացվել է նվազագույն քառակուսիների մեթոդով՝ (OLS) «E-views 4.0» համակարգչային ծրագրի միջոցով: Գործոնների տվյալների աղբյուրները և նշանակումները ներկայացված են հավելված 4-ի աղյուսակ 1-ում:

Հաշվի առնելով անցումը դեպի «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ 6»-ին, ինչպես նաև վճարային հաշվեկշռի «Ճանապարհորդություն» հոդվածի 2006-

2014թթ. տվյալների վերանայման հանգամանքը, տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի ծավալի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա դիտարկվում է 2003-2013թթ. ժամանակահատվածի կտրվածքով, ճանապարհորդության ազդեցության պարագայում՝ 2006-2014թթ. ժամանակահատվածի, իսկ աշխատողների աշխատավարձերի համադրելիությունն ամբողջ ժամանակահատվածի համար պահպանելու նպատակով աշխատողների աշխատավարձի մեջ ներառվել են նաև որպես ծառայությունն դասակարգված սեզոնային աշխատողների համախառն եկամուտները:

Այժմ փորձենք դիտարկել վերոբերյալ գործոնների միջև փոխկապվածության գործակիցները 2003-2014թթ. կտրվածքով (հավելված 4, աղյուսակ 3): Տվյալ գործոնների միջև փոխկապվածության գործակիցները չեն գերազանցում 0.7-ը, ինչը նշանակում է, որ մուլտիպլիկատիվության խնդիր չի առաջանա, եթե նույնիսկ այս բոլոր գործոնները որպես անկախ փոփոխականներ ներառված լինեն միևնույն հավասարման մեջ:

2006-2014թթ. ժամանակահատվածի եռամսյակային տվյալների հիման վրա ռեգրեսիոն հավասարման գնահատման արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում զբոսաշրջիկների կողմից տ-դ ժամանակահատվածում 1 ԱՄՆ դոլարով ծախսերի փոփոխությունը (մնացած այլ հավասար պայմանների դեպքում) միջինում հանգեցնում է 868.8 ՀՀ դրամով իրական ՀՆԱ-ի փոփոխությանն այդ նույն ժամանակահատվածում (գնահատում #1, հավելված 4, աղյուսակ 4), իսկ սանշանակում է, որ զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ում ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսերի աճի հետևանքով այս ոլորտը կնպաստի ՀՆԱ-ում ավելի շատ ավելացված արժեքի ստեղծմանը:

Զբոսաշրջության ոլորտի հետագա զարգացման նպատակով ՀՀ կառավարության համար հատկապես կարևորվում են հետևյալ երկու ռազմավարական ուղղությունները.

1. Ծարունակել Հայաստանի բրենդինգը (գովազդային արշավներ, մասնակցություն միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին և այլն) թիրափային շուկաներում՝ ՀՀ ավելի շատ օտարերկրյա զբոսաշրջիկներ ներգրավելու նպատակով՝ անկախ ՀՀ այցելության նպատակից:

2. Մի շարք երկրներում (հատկապես ԵՄ անդամ) ցուցաբերել ավելի թիրախավորված մոտեցում Հայաստանի դիրքավորման տեսանկյունից՝ ՀՀ-ն ներկայացնելով որպես գյուղական, արկածային և այլ զբոսաշրջության վայր, որպեսզի ավելի շատ զբոսաշրջիկներ այցելեն ՀՀ (հատկապես Երևանից դուրս), և ավելի շատ ապրանքներ ու ծառայություններ սպառվեն, ինչը կնպաստի ՀՀ ողջ տարածքում բնակչության եկամուտների ավելացմանը: Իսկ այս ամենի համար անհրաժեշտ է.

- առաջարկել յուրահատուկ տուր-փաթեթների առաջարկ (արկածային, գյուղական զբոսաշրջություն և այլն),
- ՀՀ բոլոր մարզերում (գյուղաբնակ, քաղաքային վայրերում) ստեղծել «B&B» տիպի կամ ոչ թանկ այլ կացարանների լայն ցանց:

Օտարերկրյա զբոսաշրջիկների կողմից տեղական արտադրանքի սպառման ծավալների ավելացման նպատակով (երբ միջնաժամկետ հատվածում որպես ոլորտի զարգացման գերակայող ռազմավարական ուղղություն հանդես գալնդիանուր երկրի բրենդինգը թիրախային շուկաներում) ՀՀ ներգնա տուր-օպերատորների կողմից տուր-փաթեթների մեջ կարող են ներառվել որևէ պատրաստի սննդամթերքի գործարան (բնական հյութերի արտադրություն, պահածոներ, հանքային ջրեր և այլն), ինչպես նաև գյուղացիական կամ ջերմոցային տնտեսություն այցելությունները: Այս մոտեցումը նաև հեռահար նպատակներ է հետապնդում: Եթե ՀՀ-ն երկարաժամկետ հատվածում տնտեսության դիվերսիֆիկացման նպատակով փորձի մեծացնել դեպի ԵՄ գյուղմթերքի և պատրաստի սննդի արտահանման ծավալները (ԵՄ կանոնակարգերի համապատասխան), ապա այս միջոցառումները կհանդիսանան արտահանման խթանման և երկրի բրենդինգի իրականացման արդյունավետ միջոցներ:

Ընդհանուր առմամբ, զբոսաշրջության ոլորտի խոցելիությունն արտաքին շուկերի կամ տնտեսական գործոնների հանդեպ բավականին փոքր է միջնաժամկետ հատվածում:

Այժմ անդրադառնանք ապրանքների արտահանմանը: 2003-2014թթ. եռամսյակային տվյալների հիման վրա ռեգրեսիոն հավասարման գնահատման արդյունքում պարզվում է, որ իրական ՀՆԱ-ի վրա վիճակագրորեն ամենանշանակալի և ամենամեծ չափով (մնացած այլ հավասար պայմանների դեպքում) ազդում է ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբի արտահանումը: Այդ խմբի

արտահանման մեկ դոլար փոփոխությանը տրոժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, կարող է հանգեցնել իրական ՅՆԱ-ի փոփոխությանը 1,870.5 ՀՀ դրամի չափով այդ նույն ժամանակահատվածում (գնահատում #2, հավելված 4, աղյուսակ 5): Պատրաստի սննդի արտադրանքի արտահանման մեկ ԱՄՆ դոլարի փոփոխությանը տրոժամանակահատվածում կարող է հանգեցնել միջին ակնկալվող իրական ՅՆԱ-ի 1,091.8 ՀՀ դրամի չափով փոփոխության այդ նույն ժամանակահատվածում (մնացած այլ հավասար պայմանների դեպքում), իսկ հանքահումքային արտադրանքի պարագայում ակնկալվող չափը՝ 1,074.1 ՀՀ դրամ է: Ռեգրեսիոն հավասարման մեջ ներառված գործոնների փոփոխությանը բացատրում էր իրական ՅՆԱ-ի փոփոխության մոտ 60%-ը (գնահատում #2, հավելված 4, աղյուսակ 5):

Ինչ վերաբերում է թանկարժեք քարերի և մետաղների արտահանմանը, ապա այդ խմբի արտահանման ծավալների փոփոխությանը ՀՀ իրական ՅՆԱ-ի վրա վիճակագրորեն նշանակալի ազդեցություն չի թողնում (այդ ապրանքների արտահանման մեջ ՀՀ-ում ստեղծված ավելացված արժեքի հանրագումարի փոփոխությանը չի բացատրում ՅՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը): Դա հիմնականում կարելի է բացատրել ադամանդե քարի արտահանմամբ, որի պարագայում ՀՀ-ում ստեղծված ավելացված արժեքի վրա հիմնականում երկու գործոն է ազդում՝ քարի մշակման տեսակը, ինչով էլ պայմանավորված է աշխատանքի դիմաց վարձատրության չափը (ՀՀ-ում 2011թ.-ին մեկ կարատի մշակման ծախսերի կառուցվածքում 80%-ը բաժին էր ընկնում աշխատավարձին, իսկ մեկ կարատի մշակման արժեքը, ընդհանուր առմամբ, մոտ 30 ԱՄՆ դոլար է կազմել)¹⁶⁸, ինչպես նաև դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը: 2005թ.-ից սկսած դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորումը խիստ բացասաբար անդրադարձավ ոլորտի զարգացման վրա նախքան ՀՏՏԾ-ն, ինչն ուղեկցվում էր նաև ԱՄՆ-ում ոսկերչական իրերի նկատմամբ պահանջարկի կրճատմամբ¹⁶⁹: Իսկ ոսկերչական իրերի արտահանումը խմբի արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ չի ունեցել, որի պարագայում ոսկին և ադամանդը հիմնականում ներմուծվել են

¹⁶⁸2013թ. հունիսի 26-ին կայացած ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հաստատված «Հայաստանի ադամանդագործության ոլորտի զարգացման ռազմավարություն», էջ 35: (<http://www.mineconomy.am/arm/35/gortsaruyt.pastatuxt.html>):

¹⁶⁹EV Consulting (2009). "Armenia: Diaspora Assisted Growth," EV Consulting: Yerevan, Armenia, pp.16-17. Available at: http://ev.am/sites/default/files/DIASPORA-ARMENIA%20CASE_Revised-Mar2010-130312.pdf.

ՀՀ-ում ոսկու զտարկում չիրականացնելու և հիմնականում միջին չափի ադամանդե քարերի մշակման պատճառով¹⁷⁰: Որպեսզի այս ապրանքների արտահանման խումբը սկսի ՀՆԱ-ի վրավիճակագրորեն նշանակալի ազդեցությունն թողնել պետք է ՀՀ-ում աճի այդ ապրանքների ստեղծած ավելացված արժեքի մեծությունը:

Ադամանդե քարերի արտահանման դեպքում (համապատասխան հմտությունների և կարողությունների առկայության պարագայում) միջնաժամկետ հատվածում հիմնականում անհրաժեշտ է կենտրոնանալ «գերազանց» (excellent) կարգի մշակման վրա՝ մեծացնելով արտապատվիրման ծավալները (ինչպես առկա պատվերների շրջանակում, այնպես էլ նորերի պարագայում՝ հատկապես ասիական երկրներից), որոնց վերջնական սպառողները Հյուսիսային Ամերիկայի և Ասիական երկրներն են (Չինաստան, Ճապոնիա և այլն)՝ հաշվի առնելով ՌԴ տնտեսական զարգացումները և սպասվող ՀՀ դրամի արժեզրկման չափը: Իհարկե, այս սցենարի զարգացումը հիմնականում կախված է լինելու Համաշխարհային տնտեսության աճի տեմպերից և պահանջարկից (հատկապես ոսկերչական իրերի հանդեպ): Իսկ երկարաժամկետ հատվածում այս ոլորտի աճը հիմնականում պայմանավորված կլինի մի քանի հանգամանքով՝ ՀՀ-ում ադամանդի բորսայի հիմնադրմամբ, ՀՀ ոսկերչական ոլորտի միջոցով «արտադրված է Հայաստանում» բրենդի առաջմղմամբ (քանի որ ՀՀ կառավարության 2014թ.-ի փետրվարի 27-ի թիվ 231-Ա որոշմամբ «ԷՅ ՋԵՅ ԷՅ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի տարածքում ստեղծված և 2015թ.-ի մարտի 12-ից գործարկված «ՄԵՐԻԴԻԱՆ» ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ) տարածքում արտադրված ապրանքները պետք է արտասահմանում վաճառվեն այդ պիտակով, թեպետ այլ բրենդի անվան տակ)¹⁷¹: 2015թ.-ի օգոստոսի 6-ին ՀՀ կառավարությունը 5 տարի գործողության ժամկետով առաջին շահագործողի թույլտվությունն է տրամադրել «Ջի Դի Էմ Դայմոնդ» ՍՊԸ-ին «ՄԵՐԻԴԻԱՆ» ԱՏԳ-ի տարածքում գործունեությունն իրականացնելու նպատակով¹⁷²: Նախատեսվում է ԱՏԳ-ի գործունեության առաջին երեք տարիների ընթացքում ներգրավել մի շարք ընկե-

¹⁷⁰ 2013թ. հունիսի 26-ին կայացած ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հաստատված «Հայաստանի ոսկեգործության ոլորտի զարգացման ռազմավարություն», էջ 7-9 (<http://www.mineconomy.am/arm/35/gortsaruyt.pastatuxt.html>):

¹⁷¹ «Մերիդիան» ԱՏԳ կայք, http://www.meridianfez.com/hy/news_more/81: «Առավոտ» օրաթերթի կայք, <http://www.aravot.am/2015/05/18/572717/>:

¹⁷² ՀՀ կառավարության կայք, <http://gov.am/am/news/item/12078/>:

րու թյուր ներ, որոնք կստեղծեն մոտ 2000 նոր աշխատատեղեր, իսկ արտահանման ծավալները կտատանվեն 200-250 մլն ԱՄՆ դոլարի սահմաններում¹⁷³: Ոլորտի զարգացման տեսանկյունից կարևոր գործոն է նաև 2016թ.-ին ՀՀ-ում Ոսկերիչների համաշխարհային կոնֆեդերացիայի (CIBJO) տարեկան համաժողովի անցկացումը, որին ներկա կգտնվեն ոլորտի շուրջ 1,000 ներկայացուցիչներ¹⁷⁴: Ոսկերչական իրերի, ինչպես նաև ադամանդե քարերի արտահանման դեպքում առաջնայինը պետք է լինի արտապատվիրման ծավալների աճը:

Ընդհանուր առմամբ, եթե ադամանդե քարերի և ոսկերչական իրերի արտահանումը միջնաժամկետ հատվածում արտաքին շուկերի ազդեցության հետևանքով անկում արձանագրի, ապա դա իրական ՀՆԱ-ի վրա վիճակագրորեն նշանակալի ազդեցություն չի ունենա: Արտաքին շուկերի բացասական ազդեցությունը այդ ոլորտում զբաղվածների S/S-ների վրա (մոտ 900 աշխատակից (2014թ.)՝ արդյունաբերական-արտադրական աշխատակազմը ոսկերչական արտադրատեսակների, ոչ թանկարժեք զարդերի արտադրություն, մետաղադրամների և շքանշանների հատման ոլորտում)¹⁷⁵ կտարածվի «աշխատանքի շուկա» ուղղու միջոցով:

Այժմ անդրադառնանք հանքահումքային մթերքի և ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանման խմբերի վիճակագրորեն նշանակալի ազդեցությանը ՀՀ իրական ՀՆԱ-ի վրա (գնահատում #2, հավելված 4, աղյուսակ 5): Իրական ՀՆԱ-ի վրա այդ խմբերի վիճակագրորեն նշանակալի ազդեցության տարբերությունը (մնացած այլ հավասար պայմանների դեպքում) բացատրվում է նրանով, որ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի պարագայում ՀՀ-ում ստեղծված ավելացված արժեքը ավելի մեծ է, որով էլ պայմանավորված է այդ տարբերությունը՝ մոտ 2 անգամ (եթե նույն չափով առանձին վերցված այդ խմբերի արտահանումն աճ արձանագրեր): Անշուշտ, հանքահումքային մթերքի արտահանումը հիմնականում պայմանավորված է պղնձի հանքաքարի խտանյութի

¹⁷³ «Առկա» Լրատվական գործակալության կայք, http://arka.am/am/news/business/meridianynkerutyun765_10/?sphrase_id=5953240:

¹⁷⁴ «Մերիդիան» ԱՏԳ-ի կայք, http://www.meridianfez.com/hy/news_more/78:

¹⁷⁵ ՀՀ ԱՎԾ, «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման 2014թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկագիր, 2015թ. ք. երևան, էջ 74:

արտահանմամբ: Սակայն ՅՅ-ից հիմնականում արտահանվել է հումք, որի ավելացված արժեքը բավականին ցածր է, մինչդեռ վերջինիս որոշակի վերամշակման դեպքում կարելի է մեծացնել ՅՅ-ում ստեղծված ավելացված արժեքը: Եթե միջնաժամկետ հատվածում համաշխարհային պահանջարկով պայմանավորված գների զգալի տատանում արձանագրվի (հիմնականում Չինաստանի տնտեսության վիճակով պայմանավորված), ապա դա խիստ բացասաբար կազդի ՅՅ իրական ՅՆԱ-ի վրա: ՅՅ-ում գրանցված ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ մետաղական հանքահումքային ոլորտին տրամադրված բյուջե տային վարկավորման ծավալը կազմել էր 44 մլն ԱՄՆ դոլար, որի միջոցով էլ հանքարդյունաբերության ընկերությունները տեխնիկական վերազինում իրականացրեցին¹⁷⁶: 2014թ.-ին հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման ոլորտում արդյունաբերա-արտադրական անձնակազմը կամում էր 7,860 մարդ, իսկ մի շարք բացասական միտումների պատճառով, ինչպես արտադրանքի ծավալների, այնպես էլ արտադրողականության անկում էր գրանցվել 2013թ.-ի համեմատ: Այդ նույն ժամանակահատվածում, թեպետ աճել էր հիմնային մետաղների արտադրության ծավալը, սակայն արդյունաբերա-արտադրական անձնակազմի աճի շնորհիվ (4,383 մարդ՝ 2013թ.-ի 3,794 մարդու համեմատ) ոլորտում գրանցվել էր արտադրողականության անկում՝ մոտ 7%¹⁷⁷: Չափի առնելով այն հանգամանքը, որ մետաղական հանքագործության, ինչպես նաև արտադրության ոլորտներում զբաղված արդյունաբերա-արտադրական անձնակազմը հիմնականում աշխատում է ՅՅ մարզերում, արտաքին գործունեությունը պայմանավորված ոլորտի աճի տեմպերի կտրուկ փոփոխությունը խիստ բացասաբար կանդրադառնա ՅՅ իրական ՅՆԱ-ի վրա (աշխատանքի շուկայի միջոցով), ինչպես նաև այդ բացասական զարգացումների սոցիալական ազդեցությունն այդ ոլորտներում զբաղված S/S-ների վրա կլինի նշանակալի, իսկ այդ հետևանքների հաղթահարմանն ուղղված բյուջեի ծախսերը կլինեն բավականին մեծ (այդ ոլորտի ընկերությունների գործունեության բարելավման

¹⁷⁶ Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն, ՅՅ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրային որոշման հավելված, էջ 15:

¹⁷⁷ ՅՅ ԱԿԾ, «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման 2014թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկագիր, 2015թ. ք. Երևան, էջ 3, 49:

միջոցառումներ, սոցիալական աջակցության ծրագրեր, հանրային աշխատանքներ և այլն): Այդ իսկ պատճառով, պարբերաբար անհրաժեշտ է վերանայել հակաճանաժամային միջոցառումների գործիքակազմը, որն անհրաժեշտության դեպքում կարող է կարգավորվել ստեղծված իրավիճակը (S/S-ների և ոլորտի ընկերությունների եկամուտների զգալի անկումը կանխելու նպատակով):

Որպեսզի արտահանման ծավալների աճին զուգընթաց մեծանա վերջիններիս փոփոխության վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը իրական ՀՆԱ-ի վրա, պետք է ավելանան մետաղական արտադրության ծավալները (որը նաև կուղեկցվի մետաղական հանքագործության ոլորտի ծավալների կրճատմամբ՝ ավելի մեծ ավելացված արժեք ստեղծող ապրանքների արտադրությանն անցնելուն զուգընթաց, որն էլ կդասակարգվի որպես մետաղական արտադրություն): Ինչպես մետաղական հանքագործության, այնպես էլ արտադրության ոլորտներում նոր ներդրումների իրականացումը (նոր հանքերի շահագործում), ինչպես նաև ստացված շահույթների վերաներդրումը (նոր սարքավորումների ձեռք բերումը) միջնաժամկետ հատվածում կհանգեցնեն արտահանման ծավալների աճի, որի հետևանքով կկրճատվի ՀՀ ընթացիկ հաշվի պակասուրդը (եթե ՀՀ ներմուծման ծավալները կտրուկ աճ չարձանագրեն միջնաժամկետ հատվածում):

Ինչ վերաբերում է սննդի արտադրանքի արտահանման իրական ՀՆԱ-ի վրա վիճակագրորեն նշանակալի ազդեցությանը, ապա ակնկալվող միջին չափը 1,091.8 ՀՀ դրամ է՝ արտահանման խմբի ծավալի 1 ԱՄՆ դոլարի փոփոխության դեպքում (գնահատում #2, հավելված 4, աղյուսակ 5): Սակայն եթե գնահատումը կատարվեր 2003-2012թթ. ժամանակահատվածի տվյալների հիման վրա (գնահատում #3, հավելված 4, աղյուսակ 6), ապա այստեղ ևս ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի, հանքահումքային արտադրանքի, ինչպես նաև պատրաստի սննդի խմբերի արտահանման ծավալների փոփոխությունը վիճակագրորեն նշանակալի ազդեցություն կթողներ իրական ՀՆԱ-ի փոփոխության վրա, իսկ թանկարժեք քարերի և մետաղների արտահանման ծավալների փոփոխությունը վիճակագրորեն նշանակալի ազդեցություն չէր թողնի իրական ՀՆԱ-ի փոփոխության վրա: Ոչ թանկարժեք մետաղների ու դրանցից պատրաստված իրերի և հանքահումքային արտադրանքի գործակիցների մեծությունը գրեթե նույնն

Եր, ինչ -որ ստացվել է ին 2003-2014թթ. գնահատման ժամանակ: Պատրաստի սննդի արտահանման ծավալ ներքին փոփոխությունն իրական ՅՆԱ-ի վրա նշանակալի ազդեցությունն էր թողնում 10% մակարդակում, իսկ մեծությունը 1,538 Եր: Այս փոփոխությունը արտացոլում է բաժին 2.3-ում ներկայացված 2013-2014թթ. խմբի արտահանման կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունը: 2013-2014թթ. Էսպես ավելացել էր ծխախոտի արտահանումը, մինչդեռ 2014թ.-ին կոնյակի արտահանումը նվազել էր 2013թ.-ի համեմատ: Իսկ սանշանակում է, որ ծխախոտի արտահանման աճով պայմանավորված պատրաստի սննդի խմբի արտահանման ծավալ ներքին փոփոխությունը, միջինում, հանգեցնում է իրական ՅՆԱ-ի ավելի փոքր փոփոխության (կամ ծխախոտի արտադրությունն իրական ՅՆԱ-ում նպաստում է ավելի քիչ ավելացված արժեքի ստեղծմանը): Այս պարագայում ՅՅ կառավարությունը պետք է աջակցի օտարերկրյա շուկաներում այն ոլորտների ապրանքների առաջմղմանը, որոնք իրական ՅՆԱ-ում ավելի մեծ ավելացված արժեք են ստեղծում: 2013թ.-ի հունիսի 26-ին կայացած ՅՅ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հաստատվեց կոնյակագործության զարգացման «2012-2015թթ. գործողությունների ծրագիրը», ինչպես նաև գինեգործության ոլորտի զարգացման ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը¹⁷⁸: Կոնյակագործության զարգացման ծրագիրն ու միջոցառումները հիմնականում ուղղված են Չինաստանում և այլ շուկաներում ՅՅ կոնյակի վաճառքի ծավալների ավելացմանը՝ ցուցահանդեսների, ՅՅ-ի և ոլորտի արտադրանքների բրենդինգի (առաջմղման) ռազմավարության մշակման, ինչպես նաև ՅՅ պետական կառույցների կողմից ակտիվ լոբբինգի իրականացման միջոցով¹⁷⁹: Գինեգործության ոլորտի զարգացման ռազմավարության շրջանակներում որպես առաջնային նպատակային շուկաներ դիտարկվում են ՌԴ-ն և Չինաստանը, իսկ որպես երկրորդային շուկաներ՝ ԱՄՆ-ն և Ֆրանսիան (հաշվի առնելով սփյուռքի գործոնը): Միջազգային շուկաներում գինեգործության զարգացմանն ուղղված միջոցառումների հիմնական նպատակն է հանդիսանում մինչև 2020թ.-ն ՅՅ գինիների արտահանման ծավալները հասցնել 30 մլն ԱՄՆ դոլարի: Իսկ երկրի և ոլորտի առաջմղման

¹⁷⁸ ՅՅ Էկոնոմիկայի նախարարության կայք (http://www.mineconomy.am/arm/35/gortsaruyt.pastatuxt.html):

¹⁷⁹ 2013թ. հունիսի 26-ին կայացած ՅՅ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հաստատված կոնյակագործության «Գործողությունների ծրագիր 2012-2015թթ.», Էջ 11-14, (http://www.mineconomy.am/arm/35/gortsaruyt.pastatuxt.html):

համար նախատեսվում է ստեղծել «Չայկական գինիներ» (Wines of Armenia) հովհանոցային բրենդը¹⁸⁰: Կոնյակագործության և գինեգործության զարգացման գործողությունների ծրագրերը հետագայում կնպաստեն ավելի դիվերսիֆիկացված արտահանման կառուցվածքի ձևավորմանը (աշխարհագրական շուկաների տեսանկյունից), ինչն էլ երկարաժամկետ հատվածում կնվազեցնի ՌԴ տնտեսության զարգացումներով պայմանավորված այդ ոլորտների խոցելիության աստիճանը (թեպետ որպես առաջնային շուկա ՌԴ արտահանման ծավալները բավականաչափ կարևոր են, սակայն ցանկալի կլինի ապահովել դիվերսիֆիկացիայի ավելի բարձր մակարդակ):

2014թ.-ին դեպի ՌԴ պատրաստի սննդի արտադրանքի խմբին պատկանող ապրանքատեսակների՝ այլ կերպ պահածոյացված պտղի, ընկույզի, հատապտղի, ջրերի, բնական կամ արհեստական հանքային ջրի և ըմպելիքի (առանց շաքարի) արտահանման ծավալները համապատասխանաբար կազմել էին 8.33 և 6.86 մլն ԱՄՆ դոլար¹⁸¹: Ընդհանուր առմամբ, ՅՅ գյուղատնտեսության և մշակող արդյունաբերության ոլորտների աճի տեմպերը խոցելի են դառնում ՌԴ տնտեսության զարգացումների նկատմամբ՝ ճյուղերում ավելացված արժեքի ստեղծման տեսանկյունից: Յետևաբար, կարճաժամկետ հատվածում ՌԴ տնտեսության բացասական ազդեցության մեղմանն ուղղված ՅՅ կառավարության ծրագրերը և միջոցառումները պետք է ինտենսիվացվեն և արտացոլեն յուրաքանչյուր ոլորտի ընկերությունների և S/S-ների առանձնահատկությունները: Իսկ թե ՅՅ-ն միջնաժամկետ հատվածում կարողանա ներգրավել «արդյունավետությունն փնտրող» ընկերություններ, կամ էլ ՅՅ ընկերությունները կարողանան մեծացնել արտահանման ծավալները դեպի ՌԴ, ապա այս ամենը կհանգեցնի ՅՅ ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը (թե ՅՅ ներմուծման ծավալները կտրուկ աճ չարձանագրեն միջնաժամկետ հատվածում): Միջնաժամկետ հատվածում ՌԴ տնտեսական զարգացումներից ՅՅ գյուղատնտեսության, սննդի վերամշակման ոլորտների խոցելիության

¹⁸⁰ 2013թ. հունիսի 26-ին կայացած ՅՅ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հաստատված գինեգործության ոլորտի զարգացման ռազմավարություն և գործողությունների ծրագիր, էջ 6, 30-39, (<http://www.mineconomy.am/arm/35/gortsaryt.pastatuxt.html>):
¹⁸¹ ՄԱԿ-ի «UN COMTRADE DATABASE» առցանց տվյալների բազա (<http://comtrade.un.org/data/>):

աստիճանի նվազեցման (դիվերսիֆիկացիայի ավելի լայն աստիճանի ապահովման) տեսանկյունից առաջարկվում է հետևյալը.

1. Միջնաժամկետ հատվածում շարունակել տարբեր ապրանքատեսակների արտահանումը դեպի ՌԴ (քանի որ այլ տիպի կանոնակարգերով նոր շուկաներ մուտք գործելն ավելի իրատեսական է երկարաժամկետ հատվածում): Երկարաժամկետ հատվածում դեպի ՌԴ արտահանման ծավալների ավելացմանը գույքնթաց անհրաժեշտ է ավելացնել նաև դեպի ԵՄ արտահանման ծավալները՝ շուկաների առումով ավելի լայն դիվերսիֆիկացիայի ապահովման տեսանկյունից:

2. ԵՄ կանոնակարգերին համապատասխան գյուղմթերքի և պատրաստի սննդի արտադրության արտահանման խմբի հիմնական ապրանքների արտադրության և դեպի այդ երկրներ արտահանման ծավալների ավելացմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացում (ավելի լայն դիվերսիֆիկացիայի և ավելի բարձր ավելացված արժեք ստեղծելու նպատակով):

ԵՄ շուկաներում գյուղմթերքի առաջմղման ռազմավարության ունենալուց մեկը կարող է լինել հետևյալը: Սկզբնական շրջանում ԵՄ երկրների հայտնի սուպերմարկետների ցանցերին մատակարարող ընկերությունների արդեն հայտնի բրենդի ներքո վաճառել գյուղմթերքը, իսկ այնուհետ բրենդինգի (առաջմղման) համապատասխան ռազմավարության միջոցով վաճառել ապրանքները սեփական հովանոցային բրենդի ներքո (օրինակ՝ Յայկական գանձեր (Armenian Treasures) կամ Արարատյան դաշտավայր (Ararat Valley) և այլն):

Եթե դիտարկենք 2014թ.-ի ՀՀ մշակող արդյունաբերության կառուցվածքը, ապա առավել ապես արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտներում՝ խմիչքների, ծխախոտային արտադրատեսակների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությանը բաժին էր ընկնում մշակող արդյունաբերության ծավալների 42.7%-ը¹⁸², ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է ավելացնել այլ ոլորտների արտահանման ծավալները (աշխարհագրական շուկաների առումով ևս)՝ ավելի լայն դիվերսիֆիկացիա ապահովելու և այդ շուկերի հանդեպ տվյալ ոլորտների խոցելիության աստիճանը նվազեցնելու նպատակով:

¹⁸² ՀՀ ԱՎԾ-ի արդյունաբերության առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=246>): Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

Այժմ դիտարկենք դեպի ՌԴ արտահանման ազդեցությունը իրական ՅՆԱ-ի վրա: Ընդհանուր առմամբ, տրոժամանակահատվածում դեպի ՌԴ արտահանման ծավալների (ԱՄՆ դոլարով արտահայտված) փոփոխությունը 10%-ով կարող է հանգեցնել իրական ՅՆԱ-ի մոտ 0.85% փոփոխության (ՀՀ դրամով արտահայտված) t+1-րդ ժամանակահատվածում՝ մնացած այլ հավասար պայմանների դեպքում (գնահատում #4, հավելված 4, աղյուսակ 7): Իսկ ինչ վերաբերում է ՌԴ տնտեսության ազդեցությանն այդ ծավալների վրա, ապա տրոժամանակահատվածում ՌԴ իրական ՅՆԱ-ի (ՌԴ ռուբլով արտահայտված) փոփոխությունը 1%-ով, միջինում, կարող է հանգեցնել ՀՀ-ից դեպի ՌԴ արտահանման ծավալների փոփոխությանը 4.81%-ով այդ նույն ժամանակահատվածում՝ մնացած այլ հավասար պայմանների դեպքում (գնահատում #5, հավելված 4, աղյուսակ 8): 2003թ. երրորդ եռամսյակից մինչև 2014թ. չորրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածի տվյալների հիման վրա կատարված էկոնոմետրիկ հավասարման գնահատումից պարզ է դառնում, որ, միջինում, ակնկալվում է, որ տրոժամանակահատվածում ՌԴ իրական ՅՆԱ-ի կրճատումը 10 մլրդ ռուբլով կարող է հանգեցնել ՀՀ իրական ՅՆԱ-ի կրճատմանը 1.16 մլրդ ՀՀ դրամով t+1-րդ ժամանակահատվածում՝ մնացած այլ հավասար պայմանների դեպքում (գնահատում #6, հավելված 4, աղյուսակ 9): Իսկ ՌԴ իրական ՅՆԱ-ի տատանումը, ընդհանուր առմամբ, բացատրում էր ՀՀ իրական ՅՆԱ-ի տատանման մոտ 60%-ը, ինչը նշանակում է, որ ՀՀ տնտեսությունը զգալիորեն կախված է ՌԴ տնտեսության զարգացումներից: Այս արդյունքները փաստում են այն մասին, որ ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացումը բավականին խոցելի է ՌԴ տնտեսական վիճակի հանդեպ, ինչպես նաև ՌԴ-ից ՀՀ \$ֆինանսատնտեսական ճգնաժամի փոխանցումը բացասաբար կանդրադառնա ՀՀ մասնավոր ընկերությունների, S/S-ներ և ՀՀ կառավարության վրա: Մյուս կողմից մետաղների միջազգային գներն (Զինաստանի տնտեսության աճի տեմպով պայմանավորված) և նշանակալի ազդեցությունն են թողնում ՀՀ տնտեսական աճի վրա: Յետևաբար, այս պարագայում ՀՀ կառավարությանն անհրաժեշտ է.

1. Ապահովել հակաճգնաժամային միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ \$ֆինանսավորում՝ ստեղծված վիճակը մեղմելու, աղքատության աճի կանխարգելման և տնտեսության համաչափ զարգացման նպատակով:

2. Հաշվի առնելով մետաղների միջազգային գներին, ՌԴ տնտեսությանն առնչվող ամենամյա կանխատեսումները, յուրաքանչյուր տարի վերանայել այն հակաճգնաժամային միջոցառումների գործիքակազմը, որն անհրաժեշտության դեպքում կարող է կարգավորել ստեղծված իրավիճակը: Այս միջոցառումները պետք է ուղղված լինեն ՀՀ տնտեսության առանձին ոլորտների, տնային տնտեսությունների եկամուտների մեծության վրա բացասական զարգացումների ազդեցության մեղմացմանը: Հակաճգնաժամային միջոցառումներ պետք է իրականացվեն ոչ միայն առավելապես դեպի ՌԴ ապրանքներ արտահանող ընկերությունների համար, այլև տեղական շուկաներում ապրանքներ վաճառող ընկերությունների համար, հաշվի առնելով ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի, ինչպես նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ ՌԴ ռուբլու փոխարժեքների տատանումները, քանի որ էժան ներմուծման առկայության և ՀՀ S/S-ների նվազող եկամուտների դեպքում զգալիորեն կավելանա ՌԴ ծագմամբ ապրանքների սպառումը: Վերջինս էլ ավելի կմեծացնի ընթացիկ հաշվի պակասուրդը՝ ՀՀ տնտեսությունն ավելի խոցելի դարձնելով արտաքին տնտեսական զարգացումների նկատմամբ (քանի որ այդ պակասուրդը հիմնականում ֆինանսավորվելու է արտաքին պարտքի ավելացման ճանապարհով և, հատկապես, մասնավոր հատվածի կողմից):

3. Միջնաժամկետ հատվածում իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք տեղական ապրանքներին տեղական շուկայում հնարավորություն կտան գնային առումով հաջողությամբ մրցակցել հատկապես ՌԴ ապրանքների հետ: Ճգնաժամի պայմաններում գործառնական արդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումները կնպաստեն նաև դեպի Վրաստան (կամ այլ երկիր) արտահանման ծավալների ավելացմանը, և մասշտաբի էֆեկտի շնորհիվ ՀՀ ընկերությունների համար կապահովեն լրացուցիչ եկամուտներ: Այս միջոցառումները հնարավորություն կտան ոչ միայն դիմակայել ՌԴ ռեցեսիայի բացասական ազդեցությանը, այլև կավելացնեն արտահանման ծավալները միջնաժամկետ հատվածում:

4. Համապատասխան ծրագրերի իրականացման միջոցով նպաստել ԵՄ և այլ զարգացած երկրներ ՀՀ ապրանքների արդյունավետ արտահանմանը (այդ երկրների կանոնակարգերին համապատասխան),

ապահովել աշխարհագրական շուկաների ավելի լայն դիվերսիֆիկացիա: ԵՄ արտահանումը հնարավորություն կտամեծացնելու ՅՅ-ում ստեղծվող ավելացված արժեքը, որը կհանգեցնի աշխատավարձերի բարձրացմանը, և որպես դրա հետևանք՝ արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակի կրճատմանը:

Այժմ անդրադառնանք ՅՅ տնտեսության իրական հատվածի վրա ՕՌԼ-ների ազդեցությանը: Ինչպես ներկայացվել էր բաժին 2.2-ում, ՅՅ-ի տնտեսական աճի տեմպերի պահպանման նպատակով ՅՅ-ի համար առաջնային պետք է լինի ներդրումների ծավալների աճի ապահովումը՝ հատկապես ՕՌԼ-ների ներգրավման միջոցով: 2003-2013թթ. ժամանակահատվածի եռամսյակային տվյալների հիման վրա ռեգրեսիոն հավասարման գնահատման արդյունքները ցույց տվեցին, որ ՌԴ-ից և այլ երկրներից տնտեսության իրական հատվածում կատարված ՕՌԼ-ների ծավալների փոփոխությունը չէր բացատրում իրական ՅՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը (ռեգրեսիոն հավասարման մեջ ՌԴ-ից և այլ երկրներից ՕՌԼ-ների հանրագումարը հանդես են եկել որպես առանձին անկախ փոփոխական): Այս արդյունքները փաստում են այն մասին, որ ՅՅ իրական ՅՆԱ-ի աճի առումով կարևոր չէ, թե ո՞ր երկրից են իրականացվում ներդրումները, այլ կարևոր է, թե երկարաժամկետ հատվածում որքան ո՞վ են այդ ներդրումները նպաստում ավելի բարձր ավելացված արժեքի ստեղծմանը ՅՅ-ում (նույնիսկ վերաներդրված եկամուտները պետք է ուղղված լինեն ավելի մեծ ավելացված արժեք ունեցող ապրանքների ստեղծմանը և ծառայությունների մատուցմանը): Այս երևույթը բացատրվում է նրանով, որ 2003-2014թթ. ՅՅ-ն ներգրավել էր հիմնականում շուկա և ռեսուրս փնտրող ընկերություններ, որոնք արդեն որպես ՅՅ ռեզիդենտ ընկերություններ ՅՅ-ում իրականացրել էին ստացված շահույթների վերաներդրում¹⁸³: Իսկ ստացված շահույթների վերաներդրումներն, ընդհանուր առմամբ, իրականացվել են միայն ուժեղ մրցակցությամբ ոլորտներում (ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շուկաներում՝ գործառնական

¹⁸³ Եզրահանգումը հիմնված է հետևյալ աղբյուրի տվյալների վերլուծության և համարությունների հիման վրա: ՅՅ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» տվյալների բազա առ. 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>): ՅՅ ԱՎԾ-ի «Օտարերկրյա ներդրումներ»-ի տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=246>): ՅՅ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-փետրվարին, ք. Երևան, 2015թ., էջ 83-90:

արդյունավետության և ապահովելու կամ մրցակցային առավելություն և ստեղծելու նպատակով): Հասկանալի է, որ գործառնական արդյունավետության և մասշտաբի էֆեկտին հնարավոր է հասնել միայն արտահանման ծավալների աճի ապահովման միջոցով: Սակայն պետք է նշել, որ միջնաժամկետ հատվածում ստացված շահույթների վերաներդրման ծավալները կարող են նվազել՝ պայմանավորված ՌԴ տնտեսության վիճակից, համաշխարհային շուկայում մետաղների, հումքի գներից և տեղական շուկայում առկա մրցակցության մակարդակից: Այս պարագայում անհրաժեշտ է հետևյալը.

- Կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում ներգրավել «արդյունավետության փնտրող» օտարերկրյա ընկերություններ, որոնց նպատակը նոր շուկաների գրավումն է (օրինակ, որպես շուկա կարող են դիտարկվել ինչպես ՌԴ-ն, այնպես էլ Իրանը՝ հաշվի առնելով ՀՀ-ի և Իրանի միջև ազատ առևտրի համաձայնագիրը, կամ էլ ինչպես ԵԱՏՄ, այնպես էլ ԵՄ շուկան), ինչպես նաև ընկերություններ, որոնց նպատակը ՀՀ-ում դուստր ձեռնարկությունների կամ մասնաճյուղերի բացման ճանապարհով գլխամասային գրասենյակների արտապատվիրված աշխատանքների իրականացումն է հատկապես ցածր և միջին տեխնոլոգիական ոլորտներում:

Եթե ՀՀ-ն չկարողանա ներգրավել լրացուցիչ ՕՌԻՆ-ներ, պահպանել ստացված շահույթների վերաներդրման անհրաժեշտ մակարդակը, ինչպես նաև հայրենական ընկերությունները չավելացնեն ներդրումների ծավալները, ապա ՀՀ իրական ՀՆԱ-ի աճի տեմպերը կլինեն բավականին ցածր:

Այժմ անդրադառնանք դրամական փոխանցումների ազդեցությանը ՀՀ իրական ՀՆԱ-ի և նրա որոշ բաղադրիչների վրա: Գնահատում #7-ի արդյունքները (հավելված 4, աղյուսակ 10) փաստում են այն մասին, որ ՀՀ իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխության վրա ազդում են ինչպես անձնական տրանսֆերտները, այնպես էլ աշխատողների աշխատավարձերը, սակայն այստեղ հետաքրքրականն այն է, որ ժամանակահատվածը, ինչպես նաև մեծության չափը տարբերվում են (մնացած այլ հավասար պայմանների դեպքում): Աշխատողների աշխատավարձերի ամբողջ ծավալի փոփոխությունը 1 ԱՄՆ դոլարով է-րդ ժամանակահատվածում կարող է հանգեցնել (միջի-

նում ակնկալվող չափ) իրական ՅՆԱ-ի փոփոխություն 867.1 ՀՀ դրամի չափով (մնացած այլ հավասար պայմանների դեպքում) այդ նույն ժամանակահատվածում, մինչդեռ անձնական տրանսֆերտների պարագայում ծավալի փոփոխությունը 1 ԱՄՆ դոլարի չափով t-րդ ժամանակահատվածում կարող է հանգեցնել (միջինում ակնկալվող չափ) իրական ՅՆԱ-ի փոփոխություն 603 ՀՀ դրամի չափով (մնացած այլ հավասար պայմանների դեպքում) միայն t+6-րդ ժամանակահատվածում: Այս տարբերությունը պարզելու նպատակով դիտարկենք աշխատողների աշխատավարձերի և անձնական տրանսֆերտների ազդեցությունն իրական ՅՆԱ-ի բաղադրիչների վրա:

Ընդհանուր առմամբ, աշխատողների աշխատավարձերի ծավալների փոփոխությունը չի հանգեցնում S/S-ների վերջնական սպառման իրական ծախսերի վիճակագրորեն նշանակալի փոփոխությանը, սակայն t-րդ ժամանակահատվածում այդ ծավալների փոփոխությունը 1 ԱՄՆ դոլարով կարող է հանգեցնել (միջինում ակնկալվող չափ) իրական հիմնական միջոցների համախառն կուտակման փոփոխության 418.4 ՀՀ դրամի չափով (մնացած այլ հավասար պայմանների դեպքում) այդ նույն ժամանակահատվածում (գնահատում #8, հավելված 4, աղյուսակ 11): Իսկ ինչ վերաբերում է ապրանքների և ծառայությունների իրական ներմուծման վրա այդ գումարների ազդեցությանը, ապա t-րդ ժամանակահատվածում այդ ծավալների փոփոխությունը 1 ԱՄՆ դոլարով կարող է հանգեցնել (միջինում ակնկալվող չափ) իրական ներմուծման փոփոխությանը 215.2 ՀՀ դրամի չափով (մնացած այլ հավասար պայմանների դեպքում) այդ նույն ժամանակահատվածում (գնահատում #9, հավելված 4, աղյուսակ 12): Այս արդյունքներն, ընդհանուր առմամբ, փաստում են այն մասին, որ արտագնա աշխատողների վարձատրության աճը S/S-ների կողմից (այդպիսի անդամ ունեցող) չի հանգեցնում ՀՀ-ում արտադրված ապրանքների և ծառայությունների սպառման մակարդակի փոփոխությանը, ուղարկվող գումարների աճը նպաստում է հիմնական միջոցների համախառն կուտակման, ինչպես նաև ներմուծվող ապրանքների սպառման ծավալների ավելացմանը: Իսկ սանշանակում է, որ մոլորակի կատիվ արդյունքն ապահովում է երկարաժամկետ օգտագործման ապրանքների (հիմնական միջոց դասվող) ձեռքբերումը, ինչը հանդես է գալիս որպես հիմնական միջոցների համախառն կուտակումը (բնակարան և այլն), որի հետևանքով իրական ՅՆԱ-ն ավելի շատ է ավելանում: Մյուս կողմից, S/S-ների

վարկերի դինամիկան վկայում է, որ այս գումարները նաև ուղղվում են վարկերի մարմանը, իսկ մուլտիպլիկատիվ էֆեկտի տեսանկյունից՝ ՀՀ իրական ՀՆԱ-ի աճին: Արտագնա աշխատողների եկամուտների կրճատման դեպքում վերջնական սպառման ծախսերը որոշակիորեն կպահպանվեն, իսկ ներմուծված ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև երկարաժամկետ օգտագործման ապրանքների սպառումը կնվազի: Սակայն, այստեղ առանցքայինն արտագնա աշխատանքի հնարավորությունն է: Եթե եկամուտների կրճատումը պայմանավորված է ՌԴ ռուբլու արժեզրկմամբ (որը սահմանափակում է լրացուցիչ ծախսերը), ապա արտագնա աշխատանքի հնարավորության բացակայությունը բացասական սոցիալական ազդեցություն է գործում ՀՀ S/S-ների վրա՝ շեշտադրելով կառավարության կողմից հակաճնաժամային միջոցառումների իրականացման կարևորությունը:

Այժմ անդրադառնանք անձնական տրանսֆերտներին: Ընդհանուր առմամբ, տրոփ ժամանակահատվածում անձնական տրանսֆերտների ծավալների փոփոխությունը մեկ ԱՄՆ դոլարով կարող է հանգեցնել (միջինում ակնկալվող չափ) S/S-ների իրական վերջնական սպառման ծախսերի փոփոխությանը 332.6 ՀՀ դրամով (գնահատում #10, հավելված 4, աղյուսակ 13), հիմնական միջոցների համախառն կուտակման փոփոխությանը 685.7 ՀՀ դրամով (գնահատում #11, հավելված 4, աղյուսակ 14) և ապրանքների ու ծառայությունների իրական ներմուծման փոփոխությանը 278.7 ՀՀ դրամով (գնահատում #12, հավելված 4, աղյուսակ 15) այդ նույն ժամանակահատվածում՝ մնացած այլ հավասար պայմանների դեպքում: Չունենալով տվյալներ, թե ինչպե՞ս են ծախսվում անձնական տրանսֆերտները, կարելի է ենթադրել, որ այդ ծախսերն ավելացնում են ինչպես տեղական, այնպես էլ ներմուծվող ապրանքների և ծառայությունների սպառման ծավալները, որի հետևանքով ճշգրիտ կերպով չենք կարող որոշել դրանց ազդեցության չափն իրական ՀՆԱ-ի վրա: Իսկ եթե այդ անձնական տրանսֆերտներն ուղղվեն երկարաժամկետ օգտագործման ապրանքների ձեռք բերմանը՝ հիմնական միջոցների համախառն կուտակում դասակարգվելու դեպքում, ապա այդ գումարները կնպաստեն վերջինիս ավելացմանը, ինչն ազդեցություն կգործի իրական ՀՆԱ-ի վրամիայն որոշակի ժամանակ անց:

Ընդհանուր առմամբ, անձնակազմի տրանսֆերտների և աշխատողների վարձատրության կրճատման դեպքում ՀՆԱ-ի բաղադրիչներից ամենախոցելի են է հանդիսանում հիմնական միջոցների համախառն կուտակումը, թեպետ ներքին պահանջարկի տեսանկյունից կարևորվում է արտագնա աշխատող, ինչպես նաև անձնակազմի տրանսֆերտներ ստացող տնային տնտեսությունների վերջնական սպառմանն ուղղված ծախսերի կրճատման չափը:

Ինչ վերաբերում է մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող մեկ այլ ցուցանիշի՝ բանկային վարկերի աճի տեմպին, ապա ինչպես ներկայացվել էր նախորդ գլխում (բաժին 2.1)՝ եթե ՀՀ-ում միջնաժամկետ հատվածում արտաքին շուկերով պայմանավորված տնտեսական անկում արձանագրվի, ապա վերջինս կարող է որոշակիորեն խորանալ, այս մակրոտնտեսական խոցելիությունը նկարագրող ցուցանիշի գույքորոմամբ: 2005թ. առաջին եռամսյակից մինչև 2014թ. երրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածի տվյալների հիման վրա (չորրորդ եռամսյակի բացառումը պայմանավորված էր նրանով, որ 2014թ. սեպտեմբերի համեմատ 2014թ. դեկտեմբերին ՀՀ առևտրային բանկերի կողմից ՀՀ տնային տնտեսությանը և մասնավոր ձեռնարկություններին տրամադրված վարկերի ծավալները (հանրագումարը) կտրուկ աճ էր արձանագրել): Վերլուծության նպատակով վերցվել են վարկերի ծավալների փոփոխության անվանական արժեքները, քանի որ հատկապես մասնավոր ձեռնարկությունների կողմից վարկային միջոցների ծախսման ուղղությունների մասին հստակ տեղեկատվության բացակայության պարագայում, հնարավոր չէ պարզել, թե այդ ծավալների ո՞ր տոկոսը ի՞նչ գների ինդեքսով պետք է ճշգրտել, ինչպես նաև իրական ՀՆԱ-ի արժեքները: Գնահատման արդյունքները (գնահատում #13, հավելված 4, աղյուսակ 16) փաստել են այն, որ եթե նախորդ ժամանակահատվածի վերջի համեմատ ե-րդ ժամանակահատվածում առևտրային բանկերի կողմից ՀՀ տնային տնտեսություններին և մասնավոր ձեռնարկություններին տրամադրված վարկերի ծավալի հանրագումարը փոփոխվի 1 դրամով, ապա ՀՀ իրական ՀՆԱ-ի փոփոխությունը միջինում կարող է կազմել 0.49 դրամ այդ նույն ժամանակահատվածում: Այս արդյունքները նաև փաստում են այն մասին, որ միջնաժամկետ հատվածում արտաքին շուկերով պայմանավորված տնտեսական անկում գրանցվելու

հետևանքով ՀՀ առևտրային բանկերի կողմից որդեգրած զգուշավոր քաղաքականությունը՝ վարկերի տրամադրման ավելի խիստ պայմանների սահմանամբ, բացասաբար կանդորառնատնտեսության իրական հատվածի վրա (հիմնականում ներքին պահանջարկի միջոցով (հաշվի առնելով իրական ներքին պահանջարկ/ՀՆԱ հարաբերակցությունը և ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին ըստ ոլորտների տրամադրված ընդհանուր վարկերի դինամիկան (հավելված 2, գծապատկեր 5-6)), որի հետևանքով վերջինիս վերականգնումը ավելի դանդաղ տեղի կունենա): Այս պարագայում կարևորվում են տնտեսության անկման դեպքերում ՀՀ կառավարության կողմից հատկապես մասնավոր ձեռնարկություններին տրամադրվող նոր վարկերի տրամադրության սուբսիդավորումը (հատկապես հիմնական միջոցներին դասվող ապանքների ձեռքբերման դեպքում):

Ընդհանուր առմամբ, ՌԴ իրական ՀՆԱ-ի փոփոխությունը, միջինում, բացատրում է ՀՀ իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխության մոտ 60%-ը, ինչը փաստում է ՀՀ տնտեսության ՌԴ տնտեսություններից բավականին բարձր աստիճանի կախվածության մասին: Հետևաբար, ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացման տեսանկյունից երկարաժամկետ հատվածում առաջնային է դառնում ավելի դիվերսիֆիկացված (երկրների և աշխարհագրական շուկաների առումով) արտահանման կառուցվածքի ապահովումը: Վերջինս հնարավոր է միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով, որոնք կնպաստեն ավելի լայն դիվերսիֆիկացիային, ինչն էլ հնարավորություն կտա տարեց տարի կրճատել ընթացիկ հաշվի պակասորդը (եթե նույնիսկ որոշակիորեն նվազեն արտասահմանից ստացվող դրամական փոխանցումները), ինչպես նաև արդյունավետ կերպով սպասարկել արտաքին պարտքը: Միաժամանակ, ՀՀ կառավարության կողմից իրականացվող հակաճգնաժամային միջոցառումները պետք է լինեն տարբերակված՝ ըստ ոլորտների և S/S-ների: Առանձնակի ուշադրության կենտրոնում պետք է գտնվեն արտահանման երեք խմբերը ներկայացնող հիմնական ոլորտների ընկերությունները և դրանցում զբաղված S/S-ները, ինչպես նաև բացառապես աշխատողների վարձատրությունից կախվածություն ունեցող S/S-ները (որոնք ՌԴ տնտեսության զարգացումներով

պայմանավորված կարող են հնարավորությունն չունենալ մեկնել ու արտագնա աշխատանքի): ՀՀ տնտեսության իրական հատվածի զարգացման և արտաքին շուկերի նկատմամբ խոցելիության աստիճանի նվազեցման տեսանկյունից առաջնային պետք է լինի երկրի ճկունության աստիճանի բարձրացումը, որը հնարավորություն կտա Կառավարությանը լայնածավալ հակաճգնաժամային միջինացումներ իրականացնել կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում (եթե ռեցեսիա գրանցվի)՝ հիմքեր ստեղծելով տնտեսության հետագա զարգացման համար միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածներում:

3.2 ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ-ի համար մեծապես կարևորվում են տնտեսության իրական հատվածի զարգացման և մակրոտնտեսական խոցելիության աստիճանի նվազեցման 2 ռազմավարական ուղղությունները՝ արտահանման (դիվերսիֆիկացված) և ներդրումների (հատկապես «արդյունավետություն փնտրող») ծավալների աճը: Այս գերակայությունները բնորոշ են նաև «արդյունավետության վրահիմնված» տնտեսական զարգացման փուլ մտած երկրներին: Համառոտաբանաբար տնտեսական համաժողովը (ՀՏՀ) 2014թ.-ին ՀՀ-ին դասակարգել էր տնտեսական զարգացման այն փուլում գտնվող երկրների շարքին, որոնք պետք է սկսեն մշակել ավելի արդյունավետ արտադրական գործընթացներ և բարձրացնեն արտադրանքի որակը: Ինչպես հայտնի է, այս փուլն ուղեկցվում է աշխատավարձերի բարձրացմամբ, որը չպետք է հանգեցնի գների բարձրացմանը: Այստեղ երկրների մրցունակությունը պայմանավորվում է բարձրագույն կրթության որակը և վերապատրաստման մատչելիությունը, ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը, արդյունավետ կերպով գործող ապրանքների, աշխատանքի և ֆինանսական շուկաների առկայությունը, գոյություն ունեցող առաջատար տեխնոլոգիաներից առավելագույնս օգտվելու կարողությունը և այլն: Այս փուլում երկրների մրցունակության ապահովման համար անհրաժեշտ են մեծածավալ ներդրումներ: Իսկ ներդրումներ իրականացնելու որոշման վրա մեծապես ազդում են գործող հարկային համակարգը, ներքին և արտաքին շուկաների

գարգացման մակարդակը, այդ շուկաներում առկա մրցակցության աստիճանը (որն ուժեղ ազդեցություն է գործում ինչպես ընդհանուր արտադրողականության, այնպես էլ նրանց կողմից արտադրվող ապրանքների և ծառայությունների որակի վրա) և մի շարք այլ գործոններ¹⁸⁴: Մյուս կողմից, ուժեղ մրցակցությունը տեղական շուկաներում, բացի նրանից որ նպաստում է որակյալ և նոր ապրանքների արտադրությանը, նաև հանգեցնում է նրան, որ տեղական ընկերությունները սկսում են ընդլայնել իրենց շուկաները, որի հետևանքով ավելանում են արտահանման ծավալները: ՀՀ-ի կողմից մշակված մեթոդաբանության համաձայն հենց այս առանցքային ցուցանիշներն են համարվում որոշիչ ՀՀ տնտեսական զարգացման ներկա փուլի համար, որին կհաջորդի «նորարարությունների վրա հիմնված» տնտեսական զարգացման փուլը: Այս ցուցանիշները մեծապես կարևորվում են նաև «արդյունավետության փնտրող» օտարերկրյա ներդրողների կողմից որևիցե երկրում ներդրումներ կատարելիս (այլ ինդեքսների հետ մեկտեղ, օրինակ, ՀԲ-ի Գործարարությանը զբաղվելու դյուրինության ինդեքսի և այլն): Հետևաբար, Կառավարության առաջնահերթություններից պետք է լինի այդ ցուցանիշների բարելավումը միջնաժամկետ հատվածում՝ երկրի տնտեսության զարգացման խթանման և օտարերկրյա ներդրողների ներգրավման նպատակով, ինչն էլ առնվազն հնարավորություն կտա պահպանել ընթացիկ հաշվի պակասումը:

Ներկա փուլում ՀՀ-ն տնտեսության զարգացման աստիճանը նկարագրող ցուցանիշներով չի գտնվում առաջին 50 (բացառությամբ ապրանքների շուկայի արդյունավետության) երկրների շարքում (140 երկրների շարքում է), ինչն էլ չի ապահովում մրցակցային լուրջ առավելություններ: Թվարկված ցուցանիշներից հատկապես մեծ մրցակցային թերությունն է համարվում շուկայի չափը (ցուցանիշը նկարագրող արժեքի համաձայն ՀՀ-ն գրավում է 116-րդ տեղը)¹⁸⁵: Շուկայի չափը կարևոր է նրանով, որ այն ազդում է արտադ-

¹⁸⁴ Sala-i-Martin, Xavier, Bilbao-Osorio, Beñat, Di Battista, Attilio, Drzeniek Hanouz, Margareta, Geiger, Thierry and Galvan, Caroline (2014). "The Global Competitiveness Index 2014–2015: Accelerating a Robust Recovery to Create Productive Jobs and Support Inclusive Growth," Chapter 1.1 in *The Global Competitiveness Report 2014–2015: Full Data Edition*, ed. Klaus Schwab, Geneva, Switzerland: World Economic Forum, pp.7-11.

¹⁸⁵ WEF (2015). *The Global Competitiveness Report 2015–2016: Insight Report*, ed. Klaus Schwab, Geneva, Switzerland: World Economic Forum, p.98.

րողականության վրա, քանի որ մեծ չափերի հասնող շուկան հնարավորություն է տալիս ընկերություններին հասնել մասշտաբի էֆեկտի և օգտվել դրա ընձեռած հնարավորություններից, իսկ գլոբալ իզացիայի պայմաններում օտարերկրյա շուկաները հանդես են գալիս որպես տվյալ երկրի ներքին շուկայի փոխարինողներ, հատկապես փոքր երկրների համար, քանի որ արտաքին առևտուրն, ընդհանուր առմամբ, դրական ազդեցություն է գործում տնտեսական աճի վրա¹⁸⁶: Այս ցուցանիշները¹⁸⁷ փաստում են, որ ՀՀ արտահանման ծավալի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը ոչ միայն բավականին փոքր է (96-րդ տեղ), այլ նաև արտահանման ծավալն էլ մեծ չէ այլ երկրների համեմատ (120-րդ տեղ), ինչն էլ, իր հերթին, նշանակում է, որ ՀՀ տնտեսության արտադրողականության բարձրացման տեսանկյունից կարևորվում է շուկայի չափերի ընդլայնումը: Հասկանալի է, որ միայն ներքին շուկան (որը ևս փոքր է՝ 112-րդ տեղ)¹⁸⁸ չի կարող ապահովել մասշտաբի էֆեկտ (տնտեսապես հիմնավորված չիլիսի նոր տեխնոլոգիաների ներդրումն ու արտադրական գործընթացների արդիականացումը, եթե տվյալ շուկայում մրցակցությունն ուժեղ չէ): Իսկ օտարերկրյա շուկաներում առկա մրցակցությունը կստիպի ՀՀ ընկերություններին էլ ավելի բարձրացնել արտադրանքի որակը, նոր և ավելի արդյունավետ գործընթացներ ներդնել (և որ տեխնոլոգիաների կիրառմամբ)՝ գործառնական արդյունավետությունն ապահովելու նպատակով, ինչի հետևանքով էլ կնվազի մեկ միավորի ինքնարժեքը: Գործառնական արդյունավետությունը (operational effectiveness) նշանակում է, որ ընկերությունը նույն գործունեությունն ավելի քան է իրականացնում, քան մրցակիցները¹⁸⁹: Սակայն, գործառնական արդյունավետությունն այլ շուկաներում մրցակցությանը դիմակայելու անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է, քանի որ ընկերության մրցակցային ռազմավարության իմաստը կայանում է տարբերվելու մեջ:

¹⁸⁶Sala-i-Martin, Xavier, Bilbao-Osorio, Beñat, Di Battista, Attilio, Drzeniek Hanouz, Margareta, Geiger, Thierry and Galvan, Caroline (2014). “The Global Competitiveness Index 2014–2015: Accelerating a Robust Recovery to Create Productive Jobs and Support Inclusive Growth,” Chapter 1.1 in *The Global Competitiveness Report 2014–2015: Full Data Edition*, ed. Klaus Schwab, Geneva, Switzerland: World Economic Forum, p.8.

¹⁸⁷ WEF (2015). *The Global Competitiveness Report 2015–2016: Insight Report*, ed. Klaus Schwab, Geneva, Switzerland: World Economic Forum, p.99.

¹⁸⁸ Նույն տեղում:

¹⁸⁹Porter, Michael (1998). *On Competition*, A Harvard Business Review Book, Harvard Business School Press, Boston, MA: United States pp.40, 42-46.

Պետք է նշել, որ ինչպես արդյունավետության վրա հիմնված տնտեսական զարգացման փուլում այնպես էլ ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն ներուժի իրացմամբ ՀՀ տնտեսությունը ոչ միայն օգտվում է որոշակի հնարավորություններից և առավելություններից, այլև ավելի խոցելի է դառնում այլ երկրների (հատկապես ՌԴ-ի) տնտեսական աճի տեմպերից, ՌԴ ռուբլում տատանումների պատճառով դեպի ՀՀ ուղարկվող դրամական փոխանցումների ծավալների կրճատման հանդեպ և այլն: Հետևաբար, արտաքին տնտեսական գործոնների նկատմամբ ՀՀ տնտեսության խոցելիության աստիճանի նվազեցման համար ՀՀ կառավարությունը պետք է ձգտի բարձրացնել ՀՀ տնտեսության ճկունության աստիճանն այդ գործոնների հանդեպ:

«Centennial Group International»-ի մասնագետներն ասիական երկրների տնտեսությունների ճկունության աստիճանը բնութագրող 5 գործոն են առանձնացրել, որոնց միջոցով հնարավոր է գնահատել երկրի ճկունության աստիճանը, սակայն ատենախոսության թեմայից ելնելով առավել մանրամասն այստեղ դիտարկվում են միայն երեքը (հավելված 1, աղյուսակ 3): Ըստ «Centennial Group International»-ի խոցելիության միևնույն աստիճան ունեցող երկրները (արտաքին շուկերի հանդեպ, որոնք տեղի են ունենում ժամանակ առ ժամանակ համաշխարհային տնտեսությունում արձանագրված փոփոխությունների պատճառով) կարող են տարբեր կերպ արձագանքել շուկերին (ավելի ճկուն տնտեսությունը կկարողանա արդյունավետ կերպով արձագանքել շուկերին և փոխել ստեղծված վիճակը)¹⁹⁰: Այժմ անդրադառնանք գործոններից յուրաքանչյուրին:

Տնտեսության հարմարվողականություն: Այստեղ դիտարկվում են սոցիալական պաշտպանության համակարգը և աշխատանքի շուկայի ճկունությունը: Քանի որ ՀՀ արտաքին պարտքի մակարդակը բավականին ցածր էր նախքան ճգնաժամը, ՀՀ-ն կարողացավ արտաքին պարտքի ավելացման շնորհիվ (հավելված 2, աղյուսակ 3) ավելացնել սոցիալական պաշտպանությանն ուղղվող ծախսերը (հավելված 2, աղյուսակ 10) 2009թ.-ին: Սոցիալական աջակցության և պաշտպանու-

¹⁹⁰ ADB (2010). “Global Economic and Financial Crisis Impact on Developing Asia and Immediate Policy Implications,” Report 1, prepared by Manu Bhaskaran and Ritwick Ghosh from the Centennial Asia Advisors, a member of the Centennial Group International as discussion materials for the ADB Regional Forum on the Impact of Global Economic and Financial Crisis” at the ADB Headquarters in Manila, Philippines, January 14-15, p.12.

թյան տեսանկյունից ՀԲ-ն (2011թ.) առանձնացրել է երեք հենասյուն, որոնց միջոցով հնարավոր է արդյունավետ կերպով արձագանքել ճգնաժամին (հավելված 1, գծապատկեր 4):

ՀՀ-ում գործազրկության նպաստները հանդես եկան որպես Կառավարության կողմից շուկին արձագանքելու առաջին հակաճգնաժամային միջոցներ: ՀՀ-ում սոցիալական աջակցության համակարգի շահառուների թիվը 2008-2009թթ. նվազել էր, ինչը կապված էր համակարգի ոչ աղքատ համարվող շահառուներին հանելու հետ: 2007-2009թթ. ընտանեկան նպաստի համակարգի ոչ աղքատ համարվող շահառուների քանակի կրճատման շնորհիվ առաջին քվինտիլային խմբին ուղղվող ծրագրի միջոցները 43-ից դարձան 61%, 2009թ.-ին ավելացավ նվազագույն կենսաթոշակի չափը, 2008-2009թթ.-ին 74%-ով ավելացան նաև գործազրկության հետ կապված ծախսերը, սակայն շահառուների թվաքանակը փոքր էր¹⁹¹:

Եթե 2008թ.-ին գործազրկության նպաստ ստացողների թվաքանակը կազմում էր 16.6 հազար, ապա 2009թ.-ին այն արդեն հասել էր 26.5 հազարի, իսկ այդ նույն ժամանակահատվածում նպաստի միջին չափը 13,913 ՀՀ դրամից դարձել էր 16,700 ՀՀ դրամ¹⁹²: ՀՀ-ն իրականացրեց նաև հանրային աշխատանքներ ծրագիրը (Կենսական նշանակություն ունեցող ճանապարհների վերանորոգման ծրագիր), որի նպատակն էր վերանորոգել 240 կմ ճանապարհ, ինչն էլ 16,000 մարդ ամիս զբաղվածություն էր ապահովում¹⁹³:

Ինչ վերաբերում է գործազրկության նպաստին, ապա 01.01.2014թ.-ից ուժի մեջ մտած «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի համաձայն 2014թ.-ին գործազրկության նպաստ ստացողները միայն այն անձիք էին, ովքեր այն ստանալու համար դիմել էին 2013թ.-ին¹⁹⁴: Ըստ Ռ. Ալմեյդայի և այլոց (2012թ.)¹⁹⁵ գործազրկության նպաստի չափը և

¹⁹¹ World Bank (2011). *The Jobs Crisis: Household and Government Responses to the Great Recession in Eastern Europe and Central Asia*, World Bank, Washington, DC: United States, pp. 58, 67-68, 70, 82.

¹⁹² ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2008-2012, 2009-2013, վիճակագրական ժողովածու, 2013թ., 2014թ., համապատասխանաբար էջեր՝ 129, 141 ք. Երևան:

¹⁹³ World Bank (2011). *The Jobs Crisis: Household and Government Responses to the Great Recession in Eastern Europe and Central Asia*, World Bank, Washington, DC: United States, p. 88.

¹⁹⁴ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1, Հոդ.1186.14, հոդված 26:

¹⁹⁵ Almeida, R., Arbelaez, J., Honorati, M., Kuddo, A., Lohmann, T., Ovadiya, M., Pop, L., Sanchez Puerta, M., Weber, M. (2012). *Improving Access to Jobs and Earnings Opportunities: The Role of Activation and Graduation Policies in Developing Countries*, Social Protection Discussion Paper No. 1204, World Bank, Washington D.C.: United States, p.33.

վճարման տևողությունը պետք է կախված լինի աշխատառու կայուն ամ կա թափուր աշխատատեղերից (աշխատուժի նկատմամբ պահանջարկից): Իսկ զբաղվածության նոր մոդելը հիմնականում նպաստում է աշխատուժի առաջարկի ավելացմանը, ինչն էլ իր հերթին դրական ազդեցություն կունենա միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, երբ Կառավարության կողմից իրականացվող հարկային, արդյունաբերական, ներդրումային և այլ քաղաքականությունների շնորհիվ կառաջանա պահանջարկ համապատասխան աշխատուժի նկատմամբ: Կարճաժամկետ հատվածում ակտիվ զբաղվածության քաղաքականության ծրագրերն ուղղված են լինելու թափուր աշխատատեղերի համալրմանը՝ ավելացնելով զբաղվածների թվաքանակը, կամ էլ խթանելով ձեռնարկատիրական գործունեությունը: Դրանք համեմատաբար ցածր վարձատրություն և բարձր որակավորում չպահանջող աշխատատեղեր են լինելու, քանի որ աջակցությունը հիմնականում կցուցաբերվի աշխատառու կայուն ամրցունակ ճանաչված անձանց¹⁹⁶:

Այս պարագայում առաջնային է դառնում հանրային աշխատանքների ծրագրի իրականացումը, սակայն դրամաշնորհային համարորոշակի ժամանակ է պահանջվում, կապված համապատասխան ծրագրերի մշակման, շահառուների որոշման, վճարման չափի ընտրության և ֆինանսավորման հայթայթման հետ, քանի որ բացակայում է անմիջապես ազդող առաջնային գործիքը՝ գործազրկության նպաստը: Իսկ սանշանակում է, որ ավտոմատ կայունացնող ծրագրերից միայն սոցիալական աջակցության ծրագրերի միջոցով է, որ ՀՀ կառավարությունը փորձելու է հաղթահարել ՌԴ ճգնաժամի բացասական ազդեցությունը: Յետևաբար, ճգնաժամին ավելի արագ արձագանքելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել գործազրկության նպաստի վճարումը միայն ճգնաժամերի դեպքում (երբ ռեցեսիա է գրանցվում կամ ՀՆԱ-ի աճի տեմպը դառնում է զրոյական կամ բացասական), և միայն ճգնաժամի պատճառով աշխատանքը կորցրածների համար, քանի որ ՀԲ-ի կողմից առաջարկված բոլոր հենասյուների (հավելված 1, գծապատկեր 4) առնչվող ծրագրերում շահառուներին ընդգրկելը ավելի երկար ժամանակ

¹⁹⁶ Մակարյան, Ա. «Անցում զբաղվածության քաղաքականության նոր մոդելի», «Ազգային ժողովի մոնիտորինգ» 5-րդ գումարում, 4-րդ նստաշրջանի, 3-րդ զեկուլյո (09.09.2013 - 05.12.2013), «Մանդատ» տեղեկատվական հասարակական կազմակերպություն, ք. Երևան, էջ 66-67:

կապահանջի՝ համապատասխան ծրագրերի կամ միջոցառումների մշակման, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ իրականացնելու պատճառով: Թերևս, բացառությամբ կարող է կազմել սոցիալական աջակցության համակարգը (շահառուների ընտրության տեսանկյունից), սակայն այս պարագայում հնարավոր է, որ ոչ բոլոր գործազուրկները բավարարեն շահառուների ընտրության չափանիշներին և ընդգրկվեն այդ համակարգում: Հետևաբար, այս իրավիճակում շուկերին արձագանքելու առումով իրականացվող միջոցառումների ազդեցությունը կարող է որոշակիորեն ուշացած լինել:

Ինչ վերաբերում է աշխատանքի շուկայի արդյունավետությանը և ճկունությանը, ապա վերջինս նկարագրող ցուցանիշների¹⁹⁷ վերլուծությունից կարելի է գրականացնել, որ ՀՀ աշխատանքի շուկան բավականին ճկուն է, քանի որ, ընդհանուր առմամբ, գործատուները և աշխատակիցները համագործակցում են միմյանց հետ, առանձին ընկերությունների կտրվածքով բավականին բարձր է աշխատավարձի սահմանման ճկունությունը, որը հիմնականում պայմանավորված է աշխատակիցների բարձր արտադրողականությամբ: Ճգնաժամային իրավիճակում աշխատակիցները կարող են համաձայնվել աշխատել ավելի ցածր վարձատրությամբ: Հետևաբար, այստեղ վճռորոշը լինելու է նախքան ճգնաժամային իրավիճակն արձանագրված գործազրկության մակարդակը, որով էլ պայմանավորված է լինելու աշխատակիցների կողմից ավելի ցածր աշխատավարձով աշխատելու պատրաստականության հանգամանքը, քանի որ 2014թ.-ի հունվարի մեկից գործազուրկ դարձածները այլևս չեն կարող դիմել լիազոր մարմնին և ստանալ գործազրկության նպաստ:

Շուկերին արդյունավետ արձագանքման կարողություն: Այն իրենից ներկայացնում է Կառավարության հարկաբյուջետային միջոցառումներ իրականացնելու հնարավորությունը, որը նկարագրելու համար օգտագործում են երկու մակրոտնտեսական ցուցանիշներ՝ պետական (կենտրոնական Կառավարության համախառն չմարված պարտք) պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, ինչպես նաև այդ ցուցանիշի փոփոխությունը և, հետևաբար, որքան բարձր լինի այս

¹⁹⁷ WEF (2015). *The Global Competitiveness Report 2015–2016: Insight Report*, ed. Klaus Schwab, Geneva, Switzerland: World Economic Forum, p.99, 380.

ցուցանիշը և դրա փոփոխությունը, այնքան ավելի սահմանափակ կլինի Կառավարության հնարավորությունը հաղթահարելու արտաքին տնտեսական շոկերը¹⁹⁸: 2014թ.-ին կենտրոնական Կառավարության համախառն չմարված պարտք/ՅԱ հարաբերակցությունը կազմում էր 46.6% (հավելված 2, աղյուսակ 11), իսկ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում (փոփ. 23.06.15 ՅՕ-97-Ն) նշված սահմանափակող ցուցանիշի հաշվարկի համաձայն 2014թ.-ին կենտրոնական Կառավարության պարտք/2013թ.-ի ՅԱ հարաբերակցությունը կազմում էր 49.3%: 2015թ.-ի հունիսի 31-ի դրությամբ կենտրոնական Կառավարության համախառն չմարված պարտք/նախորդ տարվա ՅԱ հարաբերակցությունը կազմում էր 48.9%¹⁹⁹ (համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի, Կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը, եթե Կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը²⁰⁰):

Այս պարագայում հիմնական գործոնը, որը կայայմանավորի 2016թ.-ի ՀՀ բյուջեի եկամուտների մեծությունը, և Կառավարության խթանող քաղաքականության իրականացման կարողությունը (ՀՀ-ում տնտեսական անկման դեպքում)՝ ՌԴ տնտեսության վերականգնման տեմպն է, որն էլ իր հերթին էապես պայմանավորված է լինելու նավթի գների տատանումներից: Եթե 2016թ.-ին ՀՀ-ում անկում գրանցվի, ապա դա բացասաբար կազդի ՀՀ պետական բյուջե

¹⁹⁸ Boorman, Jack, Fajgenbaum, José, Ferhani, Hervé, Bhaskharan, Manu, Arnold, Drew, Alberto Kohli, Harpaul (2013). "The Centennial Resilience Index: Measuring Countries' Resilience to Shock," Centennial Group International, Washington D.C.: United States p.4.

¹⁹⁹ ՀՀ ԱՎԾ-ի ՀՀ պետական ֆինանսների վիճակագրության «Կենտրոնական կառավարության պարտք» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=385>): ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական ցուցանիշների «ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (եռամսյակային)» առցանց տվյալների բազա (<http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>): Ըստ «ԱՀՀ 1993»-ի: Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

²⁰⁰ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքը, ՀՀՊՏ 2008.06.25/39(629), Հոդ.627, հոդված 5, (փոփ. 23.06.2015):

հավաքագրվող հարկային եկամուտների մեծության վրա, ինչը ևս կսահմանափակի ՀՀ կառավարության կարողությունը կարճաժամկետ հատվածում հակաճգնաժամային միջոցառումներ իրականացնելու տեսանկյունից (անհրաժեշտության դեպքում): Իսկ այս պարագայում ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության կայունության և տնտեսության ճկունության աստիճանը բարձրացնելու նպատակով առաջնայինը պետք է լինի ընդհանուր հարկային եկամուտների մեջ ուղղակի հարկերի մասնաբաժնի մեծացումը 2017-2018թթ.-ից սկսած (ՌԴ տնտեսության վերականգմանը գույճընթաց): Ուղղակի հարկերի աճը հնարավորություն կտա կրճատել կենտրոնական Կառավարության համախառն չմարված պարտքի չափը, որն էլ, իր հերթին, պայմանավորված կլինի նրանով, թե որքանով ՀՀ կառավարությանը կհաջողվի խթանել արտահանումը և ավելացնել վերջինիս ծավալները: Այս ձևով հնարավոր կլինի միջնաժամկետ հատվածում նվազեցնել Կառավարության պարտք/ նախորդ տարվա ՀՆԱ հարաբերակցության մեծությունը, որի շնորհիվ ՀՀ կառավարությունը կկարողանա իրականացնել խթանող քաղաքականություն (եթե միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում գրանցվի ռեցեսիա՝ արտաքին շուկով պայմանավորված):

Ընդհանուր առմամբ, այն հանգամանքը, որ հիմնականում ուղղակի հարկերի աճը հնարավորություն կտա ավելացնել հարկային եկամուտները պայմանավորված է մի շարք գործոններով: Թեպետ ՀՀ ԵԱՏՄ-ին անդամակցությունից հետո ՀՀ պետական բյուջեն սկսել է ստանալ ներմուծման մաքսային տուրքերի գումարների բաշխումից ստացված եկամուտներ, վերջինիս ծավալները տարեց տարի կարող են նվազել: Դրող զստանի Հանրապետության Եվրասիական տնտեսական միության մասին 2014թ.-ի մայիսի 29-ի պայմանագրին միանալու կապակցությամբ մաքսային տուրքերի գումարների բաշխման նորմատիվի չափը ՀՀ-ի դեպքում դարձել էր 1.11%²⁰¹ (1.13%-ի փոխարեն)²⁰²: Միայն 2013թ.-ին ՌԴ ներմուծումը կազմել էր մոտ 315 մլրդ ԱՄՆ դոլար²⁰³: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր

²⁰¹ Договор о присоединении Кыргызской Республики к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года.

²⁰² Приложение N 2 к Договору о присоединении Республики Армения к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года, п.1:

²⁰³ ՄԱԿ-ի «UN COMTRADE DATABASE» անցանց տվյալների բազա (<http://comtrade.un.org/data/>): Договор о зоне свободной торговли от 18 октября 2011 года

երկրների համար մաքսատուրքի սակագները տարբերվում էին միասնական մաքսային սակագներից (կախված նրանից, թե արդյո՞ք այդ ապրանքը ներառված էր այն ապրանքների ցանկում, որոնց ներմուծման ժամանակ տրամադրվում են սակագնային արտոնութայնություններ, երբ որպես վերջիններիս ծագման երկիր համարվում են զարգացող և առավելապես թույլ զարգացած երկրները)²⁰⁴, ինչպես նաև Օ. Շեպոտիլոյի և Դ. Թարրի (2012թ.) մեթոդաբանությունը (և ՌԴ միջին կշռված մաքսատուրքի դրույքաչափի վերաբերյալ իրենց կողմից 2013թ.-ին տրված գնահատականը²⁰⁵) մենք հաշվարկել ենք, որ եթե ՀՀ-ն 2013թ.-ին լիներ մաքսային միություն անդամ, ներմուծման մաքսային տուրքերի գումարների բաշխումից ստացվող ՀՀ պետական բյուջեի եկամուտները (միայն ՌԴ ներմուծման ծավալներով պայմանավորված) կկազմեին մոտ 260 մլն ԱՄՆ դոլար: 2014թ.-ին ՌԴ ներմուծման ծավալները կազմել էին 286.7 մլրդ ԱՄՆ դոլար²⁰⁶, որը հիմնականում պայմանավորված էր սահմանված պատժամիջոցներով²⁰⁷: ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն ներուժի իրացման, ինչպես նաև ներմուծման փոխարինման քաղաքականության իրականացման հետևանքով ՌԴ ներմուծման ծավալները (երրորդ երկրներից) տարեց տարի կկրճատվեն: Բացի այդ, կկրճատվեն նաև ՌԴ-ում կիրառվող մաքսատուրքի դրույքաչափերը (ԱՀԿ-ին անդամակցությամբ պայմանավորված):

Հիմք ընդունելով բաժին 2.1-ում ներկայացված վերլուծությունը, ակնկալվում է, որ միջնաժամկետ հատվածում ներմուծման ծավալների կտրուկ աճ չի գրանցվի: Ակնկալվող միասնական մաքսային սակագների ամենամյա ճշգրտումների հետևանքով համապատասխանությունը ՌԴ-ի կողմից Առևտրի համաշ-

(<http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=3183>): Հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

²⁰⁴ Протокол О единой системе тарифных преференций таможенного союза от 12 декабря 2008 года. Решение Межгосударственного Совета Евразийского экономического сообщества (высшего органа таможенного союза) от 27 ноября 2009 г. №18. Решение Комиссии таможенного союза от 27 ноября 2009 года №130. Соглашение о единых правилах определения страны происхождения товаров от 25 января 2008 года. Соглашение о правилах определения происхождения товаров из развивающихся и наименее развитых стран от 12 декабря 2008 года. Портал внешнеэкономической информации Министерства экономического развития РФ, <http://www.ved.gov.ru/eng/activities/system/>

²⁰⁵ Shepotylo, Oleksandr and Tarr, David G. (2012). "Impact of WTO Accession and the Customs Union on the Bound and Applied Tariff Rates of the Russian Federation," Policy Research Working Paper 6161, World Bank, Washington D.C.: United States, p.4, 24.

²⁰⁶ ԱՄԿ-ի «UN COMTRADE DATABASE» առցանց տվյալների բազա (<http://comtrade.un.org/data/>):

²⁰⁷ Постановление правительства РФ № 778 от 7 августа 2014г. о мерах по реализации Указа Президента Российской Федерации от 6 августа 2014 г. № 560 "О применении отдельных специальных экономических мер в целях обеспечения безопасности Российской Федерации."

խարհային կազմակերպության առջև ստանձնած սակագների գծով պարտավորությունների իրականացման²⁰⁸, ինչպես նաև ԵԱՏՄ շրջանակում ինտեգրացիոն ներուժի իրացման հետևանքով երրորդ երկրներից դեպի ՅՅ ներմուծման ծավալների կրճատումը կարող է կրճատել նաև ՅՅ պետական բյուջե հավաքագրվող ԱԱՀ-ի ծավալը (ներմուծմամբ պայմանավորված), ինչպես նաև մաքսատուրքերի բաշխումից ստացվող գումարները: Յետևաբար, այս պարագայում Կառավարության առաջնահերթ խնդիրը պետք է լինի ուղղակի հարկերի ավելացման միջոցով բյուջեի հարկային եկամուտների ավելացումը (միջնաժամկետ հատվածում արտահանման ծավալների աճի միջոցով):

Տնտեսական զարգացման հիմքի բազմազանություն: Յիմքը նդուներելով ներքին պահանջարկ/ՅՆԱ հարաբերակցության նվազման միտումը 2010-2014թթ.-ին (հավելված 2, գծապատկեր 5) կարելի է եզրահանգել, որ չնայած ՅՅ տնտեսությունը դեռևս առավելապես կախված է ներքին պահանջարկից, այնուամենայնիվ, այդ ցուցանիշների փոփոխությունները փաստում են այն մասին, որ դրանց կախվածությունն արտաքին գործոններից (արտաքին պահանջարկից) զգալիորեն աճել է: Այս պարագայում ՅՅ կառավարության առաջնահերթություններից պետք է լինի ներդրումների խթանման ճանապարհով համախառն կուտակման իրական աճի տեմպերի բարձրացումը, ինչն էլ, իր հերթին, կարագացնի իրական կապիտալի պաշարի աճի տեմպերը, որն էլ կնպաստի իրական ՅՆԱ-ի աճի ավելի բարձր տեմպերի ապահովմանը: Մյուս կողմից, ՅՅ կառավարությունը կարող է այս նպատակին հասնել նաև խթանող քաղաքականության իրականացման միջոցով, սակայն, ինչպես ներկայացվել էր վերը, ՅՅ կառավարության կարողությունն իրականացնելու նման քաղաքականությունն բավականին սահմանափակ է:

Ինչ վերաբերում է տնտեսության ճկունությունը նկարագրող մեկ այլ գործոնի՝ օտարերկրյա ներդրողների կամ \$ինանսական միջոցներ տրամադրողների խմբին (տնտեսության կախվածության կամ խոցելիության աստիճանն այդ խմբից), ապա եթե դիտարկենք ՅՅ

²⁰⁸Решение Коллегии Евразийской экономической комиссии от 25.08.2014 N 14 "О перечне мероприятий по реализации основных ориентиров макроэкономической политики государств - членов Таможенного союза и Единого экономического пространства на 2014 - 2015 годы,"с.15(17).

տնտեսության իրական հատվածում կատարված պրոտֆեյլային ներդրումների ծավալները (որպես մոբիլ կապիտալի աղբյուր), ապա դրանք 2004-2014թթ.-ին (բացառությամբ 2013թ.-նը՝ պայմանավորված «Գազպրոմ Արմենիա» ընկերությունում պետության բաժնեմասի վաճառքով) բավականին փոքր էին²⁰⁹, ինչը նշանակում է, որ Կառավարությունը չպետք է խստացնի ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը:

Թեպետ ՅՅ տնտեսության կախվածությունն արտաքին պահանջարկից այդքան էլ մեծ չէ, քանի որ 2014թ.-ին ապրանքների և ծառայությունների արտահանումը կազմել է ՀՆԱ-ի 28.5%-ը²¹⁰, այնուամենայնիվ, ապրանքների արտահանումն ապրանքատեսակների և շուկաների առումով այդքան էլ դիվերսիֆիկացված չէ, ինչ էլ խոցելի է դարձնում ՅՅ տնտեսության իրական հատվածն այլ երկրներում տնտեսական աճի տեմպերի տատանումների նկատմամբ: Այս պարագայում Կառավարության առաջնահերթությունը պետք է լինի շուկաների և ապրանքների ավելի լայն դիվերսիֆիկացիայի ապահովումը՝ տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման նպատակով «արդյունավետություն փնտրող» օտարերկրյա ներդրումների ներգրավման ճանապարհով:

Այսպիսով, ՅՅ կառավարության առաջնահերթություններից պետք է լինի երկրի տնտեսության ճկունության աստիճանի բարձրացումը, ինչն էլ հնարավորություն կտա արտահանման ծավալների աճին և ներդրումների ներգրավմանը գույճընթաց նվազեցնել մակրոտնտեսական խոցելիության աստիճանը և անհրաժեշտության դեպքում իրականացնել խթանող (ընդլայնող) քաղաքականություն:

3.3 ԵԱՏՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԶՅ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԶՆԱՐԱԿՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունը ՅՅ տնտեսության համար ստեղծում է ինչպես հնարավորություններ,

²⁰⁹ ՅՅ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» առցանց տվյալների բազա առ. 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>):

²¹⁰ ՅՅ Ֆինանսների նախարարության մակրոտնտեսական ցուցանիշների «ՅՅ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (եռամսյակային)» տվյալների բազա (ըստ «ԱՅՅ 2008»-ի), <http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>:

այնպես էլ որոշակի դժվարություններ: ՀՀ արտահանման ծավալների աճը դեպի ՌԴ և ԵԱՏՄ, ինչպես նաև անդամ-պետությունների միջև ինտեգրացիոն գործընթացներին մասնակցությունը կնպաստի ՀՀ տնտեսական աճին, ազգային մրցունակության բարձրացմանը և երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Միաժամանակ, կմեծանա ՀՀ տնտեսության խոցելիության աստիճանը ՌԴ բնակչության եկամուտների ծավալների և ԱՄՆ դոլարի նկատմամբ ՌԴ ռուբլու փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված:

2014թ.-ին Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (ԵՏՀ) կազմել էր ինտեգրացիոն միավորումների ինտեգրացիոն ներուժի իրացման մատրիցան և հանդես էր եկել անդամ երկրների հետ կապված միջարք առաջարկություններով²¹¹: ԵՏՀ-ն առաջարկել էր 7 ինտեգրացիոն փոխգործակցության սխեմաներ տնտեսության միջարք ճյուղերի գծով: ՀՀ-ի համար հատկապես կարևորվում է տնտեսության հետևյալ ճյուղերի զարգացումը.

- ճյուղեր, որոնք ինտեգրացիոն միավորման բոլոր երկրների համար հետաքրքրություն են առաջացնում՝ գյուղատնտեսություն, սննդի և թեթև արդյունաբերություն, մեքենաշինություն, ավտոմեքենաների արտադրություն,

- Միմյանց փոխլրացնող ազգային տնտեսության ճյուղեր՝ քիմիական, նավթաքիմիական, ատոմային էներգիայի արտադրություն,

- Ոլորտների համատեղ զարգացում՝ ինտեգրացիոն միավորման մրցակցային առավելությունների օգտագործմամբ: Մասնավորապես, աշխատուժի բարձր որակը և վարձատրության համեմատաբար ցածր մակարդակը կարող է նպաստել տնտեսության ճյուղերի համատեղ զարգացմանը:

- Ներմուծմանը փոխարինող ոլորտներ՝ ավիացիայի արդյունաբերությունը, ծանր մեքենաարդյունաբերությունը, մսամթերքի և կաթնամթերքի արտադրությունը, դեղագործական արդյունաբերությունը և շինանյութերի արտադրությունը:

ԵՏՀ-ի կոլեգիայի 01.09.2015թ. N87 հրահանգով հավանության էր արժանացել ԵՏՀ խորհրդի հանձնարարականի նախագիծը

²¹¹ ЕЭК, “Анализ стратегий интеграционного сотрудничества (моделей реализации интеграционного потенциала) наиболее известных интеграционных объединений мира.” 2014г. Евразийская экономическая комиссия. Москва. с. 25-26.

«Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների իրացման գծով 2015-2016թթ. միջոցառումների ցանկի վերաբերյալ» և ներկայացվել է ԵՏՀ խորհրդին այն դիտարկելու համար²¹²: Միջոցառումների ցանկը հաստատվեց 2015թ. հոկտեմբերի 14-ին Չանձնաժողովի խորհրդի կողմից ք. Աստանայում²¹³: Չիմնական միջոցառումների ցանկի երկրորդ բաժնի («Կայուն զարգացման համար պայմանների ստեղծում և տնտեսական աճի վերականգնում») առաջին ուղղության` «Տնտեսության դիվերսիֆիկացիա (նաև Միության ինտեգրացիոն ներուժի իրացման հիման վրա)» շրջանակներում նորարական գործունեության խթանման նպատակով նախատեսվում է Միության ինտեգրացիոն ներուժի առաջնային ուղղությունների ընտրության, արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների մշակման և համաձայնեցման աշխատանքների իրականացում: Վերջինիս շրջանակներում նախատեսվում է մշակել Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ստեղծման և գործունեության կարգը, ինչպես նաև նախանշել դրանց ֆինանսավորման հիմնական ուղղությունները: Նախատեսվում է նաև գիտահետազոտական և փորձարարական ստորակտրական համատեղ աշխատանքների իրականացման մեխանիզմների մշակում` բարձր տեխնոլոգիական արտադրությունների զարգացման խթանման նպատակով: Նախապատրաստվելու և համաձայնեցվելու են անդամ-երկրների ագրոարդյունաբերական ոլորտներում իրականացվելիք գիտահետազոտական աշխատանքների ցանկը մինչև 2020թ.-նը, ինչը կնպաստի տնտեսական համագործակցության ակտիվացմանը և նոր տեխնոլոգիաների զարգացմանը: Վարկային ռեսուրսների մատչելիության աստիճանի բարձրացման և ֆինանսական միջոցների աղբյուրների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է տարածաշրջանային զարգացման կառույցների (Կայունացման և զարգացման Եվրասիական ֆոնդ, Եվրասիական զարգացման բանկ) ֆինանսական ռեսուրսներից օգտվելու բարենպաստ պայմանների ստեղծում: ԵՏՀ-ի կողմից նախատեսվում է պատրաստել առաջարկներ այդ երկու

²¹² Распоряжение 87 от 01.09.2015 Коллегии Евразийской экономической комиссии: Եվրասիական տնտեսական միության կայք, https://docs.eaeunion.org/sites/storage1/Lists/Documents/b58ae2ac-d9c9-4d55-92f6-cbe321078f06/53e14e55-064d-44fa-a42d-b36b4c937b8e_Распоряжение Коллегии № 87 от 1 сентября 2015 г.pdf:

²¹³ «Центр экспертизы по вопросам ВТО»-ի կայք, <http://www.wto.ru/2015/10/16/совет-еэк-утвердил-мероприятия-po-peal/>:

կառույցների ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հնարավոր ուղղությունների վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա ապահովել խոշոր ազգային և ինտեգրացիոն ներդրումային նախագծերի ֆինանսավորումը:

Թեպետ ՅՅ տնտեսության զարգացման ներկա փուլում կաթնամթերքի և մսամթերքի արտադրությունը չի ընտրվել որպես ԵԱՏՄ-ի շրջանակում անդամ երկրների միջև համագործակցության արդյունավետ ոլորտ, սակայն հաշվի առնելով «Եվրասիական տնտեսական միություն անդամ-երկրների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների իրացման գծով 2015-2016թթ. միջոցառումների ցանկի» երկրորդ բաժնի առաջին ուղղության, ինչպես նաև վերը նշված 4 ինտեգրացիոն փոխգործակցության սխեմաները այս երկու ոլորտները կարող են միջնաժամկետ հատվածում հանդես գալ որպես ինտեգրացիոն ներուժի օգտագործման առաջնային ուղղություններ (ներմուծման փոխարինման տեսանկյունից): Այստեղ առաջնային պետք է լինի այս երկու ոլորտների արտադրական հզորությունների ավելացումը 2016-2018թթ.-ին՝ 2019թ.-ից սկսած հատկապես ՌԴ արտահանման ծավալների ավելացման նպատակով: Այս գործընթացի վրա դրական ազդեցություն կգործի նաև ՌԴ-ի նկատմամբ ԵՄ և այլ երկրների կողմից 2014թ.-ից կիրառվող պատժամիջոցների դեռ երկար շարունակվելը²¹⁴: Հաշվի առնելով ինտեգրացիոն ներուժի զարգացման հեռանկարները և սխեմաները ՅՅ կառավարությունը կարող է որդեգրել դիվերսիֆիկացված տարածաշրջանային զարգացման քաղաքականություն (ըստ գոտիների՝ Յյուսիսային կամ Լեռնային գոտի, Արարայան դաշտավայրի գոտի, հարավային գոտի, Երևանի գոտի)՝ համաձայն որի մարզերը (որոնք իրենց հերթին կարող են աշխարհագրական տեղանքից ելնելով գտնվել 2 գոտում, օրինակ՝ Կոտայքի և Արագածոտն մարզերի հյուսիսային շրջանները այս մոտեցմամբ կդասակարգվեն որպես Յյուսիսային կամ Լեռնային գոտում մեջ ներառված շրջաններ) իրենց աշխարհագրական դիրքից ելնելով և կենտրոնանան մի քանի արտադրանքների արտադրության վրա՝ քլաստերների զարգացման հիման վրա:

²¹⁴«РИА НОВОСТИ» համացանցային հրատարակություն կայք էջ, <http://ria.ru/politics/20150909/1239491090.html>:

Որպես զարգացման ընդհանուր ոլորտ (որը կարող է զարգանալ բոլոր գոտիներում, հատկապես քաղաքային բնակավայրերում) կարող է հանդես գալ թեթև արդյունաբերությունը, իսկ տնտեսության մնացած ճյուղերի զարգացումը կբխի ինտեգրացիոն տարբեր գործընթացների ուղղվածություններից: Ըստ ԵԱՏՄ արդյունաբերության և ագրոարդյունաբերության նախարար Ս. Սիդորսկիի 2015թ.-ի հունիսի 21-ին Երևանում արված հայտարարության, շինանյութերի արտադրության, գյուղատնտեսության, ՏՏ ոլորտների հետ մեկտեղ թեթև արդյունաբերության ոլորտը ԵԱՏՄ շրջանակում դիտարկվում է որպես ԶՅ-ի հետարդյունավետ համագործակցության ոլորտ²¹⁵, իսկ ապրիլի 14-ին Եվրասիական տնտեսական հանձնաժողովը հավանության էր արժանացրել ԵԱՏՄ անդամ երկրների թեթև արդյունաբերության ոլորտի զարգացման միջոցառումների 2015-2016թթ. ծրագիրը, համաձայն որի նախատեսվում է ոլորտի հումքապահովման համար որոշակի պայմանների ստեղծում, արտադրական հզորությունների բեռնման արդյունավետության բարձրացում (հաշվի առնելով ընդհանուր շուկայի տարողությունը), ԵԱՏՄ շրջանակներում ոլորտի զարգացման միջնաժամկետ երկարաժամկետ կողմնորոշիչների սահմանում՝ հաշվի առնելով անդամ երկրների շահերը²¹⁶: Նշենք նաև, որ Իսրայելի, Հարավային Կորեայի և Թայվանի արդյունաբերական զարգացումը²¹⁷ մեկնարկել է այս ոլորտի զարգացմամբ, իսկ արդեն 21-րդ դարում այդ երկրները համարվում են բարձր տեխնոլոգիաների և նորարարությունների կենտրոններ: Թեպետ, ԶՅ-ում առկա է բավականին զարգացած ՏՏ ոլորտ, որի շարունակական զարգացումը մեծապես կարևորվում է ԶՅ-ի համար, սակայն ԶՅ տնտեսության զարգացման այս փուլում առաջնայնությունն պետք է տալ նաև ոչ բարձր տեխնոլոգիական ոլորտների զարգացմանը, հատկապես մարզերում, և դրան զուգահեռ հիմքեր ստեղծել երկարաժամկետ հատվածում մի շարք բարձր տեխնոլոգիական ոլորտների զարգացման համար:

Այժմ փորձ ենք ներկայացնել ԶՅ տարածաշրջանային դիվերսիֆիկացված զարգացման հիմնական հնարավորությունները:

²¹⁵ «ԹԵՐԹԵՅ ԷՄ» ՍՊԸ-ի կայք, <http://www.tert.am/am/news/2015/07/21/sergey-sidoroski/1740334>:

²¹⁶ ԵՏՅ-ի կայք, <http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/15-04-2015-4.aspx>:

²¹⁷ Levi-Faur, David (1998). "The Developmental State: Israel, South Korea, and Taiwan Compared," *Studies in Comparative International Development*, Springer-Verlag, Berlin/Heidelberg, Germany, Vol. 33, no. 1, pp.65-93.

Հյուսիսային կամ Լեռնային գոտիներում (Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Կոտայք, Արագածոտն) նպատակահարմար կլինի զարգացնել կաթնամթերքի, հատկապես պանրի, թարմ մսի և մսամթերքի, հավկիթի արտադրությունը, ինչպես նաև ձկնաբուծությունը (հատկապես Գեղարքունիքի մարզում, անասնապահական ֆերմաների զարգացմանը զուգընթաց): Այստեղ առաջնայինը պետք է լինի մեծ արտադրական հզորություններով տարբեր տեսակի կենդանական և թռչնաբուծական ֆերմաների, առնվազն 2-3 գործարանների (մսամթերքի, կաթնամթերքի և պանրի արտադրության համար) և արտադրանքի մեծ ծավալներ ապահովող ձկնաբուծարանի հիմնումը, ինչը մասշտաբի էֆեկտի շնորհիվ հնարավորություն կտա ապահովել շահութաբերության ցանկալի մակարդակ, եթե նույնիսկ նավթի գները միջնաժամկետ հատվածում տատանվեն 30-40 դոլարի սահմաններում: Տեղական ֆերմաները կարող են նաև հանդիսանալ հումքի աղբյուրներ երևանում գտնվող մսամթերք արտադրող գործարանների համար (մասշտաբի էֆեկտի շնորհիվ կարող են վազել հումքի գինը, ինչը նաև կնպաստի այդ ընկերությունների կողմից թողարկվող արտադրանքի արտահանման ծավալների աճին (հատկապես դեպի ՌԴ): Խոշոր ֆերմաների և գործարանների հիմնման համար ՀՀ կառավարությունը կարող է ֆինանսական միջոցներ ներգրավել Կայունացման և զարգացման Եվրասիական ֆոնդից կամ Եվրասիական զարգացման բանկից (բավականին արդյունավետ կլինի պետությունում անսովոր հատված համագործակցության տարբերակը): Հատկապես օտարերկրյա ներդրողների կողմից նոր հիմնվող ձեռնարկություններում Կառավարության մասնաբաժնի առկայությունը կարող է լրացուցիչ երաշխիքներ ապահովել բիզնեսի հաջող զարգացման համար: ՀՀ կառավարությունը նման համագործակցության շրջանակներում կարող է օտարերկրյա ներդրողներ ներգրավել ինչպես ԵՄ երկրից, այնպես էլ ԵԱՏՄ անդամ երկրներից և Չինաստանից:

ԵԱՏՄ-ին անդամակցությունը նոր հնարավորություններ և բարենպաստ պայմաններ է ստեղծում Եվրասիական զարգացման բանկի հետ ՀՀ կառավարության համագործակցության համար, քանի որ այդ բանկը շահագրգռված է ենթակառուցվածքների, էներգետիկայի, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության և այլ ոլորտների

զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմամբ²¹⁸։ Գյուղատնտեսության ոլորտի զարգացման նպատակով 2015թ.-ի հունիսին ՀՀ կառավարությունը վարկային համաձայնագիր է ստորագրել Կայունացման և զարգացման Եվրասիական ֆոնդի հետ, որից ստացված միջոցները կուղղվեն «Ոռոգման համակարգերի արդիականացման» ծրագրի ֆինանսավորմանը, որի արժեքը կազմելու է 50 մլն ԱՄՆ դոլար։ 40 մլն ԱՄՆ դոլարը կտրամադրվի արտոնյալ պայմաններով, իսկ 10 մլն ԱՄՆ դոլարը լինելու է ՀՀ կառավարության համաֆինանսավորումը, միաժամանակ, դրամաշնորհի բաղադրիչը կազմելու է ավելի քան 30%։ Ծրագրի իրագործումը կտևի 5 տարի և հնարավորության կտա ավելացնել ոռոգվող տարածքների մակերեսը (10,433 հա-ով) և նվազեցնել համակարգի շահագործման հետ կապված էլեկտրաէներգիայի ծախսերը տարեկան մոտ 2 մլն ԱՄՆ դոլարով²¹⁹։ Մյուս կողմից, Իրանի նկատմամբ սահմանված պատժամիջոցների վերացումը միանգամայն նոր հնարավորություններ կստեղծեն «Հյուսիս-Հարավ» մայրուղու շինարարության, Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման, Վրաստան-Ռուսաստան երկաթգծի վերագործարկման համար։ Վերջինս էլ կնպաստի տարածաշրջանային և համաշխարհային նշանակություն ունեցող հաղորդակցման հանգույցի, ԵԱՏՄ անդամ-երկրների և Պարսից ծոցի, Հարավային և Հարավ-արևելյան Ասիայի երկրների միջև հուսալի տրանսպորտային կապի ստեղծմանը։ Սակայն, այս ամենը կպահանջի երկարատև լուրջ ջանքերի ներդրում²²⁰։

Հարավային գոտի (Սյունիք, Վայոց Ձոր)։ Հաշվի առնելով վերը ներկայացված «տարածաշրջանային և համաշխարհային նշանակություն ունեցող հաղորդակցման հանգույցի», ինչպես նաև «Ոլորտների համատեղ զարգացում՝ ինտեգրացիոն միավորման մրցակցային առավելությունների օգտագործմամբ» ինտեգրացիոն փոխգործակցության սխեման, ՀՀ-ն կարող է միջին և բարձր տեխնոլոգիական ոլորտների ապրանքների (ճշգրիտ ճարտարագիտության, մեքենաշինության և սարքավորումների ոլորտը ներկայացնող

²¹⁸ «Ազատություն» նախնական կայք, <http://rus.azatutyun.am/archive/New/20150415/3282/3282.html?id=26957294>։
²¹⁹ Կայունացման և զարգացման Եվրասիական ֆոնդի կայք, http://efsd.eabr.org/r/Info-center/acf_news_page/acf_news_archive/index.php?id_4=48849։ Եվրասիական զարգացման բանկի կայք, http://www.eabr.org/r/press_center/press_releases/index.php?id_4=48824&start_4=01.01.1970&end_4=19.09.2015&from_4=2։
²²⁰ Կայունացման և զարգացման Եվրասիական ֆոնդի կայք, http://efsd.eabr.org/r/Info-center/acf_news_page/acf_news_archive/index.php?id_4=48849։

ապրանքներ) արտադրության ոլորտում ունենալ իր որոշակի դերը՝ հիմնելով ապրանքների պատրաստի մասերի հավաքման գործարաններ կամ կազմակերպելով որոշակի մասերի արտադրություն և հավաքում: ՀՀ-ում հավաքվող ապրանքները կամ արտադրվող մասերը հիմնականում կսպառվեն Միջին արևելքի և Հարավային Ասիայի երկրներում, որոնք ՀՀ-ից դեպի այդ երկրներ կարտահանվեն իրանի տարածքով: Իրանի նկատմամբ սահմանված պատժամիջոցների վերացումը և այդ երկրի ազգաբնակչության եկամուտների ավելացումը կմեծացնեն ՀՀ-ից դեպի իրան արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկը:

Արարատյան դաշտավայրի գոտում (Արարատ, Արտաշատ, Կոտայք, Արագածոտն, Վայոց Ձոր) անհրաժեշտ կլինի ավելացնել գյուղատնտեսական բերքի ծավալը՝ հակակարկտային կայանների և ջերմոցային տնտեսությունների հիմնման, ինչպես նաև խոշոր ջերմոցների քանակի ավելացման ճանապարհով (մասշտաբի էֆեկտի հասնելու նպատակով): Այս գործընթացներին զուգահեռ անհրաժեշտ կլինի ավելացնել նաև մրգի և բանջարաբուստանային մթերքների վերամշակման ծավալները՝ ավելի մեծ արտադրական հզորությամբ ունեցող նոր գործարանների կառուցման, առկա գործարանների վերազինման և արտադրական տարածքների ավելացման ճանապարհով: Իսկ մասշտաբի էֆեկտը և արդյունավետության բարձրացումը կնպաստեն արտադրանքի ինքնարժեքի նվազեցմանը, ինչը հնարավորություն կտա գնային առումով մրցունակ լինել հատկապես ՌԴ շուկայում (ռուբլով առևտուր իրականացնելու դեպքում): Այս պարագայում Եվրասիական զարգացման բանկը կարող է հանդես գալ որպես ֆինանսավորման հիմնական աղբյուր:

Երևանի գոտի: Թեպետ դեռ մշակված չէ Եվրասիական տեխնոլոգիական հարթակների ստեղծման և գործունեության կարգը, ներառյալ՝ ֆինանսավորման կարգը), սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ՏՏ ոլորտը ընտրվել էր որպես ԵԱՏՄ անդամ երկրների հետ համագործակցության արդյունավետ ոլորտ, Երևանում կարելի է հիմնել ՏՏ ոլորտը ներկայացնող այդպիսի հարթակ Երևանի մաթեմատիկական մեքենաների ինստիտուտի կամ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տարածքներում: Այս գործընթացը կնախանջի ԵԱՏՄ մակարդակով ՏՏ ոլորտի երկարաժամկետ զարգացման հիմնական ուղղությունները, որոնց

համապատասխան կմշակվեն և կիրառործվեն որոշակի ծրագրեր²²¹: Թեպետ արդեն մի քանի տարի է, որ ՀՀ գիտության պետական կոմիտեն ՌԴ և ԲԵԼ առուսի համապատասխան կառույցների հետ համատեղ ֆինանսավորում է գիտահետազոտական հայտեր 1-2 տարի ժամկետով, սակայն այն ավելի շատ ամրապնդում է երկկողմ համագործակցությունը: ԵԱՏՄ անդամ-երկրների գիտնականների կողմից բարձր տեխնոլոգիական ոլորտներին առնչվող համատեղ գիտական նախագծերի մշակումը և դրանց արդյունքների օգտագործումը կարող է զգալիորեն նպաստել ԵԱՏՄ անդամ-երկրների ՏՏ և այլ ոլորտների զարգացմանը:

ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն ներուժի իրացման, ինչպես նաև արդյունավետության ամբ պայմանավորված տնտեսական զարգացման փուլում «արդյունավետությունն փնտրող» ներդրողների ներգրավման նպատակով ՀՀ կառավարության առաջնահերթություններից մեկը պետք է լինի աշխատուժի արդյունավետ օգտագործումը՝ հիմնականում ակտիվ զբաղվածության ծրագրերի իրագործման միջոցով (աշխատուժի նկատմամբ պահանջարկի ավելացման և կլաստերների զարգացման միջոցառումների իրականացման պայմաններում):

Բացի երևանից, ՀՀ մարզերում հիմնականում կզարգանան աշխատատար ոլորտները, ինչը նշանակում է, որ ՀՆԱ-ի աճի համեմատաբար ոչ բարձր տեմպերի դեպքում կարելի է բարձրացնել ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականությունը: Վերջինս էլ իր հերթին կնպաստի ՀՆԱ-ի իրական աճի տեմպին միջնաժամկետ հատվածում: Այս պայմաններում կբարձրանան ևս զբաղվածների արտադրողականությունը, ինչը չի ուղեկցվի աշխատողների թվաքանակի կրճատմամբ: Այս զարգացումները ՀՀ մարզերում կլուծեն սոցիալ-տնտեսական բնույթի մի շարք խնդիրներ:

ԵԱՏՄ անդամակցության և արդյունավետության ամբ պայմանավորված տնտեսական զարգացման արդի փուլում տնտեսական զարգացման հիմքի բազմազանությունն ապահովելու տեսանկյունից երկրի տնտեսության իրական հատվածի զարգացման հեռանկարների

²²¹ ՌԴ տնտեսական զարգացման նախարարության կայք էջում (http://economy.gov.ru/minec/activity/sections/innovations/formation/doc20101004_02) ներկայացված են ՌԴ-ում գործունեություն սկզբունքները:

համատեքստում ՀՀ կառավարության առաջնահերթությունները միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում կարող են լինել .

Կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում առավելապես պետք է օգտվել ԵԱՏՄ-ի շրջանակներում ինտեգրացիոն ներուժի իրացման առավելություններից, որոնք հնարավորություն կտան զարգացնել ցածր և միջին տեխնոլոգիական, աշխատատար ոլորտները, ինչը կլուծի սոցիալական մի շարք խնդիրներ և կավելացնի հավաքագրվող ուղղակի հարկերի ծավալները: Այս մոտեցումը ՀՀ կառավարությանը հնարավորություն կտա անհրաժեշտության դեպքում իրականացնել արդյունավետ տնտեսական քաղաքականություն և խթանել համախառն պահանջարկը: Նշված ոլորտների զարգացումը կարող է տեղի ունենալ ԵՄ-երկրներից ՕՈՒՆ-ների ներգրավման (պատժամիջոցների պատճառով արտադրանքը ՀՀ-ում արտադրելու և ՌԴ արտահանելու համար) կամ էլ Եվրասիական զարգացման բանկի վարկային միջոցների օգտագործման միջոցով (կառավարություն-մասնավոր հատված համագործակցության շնորհիվ) և այլն:

Ինտեգրացիոն ներուժի իրացման, ներդրումների ներգրավման և արտահանման ծավալների ավելացման, ինչպես նաև վերոնշյալ նպատակներին հասնելու տեսանկյունից ՀՀ կառավարությունը պետք է իրականացնի մի շարք միջոցառումներ, որոնցից կարող են լինել .

1. Բիզնես կրթության որակի բարձրացում, որը առավելագույնս կբավարարի ընկերությունների պահանջներին:

2. ՀՀ ընկերություններին որոշակի հարցերով անհրաժեշտ օժանդակության ցուցաբերում: Թեպետ ՀՀ կառավարությունը 2013թ-ից սկսած ամենամյա «Պետական աջակցություն ՀՀ արտահանման ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման» և «Վերապատրաստման դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորման» ծրագրերի շրջանակում իրականացնում է մասնագետների վերապատրաստում (2014թ.-ին ավելի քան 70 մասնագետ)²²², սակայն տրամադրվող պետական աջակցությունը վերաբերում է միայն մշակող արդյունաբերության բոլոր ոլորտների արտահանող կազ-

²²²ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N119-Ն որոշման հավելված 1, էջ 3:

մակերարդություններին: Արդյունաբերական քաղաքականության օբյեկտներին կարող է ցուցաբերվել խորհրդատվական աջակցություն (որոշ դեպքերում ծախսերի մասնակի կամ ամբողջական փոխհատուցում), ինչպես նաև կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման հարցերով աջակցություն²²³:

3. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացում, ինչը կապահովի վերջիններին կիրարկման արդյունավետության բարձրացումը: Անհրաժեշտ է արագ և արդյունավետ կերպով իրականացնել «Հայաստանի հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» կետ 134-ում նշված միջոցառումները²²⁴, քանի որ վերջիններս կուժեղացնեն մրցակցությունը տնտեսության բոլոր ոլորտներում, ինչ էլ կհանգեցնի նրան, որ ընկերությունները գործառնական արդյունավետության ապահովման նպատակով կսկսեն ներդրումներ իրականացնել:

4. Հարկային որոշակի արտոնությունների տրամադրում՝ ըստ գործունեության ոլորտի և տարածաշրջանի, որոնք կարող են խթանել ներդրումային գործունեությունը: Թեպետ, առաջին փորձերն են կատարվել 2014թ.-ին, երբ ՀՀ ԱԺ-ն նոյեմբերի 20-ին ընդունեց «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրակա-նացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքը, իսկ դեկտեմբերի 17-ին՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը: Սակայն առավել տարբերակված մոտեցումը կարող է նպաստել ինչպես թիրախային համարվող ոլորտներում, այնպես էլ տարածաշրջաններում օտարերկրյա և ներքին ներդրումների աճին: Հարկային արտոնու-թյուններ կարող են տրամադրվել նաև տարբեր տարածաշրջաններին (ինչպես նաև տարանջատված՝ ըստ քաղաքային կամ գյուղական բնակավայրի)՝ ելնելով գործազրկության մակարդակի ցուցանիշներից և ըստ գործունեության տեսակների (հատկապես ցածր և միջին տեխնո-

²²³ ՀՀ օրենքը «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՕ-184-Ն, ՀՀՊՏ 2014.12.19/70(1083), հոդված 25-26: Համաձայն օրենքի:

²²⁴ ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման հավելված:

լ ոգիական աշխատատար ոլորտներում, որոնք կուսենան նաև արտահանման ուղղվածությամբ): Թեթև արդյունաբերական զարգացման նպատակով Վանաձորում, Գյումրիում (կամ այլ քաղաքում) կարող են հիմնվել արդյունաբերական հատուկ գոտիներ (որոնց կարող է տրվել նաև ազատ տնտեսական գոտու կարգավիճակ), որտեղ ընկերությունները կարող են օգտվել միջարժեք հարկային արտոնություններից:

5. ՀՀ-ում որակյալ մասնագետների պահպանումը («ուղեղների արտահոսքի» կանխարգելումը) և ՀՀ դրանց ներգրավումը: Այս խնդրի լուծումներից մեկը կարող է լինել հետևյալ մեխանիզմը: «ԼՈՂԱ» հիմնադրամը, թեև չի պարտադրում իր կրթաթոշակակիրներին վերադառնալ և աշխատել ՀՀ-ում, սակայն ծրագրին մասնակցելու պարտավորություն կարող է հանդիսանալ սերտ համագործակցությունն ինչպես ՀՀ գիտահետազոտական հաստատության, այնպես էլ ՀՀ մասնավոր ձեռնարկության հետ (մասնագիտություններից կախված)՝ ավարտելուց հետո առնվազն 3 տարիների ընթացքում: Մի ընկերությանը կարող են կցված լինել տարբեր մասնագիտություններ ունեցող շրջանավարտներ, որոնք ամբողջ տարվա ընթացքում առցանց հաղորդակցման եղանակով կարող են խորհրդատվություն տրամադրել, իսկ արձակուրդների ժամանակ ՀՀ-ում գտնվելիս կազմակերպել նաև դասընթացներ, և ավելի այն ներգրավվածություն ունենալ ՀՀ ընկերության բիզնես գործընթացներում: Այս մոտեցումը կարող է բարձրացնել նաև կառավարման որակը, ինչպես նաև որոշակիորեն լուծել մասնագիտացված դասընթացների հարցը: Թեպետ «Հայ կամավորների կորպուս» ՀԿ-ն էլ է ՀՀ ներգրավում առնվազն 5 տարվա փորձ ունեցող մասնագետների (որոնց տարիքը 32-ից բարձր է), որոնք նաև աշխատում են տեղական ընկերություններում²²⁵, սակայն «ԼՈՂԱ» հիմնադրամի շրջանավարտները իրենց կրթությունը ստանում են աշխարհի լավագույն ԲՈՒՀ-երում, և վերջիններիս քանակը տարեց տարի ավելանում է: Այս շրջանավարտները նաև կարող են որպես կապող օղակ հանդիսանալ՝ ընկերությունների համար արտապատվիրման պայմանագրեր սպասարկելու, նոր շուկա մուտք գործելու, ինչպես նաև օտարերկրյան ներդրողներ ներգրավելու տեսանկյունից:

²²⁵«Հայ կամավորների կորպուս» ՀԿ-ի կայք, <http://www.armenianvolunteer.org/index.php/programs/professional-corps>:

6. Արտահանման ծավալների ավելացման խթանումը: Թեպետ ՅՅ կառավարությունը 2013թ.-ից սկսած իրականացնում է «ՅՅ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության» ամենամյա ծրագրերը, այնուամենայնիվ, 2013-2014թթ. արտահանման ծավալների փոփոխությունը փաստում է այն մասին, որ ավելի ինտեգրված և նպատակաուղղված միջոցառումների համալիր պետք է իրականացնել (ոչ միայն արտահանման խթանման ուղղությամբ), որն հնարավոր է միայն երկրի բրենդինգի (nation branding) հստակ ռազմավարության իրականացման միջոցով, որը երկրին կհաղորդի նաև լրացուցիչ մրցակցային առավելություններ: Այս պարագայում Յայաստանի զարգացման հիմնադրամի առաջնայնությունը պետք է լինի երկրի բրենդինգը, քանի որ 2015թ.-ին ՅՅ-ն դարձել է ԵԱՏՄ անդամ, որն ընկալումների ճշգրտման անհրաժեշտություն է առաջացնում հատկապես օտարերկրյա ներդրողների մոտ՝ ՕՈՒՆ-ների ներգրավման տեսանկյունից (հատկապես «արդյունավետություն փնտրող», դուստր ձեռնարկությունների կամ մասնաճյուղերի բացման ճանապարհով գլխամասային գրասենյակների արտապատվիրված աշխատանքները իրականացնելու նպատակով ընկերություններ): Եթե ՅՅ-ն ցանկանում է իրեն դիրքավորել որպես «հարթակ դեպի Եվրասիական մայրցամաք» (հաշվի առնելով ԵԱՏՄ-ին անդամակցությունը և Իրանի գործոնը՝ ակնկալվող ԵԱՏՄ-ի հետագա առևտրի պայմանագիր, երկաթուղու, ՅՅ-ում նավթավերամշակող ձեռնարկության հնարավոր կառուցումը և այլն, ինչպես նաև ԵՄ-ի հետարտոնյալ ռեժիմը)²²⁶, ապա ՅՅ-ն կարող է ներգրավել ներդրողներ ինչպես ՌԴ-ից և Չինաստանից, այնպես էլ ԵՄ և այլ զարգացած երկրներից: Վերջիններս կարող են ՅՅ տարածքում արտադրված ապրանքը վաճառել ինչպես ԵԱՏՄ հիմնական անդամ երկիր ՌԴ-ում (հաշվի առնելով 2014թ.-ի հուլիսից ՌԴ-ի կողմից կիրառվող պատժամիջոցները²²⁷ միջարք պարենային ապրանքների նկատմամբ), այնպես էլ Իրանում և այլ երկրներում: ՅՅ-ն նաև կարող է իրեն փորձել դիրքավորել որպես զարգացած երկրներում սփյուռքահայ գործարարների արտապատվիրման կենտրոն (ցածր

²²⁶ «ԹԵՐԹԵՅ ԷՄ» ՍՊԸ-ի կայք, <http://www.tert.am/am/news/2015/07/06/nransian/1726307>:

²²⁷ Постановление правительства РФ № 778 от 7 августа 2014г. о мерах по реализации Указа Президента Российской Федерации от 6 августа 2014г. № 560 "О применении отдельных специальных экономических мер в целях обеспечения безопасности Российской Федерации".

և միջին մակարդակի տեխնոլոգիական ընկերությունների ոլորտում՝ հատկապես թեթև արդյունաբերության և այլ ոլորտներում), որոնք կարտահանվեն ոչ միայն զարգացած երկրներ, այլ նաև Իրան և Միջին արևելքի և ասիական այլ երկրներ (բրենդային հագուստի, կաշվե իրերի արտադրության կամ թանկարժեք զարդերի պատրաստման պարագայում): Իսկ ներդրումների և արտահանման ծավալների աճը կախված է լինելու ռազմավարության հաջողությունից: Հասկանալի է, որ երկրի բրենդինգի գործընթացն ինքնին պահանջում է երկարաժամկետ ռազմավարության մշակում և իրագործում: Ըստ ոլորտի հայտնի մասնագետ Ս. Անհոլթի երկրի բրենդի կառավարումը պետք է համարվի երկրի ընդհանուր քաղաքականության բաղադրիչ մաս²²⁸:

Երկրի բրենդինգը կարևոր է նրանով, որ այն հետաախդում է երեք նպատակ՝ զբոսաշրջիկների ավելի մեծ թվաքանակի ներգրավումը, օտարերկրյա ներդրումների ներգրավումը և արտահանման ծավալների աճը (լրացուցիչ նպատակներից է օտարերկրյա ուսանողների և բարձրակարգ մասնագետների ներգրավումը): Իսկ գլոբալիզացիայի պայմաններում դրական իմիջը կարող է կարևոր մրցակցային առավելություն հանդիսանալ և նպաստել երկրի վերաբերյալ ոչ ճիշտ ընկալումների վերացմանը (վերադիրքավորել և թիրախային խմբերի մոտավելի դրական լույսի ներքո իրեն ներկայացնել)²²⁹:

Երկրի բրենդինգի ռազմավարության մշակման գործընթացը²³⁰ պետք է սկսել ներքին և արտաքին ռազմավարական վերլուծությունից՝ երկրի բրենդի առկա մրցակցային դիրքը գնահատելու համար: Ներքին վերլուծության ժամանակ Հայաստանի զարգացման հիմնադրամը պետք է փորձի ինքնուրույն կամ փորձագետների օգնությամբ գնահատել երկրի կարողությունը (capabilities) տարբեր ոլորտներին կտրվածքով, որոնցով մրցակցում է այլ երկրների հետ (եթե այդպիսի գնահատական դեռ չկա): Քանի որ ՀՀ կարևորագույն նպատակներից է «արդյունավետություն փնտրող» ներդրումների ներգրավումը, ապա առաջնային հիմնական հաջո-

²²⁸ Dinnie, Keith (2008). *Nation Branding: Concepts, Issues, Practice*, Butterworth-Heinemann, Elsevier, Oxford, United Kingdom, p.23:

²²⁹ Dinnie, Keith (2008). *Nation Branding: Concepts, Issues, Practice*, Butterworth-Heinemann, Elsevier, Oxford, United Kingdom, pp.17-18:

²³⁰ Երկրի բրենդինգի ռազմավարական տարրերի համար անհրաժեշտ միջոցառումների նկարագրի համար հիմք է հանդիսացել հետևյալ աղբյուրը՝ Dinnie, Keith (2008). *Nation Branding: Concepts, Issues, Practice*, Butterworth-Heinemann, Elsevier, Oxford, United Kingdom, pp. 220-230, որն ներկայացվում է հեղինակի մոտեցմամբ և մեկնաբանությամբ:

դուրյան գործոնը (key success factor) արտադրողականության մեջ գրաված աշխատուժի առկայությունն է:

Ձարգացող երկրներում ՕՆԻՆ-ների իրականացման տեսանկյունից ըստ Մարկո Նոյհաուզի (2006թ.)²³¹ (հիմք ընդունելով Ջոն Դանսինգի (1977թ., 1981թ.)²³² «Ownership, Location, Internalization (OLI) paradigm»-ը²³³) օտարերկրյա ընկերության համար կարևոր գրավիչ գործոն կարող են լինել տեղաբաշխվածության առավելությունները (հավելված 1, աղյուսակ 4): Ներդրումների ներգրավման տեսանկյունից Հայաստանի զարգացման հիմնադրամը կամ փորձագետների խումբը պետք է առանձնացնի այն հիմնական գործոնները, որոնք կարևոր են «արդյունավետության փնտրող» ՕՆԻՆ-ներ ներգրավելու տեսանկյունից, ինչպես նաև տավերջիններիս գնահատականը (տարբերմեթոդների հիման վրա) և վերհանի հիմնական գործողությունների շրջանակը: Ինքնին հիմնական հաջողության գործոնների առկայությունը պարտադիր, բայց ոչ բավարար պայման է, քանի որ գործարարները դրամային միջավայրերի բարելավումը միանշանակ չի նշանակում ՕՆԻՆ-ների և հայրենական ընկերությունների կողմից իրականացվող ներդրումների ծավալների ավելացում: Անշուշտ, ՕՆԻՆ-ների ներգրավման վրա ազդում է երկրի իմիջը: Մյուս կողմից, օտարերկրյա ընկերությունների ներգրավումից հետո այդ հաջողության գործոններով է պայմանավորված լինելու վերջիններիս գործունեության շարունակական լինելն ու հետագա զարգացումը: Հետևաբար, երկրների համար հաջողության գործոնների առկայությունը համարվում է պարտադիր, բայց ոչ բավարար պայման: «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» 121-րդ կետի համաձայն²³⁴ դյուրին է դառնալու ներդրումների իրականացումը և գործարարությունը մեծապես զբաղվելը, ինչպես նաև կրճատվելու է պետության միջամտությունը և այլն:

²³¹ Neuhaus, Marco (2006). *The Impact of FDI on Economic Growth: An Analysis for Transition Countries of Central and Eastern Europe*, Physica-Verlag, Springer, Heidelberg, Germany, p.142:

²³² Dunning, J.H., Trade, location of economic activity and the MNE: a search for an eclectic approach, in Ohlin, B./ Hesselborn, P.O./Wijkman, P.M. (eds.) *The International Allocation of Economic Activity*, London and Basingstoke: Macmillan 1977, pp. 395-418: Dunning, J.H., *International production and the multinational enterprise*. London: George Allen & Unwin, 1981, 440p.:

²³³ OLI պարադիգմը՝ ՕՆԻՆ-ների իրականացման վերաբերյալ որոշումների հիմնավորման հայեցակարգ է:

²³⁴ ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման հավելված:

Ինչ վերաբերում է զբոսաշրջության ոլորտին, ապա հիմնական հաջողության գործոնները կարող են հանդիսանալ այն գործոնները, որոնք պայմանավորում են երկրի զբոսաշրջության ոլորտի համաշխարհային մրցունակությունը՝ ՅՏԶ-ի մեթոդաբանության համաձայն²³⁵: Իսկ արտահանման պարագայում հիմնական հաջողության գործոնների շարքին են դասվում բարձրակարգ բրենդերի առկայությունը, արդյունավետ «ծագման երկրի» դիրքավորումը, թիրախային շուկաների ռազմավարական զարգացումը և նորարարությունները²³⁶:

Արտաքին վերլուծության ժամանակ Հայաստանի զարգացման հիմնադրամը կարող է ներգրավել օտարերկրյա մասնագիտացված ընկերությանը զբոսաշրջության, արտահանման խթանման, ինչպես նաև ներդրումների կտրվածքով երկրի մրցակիցների վերլուծության մատրիցան կառուցելու համար (ուժեղ և թույլ կողմեր, ռազմավարական նպատակներ, առկա ռազմավարություն): Օտարերկրյա ընկերությունը կարող է ներգրավված լինել թիրախային երկրներում կամ սփյուռքի հիմնական գաղթօջախներում հանդիպումների անցկացմանը կամ քննարկումների կազմակերպմանը, որոնց հիմնական նպատակը պետք է լինի երկրի արժեքային առաջարկի (value proposition) մշակումը՝ ներքին և արտաքին վերլուծության արդյունքների հիման վրա (որի վրա էլ հիմնված է լինելու բրենդինգի ռազմավարությունը): Իսկ որպես սևագան կարող է հանդես գալ, օրինակ, հետևյալը՝ «Հայաստան՝ յուրօրինակ Եվրասիական փորձառություն» (Armenia: Eurasian Unique/Authentic Experience): Հայաստանի զարգացման հիմնադրամը և օտարերկրյա խորհրդատվական ընկերությունը կմշակեն և կիրագործեն ռազմավարությունը, որը կպատասխանի հետևյալ հարցերին. ու՞ր ենք գնում և ինչպե՞ս ենք դրան հասնելու): Ինքնին բրենդինգի ռազմավարությունը կարող է կենտրոնանալ որոշակի կոնկրետ տարրերի վրա, ինչպիսիք են՝ երկրի գովազդը, հաճախորդների և քաղաքացիների հետ հարաբերությունների կառավարումը (customer and citizen relationship management), երկրի դեսպանների

²³⁵WEF (2015). *The Travel & Tourism Competitiveness Report 2015: Growth through Shocks*, eds. Roberto Grotti, Tifanni Misrahi, Geneva, Switzerland: World Economic Forum, pp.3-30:

²³⁶Dinnie, Keith (2008). *Nation Branding: Concepts, Issues, Practice*, Butterworth-Heinemann, Elsevier, Oxford, United Kingdom, p.222:

գործունեությունը, սփյուռքի ներուժի օգտագործումը, երկրի օրերը և այլն: Իսկ երկրի բրենդինգի ռազմավարության մշակման միջոցով ՀՀ-ն կկարողանա հստակեցնել, թե ինչպիսի դիրքեր է ցանկանում ունենալ երկարաժամկետ հատվածում, և համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով թիրախային խմբերին հասցնել այն հիմնական ուղերձները, որոնք հետագայում կնպաստեն զբոսաշրջիկների թվաքանակի, արտահանման և ներգրավվող օտարերկրյա ներդրումների ծավալների ավելացմանը: Այս գործընթացը պահանջում է գործողությունների համակարգում և խիստ վերահսկողություն: Այն թիրախային շուկաներում, որտեղ արտահանողները համագործակցելով պետության հետ փորձելու են առաջմղել «ծագման երկիրը» ոլորտային ցուցահանդեսներին մասնակցության միջոցով՝ երկրի բրենդինգի այլ միջոցառումները ավելի կնպաստեն դրված խնդիրների լուծմանը: Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել «արտադրված է Հայաստանում» պիտակ կրող ապրանքների որակի վրա, որոնք արտահանվելու են թիրախային շուկաներ, քանի որ հակառակ դեպքում «ծագման երկրի» բրենդը չի նպաստի երկրի բրենդի կայացմանը: Որպեսզի նոր ներգրավված օտարերկրյա ներդրողներն այլ երկրներում կազմակերպված բիզնես ֆորումներում հանդես գան որպես ՀՀ բիզնես դեսպաններ անհրաժեշտ է Հայաստանի զարգացման հիմնադրամի ղեկավարի մակարդակով պարբերաբար հանդիպումներ կազմակերպել այդ ներդրողների հետ, քննարկել հիմնական խնդիրները և փորձել որոշակի լուծումներ տալ դրանց:

Միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում վերը նշված ոլորտների զարգացմանը և հավաքագրվող ուղղակի հարկերի ծավալների աճին (տնտեսության ճկունության աստիճանի բարձրացմանը) զուգընթաց անհրաժեշտ է մշակել և իրագործել միջինից բարձր և բարձր տեխնոլոգիական ոլորտների զարգացման ծրագրեր (հիմնականում ՕՌԻՆ-ների ներգրավմամբ): ԵԱՏՄ անդամ երկրներից ներդրողների համար այդպիսի ներդրումները գրավիչ կարող են լինել, եթե արտադրվող ապրանքները սպառվեն Իրանում և Միջին արևելքում, ինչպես նաև ԵԱՏՄ տարածքում (արդյունավետության տեսանկյունից):

ՀՀ-ում տնտեսության տարբեր ոլորտների զարգացման և ավելի բարձր ավելացված արժեք ստեղծելու նպատակով կարևորում ենք

նաև հետևյալը. ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրացման շրջանակներում հատկապես միջինից բարձր և բարձր տեխնոլոգիական ոլորտներում արժեքային շղթայի որևիցե էլեմենտի ներգրավումը: Օրինակ՝ հետազոտությունների և մշակումների իրականացման նպատակով համապատասխան գրասենյակների հիմնում կամ ՀՀ գիտահետազոտական ներուժի օգտագործում արտապատվիրման պայմանագրերի միջոցով, ապրանքների բաղադրիչ մասեր հավաքող և արտադրող ընկերության հիմնում, Եվրասիական տնտեսական միության ապրանքանիշի ներքո արտադրված ապրանքների մարքեթինգի և վաճառքի գրասենյակների հիմնում ՀՀ-ում (որոնց սպառման շուկան հիմնականում կլինի Միջին արևելքը կամ Իրանը՝ հաշվի առնելով այդ երկրներում սփյուռքի առկայության գործոնը և գործարար կապերը) և այլն: ԵԱՏՄ-ի ինտեգրացիոն ներուժի իրացման շրջանակներում զարգացող ոլորտներում սկսել արտադրել նաև ԵՄ և այլ զարգացած երկրների կանոնակարգերին և օրենսդրությանը համապատասխանող ապրանքներ, որպեսզի հնարավոր լինի վերջիններս ԵՄ անդամ և այլ երկրներ արտահանել՝ շուկաների առումով ավելի լայն դիվերսիֆիկացիայի ապահովման նպատակով:

Երկարաժամկետ հատված (հեռահար նպատակներ): Ազգային ինովացիոն համակարգի զարգացմանը գույնընթաց ԵԱՏՄ շրջանակներում գիտահետազոտական ներուժի զարգացման միջոցով միջինից բարձր և բարձր տեխնոլոգիական ոլորտներում նոր ապրանքների (որոնք մրցունակ կլինեն ԵՄ և այլ զարգացած երկրներում) մշակում և արտադրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Աստիճակագրությունը ներկայացված հետազոտության արդյունքում կատարվել են մի շարք եզրակացություններ և գործնական առաջարկություններ, որոնց կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ.

1. 2007թ.-ին ընթացիկ հաշվի պակասուրդի չափը մասնանշում էր վտանգ, որ 2008թ.-ին արդեն կարելի էր ճգնաժամ ակնկալել: Իսկ 2014թ.-ին ընթացիկ հաշվի պակասուրդ/ՅԱ հարաբերակցությունը չէր գերազանցում ՅՅ-ում արժույթային և տնտեսական ճգնաժամերի առաջացման տեսանկյունից այդ հարաբերակցության վտանգավոր շեմը, սակայն ՅՅ-ում ավելի ցածր արժեքների դեպքում էլ կարող է առաջանալ արժույթային ճգնաժամ «վարակի էֆեկտը»-ի պատճառով՝ տարածաշրջանի առաջատար երկրում առկա ռեցեսիայի հետևանքով որպես արտաքին շոկի հետևանք:

2. Ներմուծվող ապրանքների (կամ ծառայությունների) օգտագործմամբ ՅՅ-ում ստեղծվող և արտահանման համար նախատեսված ապրանքների կամ մատուցվող ծառայությունների ստեղծված ավելացած արժեքն աճել է: Այս համատեքստում ՅՅ կառավարության տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները կարող են լինել հետևյալը՝

➤ Արտահանման կառուցվածքի պահպանման դեպքում՝ դեպի զարգացած երկրներ արտահանման ծավալների աճի խթանումը (հատկապես ԵՄ)՝ միջնաժամկետ հատվածից սկսած, ինչը կմեծացնի ՅՅ-ում ստեղծվող ավելացված արժեքի մեծությունը, ինչպես նաև ավելի բարձր ավելացված արժեք ստեղծող ապրանքների արտադրության վրա կենտրոնացումը (տվյալ ոլորտների և կառուցվածքի շրջանակում):

➤ Գիտատար, բարձր տեխնոլոգիական ոլորտների զարգացմանը (որի հիմքերը կդրվեն կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում) զուգահեռ այդ ոլորտների արտահանման ծավալների աճի խթանումը երկարաժամկետ հատվածում:

3. Ներդրումներն ուղեկցվել են տեղական արտադրության ապրանքների (կամ ծառայությունների) օգտագործման ծավալների որոշակի աճով: Իսկ միջնաժամկետ հատվածում ներդրումների փոփոխությունը, որը հանգեցնելու է իրական ներմուծման

ծավալների փոփոխությունը (այլ հավասար պայմանների դեպքում) պայմանավորված կլինի նրանով, թե կկարողանա արդյո՞ք ՀՀ-ն ներգրավել հատկապես «արդյունավետությունն փնտրող» օտարերկրյա ընկերություններ, որոնց նպատակն է մուտք գործել հատկապես տարածաշրջանային (ԵԱՏՄ, Իրան) շուկա, ինչպես նաև արտադրողականությամբ ճշգրտված ՀՀ աշխատուժի համեմատաբար ցածր վարձատրությունից օգտվելու ցանկությունն ունեցող և ՀՀ-ում դուստր ձեռնարկությունների կամ մասնաճյուղերի բացման ճանապարհով գլխամասային գրասենյակների արտապատվիրված աշխատանքներ իրականացնող ընկերություններ (հատկապես ԵՄ-ից), ինչպես նաև նրանով, թե ինչպե՞ս կփոխվեն արտահանման կառուցվածքը և ծավալները, և ինչպիսի՞ն կլինի մրցակցությունը ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերում:

4. Եթե միջնաժամկետ հատվածում պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերի կրճատումը նաև ուղեկցվի ներմուծման փոխարինման ավելացմամբ՝ տեղական արտադրության ապրանքներով, ապա իրական ներմուծման ծավալները որոշակիորեն կնվազեն (այլ հավասար պայմանների դեպքում): Իսկ տնտեսության անկման հետևանքով պետական բյուջեից ծառայությունների և ապրանքների ձեռք բերման վրա ծախսվող գումարների իրական աճն, ինչպես տեղի էր ունեցել 2009թ.՝ կհանգեցնի ապրանքների և ծառայությունների իրական ներմուծման ծավալների ավելացման:

5. 2013-2014թթ. տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի աճի տեմպերը փաստել էին այն մասին, որ եթե տնային տնտեսությունների իրական եկամուտները զգալիորեն չաճեն, վերջնական սպառման ծախսերը կամ կպահպանվեն տվյալ մակարդակի վրա, կամ կաճեն ոչ մեծ չափսերով, ինչը նշանակում է, որ այս ծախսային բաղադրիչի ծավալների աճը միջնաժամկետ հատվածում չի հանգեցնի իրական ներմուծման ծավալների կտրուկ փոփոխության, իսկ կրճատումն (կախված ՀՀ տնտեսության զարգացումներից) կհանգեցնի ապրանքների և ծառայությունների իրական ներմուծման ծավալների կրճատման:

6. Միջնաժամկետ հատվածում ընթացիկ հաշվի պակասուրդի պահպանման կամ կրճատման համար ՀՀ կառավարությունը կանգնած է երկու ռազմավարական ընտրության առջև՝

1. Կառավարության արտահանման խթանմանն ուղղված միջոցառումների շնորհիվ արտահանման ծավալների աճի ապահովում (ՀՆԱ-ում ավելի բարձր ավելացված արժեք ստեղծող ապրանքների և ծառայությունների կտրվածքով), որը կարող է ուղեկցվել ՕՈՒՆ-ների ներգրավմամբ, ինչը հնարավորություն կտա պահպանել փոխարժեքի կայունությունը և ապահովել արտաքին պարտքի սպասարկումը:

2. Օտարերկրյա ընկերությունների ներգրավում, որը պետք է լինի թիրախավորված: Տվյալ պարագայում, օտարերկրյա ընկերությունների ներգրավումը կնպաստի միայն ընթացիկ հաշվի պակասուրդի առկա մակարդակի պահպանմանը, մինչդեռ հետագայում արտահանման մտադրությամբ «ռեսուրս», «արդյունավետություն և փընտրող» օտարերկրյա ընկերությունների ներգրավման դեպքում նախկին պահպանվող ընթացիկ հաշվի պակասուրդի առկա մակարդակը, իսկ այնուհետև կնպաստի արտահանման ծավալների աճին, ինչն էլ իր հերթին կհանգեցնի ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը:

7. 2011-2014թթ. ՀՀ առևտրային բանկերի կողմից մասնավոր ձեռնարկություններին և S/S-ներին տրամադրված վարկերի ծավալների աճի տեմպերը վկայում են այն մասին, որ եթե միջնաժամկետ հատվածում արտաքին շուկով պայմանավորված ՀՀ-ում գրանցվի ռեցեսիա, ապա վերջինիս խորությունը կախված է լինելու ՀՀ S/S-ների և արտահանման շուկա հանդիսացող երկրների S/S-ների իրական եկամուտների փոփոխությունից: Իսկ առևտրային բանկերի կողմից որդեգրած ավելի զգուշավոր քաղաքականությունը՝ վարկերի տրամադրման ավելի խիստ պայմանների սահմանմամբ կարող է հանգեցնել նրան, որ եթե t-րդ ժամանակահատվածում առևտրային բանկերի կողմից ՀՀ տնային տնտեսություններին և մասնավոր ձեռնարկություններին տրամադրված վարկերի ծավալի հանրագումարը կրճատվի 1 մլրդ ՀՀ դրամով, ապա դա կարող է միջինում հանգեցնել ՀՀ իրական ՀՆԱ-ի կրճատմանը 494.22 մլն դրամի չափով: Այս արդյունքները նաև փաստում են այն, որ միջնաժամկետ հատվածում արտաքին շուկերով պայմանավորված տնտեսական անկում գրանցվելու հետևանքով բանկերի կողմից որդեգրած քաղաքականությունը բացասաբար կանդրադառնա տնտեսության իրական հատվածի վրա: Իսկ արտարժույթով վերցված վարկերի ծավալի աճը

մեծացրել է իրական հատվածի խոցելի ու թյան աստիճանը արտաքին շուկերի հանդեպ:

8. 2011-2014թթ. բնակարանների գների աճի տեմպերը փաստել են այն, որ ՀՀ-ում միջնաժամկետ հատվածում արտաքին շուկերով պայմանավորված տնտեսական անկում արձանագրվելու դեպքում վերջինս ավելի չի խորանայ սներքին շուկի կամ մակրոտնտեսական խոցելի ու թյունը նկարագրող ցուցանիշի պատճառով:

9. 2001-2014թթ. տնտեսական աճի աղբյուրների վիճակագրական վերլուծության արդյունքները փաստել են կապիտալի պաշարի աճի տեմպի առնվազն պահպանելու մասին ճգնաժամից հետո ՀՆԱ-ի կառուցվածքում համախառն կուտակման մասնաբաժնի կրճատման պատճառով, որն էլ հիմնականում պայմանավորված էր մասնավոր հատվածի ներդրումների կրճատմամբ՝ շեշտադրելով ՕՈՒՆ-ների ներգրավման կարևորությունը և վերջինիս դերը տնտեսական աճի ապահովման գործում: Մինչդեռ 2011-2014թթ. զբաղվածների թվաքանակի փոփոխության նպաստումն իրական ՀՆԱ-ի աճին բացասական էր, ընդհանուր գործույթին արտադրողականության դրական աճի տեմպերը փաստել են կապիտալի (տեխնոլոգիաների) և զբաղվածների որակական փոփոխության մասին: Իր հերթին ՀՆԱ-ի նկատմամբ զբաղվածության առաձգականության գործակցի բացասական արժեքը փաստել է այն, որ արտադրողականության աճը պայմանավորված է եղել զբաղվածների թվաքանակի կրճատմամբ և տնտեսական աճը չի հանգեցրել զբաղվածների թվաքանակի ավելացմանը, որի պարագայում զբաղվածության ապահովման և սոցիալական խնդիրների լուծման տեսանկյունից կարևորվել է աշխատատար ոլորտներում (հիմնականում մշակող արդյունաբերություն) նոր աշխատատեղերի ստեղծումը («արդյունավետություն և փնտրող» ՕՈՒՆ-ների ներգրավմամբ):

10. 2011-2014թթ. ՀՀ տնտեսության իրական հատվածում ՕՈՒՆ-ները հիմնականում իրականացվել են ռեսուրսների աղբյուրներ և շուկա փնտրող օտարերկրյա կապիտալով ընկերությունների կողմից: ՕՈՒՆ-ները հիմնականում բացառվել են ՀՀ տեղական և օտարերկրյա շուկաներում տվյալ ոլորտում առկա մրցակցության մակարդակով, ընթացիկ արտադրական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու որոշմամբ, ինչպես նաև մետաղների և հումքի նկատմամբ համաշխարհային պահանջարկով: Իսկ ՌԴ-ից և այլ

Երկրներին ց տնտեսության իրական հատվածում կատարված ՕՌԵ-ների ծավալների (ՌԴ և այլ երկրներին ց ՕՌԵ-ների հանրագումարի) փոփոխությունը չէր բացատրում իրական ՅՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը, որի հետևանքով էլ առաջարկվել է կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում ներգրավել «արդյունավետություն փնտրող», դուստր ձեռնարկությունների կամ մասնաճյուղերի բացման ճանապարհով գլխամասային գրասենյակների արտապատվիրված աշխատանքները իրականացնելու նպատակով ընկերություններ (հատկապես ցածր և միջին տեխնոլոգիական ոլորտներում):

11. Արտաքին շուկերի կամ տնտեսական գործոնների հանդեպ ՅՅ տնտեսության իրական հատվածի խոցելիության վերլուծությունը փաստում է, որ 2009թ.-ից սկսած ՅՅ տնտեսության խոցելիության աստիճանն աճել էր ՌԴ տնտեսությանն ավելի ինտեգրված լինելու հետևանքով՝ մասնավորապես, արտահանման, աշխատավարձերի և անձնակազմի տրանսֆերտների հետ կապված: Երկրի ժամանակահատվածում ՌԴ իրական ՅՆԱ-ի կրճատումը կարող է հանգեցնել ՅՅ իրական ՅՆԱ-ի կրճատմանը $t+1$ -րդ ժամանակահատվածում՝ (մնացած այլ հավասար պայմանների դեպքում), իսկ ՌԴ իրական ՅՆԱ-ի տատանումն, ընդհանուր առմամբ, բացատրվում էր ՅՅ իրական ՅՆԱ-ի տատանման մոտ 60%-ը: Ընդհանուր առմամբ, t -րդ ժամանակահատվածում դեպի ՌԴ արտահանման ծավալների փոփոխությունը 10%-ով կարող է հանգեցնել իրական ՅՆԱ-ի մոտ 0.85% փոփոխության $t+1$ -րդ ժամանակահատվածում, իսկ t -րդ ժամանակահատվածում ՌԴ իրական ՅՆԱ-ի փոփոխությունը 1%-ով, միջինում կարող է հանգեցնել ՅՅ-ից դեպի ՌԴ արտահանման ծավալների փոփոխությանը 4.81%-ով այդ նույն ժամանակահատվածում՝ մնացած այլ հավասար պայմանների դեպքում:

12. ՅՅ իրական ՅՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխության վրա ազդում են ինչպես անձնակազմի տրանսֆերտները, այնպես էլ աշխատողների աշխատավարձերը, սակայն ժամանակահատվածը, ինչպես նաև միջին մեծության չափը տարբերվում են: Արտագնա աշխատողների վարձատրության աճը S/S-ների կողմից (այդպիսի անդամ ունեցող) չի հանգեցնում ՅՅ-ում արտադրված ապրանքների և ծառայությունների սպառման մակարդակի վիճակագրորեն նշանակալի փոփոխության, իսկ գումարների կրճատման դեպքում վերջնական սպառման ծախսերը կպահպանվեն, սակայն այստեղ առանցքային արտագնա աշխատանքի հնարավորությունն է, իսկ ուղարկվող գու-

մարների աճը նպաստում է երկարաժամկետ օգտագործման (հիմնական միջոց դասակարգվող) ապրանքների (նաև ներմուծվող) գնման ծավալների ավելացմանը: Անձնական տրանսֆերտների ծավալի աճը ավելացնում են ինչպես հայրենական, այնպես էլ ներմուծվող ապրանքների և ծառայությունների սպառման ծավալները: Իսկ եթե անձնական տրանսֆերտներն ուղղվեն երկարաժամկետ օգտագործման ապրանքների (հիմնական միջոց դասակարգվող) ձեռք բերմանը, ապա այդ գումարները կնպաստեն հիմնական միջոցների համախառն կուտակման ավելացմանը, ինչն էլ դրական կազդի իրական ՅՆԱ-ի վրա միայն որոշակի ժամանակ անց: Իսկ անձնական տրանսֆերտների և աշխատողների վարձատրության կրճատման դեպքում ՅՆԱ-ի բաղադրիչներից ամենախոցելին է հանդիսանում հիմնական միջոցների համախառն կուտակումը:

13. Ապրանքների արտահանման հիմնական 4 խմբերը, որոնց մասնաբաժինը արտահանման կառուցվածքում 2003-2014թթ. տատանվել էր 79.6-87.1% միջակայքում տարբեր կերպ են բացատրել իրական ՅՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը: «Յանքահումքային մթերքի» և «ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից» արտահանման խմբերի ծավալների փոփոխությունը բացատրում էր իրական ՅՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը: Իսկ միջնաժամկետ հատվածում այս խմբերի արտահանման ծավալների փոփոխությունը կախված է լինելու մետաղների գների անկման չափից, (համաշխարհային պահանջարկի փոփոխությամբ առաջացած), որով էլ պայմանավորված է լինելու արտահանման ֆիզիկական ծավալի փոփոխությունը: «Պատրաստի սննդի» խմբի արտահանման ծավալների, ինչպես նաև ՅՅ այցելած զբոսաշրջիկների կողմից ՅՅ-ում կատարված ծախսերի փոփոխությունը ևս բացատրում էր իրական ՅՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը: Միջնաժամկետ հատվածում «Պատրաստի սննդի արտադրանքի» խմբի արտահանման ծավալները հիմնականում կախված են լինելու ՌԴ տնտեսության վիճակից՝ դեպի Իրաք արտահանման ծավալների առնվազն պահպանման դեպքում:

14. Յաշվի առնելով հիմնականում ՌԴ տնտեսությանն, մետաղների միջազգային գներին առնչվող (Զինաստանի տնտեսության աճի տեմպով պայմանավորված) ամենամյա կանխատեսումները՝ յուրաքանչյուր տարի անհրաժեշտ է վերանայել այն հակաճգնաժամային

միջոցառումների գործիքակազմը, որն անհրաժեշտության դեպքում կարող է կարգավորվել ստեղծված իրավիճակը: Միջոցառումները պետք է ուղղված լինեն տնային տնտեսությունների, ՀՀ տնտեսության առանձին ոլորտների վրա ՌԴ տնտեսության բացասական զարգացումների, մետաղների գների անկման հետևանքով ազդեցության մեղմացմանը: Ծրագրերը և միջոցառումները պետք է լինեն տարբերակված և արտացոլեն յուրաքանչյուր ոլորտի ընկերությունների և S/S-ների առանձնահատկությունները: Առանձին միջոցառումներ նախատեսել տեղական արտադրողների համար՝ էժան ներմուծման առկայության և ՀՀ S/S-ների նվազող եկամուտների պարագայում ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի, ինչպես նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ ՌԴ ռուբլու փոխարժեքների տատանումները:

15. Գործազրկության նպաստների բացակայության պարագայում, որը համարվում է անմիջապես արտաքին շուկերին արձագանքելու առաջնային գործիք, տնտեսության հարմարվողականության տեսանկյունից զբաղվածության նոր մոդելը հիմնականում նպաստում է աշխատուժի առաջարկի ավելացմանը: Հետևաբար՝ արտաքին շուկերի հետևանքով բացասական ազդեցության հաղթահարման տեսանկյունից առաջնային է դառնում հանրային աշխատանքների ծրագրի իրականացումը, սակայն դրամաշակման համար որոշակի ժամանակ է պահանջվում, կապված համապատասխան ծրագրի մշակման, շահառուների որոշման, վճարման չափի ընտրության և ֆինանսավորման հայթայթման հետ, ինչն էլ դանդաղեցնում է գրանցված վիճակին արձագանքելու գործընթացը: Ավտոմատ կայունացնող ծրագրերից միայն սոցիալական աջակցության ծրագրերի միջոցով է, որով Կառավարությունը հաղթահարելու է ապագայում գրանցված արտաքին շուկերի հետևանքները, սակայն այս պարագայում հնարավոր է, որ ոչ բոլոր գործազուրկները բավարարեն շահառուների ընտրության չափանիշներին: Իսկ ճգնաժամին ավելի արագ արձագանքելու նպատակով անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել գործազրկության նպաստի վճարումը միայն ճգնաժամերի դեպքում և միայն ճգնաժամի պատճառով աշխատանքը կորցրածների համար:

16. 2014թ.-ին կենտրոնական Կառավարության պարտք/2013թ.-ի ՀՆԱ հարաբերակցությունը կազմում էր 49.3%՝ փաստելով այն մասին, որ Կառավարության հարկաբյուջեային միջոցառումներ

իրականացնելու հնարավորությունը սահմանափակ է լինելու շնկերին արդյունավետ արձագանքման կարողության տեսանկյունից, որի պարագայում անհրաժեշտ է 2017-2018թթ.-ից սկսած մեծացնել ընդհանուր հարկային եկամուտների մեջ ուղղակի հարկերի մասնաբաժինը (ՌԴ տնտեսության վերականգմանը գուժընթաց)՝ Կառավարության պարտքի չափը կրճատելու նպատակով, որի շնորհիվ ՀՀ կառավարությունը կկարողանա իրականացնել խթանող քաղաքականություն, եթե միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում գրանցվի ռեցեսիա, քանի որ մաքսատուրքերի վերաբառումից ստացվող գումարները, ինչպես նաև ներմուծմամբ պայմանավորված ավելացված արժեքի հարկերը տարեց տարի կրճատվելու են:

17. Չնայած նրան, որ 2010-2014թթ.-ին ՀՀ տնտեսությունը դեռևս առավելապես կախված էր ներքին պահանջարկից, այնուամենայնիվ, կախվածությունն արտաքին գործոններից (արտաքին պահանջարկից) զգալիորեն աճել էր, որի պարագայում ՀՀ կառավարության առաջնահերթություններից պետք է լինի ներդրումների խթանման ճանապարհով համախառն կուտակման իրական աճի տեմպերի բարձրացում: Կարևորվել են ՀՀ կառավարության կողմից մասնավոր ձեռնարկություններին տրամադրվող նոր վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը (հատկապես հիմնական միջոցներին դասվող ապրանքների ձեռքբերման դեպքում) տնտեսական անկման դեպքերում:

18. Տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման նպատակով՝ տնտեսական զարգացման հիմքի ավելի լայն բազմազանությունն ապահովելու կտրվածքով, որը տնտեսության կառուցվածքի, ինչպես նաև ապրանքների արտահանման ավելի լայն դիվերսիֆիկացիա կապահովի, առաջարկվել են հետևյալ միջոցառումները և քայլերը.

- ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրացմամբ կիրառել դիվերսիֆիկացված տարածաշրջանային զարգացման մոտեցումը (ըստ գոտիների՝ Հյուսիսային, Արարատյան դաշտավայրի, հարավային և Երևանի). համաձայն որի՝ մարզերը քլաստերների զարգացման հիման վրա, իրենց աշխարհագրական դիրքից ելնելով, կկենտրոնանան մի քանի արտադրանքների արտադրության վրա,

- Որպես զարգացում ապահովող ընդհանուր ոլորտ բոլոր տարածաշրջանների պարագայում զարգացնել թեթև արդյունաբերությունը: Վանաձորում, Գյումրիում կամ այլ քաղաքներում հիմնել արդյունաբերական հատուկ գոտիներ (որոնց կարող է տրվել նաև ազատ տնտեսական գոտու կարգավիճակ), որտեղ ընկերությունները կօգտվեն միջարք հարկային արտոնություններից,

- Արագ և արդյունավետ կերպով իրականացնել «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» կետ 134-ում նշված միջոցառումները,

- ՀՀ կառավարության առաջնահերթություններից մեկը պետք է լինի նպատակային ակտիվ զբաղվածության ծրագրերի մշակումն և իրագործումը (աշխատուժի նկատմամբ պահանջարկի ավելացման և կլաստերների զարգացման միջոցառումների իրականացման պայմաններում),

- ՀՀ-ում որակյալ մասնագետների պահպանման և ՀՀ դրանց ներգրավման խնդրի լուծման համար կիրառել հետևյալ մեխանիզմը: «Լույս» ծրագրին մասնակցելու պարտավորություն կարող է հանդիսանալ սերտ համագործակցությունն ինչպես ՀՀ գիտահետազոտական հաստատության, այնպես էլ ՀՀ մասնավոր ձեռնարկության հետ՝ ավարտելուց հետո առնվազն 3 տարիների ընթացքում: Մի ընկերությանը կարող են կցված լինել տարբեր մասնագիտություններ ունեցող շրջանավարտներ, որոնք ամբողջ տարվա ընթացքում առցանց հաղորդակցման եղանակով կարող են խորհրդատվություն տրամադրել, հանդիսանալ կապող օղակ՝ ընկերությունների համար արտապատվիրման պայմանագրեր սպասարկելու, նոր շուկա մուտք գործելու, ներդրող ներգրավելու և այլ տեսանկյուններից,

- Չբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ կլինի միջարք երկրներում (հատկապես ԵՄ անդամ) ցուցաբերել ավելի թիրախավորված մոտեցում Հայաստանի դիրքավորման տեսանկյունից՝ ՀՀ-ն ներկայացնելով որպես գյուղական, արկածային և այլ զբոսաշրջության վայր, որպեսզի ավելի շատ զբոսաշրջիկներ այցելեն ՀՀ (հատկապես Երևանից դուրս), և ավելի շատ ապրանքներ ու ծառայություններ սպառվեն ՀՀ ողջ տարածքում: Իսկ այս ամենի համար անհրաժեշտ է առաջարկել յուրահատուկ տուր-փաթեթներ (արկածային, գյուղական զբոսաշրջություն և այլն) և ՀՀ բոլոր մարզերում

(գյուղերում, և քաղաքներում) ստեղծել «B&B» տիպի կամ ոչ թանկ այլ կացարանների և այն ցանց,

- Ներդրումային գործունեության խթանման նպատակով տրամադրել որոշակի հարկային արտոնություններ՝ ըստ գործունեության ոլորտի (հատկապես ցածր և միջին տեխնոլոգիական աշխատատար ոլորտներում, որոնք կունենան նաև արտահանման ուղղվածություն) և տարածաշրջանի (ինչպես նաև տարբերակված՝ ըստ քաղաքային կամ գյուղական բնակավայրի)՝ ելնելով գործազրկության մակարդակի ցուցանիշներից,

- Ներդրումների ներգրավմամբ արտահանման ծավալների մեծացման հաշվին ավելի դիվերսիֆիկացված տնտեսական աճ ապահովելու նպատակով իրականացնել երկրի բրենդինգի ռազմավարության մշակում և իրագործում, քանի որ 2015թ.-ին ՀՀ-ն դարձել է ԵԱՏՄ անդամ, որն ընկալումների ճշգրտման անհրաժեշտություն է առաջացնում հատկապես օտարերկրյան ներդրողների համար: Առաջնահերթ պետք է լինի երկրի արժեքային առաջարկի մշակումը, որի վրա էլ հիմնված է լինելու բրենդինգի ռազմավարությունը՝ կախված նրանից թե ինչպես է ՀՀ-ն փորձելու իրեն դիրքավորել: Երկրի դիրքավորման տեսանկյունից 2 ուղղություն են նշվել՝

- *Հարթակ դեպի Եվրասիական մայրցամաք* (հաշվի առնելով ԵԱՏՄ-ին անդամակցությունը և Իրանի գործոնը՝ ակնկալվող ԵԱՏՄ-ի հետ ազատ առևտրի պայմանագիր, երկաթուղու, ՀՀ-ում նավթավերամշակող ձեռնարկության հնարավոր կառուցումը և այլն, ինչպես նաև ԵՄ-ի հետ արտոնյալ ռեժիմը): ՀՀ-ն կարող է ներգրավել ներդրողներ ինչպես ՌԴ-ից և Չինաստանից, այնպես էլ ԵՄ և այլ զարգացած երկրներից,

- *Չարգացած երկրներում սփյուռքահայ գործարարների արտապատվիրման կենտրոն* (ցածր և միջին մակարդակի տեխնոլոգիական ընկերությունների՝ հատկապես թեթև արդյունաբերության և այլ ոլորտներում): Ապրանքները կարտահանվեն ոչ միայն զարգացած երկրներ, այլ նաև Իրան և Միջին արևելքի և ասիական երկրներ (բրենդային հագուստի, կաշվե իրերի արտադրության կամ թանկարժեք զարդերի պատրաստման պարագայում):

- Առավել ապես ԵԱՏՄ-ի ինտեգրացիոն ներուժի իրացման շրջանակներում զարգացող ոլորտներում սկսել արտադրել նաև ԵՄ

և այլ զարգացած երկրների կանոնակարգերին համապատասխանող ապրանքներ: ԵՄ շուկաներում գյուղմթերքի առաջմղման նպատակով սկզբնական շրջանում այդ երկրների հայտնի սուպերմարկետների ցանցերին մատակարարող ընկերությունների արդեն հայտնի բրենդի ներքո վաճառել գյուղմթերքը, իսկ այնուհետ բրենդինգի համապատասխան ռազմավարության միջոցով վաճառել ապրանքները սեփական հովանոցային բրենդի ներքո,

- ՀՀ-ում տնտեսության տարբեր ոլորտների զարգացման նպատակով կարևորվում է նաև ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի իրացման շրջանակներում հատկապես միջինից բարձր և բարձր տեխնոլոգիական ոլորտներում արժեքային շղթայի որևիցե էլեմենտի ներգրավումը,

- Ազգային ինովացիոն համակարգի զարգացմանը զուգընթաց ԵԱՏՄ շրջանակներում գիտահետազոտական ներուժի զարգացման միջոցով միջինից բարձր և բարձր տեխնոլոգիական ոլորտներում նոր ապրանքների (ԵՄ և այլ զարգացած երկրներում մրցունակ) մշակում և արտադրություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր, նազմավարող ռեզոլյուցիաներ, միջազգային համաձայնագրեր, սպասարկող և այլ ենթաօրենսդրական ակտեր

1. ՀՀ օրենքը «Արդյունաբերական քաղաքականության մասին» առ 19.11.2014թ., ՀՕ-184-Ն, ՀՀՊՏ 2014.12.19/70(1083): [223]
2. ՀՀ օրենքը «Ձբաղվածության մասին» առ 11.12.2013թ., ՀՕ-152-Ն, ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1: [194]
3. ՀՀ օրենքը «Պետական պարտքի մասին» առ 05.25.2008թ., ՀՕ-78-Ն, ՀՀՊՏ 2008.06.25/39(629): [200]
4. 2013թ. հունվարի 26-ին կայացած ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հաստատված կոնյակագործության «Գործողությունների ծրագիր 2012-2015թթ.», 49 էջ, (վերջին մուտք՝ 2015թ. օգոստոսի 10, <http://www.mineconomy.am/arm/35/gortsaruyt.pastatuxt.html>): [179]
5. 2013թ. հունվարի 26-ին կայացած ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հաստատված գինեգործության ոլորտի զարգացման նազմավարող ռեզոլյուցիան և գործողությունների ծրագիր, 6 էջ (վերջին մուտք՝ 2015թ. օգոստոսի 10, <http://www.mineconomy.am/arm/35/gortsaruyt.pastatuxt.html>): [180]
6. 2013թ. հունվարի 26-ին կայացած ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հաստատված «Հայաստանի ոսկեգործության ոլորտի զարգացման նազմավարող ռեզոլյուցիան», 92 էջ (վերջին մուտք՝ 2015թ. օգոստոսի 8, <http://www.mineconomy.am/arm/35/gortsaruyt.pastatuxt.html>): [170]
7. 2013թ. հունվարի 26-ին կայացած ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին հաստատված «Հայաստանի ադամանդագործության ոլորտի զարգացման նազմավարող ռեզոլյուցիան», 50 էջ (վերջին մուտք՝ 2015թ. օգոստոսի 8, <http://www.mineconomy.am/arm/35/gortsaruyt.pastatuxt.html>): [168]
8. 2015թ. պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության արտահանման ոլորտում արդյունաբերական քաղաքականության նազմավարող ամբ նախատեսված միջոցա-

- նու մ ն ե թ ի ի ր ակ ան աց մ ան ծ թ ա գ ի թ , Յ Յ կ առ ա վ ար ու թ յ ան 2015 թ վ ակ ան ի փ ե տր վ ար ի 12-ի N 119-Ն ո թ ո շ մ ան հ ա վ ե լ վ ա ծ 1: [222]
9. Յ այ ա ս տ ան ի Յ ան թ ա պ ե տ ու թ յ ան 2014-2025թթ. հ ե ն ան կ ար այ ի ն գ ար գ աց մ ան ն ա գ մ ա վ ար ակ ան ծ թ ա գ ի թ , Յ Յ կ առ ա վ ար ու թ յ ան 2014թ. մ ար տ ի 27-ի N 442-Ն ո թ ո շ մ ան հ ա վ ե լ վ ա ծ : [224, 234]
 10. Յ այ ա ս տ ան ի Յ ան թ ա պ ե տ ու թ յ ան ար տ ա հ ան մ ան ն ու ղ ղ վ ա ծ ար ղ յ ու ն ա բ ե թ ակ ան ք ա ղ ա բ ակ ան ու թ յ ան ն ա գ մ ա վ ար ու թ յ ու ն , Յ Յ կ առ ա վ ար ու թ յ ան 2011թ. դ ե կ տ ե մ բ ե թ ի 15-ի ն ի ս տ ի N 49 ար ձ ան ա գ թ այ ի ն ո թ ո շ մ ան հ ա վ ե լ վ ա ծ : [132-133, 176]
 11. Договор о зоне свободной торговли от 18 октября 2011 года (<http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=3183>) [203]
 12. Договор о присоединении Кыргызской Республики к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года. [201]
 13. Постановление правительства РФ № 778 от 7 августа 2014г. о мерах по реализации Указа Президента Российской Федерации от 6 августа 2014 г. № 560 "О применении отдельных специальных экономических мер в целях обеспечения безопасности Российской Федерации." [207, 227]
 14. Приложение N 2 к Договору о присоединении Республики Армения к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года. [202]
 15. Протокол о единой системе тарифных преференций таможенного союза от 12 декабря 2008 г. [204]
 16. Распоряжение 87 от 01.09.2015 Коллегии Евразийской экономической комиссии. [212]
 17. Решение Коллегии Евразийской экономической комиссии от 25.08.2014 N 14 "О перечне мероприятий по реализации основных ориентиров макроэкономической политики государств - членов Таможенного союза и Единого экономического пространства на 2014 - 2015 годы." [208]
 18. Решение Комиссии таможенного союза от 27 ноября 2009 года №130. [204]
 19. Решение Межгосударственного Совета Евразийского экономического сообщества (высшего органа таможенного союза) от 27 ноября 2009 г. №18. [204]
 20. Соглашение о единых правилах определения страны происхождения товаров от 25 января 2008г. [204].

21.Соглашение о правилах определения происхождения товаров из развивающихся и наименее развитых стран от 12 декабря 2008 года. [204]

Վիճակագրական տեղեկագրեր, առցանց տվյալների բազաներ

- 22.ՀՀ ԱՎՃ, «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության հնգանիշ դասակարգման 2014թ. հունվար-դեկտեմբերին» վիճակագրական տեղեկագիր, 2015թ. ք. Երևան, 86 էջ : [175, 177]
- 23.ՀՀ ԱՎՃ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2008-2012, վիճակագրական ժողովածու, 2013թ. ք. Երևան, 187 էջ : [192]
- 24.ՀՀ ԱՎՃ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2009-2013, Վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2014թ., 199 էջ : [192]
- 25.ՀՀ ԱՎՃ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2010-2014, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2015թ., 199 էջ : [89]
- 26.ՀՀ ԱՎՃ, Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 2006-2010, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2011թ., 134 էջ : [89, 144, 251, 253-255, 257]
- 27.ՀՀ ԱՎՃ, Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 2007-2011, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2012թ., 131 էջ : [89, 144, 251, 253-255, 257]
- 28.ՀՀ ԱՎՃ, Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 2009-2013, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2014թ., 102 էջ : [89, 144, 251, 253-255, 257]
- 29.ՀՀ ԱՎՃ, Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 2010-2014, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2015թ., 86 էջ : [89, 144, 251, 253-255, 257]
- 30.ՀՀ ԱՎՃ, Հայաստանի ազգային հաշիվները 1990-2001, ք.Երևան, 2009թ., 106 էջ : [124, 128]
- 31.ՀՀ ԱՎՃ, Հայաստանի ազգային հաշիվները 2009, Տարեկան և եռամսյակային տվյալներ, Վիճակագրական ժողովածու, ք.Երևան, 2009թ., 269 էջ : [104, 124, 128, 258]

- 32.ՀՀ ԱԿԾ, Հայաստանի ազգային հաշիվները 2010, Տարեկան և եռամսյակային տվյալներ, Վիճակագրական ժողովածու, ք.Երևան, 2010թ., 241 էջ : [104, 124, 128, 258]
- 33.ՀՀ ԱԿԾ, Հայաստանի ազգային հաշիվները 2011, Տարեկան և եռամսյակային տվյալներ, Վիճակագրական ժողովածու, ք.Երևան, 2011թ., 241 էջ : [104, 124, 128, 258]
- 34.ՀՀ ԱԿԾ, Հայաստանի ազգային հաշիվները 2012, Տարեկան և եռամսյակային տվյալներ, Վիճակագրական ժողովածու, ք.Երևան, 2012թ., 243 էջ : [104, 124, 128, 258]
- 35.ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2006 թվականին. Ըստ արտաքին տնտեսական գործուևեուլթյան ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2007, 226 էջ : [148, 256]
- 36.ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2010 թվականին. Ըստ արտաքին տնտեսական գործուևեուլթյան ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2011, 327 էջ : [148, 256]
- 37.ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2011 թվականին. Ըստ արտաքին տնտեսական գործուևեուլթյան ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2012, 229 էջ : [148, 256]
- 38.ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2012 թվականին. Ըստ արտաքին տնտեսական գործուևեուլթյան ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2013, 324 էջ : [148, 256]
- 39.ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2013 թվականին. Ըստ արտաքին տնտեսական գործուևեուլթյան ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2014, 328 էջ : [148, 151, 256]
- 40.ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2014 թվականին. Ըստ արտաքին տնտեսական գործուևեուլթյան ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման, վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2015, 343 էջ : [102, 148, 256]

- 41.33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությանը 2012 թվականին, ք. Երևան, 2013թ., 162 էջ : [252]
- 42.33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությանը 2013 թվականին, ք. Երևան, 2014թ., 166 էջ : [252]
- 43.33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004 թվականի հունվար-մարտին, ք. Երևան, 2004թ., 234 էջ : [252]
- 44.33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թվականի հունվարին, ք. Երևան, 2005թ., 103 էջ : [252]
- 45.33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006 թվականի հունվար-մարտին, ք. Երևան, 2006թ., 293 էջ : [252]
- 46.33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թվականի հունվարին, ք. Երևան, 2008թ., 104 էջ : [252]
- 47.33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009 թվականի հունվար-սեպտեմբերին ք. Երևան, 2009թ., 217 էջ : [119]
- 48.33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010 թվականի հունվարին, ք. Երևան, 2010թ., 107 էջ : [252]
- 49.33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվարին, ք. Երևան, 2011թ., 113 էջ : [252]
- 50.33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-դեկտեմբերին, ք. Երևան, 2015, 292 էջ : [252]
- 51.33 ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-փետրվարին, ք. Երևան, 2015թ., 137 էջ : [134, 137, 183]
- 52.33 ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությանը, 2009, վիճակագրական-վերլուծական զեկոլյց (Ըստ 2008թ.-ի տնային տնտեսությանը և ներքին կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների), ք. Երևան, 2009, 201 էջ : [253-254]

- 53.ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական - վերլուծական զեկուլյց (ըստ 2011թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների), ք. Երևան, 2012թ., 258 էջ: [253-254]
- 54.ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական - վերլուծական զեկուլյց (ըստ 2012թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների), ք. Երևան, 2013թ., 243 էջ: [250-251, 253-254]
- 55.ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական - վերլուծական զեկուլյց (ըստ 2013թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների), ք. Երևան, 2014թ., 232 էջ: [91, 253-254]
- 56.ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական - վերլուծական զեկուլյց (ըստ 2014թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների), ք. Երևան, 2015թ., 245 էջ: [91, 250-251, 253-254]
- 57.ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015, ք. Երևան, 2015թ., 601 էջ: [95]
- 58.ՀՀ ԱՎԾ, Հայաստանի \$ինանսների վիճակագրություն, 2008-2013, Վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2014թ., 55 էջ: [259]
- 59.ՀՀ ԱՎԾ, Հայաստանի \$ինանսների վիճակագրություն, 2009-2014, Վիճակագրական ժողովածու, ք. Երևան, 2015թ., 56 էջ: [259]
- 60.ՀՀ ԱՎԾ-ի «Արտաքին առևտրի (ըստ ապրանքների անվանացուցակի 4-նիշ դասակարգման)» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=379>): [96, 103, 149, 152, 154, 158-160]
- 61.ՀՀ ԱՎԾ-ի «Արտաքին առևտրի (ըստ երկրների)» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=380>): [162]
- 62.ՀՀ ԱՎԾ-ի «Օտար երկրյա ներդրումներ»-ի առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=246>): [31, 94, 135, 183]

- 63.ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների եռամսյակային ցուցանիշների «ՀՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)» առցանց տվյալների բազա՝ ըստ «ԱՀՀ 1993»-ի (<http://www.armstat.am/am/?nid=263>): [104]
- 64.ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների եռամսյակային ցուցանիշների «ՀՆԱ-ի արտադրությունը (ԵՀՀ-95 Ա17 խմբավորմամբ՝ ՏԳՏՀ (NACE 1.1.) դասակարգմամբ)» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>): [113]
- 65.ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՀՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)» առցանց տվյալների բազա՝ ըստ «ԱՀՀ 1993»-ի (<http://www.armstat.am/am/?nid=263>): [124, 126, 128, 247, 258, 260]
- 66.ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՀՆԱ-ի արտադրությունը (ԵՀՀ-95 Ա17 խմբավորմամբ՝ ՏԳՏՀ (NACE 1.1.) դասակարգմամբ)» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>): [113-114]
- 67.ՀՀ ԱՎԾ-ի ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՀՆԱ-ի արտադրությունը ըստ ՏԳՏՀ խմբ. 2 (NACE 2) դասակարգման» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>): [92, 125]
- 68.ՀՀ ԱՎԾ-ի արդյունաբերության առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=246>): [182]
- 69.ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Համախառն արտաքին պարտք 6» առցանց տվյալների բազա առ 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>): [88]
- 70.ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 5» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=443>): [102]
- 71.ՀՀ ԱՎԾ-ի արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» առցանց տվյալների բազա առ 30.06.2015թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>): [81, 83, 85-87, 96, 98, 101, 143-144, 183, 209, 257]
- 72.ՀՀ ԱՎԾ-ի ՀՀ պետական ֆինանսների վիճակագրության «Կենտրոնական կառավարության պարտք» առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=385>): [199, 249, 260]
- 73.ՀՀ ԱՎԾ-ի «ArmStatBank.am»-ի «Արտաքին առևտուր» բաժնի «Արտարժույթի փոխարժեքներն ըստ ցուցանիշների և տարիների» տվյալների բազա (www.armstatbank.am): [144, 257]

- 74.33 ԱՎԾ-ի «ArmStatBank.am»-ի «Բնակչություն և սոցիալական գործընթացներ» բաժնի «Չբաղվածություն և գործազրկություն» ենթաբաժնի «Չբաղվածություն և ըստ ցուցանիշների և տարիների» առցանց տվյալների բազա (<http://www.armstatbank.am>): [26, 124, 128-129]
- 75.33 ԱՎԾ-ի «ArmStatBank.am»-ի «Բնակչություն և սոցիալական գործընթացներ» բաժնի «Չբաղվածություն և գործազրկություն» ենթաբաժնի «Գործազրկության մակարդակն ըստ ցուցանիշների և տարիների» առցանց տվյալների բազա (<http://www.armstatbank.am>): [26]
- 76.33 ԱՎԾ-ի «ArmStatBank.am»-ի «Տրանսպորտ և Չբուսաշրջություն» բաժնի «Չբուսաշրջություն» ենթաբաժնի «Յուրանոցներն ըստ մարզերի, ցուցանիշների և տարիների» տվյալների բազա (www.armstatbank.am): [145]
- 77.33 ԿԲ-ի արտաքին հատվածի վիճակագրության «Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի» առցանց տվյալների բազայի (<https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>): [100, 163, 165-166].
- 78.33 ԿԲ-ի արտաքին հատվածի վիճակագրության «ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկր ուղարկված դրամական փոխանցումներ (տարեկան)» առցանց տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>): [164]
- 79.33 ԿԲ-ի դրամավարկային և ֆինանսական վիճակագրության «Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալները (ամսական)» առցանց տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>): [108-109]
- 80.33 ԿԲ-ի դրամավարկային և ֆինանսական վիճակագրության «Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների վարկերն ըստ ոլորտների (ամսական)» առցանց տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>): [110, 261]
- 81.33 ԿԲ-ի ֆինանսական կազմակերպությունների վիճակագրության «Բանկային համակարգի ակտիվներ/ՆԱ/վարկեր/ՆԱ» տվյալների բազա (<https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>): [107, 111, 141]

- 82.ՀՀ Ֆինանսների նախարարության մակրոտնտեսական գույքանիշների «ՀՀ պետական բյուջեի գույքանիշներ (2008-2015թթ.)» տվյալների բազա (<http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>): [248, 255]
- 83.ՀՀ Ֆինանսների նախարարության մակրոտնտեսական գույքանիշների «ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական գույքանիշներ (եռամսյակային)» առցանց տվյալների բազա, <http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>: [81-83, 90, 199, 210, 245-246]
- 84.ՀՀ Ֆինանսների նախարարության մակրոտնտեսական գույքանիշների «ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական գույքանիշներ (ամսական)» առցանց տվյալների բազա, <http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>: [245-246]
- 85.ԱՄՅ-ի «World Economic Outlook» տվյալների բազա առ. 2015թ. հոկտեմբեր (<http://www.imf.org/external/pubs/ft/weo/2015/02/weodata/index.aspx>): [124, 128-129]
- 86.Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «ILOSTAT» առցանց տվյալների բազա (www.ilo.org/ilostat): [124, 128-129]
- 87.Համաշխարհային բանկի «World DataBank World Development Indicators» առցանց տվյալների բազա (<http://databank.worldbank.org/data/views/variableselection/selectvariables.aspx?source=world-development-indicators>): [32, 35, 112, 126]
- 88.ԱՄԿ-ի «UN COMTRADE DATABASE» առցանց տվյալների բազա (<http://comtrade.un.org/data/>): [150, 161-162, 181, 203, 206]
- 89.«Национальные счета» онлайн база данных (ежеквартальные данные в постоянных ценах 2008г. (1995-2014гг.)) Федеральной службы государственной статистики Российской Федерации, доступно: http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/accounts/# [138]

Մասնագիտական գրականություն

- 90.Ավետիսյան, Հ., Գրիգորյան, Վ., Դալլաբյան, Ա., Սարգսյան, Հ., «Ընթացիկ հաշվի կայունության գնահատման մոտեցումները Հայաստանում», աշխատանքային փաստաթուղթ 08/12-01, ՀՀ Կենտրոնական բանկ, -Երևան, 2012թ., 89էջ:

(https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/2012_WP_1_CA_sustainability.pdf,

վերջին մոլտը՝ 2015թ. մարտի 19): [29, 97]

91. Հայաստանի Հանրապետության խոցելի ու թղթի և դրա բաղադրիչները // Յայաստան. Եկոնոմիկա և ֆինանսներ.-2011.- Թիվ 2 (28).- Էջ 9-11. -Երևան [80]
92. Յայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, «Ֆինանսական կայունության հաշվետվություն 2012»: -Երևան, 2013թ. 160 էջ (https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/fin_stab/fin_stab_12.pdf, վերջին մոլտը՝ 2015թ. մարտի 18): [28, 75]
93. Պետրոսյան Ալեքսանդր, «2013 թվականին Յայաստանի Հանրապետության սահմանային անցման կետերում միջազգային այցելությունների վերաբերյալ ընտանեկան հետազոտության արդյունքների մասին» հաշվետվություն, ք. Երևան, 2014թ. 100 էջ (Գերմանիայի դաշնային համագործակցության (GIZ) ծրագրի շրջանակում), http://www.mineconomy.am/uploads/2013_թվականին_Յայաստանի_Հանրապետության_սահմանային_անցման_կետերում_միջազգային_այցելությունների_վերաբերյալ_ընտանեկան_հետազոտություն.pdf (վերջին մոլտը՝ 24/07/2015): [145]
94. «Մանդատ» տեղեկատվական հասարակական կազմակերպություն, «Ազգային ժողովի մոնիտորինգ» 5-րդ գումարման, 4-րդ նստաշրջանի, 3-րդ զեկոլյց (09.09.2013 - 05.12.2013), «Մանդատ» տեղեկատվական ՀԿ, ք. Երևան, 74 էջ, http://www.parliamentmonitoring.am/docs/PM_report_v4_20.02.2014.pdf (վերջին մոլտը՝ 24/07/2015): [196]
95. ЕЭК, “Анализ стратегий интеграционного сотрудничества (моделей реализации интеграционного потенциала) наиболее известных интеграционных объединений мира” 2014г. Евразийская экономическая комиссия. Москва. 33с. Доступен: http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_makroec_pol/investigations/Documents/Анализ%20интеграционных%20объединений.pdf. (вход: 07/10/2015). [211]

96. Шарипов М.А. Деривативы и финансовый кризис // Экономика и менеджмент инновационных технологий. 2012. № 5 [Электронный ресурс]. URL: <http://ekonomika.snauka.ru/2012/05/809> (дата обращения: 28.09.2015). [61]
97. Abel, Andrew B., Bernanke, Ben S., (2001). *Macroeconomics, Update Edition (Fourth edition)*, Boston, MA (United States): Addison-Wesley - Addison-Wesley series in economics 630p. [120]
98. ADB. (2010). "Global Economic and Financial Crisis Impact on Developing Asia and Immediate Policy Implications", Report 1, prepared by Manu Bhaskaran and Ritwick Ghosh from the Centennial Asia Advisors, a member of the Centennial Group International as discussion materials for the ADB Regional Forum on the Impact of Global Economic and Financial Crisis" at the ADB Headquarters in Manila, Philippines, January 14-15, 46p. (number of pages in PDF file). Available at: <http://staging.ilo.org/public/libdoc/igo/2010/454125.pdf> (last accessed: November 16, 2015). [190, 242]
99. Almeida, R., Arbelaez, J., Honorati, M., Kuddo, A., Lohmann, T., Ovadiya, M., Pop, L., Sanchez Puerta, M., Weber, M. (2012). *Improving Access to Jobs and Earnings Opportunities: The Role of Activation and Graduation Policies in Developing Countries*, Social Protection Discussion Paper No. 1204, World Bank, Washington DC: United States, 128p. (number of pages in PDF file). Available at: <http://siteresources.worldbank.org/SOCIALPROTECTION/Resources/SP-Discussion-papers/430578-1331508552354/1204.pdf> (last accessed: March 30, 2015). [195]
100. Bleaney, Michael (2005). "The Aftermath of a Currency Collapse: How Different are Emerging Markets?" *The World Economy*, Blackwell Publishing Ltd. (Oxford, United Kingdom), Volume 28, Issue 1, pp79-89. [27, 36]
101. Boorman, Jack, Fajgenbaum, José, Ferhani, Hervé, Bhaskharan, Manu, Arnold, Drew. Alberto Kohli, Harpaul (2013). "The Centennial Resilience Index: Measuring Countries' Resilience to Shock," Centennial Group International, Washington DC: United States, 99p. (number of pages in PDF file). Available at: <http://www.centennial-group.com/downloads/RI%20211%20for%20print.pdf> (last accessed: March 30, 2015) [198]
102. Briguglio, Lino (1995). "Small Island Developing States and Their Economic Vulnerabilities," *World Development*, Pergamon-Elsevier Science Ltd (Oxford, United Kingdom) Vol. 23, Issue. 9, pp. 1615-1632. [79]

103. Briguglio, Lino, Cordina, Gordon, Farrugia, Nadia, and Vella, Stephanie (2009) "Economic Vulnerability and Resilience: Concepts and Measurements," *Oxford Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 37, No. 3, pp.229-247. [5 -7, 77]
104. Bugamelli, Matteo, and Paternò, Francesco (2005). "Do Workers' Remittances Reduce the Probability of Current Account Reversals?" World Bank Policy Research Working Paper No. 3766, The World Bank, Washington, DC: United States, 53p. (number of pages in PDF file). Available at: <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/8495/wps3766.pdf?sequence=1> (last accessed: March 12, 2015). [52]
105. Canuto, O. and Ghosh, S.R. (eds.) (2013). *Dealing with the Challenges of Macro Financial Linkages in Emerging Markets*, World Bank, Washington, D.C.: United States, 307p. (number of pages in e-book). Available at: <http://www-wds.worldbank.org/external/default/WDSContentServer/IW3P/IB/2013/10/11/00044246420131011144444/Rendered/PDF/818440PUB0Deal00Box379835B00PUBLIC0.pdf> (last accessed: March 10, 2015). [45-49, 54, 238-239]
106. Caramazza, Francesco, Ricci, Luca and Salgado, Ranil (2000). "Trade and Financial Contagion in Currency Crises," International Monetary Fund Working Paper No. 55. The International Monetary Fund, Washington, D.C.: United States 47p. (number of pages in PDF file). Available at: <http://www.imf.org/external/pubs/ft/wp/2000/wp0055.pdf> (last accessed: March 12, 2015). [58, 60, 237]
107. Claessens, Stijn and Kose, Ayhan M. (2013). "Financial Crises: Explanations, Types, and Implications," IMF Working Paper No. 13/28, International Monetary Fund, Washington, D.C.: United States, 66p. (number of pages in PDF file). Available at: <http://www.imf.org/external/pubs/ft/wp/2013/wp1328.pdf> (last accessed: March 10, 2015). [39-41, 53, 68, 74]
108. Dabla-Norris, Era, Espinoza, Raphael, Jahan, Sarwat (2012). "Spillovers to Low-Income Countries: Importance of Systemic Emerging Markets," IMF working paper No. 12/49, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, 27p. (number of Pages in PDF File). Available at: <http://www.imf.org/external/pubs/ft/wp/2012/wp1249.pdf> (last accessed: February 27, 2015). [16-19]
109. Dinnie, Keith (2008). *Nation Branding: Concepts, Issues, Practice*, Butterworth-Heinemann, Oxford, United Kingdom: Elsevier, 289 p. (number of pages in e-book): [228-230, 236]
110. Dunning, J.H. *International production and the multinational enterprise*. London: George Allen & Unwin, 1981. 440p. [232]

111. Dunning, J.H., Trade, location of economic activity and the MNE: a search for an eclectic approach, in Ohlin. B./ Hesselborn, P.O./Wijkman, P.M. (eds.) *The International Allocation of Economic Activity*, London and Basingstoke: Macmillan 1977, pp. 395-418. [232]
112. Easterly, William, and Fischer, Stanley (2000). "Inflation and the Poor," World Bank policy research working paper No. 2335, The World Bank, Washington, D.C.: United States, 36p. (number of pages in PDF file). Available at: https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/18842/multi_page.pdf?sequence=1 (last accessed: March 10, 2015). [43]
113. Eichengreen, Barry and Portes, Richard (1987). "The Anatomy of Financial Crises," NBER working paper series, NBER Working Paper No. 2126, National Bureau of Economic Research, Cambridge, MA: United States, 85p. (number of pages in PDF file). Available at: <http://www.nber.org/papers/w2126.pdf> (last accessed: March 10, 2015). [38]
114. Eichengreen, Barry, Rose, Andrew and Wyplosz, Charles (1996). "Contagious Currency Crises," NBER working paper series, NBER Working Paper No. 5681, National Bureau of Economic Research, Cambridge, MA: United States, 50p. (number of pages in PDF file). Available at: <http://www.nber.org/papers/w5681.pdf> (last accessed: March 12, 2015). [58]
115. EV Consulting (2009). "Armenia: Diaspora Assisted Growth," EV Consulting: Yerevan, Armenia, 26p. (number of pages in PDF file). Available at: http://ev.am/sites/default/files/DIASPORA-ARMENIA%20CASE_Revised-Mar2010-130312.pdf (last accessed: October 8, 2015). (last accessed: October 8, 2015). [169]
116. Fratzscher, Marcel (2002). "On Currency Crises and Contagion," ECB Working Paper No 139, The European Central Bank, Frankfurt am Main: Germany, 42p. (number of pages in PDF file). Available at: <https://www.ecb.europa.eu/pub/pdf/scpwps/ecbwp139.pdf> (last accessed: March 12, 2015). [55, 58-59, 237]
117. Gardó, Sándor and Reiner, Martin (2010). "The Impact of the Global Economic and Financial Crisis on Central, Eastern and South-Eastern Europe: A Stock-Taking Exercise," ECB Occasional Paper Series, No 114, European Central Bank, Frankfurt am Main: Germany, 67p. (number of pages in PDF file). Available at <http://www.ecb.europa.eu/pub/pdf/scpops/ecbocp114.pdf> (last accessed: 27/02/2015). [21, 30, 33-34]
118. Glick, Rueven and Rose, Andrew K. (1998). "Contagion and Trade: Why Are Currency Crises Regional?" NBER working paper series, NBER Working Paper No. 6806, National Bureau of

- Economic Research, Cambridge, MA: United States, p.31 (number of pages in PDF file). Available at: <http://www.nber.org/papers/w6806.pdf> (last accessed: March 12, 2015). [58]
119. Goldstein, M., C. Reinhart, and G. Kaminsky (2000). *Assessing Financial Vulnerability: An Early Warning System for Emerging Markets*, Institute for International Economics, Washington, D.C.: USA, 150p. [73]
120. Guillaumont, Patrick (2009). "An Economic Vulnerability Index: Its Design and Use for International Development Policy," *Oxford Development Studies*, Routledge (Abingdon, Oxfordshire: United Kingdom), Vol. 37, No. 3, pp.193-228. [1, 4, 78]
121. Herrera, Santiago and Garcia, Conrado (1999). "User's Guide to an Early Warning System for Macroeconomic Vulnerability in Latin American Countries," Policy Research Working Paper. No. 2233, Economic Policy Sector Unit, Latin America and the Caribbean Region, The World Bank, Washington, D.C.: United States, 22p. (number of pages in PDF file). Available at: http://siteresources.worldbank.org/BRAZILINPOREXTN/Resources/3817166-1185895645304/4044168-1186403960425/77pub_br167.pdf (last accessed: March 18, 2015). [72]
122. Herz, Bernhard and Tong, Hui (2008). "Debt and Currency Crises—Complements or Substitutes?" *Review of International Economics*, Wiley-Blackwell, (Oxford, United Kingdom), Volume 16, Issue 5, pp. 955–970. [51]
123. International Monetary Fund (1998). "Financial Crises: Characteristics and Indicators of Vulnerability," Chapter IV, in IMF (ed.), *World Economic Outlook. Financial Crises: Causes and Indicators*, pp.74-97, The International Monetary Fund, Washington, D.C.: United States, 227p. [70-71]
124. International Monetary Fund (2009). "The Implications of the Global Financial Crisis for Low-Income Countries," IMF, Washington D.C: United States, 70p. (number of pages in PDF File). Available at: <http://www.imf.org/external/pubs/ft/books/2009/globalfin/globalfin.pdf> (last accessed: March 4, 2015). [20]
